




858

L. III. 5







ՆՈՐ ԲՁԱՆ

III ՏԱՐԻ

# ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№. 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1903



Թ Ի Յ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսանցի:

Պուշկինեան փողոց № 12.

1903

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 9

	Երև.
1. ՄԲԲԿԻ ՍՈՒՐԲԸ, (վերջ) վեպ Ա. Անարոնեանի . . .	5
2. Ա՛ն, ՀԱՆԳԻՄՍ ՏՈՒՎԷՔ, (Նիկիտինից) թարգմ. Ալ. Ծատուրեանի . . . . .	22
3. ՎԱՆ-ՏՈՍՊ, (վերջ) Կարսեցիի . . . . .	24
4. ՆԿԱՐԻՉ ԹՍՇՃԵԱՆ, դրամա Վ դորժութեամբ, Լևոն Մանուէլեանի . . . . .	43
5. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂ, Կուրբաթ-Հարունի . . . . .	100
6. ԳԻՄՆԱԶԻՍՏԻ ՕՐԱՏԵՏՐԻՅ, Պանդուխտի . . . . .	113
7. ՌՉ, ԼԱՒ Է ԿՈՐՉԻՒ... Պլեշչեևից, թարգմ. Ալ. Ծատուրեանի . . . . .	132
8. ՕՏԱՐ, ԱՄԱՅԻ՛ ՆԱՄԲԷՔԻ ՎԵՐԱՅ, բան. Ա. Խահակեանի . . . . .	133
9. ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ, Տիգրան Թ. Աբգարեանցի . . . . .	134
10. ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—Թուրքիայի քաղաքակրթական անընդունակումիւնը:—Եւրոպեան դպրոցներու բացումը եւ դրագիտութեան տարածումը:—Գրականութեան ծնունդը:—Քրտանական ազդեցութիւնը դպրոցներու եւ դրականութեան վրայ:—Գրական յետամնայութեան պատճառները:—Լրագրութիւնը սկիզբ գրականութեան:—Թուրք գրագէտին մէջ ազդայնական դրոշմի բացակայութիւնը:—Գրականութեան մէջ մշակուած սեռը:—Գրական նոր շարժումը:—Չիա թէյ:—«Կսպոյտ եւ սեւ» վեպը, Տիգրանի . . . . .	140
11. ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ (Les affaires sont les affaires), Կոմեդիա Օկտաւ Միրբօի, թարգմ. Ֆրանսերէնից Ս. Շիսեանցի . . . . .	149
12. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐ ՀԻՅ.—Սլիով սնունդ է թէ թոյն, Մ. Նալբանդեանի . . . . .	169
13. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՅ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՅ.—«Կեննին» ցոյց տուած ընդունելութիւնը:—Մի հայ նկարիչ վրայ տածարում:—Գժգոնութիւններ քահանայական դատակարգից:—Տաղանդաւոր դրողներն ապահովացնելու հարցը:—Գիւղացիների տնտեսական անկումը եւ նրանց հասարակական կեանքը, Տ. Փիլրումեանի . . . . .	181
14. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Վ. Լուկիվիչ՝ «Կեանքը ծովե-	

Նոր շրջան III տարի

Հրատ. XV տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1903



ԹԻՖԼԻՍ  
Արագատիպ Մ. Մարտիրոսյանցի  
Գուչինեան փողոց № 12.  
1903

Дозволено цензурою. Тифлисъ, 28 сентабря 1903 г.

# ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## № 9

	Երէ՞
1. ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ, (վերջ) վէպ Ա. Ահարոնեանի . . .	5
2. Ա՛Խ, ՀԱՆԳԻՍՏ ՏՈՒՒՔԻ, (Նիկիտինից) Թարգմ. Ալ. Ծատուրեանի . . . . .	22
3. ՎԱՆ-ՏՈՍՊ, (վերջ) Կարսեցիի . . . . .	24
4. ՆԿԱՐԻՉ ԹԱՇՃԵԱՆ, գրամա 4 դործութեամբ, Հելոն Մանուէլեանի . . . . .	43
5. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրքաթ-Հարունի. . . . .	100
6. ԳԻՄՆԱԶԻՍՏԻ ՕՐԱՏԵՏՐԻՑ, Պանդուխտի . . . . .	113
7. Ո՛Չ, ԼԱ՛Ի Է ԿՈՐՉԻՒ... Պլեշչեից, Թարգմ. Ալ. Ծատուրեանի . . . . .	132
8. ՕՏԱ՛Ր, ԱՄԱՅԻ՛ ՃԱՄԲԷՔԻ ՎԵՐԱՅ, բան. Աւ. Իսահակեանի . . . . .	133
9. ՆՈՐ-ՁՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ, Տիգրան Թ. Արզարեանցի . . . . .	134
10. ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—Թուրքիայի քաղաքակրթական անընդունակութիւնը:—Եւրոպան է դպրոցներու բացումը եւ դրազիտութեան տարածումը:—Գրականութեան ծնունդը:—Ֆրանսական ազդեցութիւնը դպրոցներու եւ գրականութեան վրայ:—Գրական յետամնացութեան պատճառները:—Լրագրութիւնը սկիզբ գրականութեան:—Թուրք գրագէտին մէջ ազգայնական դրոշմի բացակայութիւնը:—Գրականութեան մէջ մշակուած սեռը:—Գրական նոր շարժումը:—Չիաբէյ:—«Կապոյտ եւ սեւ» վէպը, Տիգրանի . . . . .	140
11. ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ (Les affaires sont les affaires), Կոմիզիա Օկտաւ Միրբօի, Թարգմ. Ֆրանսերէնից Ս. Շիսեանցի . . . . .	149
12. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐ ՀԻՅ.—Ալկոլը սնունդ է թէ թոյն, Մ. Նալբանդեանի . . . . .	169
13. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՅ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ.—«Ենթին» ցոյց տուած ընդունելութիւնը:—Մի հայ նկարիչ վրաց տանաբում:—Գժգոհութիւններ քահանայական դասակարգից:—Տաղանդաւոր դրողներն ապահովացնելու հարցը:—Գիւղացիների տնտեսական անկումը եւ նրանց հասարակական կեանքը, Տ. Փիրումեանի . . . . .	181
14. ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ.—1) Վ. Լունկեվիչ՝ «Կեանքը ծովե-	

- րի խորքում», *Բն.*—2) Յովհ. Գուրբախեան՝ «Ծանօթ պատկերներ», *Ու.*—3) Վահան Մամիկոնեան՝ «Վերջին երգեր», *Չաւէնի.*—4) Արզում Սիմոն՝ «Նորավայրեր», *Չաւէնի.*—5) Mars՝ «Ի՞նչպէս ամուսնացայ», *Երաժակ.*—6) Ժ. դը-Մորէ՝ «Տրիբի»,—*ակ.* . . . . . 188
15. **ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ.** . . . . . 197
16. **ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.**—Կառավարական կարգադրութիւն հայոց եկեղեցական կալուածների եւ գումարների մասին:—Պաշտօնական հաղորդագրութիւններ:—Թուրքաստանի գաղթականութեան մասին նոր օրէնք:—Երեւանի նահանգի եւ Կարսի շրջանի հայ փախստականների թիւը:—Պարսկահայտականների դրութիւնը որոշող կարգադրութիւն:—Ձինուորների երդման տեղը:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւն. . . . . 198
17. **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.**—Մինիստրական փոփոխութիւններ Անգլիայում:—Մակեդոնական բեֆորմների ընդարձակման առաջարկ:—Միւրուշտէզի տեսակցութիւնից յետոյ պաշտօնական հաղորդագրութիւն մակեդոնական հարցի մասին:—Ունգարական կրիզիս:—Միջպարլամենտական համաժողով Վիեննայում:—Միջազգային վէճերի բարբարոսական լուծում եւ միջազգային տրիբունալ:—Գործերը Մերձաւոր Արեւելքում, *Լ. Ս.*
- ‡ Սուրբաս վարդապետ Պարոնեան. . . . . 221
18. **ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ** . . . . . 229
19. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** . . . . . 235
20. **ՅԱԻԵԼՈՒԱԾ, Ա. Ըօլլէսի՝ Հրաչալի գար, Թարգմ.**  
*Ստ. Լիսիցեանի* . . . . . 161—192

## ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ \*)

### XXIV

Այն առաւօտ եկեղեցու բակը ներկայացնում էր մի հազաւագիւտ տեսարան: Մեծամեծ, սև կաթսաները շարան-շարան կախուած էին վառման օջաղների վրայ, և նրանց շուրջը կերակուր եփողների հետ մէկտեղ վիտում էր փոքրիկ մանուկների ահագին բազմութիւն: Ոմանք ցախ էին բերում, ուրիշները կրակը վառում կամ միս լցնում կաթսաները, կային որ պարզապէս հետևում էին կատարուածներին, և ամենքը խօսում էին կամաց, համարեա փսփսալով: Յատման ժամ էր, ուրախութիւն չը կար. կարծես օջաղներից բարձրացող թանձր ծխի հետ միասին երկնքի զայրոյթը կախուած էր այդ ամբոխի գլխին:

Եկեղեցում պատարագը վաղուց էր սկսուած, մի հանդիսաւոր ու ճնշող պատարագ: Այդ օրը գիւղը վճռուել էր մի դերադոյն ճիգով Աստուծոյ ուշադրութիւնը գրաւել, նրա գթութիւնը խլել երկնքից: Տներն ամայացել էին. ամենքն այնտեղ էին—կամ օջաղների շուրջը, կամ ներսում: Պատարագիչը Իւչքիլիսէի վանահայր վարդապետն էր, որ յատկապէս եկել էր իր հօտի

\*) Տես «Մուրճ» № 8:

խռովուած սիրտը մխիթարելու: Մեր տիրացուներ, որոնք տասնեակ տարիներից ի վեր արգէն իրանց անատամ բերանները բացած չէին եկեղեցում երգելու, այսօր եկել էին զանազան կողմերից և խոնաւ խորանի անկիւններից դուրս էին քաշել հին ճուռած ժամաշապիկները, հագել և գողգողալով կանգնել սեղանի առաջ: Դասը ներկայացնում էր ճաղատ կամ ալեղարդ ծեր գլուխների մի ամբողջ խումբ. կուսցած կամ ծուռած մէջքեր, մերկ, սևացած ոտներ, և այդ բոլորի վրայ զանազան գոյնի ժամաշապիկներ, մէկինը երկար մինչև գետին, միւսինը կարճ մինչև ծնկերը: Գիւղերի բոլոր իմաստութիւնն ու զարդը, որ տարիներ շարունակ փայլում էր սաքուններում ու հրապարակներում, այստեղ էր, և ամեն գիւղ ուղարկել էր, ինչ որ ունէր, ժամաւորները մատով էին ցոյց տալիս հեռուներից եկած այդ պատկառելի տիրացուներին, որոնք, ասում էին, զարմանալի բաներ գիտեն, իսկ ձայները քաղցր են լացացնելու չափ: Սակայն այդ բոլոր իմաստուն գլուխներից և ոչ մէկը չէր կարող մրցել տիրացու Մարտիրոսի հետ, որ կանգնել էր խմբի կենտրոնում, իշխում էր ամենքի վրայ իր պատկառելի հասակով, իր հարուստ, սպիտակ միսուքով և մանաւանդ՝ իր ժամաշապիկով, որի թիկունքին հեռուից երևում էր մեծ, կարմիր խաչը: Տիրացու Մարտիրոսի փառքի և յաղթանակի օրն էր այս. որքան աշխատել այս ցասման ժամը յաջողեցնելու համար, քանի՜-քանի խորհրդակցութիւններ քահանաների, վարդապետի, իշխանների, նաև կոյս Գուլէի հետ: Եւ այժմ հաւաքուած օտարների, մանաւանդ իր ընկերակից տիրացուների առաջ նա այսօր ցոյց պիտի տար իր իմաստութեան, ժամասացութեան մէջ իր հմտութեան բոլոր փայլը: Նա տիրացու Մարտիրոսն էր, որ կորեկ էր հանում սիւնը, աստղը երկնքից ցած բերում: այսօր պատարագի, ցասման ժամի վեհութիւնը կատարեալ դարձնելու համար էր միայն, որ նա յանձն էր առել ժամաշապիկ քաշել իր թիկունքին:

Հանդիսաւորութիւնը կատարեալ էր:

Տիրացուները դասից, իսկ սարկաւաղները սեղանից մրցում էին իրար հետ լալկան ոլորուն ձայներով, և փոքրիկ եկեղեցին թնդում էր անսովոր համերգից: Եւ ամեն անգամ՝ երբ սեղանից հնչում էր՝ «օրհնեան, տէր...» պատարագիչը, ծեր, կարծրիկ ու հաստ մի հոգեւորական, յետ էր դառնում, ձեռքը հանդիսաւոր կերպով բարձրացնում աղօթող հօտի վրայ և խաչակընքում:

«Խաղաղութիւն ամենեցուն»:

Անմիջապէս տիրացու Մարտիրոսի գլուխը ցնցւում էր, նրա խոպոտ ձայնը հնչում էր առաջինը, միւսները յետ չէին մնում, և մի բազմազան աններդաշնակ մուշկոց ներքեից պատասխանում էր. «Եւ ընդ հոգւոյդ քում». և նոյն վայրկեանին բազմութիւնը երկիւղածութեամբ փուռում էր գետին մակաղած ոչխարների պէս, կնճռոտ ճակատները քսւում էին խոնաւ գետնին, անյոյս մարած աչքերը փակւում էին, բոլոր շրթունքները մրմնջում էին, բոլոր ճնշւած կրծքերից միաժամանակ դուրս էր գալիս միատեսակ խուլ մումռոց, որ վեր էր բարձրանում և խառնւում սեղանից հնչուող «խաղաղութեան» հետ:

Սարկաւաղը եռանդով խնկարկում էր վերից, բուրվառի շղթան նրա ձեռքում մեղմով շաչում էր, անուշահոտ ծուխը որպէս երկնային ողորմութիւն բարդբարդ իջնում էր աղօթողների գլխին, մի ուրիշը ցնցում էր ծնծղան, բայց տիրացու Մարտիրոսն էլի գոհ չէր. նա կ'ուզէր, որ սեղանից աւելի աղմուկ լինի, որ ծնծղան ու բուրվառը շառաչեն, որ եկեղեցին կորչի ծխի մէջ: Իւր անհանգստութիւնն ու դժգոհութիւնը նա արտայայտում էր կռանալով մերթ դէպի աջ, մերթ դէպի ձախ ընկերը, ապա կարծես այդ պակասը լրացնելու համար իր հերթին երգում էր բոլոր ուժով, ամենքը լռում էին, բայց նրա ձայնի վերջին խաղերը դեռ հընչւում էին՝ տարածուելով եկեղեցու հեռաւոր անկիւն-

ները: Նա տեսնում էր ամեն ինչ, խորհուրդ էր տալիս, կարգադրում. մինչևիսկ մի քանի անգամ հրամայող շարժումով ձեռքը դէպի սեղանը մեկնեց:

Պատարագն այն օրն ասես վերջ չունէր, ամենքը յափշտակուած էին հանդիսաւոր արարողութեամբ: Տիրացուներն ու սարկաւագները իրանց ձայների ամենանուրբ, ամենայուզիչ խաղերն էին փնտրում՝ կրօնական երգերին աւելի ուժգնութիւն ու խորհրգաւորութիւն տալու, պատարագիչը, որպէս մարմնացած հեղութիւն, աչքերը խոնարհ, դանդաղութեամբ էր քաղում՝ խորհրդատեարը, դողդոջուն ձայնով էր ասում «խաղաղութիւնը», իսկ ժողովուրդը եկեղեցու կիսախաւարի ու ծխի հետ լուծուած՝ մոմնում էր ցաւով: Կրօնական այս մթնոլորտում, անհասկանալի խորհրգաւորի բեռի տակ ճնշուած՝ մարդիկ վերացել էին մի անծանօթ աշխարհ, մոռացուել էր ցասումն ու զուլումը, մոռացուել էին սև օրերը, միայն ազօթում էին ազօթքի համար: Երկիւղած աչքերը սեղանին յառած՝ նրանք միմնջում էին և սպասում, թէ երբ կը բարձրանայ այն սուրբ մարդու ձեռքը, երբ կը հնչուի նրա դողդոջուն ձայնը, երբ սարկաւագը կը ձգի բուրվառը. այն ժամանակ մի խորհրգաւոր զօրութիւն անցնում էր գլուխների վրայով, բոլոր ծնկները ծալում էին, բոլոր գլուխները խոնարհուում, բոլոր ճակատները քսում գետնին, ինչպէս յանկարծական քամու առաջ կռացող հասկեր:

Կոյս Գուլէն իր սովորական, կիսախաւար անկիւնում էր, աջ խորանի դրան առաջ: Այսօր երբ նա ներս եկաւ եկեղեցի, ամենքի ուշադրութիւնը գրաւեց. նա աւելի նիհար էր, աւելի գունատ, քան երբևիցէ: Առանց աջ ու ձախ նայելու՝ կոյսն առաջացաւ ամբօխի միջից, հասաւ խորանի դրանը և ուժասպառ ընկաւ ծնկների վրայ, ազօթում էր: Շատերը նկատեցին, որ կոյսն այսօր ազօթում է առանց գլուխը բարձրացնելու:

Գուլէի գէմուղէմ պատի վրայ կախուած էր Ստեփաննոս Նախավկայի պատկերը մաշուած ու սևացած

ժամանակից: Սուրբը աղօթում էր ծնկաչոք, աչքերը դեպի երկինք յառած, իսկ շորս կողմից քարերը տեղում էին նրա գլխին: Գունքի վրայ բացուել էր արդէն մի լայն վէրք, որտեղից կարմիր արիւնը ցայտում էր ու պատում դէմքն ու կուրծքը: Գունատ ու տանջուած նահատակը մեռնում էր աղօթելով: Գուլէն երկու անգամ աչքերը բարձրացրեց, նայեց այն հեղ ու մարող աչքերին, տեսաւ լայն բացուած վէրքն ու արիւնը, ապա շտապով գլուխը քաշ ձգեց: Այսօր առաջին անգամն էր իր ամբողջ կեանքում, որ նա վախենում էր նայել իր սիրած, պաշտած սրբին: Նրան թւում էր, որ այնտեղ, պատի վրայ մեռնողը քրիստոնէութեան առաջին նահատակը չէ, այլ ինքը Ապրօն, վիրաւոր ու տանջուած մարդը: Նա դիտէր, նա համոզուած էր, որ Ապրօսի սառը դիակն այժմ պառկած է իր խցում, որ քահանայի հետ խօսք մէկ արած՝ նրանք թագցնում են այդ մահը, մինչև ցասման ժամը վերջանայ, բայց և այնպէս նա վախենում էր վերև նայել, վախենում էր տեսնել այդ տանջուած դէմքը:

Եւ այդ պատառուած քունքը... ճիշտ այդպէս էր Ապրօսի վէրքը, դէմքի նոյն գունատութիւնը, աչքերի նոյն տխուր, յետին փայլը, որպէս մեռնող վերջալոյսի վերջին շողեր, նոյն շրթունքները, գունատ ու գողգողուն: Գուլէն չէր կարողանում ազատուել այդ պատկերից, նա նրա աչքի առաջն էր. կ'ուզէր վեր կենալ, միւս խորանի առաջ գնալ, բայց ոյժ չ'ունէր: Ճարը կարած՝ փորձեց հաշտուել իրականութեան հետ, վճռեց ճիգ դործ դնել, նայել, նայել յամառարար այդ դէմքին՝ համոզուելու համար, որ դա Նախավկան է և ոչ թէ Ապրօն, ինչպէս կարող է Ապրօն լինել: Եւ գլուխը բարձրացրեց մի վերջին անգամ, աչքերը սևեռեց հէնց արիւնահոս վէրքին, այն մարող աչքերին... բայց դա տեւեց միայն մի վայրկեան, շարունակել անկարելի էր—այդ վէրքը... միևնոյն չափով, միևնոյն քունքի վրայ, այդ շաղուած աչքերը, որոնք այլևս աշխարհը չեն տեսնում,

այլ յառել են անհունութեանը... Օ՛ր, նա է, նա է, Ապրօն է: Նոյնպէս տանջուած, նոյնպէս նահատակուած մի մեծ գաղափարի համար: Կոյսին մի վայրկեան թւաց նոյնիսկ, թէ նրա շրթունքները շարժոււմ են, և նա կամացուկ փսփսում է այնպէս, ինչպէս անցած գիշեր՝ «աղօթում ես... էլի... Նա չի գայ»...

Ի՞նչպէս կարող է չը գալ, մտածում էր Գուլէն, այսքան աղօթքը, այս պատարագը, այս ցասման ժամը, վառուող օջաղները, միթէ այս բոլորը բաւական չեն երկնքի դռները բաց անելու, որ ողորմութեան մի շող կաթի:

«Նա կը գայ, նա կը գայ, այն փրկիչը»:

Վարագոյրը քաշեցին, սեղանը ծածկուեց աչքերից, վրայ հասաւ այն ժամը, երբ այլևս ոչ թէ պէտք էր օրհնել ու գովաբանել տիեզերքի Արարչին, այլև պէտք էր բոլոր պաշտամունքի, ինքնառնջութեան համար մի վարձատրութիւն խնդրել, երբ պէտք էր աղաչել, հայցել, որ Նա ողորմի յանցաւոր աշխարհին, Իր ստեղծածներին:

«Տէր, ողորմեան, Տէր, ողորմեան»... Այս անգամ երգողը միայն տիրացուներն ու սարկաւագները չէին, այլ ամենքը, բոլոր ժամաւորները, անգամ եկեղեցու պատերը կարծես մռմռում էին՝ «Տէր, ողորմեան, Տէր, ողորմեան»: Տիրացու Մարտիրոսի ձայնն այլևս մենմենակ չէր իշխում, նա էլի ցնցում էր գլուխը, էլի բարձր էր բոլորից, բայց հարկւրաւոր բերաններ էին կանչում «Տէր, ողորմեան»: Մի ամբողջ ժողովուրդ էր լալիս երեխայի պէս:

Եւ այդ ողորմութիւնը ծածկուած էր աղօթողների աչքերից, ամենքին թւում էր, թէ նա այն վարագոյրի յետևումն է: «Տէր, ողորմեան, Տէր, ողորմեան... լեր օգնական ազգիս Հայոց» մռնչում էր եկեղեցին, և բոլոր հայեացքները յառած էին այն վարմանալի վարագոյրին, որ ծածկում էր Աստուծոյ գլխութիւնը և որի վրայ մի անյայտ արուեստագէտ մի քանի գոյնով փռել էր երկըն-

քի բոլոր գաղտնիքը—չարիքի և բարիի պայքարի բիրդ պատկերը, հանգերձեալ կեանքը իր բոլոր սարսափներով:

Գուլէն այժմ այլևս նախավկային չէր նայում, նա շատ էր յիշեցնում Ապրօին, իսկ Ապրօն իր պատուած քունքով սարսափելի իրականութիւնն էր, անողոք աշխարհը: Կոյսը երկինքն էր ուզում, հեռաւորն ու անյայտը, որտեղից նա պիտի գար, այն փրկութիւնը: Եւ նայում էր այժմ այս խորհրդաւոր վարագոյրին, որի իւրաքանչիւր ծալքում երևում էին սուրբերի գլուխներ, ձեռներ, ոտներ, աղօթողներ, լացողներ, նահատակողներ, կատապի սատանաներ և պատժող հրեշտակներ: Ամենից աւելի կոյսի ուշագրութիւնը գրաւում էր վարագոյրի կենտրոնը, ուր բազմած էր Քրիստոս իր տաններկու առաքեալներով, նրանց ոտների տակ մարդկային ճակատագրի անգառնալի լուծումն էր, այնտեղ դժողքն էր եռում, և սատանաները երկաթէ կեռերով մղում էին մեղաւոր հոգիներին դէպի յաւիտենական տանջանքի անդունդները: Վային, որոնք կախկըխուել էին Գաբրիէլ հրեշտակապետի փէշերից, գթութիւն, ներումն էին հայցում,—«Տէր, ողորմե՛՛ն, Տէր, ողորմե՛՛ն»... բայց երկնքի վճիռն անգառնալի էր, և նրանք գլորւում էին դէպի անյատակ սև վիհը, և Քրիստոսը նայում էր վերից: Նա նայում էր նաև եկեղեցու յատակի վրայ փռուած աղօթող բազմութեանը, հայեացքը, դէմքի արտայայտութիւնը նոյնն էր: «Ներիր, Տէր, ներիր,—միմնջում էին Գուլէի շրթունքները,—ներիր ամենքին, նրանց էլ, այն մեղաւորներին էլ ներիր»: Գուլէն թողեց դժողքը, այժմ նա նայում էր վերևում բազմած մարդարէներին և այլ բազմաթիւ սըրբերին, որոնք ամենքն էլ վարագոյրի հետ դողդողում էին և կարծես աղօթողների հետ կրկնում: «Տէր, ողորմե՛՛ն, Տէր, ողորմե՛՛ն»: Վարագոյրը շարունակում էր ծածկել այդ ողորմութիւնը, և բազմութիւնը շարունակում էր թակել երկնքի դռները՝ «... Լեր օգնական աղ-

գիտ հայոց, Տէր, ողորմեան...» Իսկ Գուլէն յափշտակուած այդ բոլորով, հանդերձեալ կեանքից խօսող տեսարաններով, նոյնիսկ մոռացել էր Ապրօի վերջին խօսքերը, նրա գուշակած արիւնոտ մրրիկը, նրա վերջին խնդիրը, կտակը:

Վարագոյրն իր սրբերով, սատանաներով ու դժողքով կրկին ծալուեց, սեղանը բացուեց. պատարագը վերջանում էր, Գուլէն ոտքի կանգնեց, պատրաստուում էր դուրս գնալ դէպի կաթսաները կարգադրութիւն անելու, բայց քարացած մնաց իր տեղում. եկեղեցում մի անօրինակ իրարանցում կար: Կոյսը զարմանքով տեսաւ, որ աղօթաւորների առաջին շարքերը շտապով դուրս գնացին, ապա լսեց բակից լսուող անսովոր, տագնապալից աղաղակները:

«Մրրիկը, մրրիկը... Ապրօն ասում էր, միթէ եկաւ». այս միտքը վայրկենապէս անցաւ Գուլէի գլխով. նա շարունակում էր նայել:

Եկեղեցում մնացածներն էլ դուրս գնացին, կանանց դասում լսուեցին վհատեցուցիչ, յուսահատ ճչեր, շփոթը կատարեալ դարձաւ: Գուլէն դեռ իր տեղումն էր, նայում էր, ականջ էր դնում և չը գիտէր ի՞նչ անել: Այս դրութիւնից նրան հանեց կազմուած թափօրը, որ շարժուեց դէպի դուրս խաչերով, խաչվառներով, ծնծղաներով և տիրացուների միահամուռ երգեցողութեամբ: Գուլէն գլուխը քաշ, սիրտն անհանգիստ, հոգին աղմկուած՝ հետևեց թափօրին:

Եկեղեցու բակում տագնապն ու շփոթը կատարեալ էր: Մարդիկ գլուխները կորցրած վազում էին այս ու այն կողմ, ումանք դէպի տներն էին վազում ու յետ գալիս, ուրիշները փայտեայ սանդուղքով բարձրանում էին եկեղեցու կտուրը, ձեռքերը ճակատներին դրած՝ նայում էին դէպի հեռաւոր հորիզոնը, որտեղից փոշու մի թանձր ամպ խաղում էր դէպի գիւղը վանդաղութեամբ, բայց սպառնալի կերպով: Այդ ամպի ինչ լինելը յայտնի էր հովիւների պատմածներից, որոնք հեւհեւ գալիս էին

դաշտերից: Վաղուց լսուող «բըսագ-բըսագ»-ը իրագործ-  
 ւում էր, վայրենի լեռնականները դալիս էին հաշիւ պա-  
 հանջելու գիւղից նրա չը գործած յանցանքի համար:

Թափօրը դուրս եկաւ և քարացած մնաց իր տե-  
 դում. տիրացուների ձայնը լռեց, նրանց լեզուները քիմ-  
 քերին կպան, զգեստաւորուած և շփոթուած վարդա-  
 պետը ինչ-որ բաներ էր ասում ժողովրդին, բայց էլ լսող  
 ու հասկացող չը կար, կանայք լալիս էին, երեխաները  
 ճշում բարձրաձայն, կաթսաները մնացել էին առանց  
 ուշադրութեան, օջաղների փայտերի վերջին կտորները  
 ծխալով վառւում էին ու մարում:

Արիւնտա մրրիկն էր գալիս:

Ընդհանուր իրարանցման, ընդհանուր շփոթի մէջ  
 յանկարծ եկեղեցու զանգերը հնչեցին. տիրացու Մար-  
 տիրոսն էր, որ առաջինը մտածեց, թէ երկնքի ուշա-  
 դրբութիւնը պէտք է հրաւիրել այս տագնապի ժամին:  
 Նա բոլոր ուժով ձգձգում էր պարանները՝ կարծես աշ-  
 խատելով պղնձի լալկան զօղանջիւնը երկնք հասցնել:  
 Ամենքը ճար ու հնար էին փնտրում. երկնքից բացի ու-  
 րիչը կայ... և տիրացուն հնչեցնում էր զանգերը, որ-  
 պէս տառապող աշխարհի ցաւագին մրմունջներ, և այդ  
 ձայնը ձգւում տարածւում էր սարսափած գիւղի վրայ,  
 բայց փոշու ամպը դալիս էր հն գալիս, ինչպէս մի աւե-  
 րիչ վիշապ:

Սոսկալի բաներ էին պատմում. ասում էին, որ ա-  
 ւազակները կոտորելու են գիւղի ջահիլներին, իսկ գիւ-  
 ղը պիտի հրդեհեն ու կողոպտեն՝ առեւանգելով մատա-  
 զահաս կանանց ու աղջիկներին: Կողոպուտին ու հրդե-  
 հին սովոր էր գիւղը, բայց կոտորածը... առեւանգումը...  
 Իւրաքանչիւր ծնող դողում էր իր որդու համար: Ամեն-  
 քըն իրանց անզօրութեան մէջ նայում էին վարդապետին,  
 նրա չրթունքներին, սպասելով մի փրկարար խորհուրդ.  
 չէ՞ որ նա, այն սուրբ մարդն ամեն ինչ գիտէ: Եւ հո-  
 գեւոր հայրը խօսեց—Գիւղն ամբողջապէս փախչել չի  
 կարող, թող երիտասարդները խոյս տան դէպի լեռնե-

րը, իսկ ինքը՝ վարդապետն իշխանների հետ ընդառաջ կը գնայ աւազակներին, կը խնդրի, կ'ազերսի, ընծաներ կը տայ, գուցէ մեղմանան, գուցէ զուլումն անցնի:

Սուրբ մա՛րդ, Աստուած խօսեց իր բերանով, մտածում էին ամենքը: Չանգակները շարունակում էին հընչել մեղամաղձոտ ու անյոյս, ինչպէս յուզարկաւորութեան ժամանակ, կանայք ծեծում էին կուրծքերը, փոշու ամպը հեռու չէր, դաշտից նոր հասնողները սարսափներ էին պատմում մօտեցող «Չարդից», բայց երիտասարդները դեռ իրանց տեղումն էին, որը զէնքով, որը անզէն, որը մի մահակ ձեռքին, որը մի դործիք, և չէին շարժւում:

—Փախէք, գոչում էր վարդապետը:

—Փախէք, ճշում էին ծնողները: Իզուր:

Երիտասարդները կանգնել էին անշարժ: Առողջ, կենսալից այդ կրծքերի, հուժկու բազուկների, լայն թիկունքների տէր այդ տղամարդկանց համար ծանր էր փախչել, նրանք ի ներքուստ ամաչում էին այդ անարդ փախուստից, ամաչում էին աւազակների կատաղութեանը յանձնել իրանց ծնողներին, քոյրերին, կանանց և սեփական գլուխներն ազատել:

Անխուսափելի մահից, այդ մօտեցող արիւնոտ մրրկից շատ աւելի ծանր մի բան կար, որ նրանց քարացրել էր իրանց տեղերում, որ ծալում էր նրանց ծնկները, թուլացնում էր մէջքերն՝ անկարող դարձնելով մի քայլ անել: Այդ ամօթալի պայմաններով դէպի լեռները քաշ տուած կեանքի բեռը չափազանց ծանր էր երիտասարդների համար, որպէսզի նրանք ընդունել կարողանային: Եւ վայրկեան առ վայրկեան դրութիւնը դառնում էր խեղդող, փոշու ամպը մահաբեր հրէջի պէս ձգւում, մօտենում էր, ամբօխը—ծերերի, կանանց և տիրացունների ամբօխը միաբերան կանչում էր՝ «Փախէք», և երիտասարդները վիշապի բաց երախի առաջ կանգնած զոհերի նման ո՛չ բողոքում էին, ո՛չ խոյս տալիս, նրանք քարացել էին:

Հուռ էր կոյս Գուլէն. բազմութիւնից հեռու աւանձին կանգնած այդ սեւազգեստ, Գունատ ու մաշուած կինը կարծես այս աշխարհից չէր, կարծես չէր լսում, չէր տեսնում, թէ ինչ է կատարուում իր շուրջը: Նա իր խոր ընկած, անփայլ աչքերը դարձրել էր երկնքին, նայում էր դէպի վեր այնպիսի ուշադրութեամբ, որ ասես սպասում էր մէկին, սպասում էր այն փրկութեանը, որին հաւատացել էր միշտ, որի համար ազօթում էր տարիներ և որի գալստեանը հաւատում էր նաև այժմ:

«Նա կը գայ... նա կը գայ»... մրմնջում էին նրա չրթանքները, և դէմքը պայծառանում էր վայրկենական փայլով, յուսոյ շողերով:

Ո՞վ պիտի գար... արիւնի մրրիկը դալիս էր ահա, երիտասարդները կանգնել էին ուխտուած նոխազների պէս, ուր էր Մրրկի սուրբը, նա, որ մեղմում էր փոթորիկները, ցրում էր շանթալից ամպերը, նա, որ ցաւոտ օրերին լողում էր երկնքի անսահմանութեան մէջ տառապող երկրի վրայ և իր ոտների տակ սփռում խաղաղութիւն ու սփոփանք:

Սպառնալից փոշու ամպից վեր երկնքի երեսին լողում էին մի քանի ուրիշ սեւաթոյր ամպիկներ, որոնք հորիզոնից բարձրացան և յողնած կարաւանի պէս անցընում էին դժբաղդ, դուրացող գիւղի վրայով: Կոյսը նայում էր այդ ամպերին, նայում էր և մտածում, արդեօք նրանք չէն ծածկում Մրրկի սուրբը, արդեօք փրկութիւնը նրանց մութ ծաղքերում չէ: Վերի ամպերը սակայն շուտով ցրիւ եկան պատառ-պատառ և կորան երկնքի անսահմանութեան մէջ, մինչդեռ միւսը՝ այն մահաբերը գալիս էր աւերածի բոլոր թափով:

«Մի՞թէ նա չը պէտք է գայ... մտածում էր կոյսը, մի՞թէ այս օրին է նա թողնելու մեզ...»

Եւ յանկարծ այս ընդհանուր տագնապի, այս ճշնշող անորոշութեան մէջ հնչուեց մի անօրինակ ձայն, հրամայող ու ահաւոր, ինչպէս որսա.

—Փախէք, թշուառականներ, փախէք շուտով, նա-

յեցէք, ահա դալիս է նա, այն յաղթանակող ու աւերիչ մահը, որին և սչ մէկդ արժանի չէք, փախէք...

Ասօն էր... քար լուծիւն տիրեց. ամբոխը սասանեց ու մնաց բերանաբաց, տիրացու Մարտիրոսը թողեց զանգերը, կոյսը ձգուեց առաջ դէպի նորեկը, որ քրտինքի մէջ կորած, հեալով, այտերը՝ բոց, աչքերը՝ շանթ, դողդողուն բազուկները դէպի երիտասարդները տարածած, կանգնել էր հարիւրաւոր ամբօխի առաջ, ինչպէս մի տարերային ոյժ, իշխում էր ամենքի վրայ, ընկճել էր ամենքին, իր միայնութեան ու զայրոյթի մէջ գեղեցիկ, ինչպէս մի կատաղած առիւծ, որ մոնչում է վտանգի հանդէպ: Լերան կատարից նա տեսել էր հայրենի գիւղին սպառնացող վտանգը, և վազէվազ եկել՝ մի գերագոյն ճիւղ թափելու ուշափօրոյս ու խեղճ այս բաղմութիւնը փրկելու համար: Երիտասարդների պատրաստուող փախուստը նրա հոգին լցրեց աննկարագրելի դառնութեամբ, և այժմ նա դուրս էր թափում այդ դառնութիւնը կծու հեղնութեամբ համեմուած:

—Մըրկի սուրբը, Մըրկի սուրբը, շարունակեց Ասօն, նա կը փրկի ձեր գիւղը, փախէք, տարէք ձորերում թաղելու ձեր անպատիւ դուռները, ձեր հաստ պարանոցները, ձեր լայն թիկունքները: Խօրը, խօրը թաղուեցէք այրերի մէջ, որ հառաչանքները ձեր ականաջին չը հասնեն, բայց նախ խլեցէք այս կանանց լաշակները և ձգեցէք ձեր գլուխների վրայ. իսկ սրանք—աւերացրեց նա՝ ցոյց տալով հարս ու ազջիկներին—դիւսբաց ու հերարձակ աւելի գեղեցիկ, աւելի գրաւիչ կը լինին նրանց համար, որոնք դալիս են. դէհ, շուտ փախէք...

Ձայրացած ու վշտոտ երիտասարդի շրթունքներից ընկած բառերը թոյնի կաթիլներ լինէին կ'ասես, որոնք փորում էին ունկնդիրների սրտերը: Սարսուռ անցաւ նրանց մարմնով. քարացած բաղմութիւնը կենդանանում, շարժւում էր, երիտասարդների գունատ այտերը կարմրեցին, նրանց փակուած շրթունքները բացուեցին՝ ա-

ւելի լայն շունչ առնելու համար: Մի անհասկանալի ու խուլ մոմուց բարձրացաւ, իսկ Ասօն շարունակոււմ էր զատ-զատ հեգնել իր ծանօթ ընկեր երիտասարդներին.

— Հը՛, դո՛ւ էլ այստեղ, դարձաւ նա դէպի Պետօն, դու իրաւունք ունիս, փախիր ամենից առաջ, թառլան Սառան շատ տէր կ'ունենայ, նայիր, նրանք տալիս են... իսկ ես մի խենթ եմ, ահա դնում եմ դէպի այն արիւնաբեր ամպը, լեռնակատարի մեռելներն իրանց պաղած աչքերով վերստին կ'արտասուեն, եթէ թշնամիներն այս գիւղում մի հաս տղամարդ չը տեսնեն առանց կանացի լաշակի: Փախէ՛ք, փախէ՛ք...

Եւ Ասօն մի սպանիչ, արհամարհական ակնարկ նետելով շփոթուած երիտասարդների խմբին՝ առաջ վազեց փոթորկաբեր հողմի պէս դէպի այն կողմը, որտեղից գալիս էին լեռնականները:

— Նո՛ւ է, նո՛ւ է, գոչեց կոյսը, Մրրկի սուրբն ինքն է, որ մենակ վազում է մրրկի հանդէպ:

Փախուստը մոռացուեց, ամբոխի խուլ մոմուցը դարձաւ միահամուռ, ահաւոր մռնչոց:

— Գնանք, գնանք:

Եւ բազմութիւնը շարժուեց Ասօի յետեւից.

— Կացէք, կացէք, ճշում էր վարդապետը բոլոր ուժով, բայց լսող չը կար. նա մնաց մենակ տիրացուների հետ: Եւ բազմութիւնը ալեծածան ծովի պէս ուռած ու փրփրուն, տարերային թափով տարւում էր առաջ, գլուխներից վեր սպառնագին ճօճելով այն բարձրն, ինչ որ խաղաղ, աշխատաւոր զիւլը մի գերագոյն ճիգով, մի գերագոյն ժամում կարող է գուրս բերել իր փրկութեան համար: Մարդ, կին, ծերեր ու երեխաներ խառնիխուռն, այլանդակ խուժանով մղում էին իրար դէպի մօտեցող մութ ամպը, գնում էին կարծես զայրոյթի թափով ձուլուելու նրա հետ, կամ ցրիւ բերելու պատառ-պատառ: Մարդիկ չէին, գլուխներ ու բազուկներ չէին, որոնք գնում էին թշնամուն բաղխուելու, այլ մի կենդանի, հսկայական զանգուած, որ տեղահան

եղած լերան պէս խուլ դրնդիւնով ու մոմոտցով տարուում էր դաշտերով: Ժողովուրդն էր այն իր ըմբոստ ու խենթ մի վայրկենում, որ գնում էր մեռնելու ոչ սողալով, ոչ ճիճուի պէս արորուելով կրունկների տակ, այլ սաքի վրայ, առանց արցունքի:

Նրանցից շատ առաջ, հեռու հարթավայրի վրայ երեսում էր Ասօն աւազակների ահագին բազմութեան առաջ: Նա կանգնել էր մեն-մենակ, մաղերը գլխին ցրիւ, աջ ձեռքը բարձրացրած հրամայող շարժումով: Եւ երբ թշնամիները բոլորովին մօտեցան, նա ճշաց իր բոլոր ձայնով.

—Կացէք, էլ ոչ մի քայլ, այս գիւղում գեռ մի մարդ կայ:

Վայրենիների խուժանը կանգ առաւ զարմացած. այս մենակ մարդի յանդգնութիւնը նրանց յուզեց և ապշեցրեց: Խենթ չէ՞ արդեօք, մնրդ է, թէ ուրուական: Մի առժամանակ կանգնել էին իրար հանդէպ այս անօրինակ հակառակորդները, մէկը՝ այն բազմութիւնը, կարծես ամաչում էր յարձակուել, միւսը՝ այդ մի հատիկ մարդը տեղի տալ չէր մտածում: Եւ նոյն վայրկենին գիւղի կողմից լսուեց ահագին մոմոտց, Ասօն էլ մենակ չէր, հազար գլխանի ժողովուրդն էր դալիս հեղեղի պէս աւերիչ, և նրա հետ վազում էր կոյսը, «գերեզմանների ջիննին», սեւազգեստ, սգաւոր լալիւնը, որ այդ օրը լալու ցանկութիւն չ'ունէր:

Եւ զարկուեցին...

Ընդհարումը սարսափելի եղաւ, գիմադրութիւնն անօրինակ, լեռնականներն այդպիսի բան չէին տեսել, չէին սպասում: Անէծք, հայհոյանք, մռնչոց, անքոց խառնուեցին իրար, և վիրաւորներն ու մեռածները արորուում էին կուտոյների սաների տակ:

Խաղաղ, հնազանդ գիւղը կրակ էր կտրել վիրաւոր գազանի պէս և փախչելու ցանկութիւն չ'ունէր, յարձակուող աւազակները սարսափից ապուշ էին կտրել, էլ կռիւ չէր կարծես, այլ մի ուրիշ սոսկալի բան, ուր հա-

կառավորողների նպատակը յազմութիւնը չէր, այլ ոչընչացումը: Երբ մարմինները գալարուում էին իրար կատաղի օձերի պէս, այդ ժամանակ գործում էին և՛ բազուկները, և՛ մատները, որ սղմում էին կոկորդը, և՛ առամները, և՛ ոտները, և ապա փլչում էին իրար վրայ խորտակուող պատերի պէս:

Այս անօրինակ պայքարի ամենատաք վայրկենին, երբ Ասօն դառնում էր թշնամիների մէջ աւերիչ հողմի պէս, նա յանկարծ տեսաւ, թէ ինչպէս Պետօն՝ Սառայի ամուսինը կուրծքը բռնեց և ընկաւ: Եւ նոյն վայրկենին իր սիրած կնոջ գրաւիչ պատկերը ցցուեց Ասօի աչքերի առաջ իր բոլոր հմայքով, իր բոլոր գլուխիչ կանացիութեամբ, որ այնպէս աղմկել էր նրա գոյութիւնը: Նա տեսաւ նաև իրան՝ Սառային, չքնաղ Սառային, որ վաղէվաղ հասաւ ու կռացաւ մեռնող Պետօի վրայ: Ասօի աչքերը մթնեցին, ոտները դողդողացին, հին զգացմունքն իր սրտի խորքում, մոխիրների տակից մէկ էլ զարթնեց անօրինակ ուժգնութեամբ... այժմ Սառան ազատ էր, Սառան այրի էր...

Մինչդեռ իր շուրջը, իր ձայնով, իր օրինակով թշնամու գէմ գուրս եկած գիւղը զարկում, մորթուում էր, մարգիկ ընկնում էին ոռնոցով ու անէծքով, Ասօն ճակատը բռնած, աչքերը խուփ, մնացել էր անշարժ. Սառան այրի էր, հմայիչ Սառան ազատ էր...

Եւ ամիսների կեանքը վայրկենապէս եկաւ ներկայացաւ նրա աչքին, պատկերներն արագութեամբ իրար յաջորդեցին մի այլանդակ ժխորով, եկան ու անցան, մնաց դարձեալ ամենից գրաւիչը, Սառայի չքնաղ գէմը, նրա վառ այտերը, նրա բոց աչքերը: Ասօն այժմ վախենում էր նայել գէպի այն կողմը, ուր Սառան էր, Պետօի վրայ արտասուող այն հրեշտակը: Եւ Սառան ազատ էր, Սառան այրի էր...

Կռիւր շարունակուում էր, մարգիկ փչրուած հասկերի պէս փռուում էին գետին, և Ասօին թուում էր, թէ ամենքը զարկում են և ընկնում միայն Սառայի հա-

մար, որ կուռում են միայն նրան ազատելու, նրա պատիւն ու գեղեցկութիւն փրկելու թշնամիներէից:

Մի ամբողջ ժողովուրդ մեռնում է մի հատ կնոջ համար: «Օ՛, դա սո՛ւտ է, սո՛ւտ է», մրմնջացին նրա շքութունքները, և նոյն վայրկենին Շողերի տանջուած, դունաա պատկերը ցցուեց նրա աչքի առաջ և ծածկեց Սառային: «Սո՛ւտ է, կրկնեց նա, Շողերը անճարների զոհն է և ո՛չ Սառայի»... Եւ նա ճակատը թողեց, աչքերը բարձրացրեց, նայեց Սառային, և խփոյն երեսը դարձրեց, աչքերը բռնեց. Սառան ազատ է, այրի է...

«Օ՛, մունչաց նա ցաւով, սիրտս, սիրտս»...

Եւ նոյն վայրկենին մէկը մօտեցաւ նրան, կռացաւ ուսին և կամացուկ փսփսաց ականջին.

—Վախեն՞ում ես... էլի վախեցար, կտրի՛չ Ասօ:

Նաւճն էր...

Ասօն օձից խայթուածի պէս ցնցուեց, ճակատը թողեց, գլուխը ցնցեց՝ կարծես մի անախորժ միտք հալածելու համար. Սառան ազատ էր... բայց գիւղը նրա համար չէր զարկուում, Ասօն նրա համար չէր կուրծքը դէմ տուել մահին:

—Վախեն՞ում եմ... Օ՛, սուտ է, սուտ է, ես չեմ վախենում, նաւճ:

Եւ նա նորից նետուեց առաջ, այս անգամ աւելի թափով, աւելի վճռաբար ու կատաղի. կամ պէտք էր մեռնել, կամ փրկել գիւղը: Կռիւն այնուհետեւ էլ երկար չը տուեց. լեռնական վայրենիները անակնկալ ու անօրինակ դիմադրութիւնից և իրանց տուած զոհերի բազմութիւնից սարսափած՝ տեղի տուին և ցաք ու ցրիւ փախան դաշտերով:

Գիւղը փրկուած էր...

էլի դիշեր էր:

—Ո՛ւր, որդի, ստում էր Նունուֆարը:

—Փօսը մեծ է, շատ մեծ, մարէ, պատասխանեց

որդին, դէպի դուռը քայլելով. — պէտք է լցնել, որ ջրազացը շինուի, նոր ջրազաց, մեծ ճանապարհին... Ամեն բան աշխարհում ջրազացի քարի պէս է, դառնում է հն դառնում... Սառան սիրուն է, շատ սիրուն, իմ դըժբաղդ մարէ, բայց ես ուրիշ դարդ ունիմ, դարդ՝ հազար ծովի չափ, պէտք է դնամ:

— Աս՛, իմ որդի, իմ մինուճար...

— Դարդ ունիմ, դարդ՝ հազար ծովի չափ, լսուեց խաւարի միջից:

Նունուֆարն ու Շուշիկը դարձեալ մնացին մենակ, իսկ Ասօն վերստին դնաց դէպի մութ անյայտը:

Վ Ե Ր Զ

Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆ

## ԱՒ, ՀԱՆԳԻՍՏ ՏՈՒԷՔ...

(Նիկիտինից)

ԱՒ, հանգիստ տուէք... Հանգիստ եմ խընդրում  
Փոթորկուած մըտքիս, ցաւատանջ կըրծքիս.  
Ո՛ղջ օրն եռում էր իմ շուրջ անդադրում  
Ա՛յն ամենն, ինչից խոցուած է հոգիս:

Ո՛ւր փախչել մեծ-մեծ, փըքուն խօսքերից.  
Խօսքով ամենքն են մաքուր, աննախանձ.  
Մենք ճըշմարտութիւն պաշտողներ անբիծ՝  
Պատրաստ ենք անվե՛րջ պաշտելու մեր անձ:

Խըղճմտանք սպանուած, ամօթանք մեռած,  
Խաւարում սնուն է տիրազլուխ աղատ.  
Ոչ ոք չէ ողբում անկեղծ, սրբաբաց,  
Ոչ ոք չէ պատժում չարիքն ու արատ:

Մենք մարտիրոսներ չունինք մեր միջում...  
Ձենք պատասխանում փըրկութեան կոչին.  
Արեւից պահում, արեւից փախչում,  
Լոյսից վախում է մեր ըստրուկ հոգին...

Գուցէ օգնմն է ողջ ցան ու վրտանգ—  
Ինչ պէտք է թռչնի—ծըլում է, ծաղկում,  
Ինչ պէտք է ծաղկի—կորցնում է երանգ  
Եւ թըչուառ ժահով հէգ կեանքը կընքում...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

## Վ Ա Ն-Տ Ո Ս Պ \*)

### V

Վան-Տոսպի բնակիչների թիւը ներկայումս հաշւում է 50,000 հոգի, որոնցից մօտ 35 հազար հայերն են կազմում, որոնք մեծաւ մասամբ բնակւում են քաղաքում և մերձակայքում, արուարձաններում: Բնակիչների մնացեալ մասը կազմում են թիւրքերը, շատ սակաւ քիւրդեր, չէրքէզներ և գնչուներ (թիւրք բոշաներ, մըտրըւլներ ըստ վանեցոց): Հայ բնակչութեան ընտիր մասը համարեա հին գաղթականներն են, զլիսւորաբար Պարսկաստանից Խոյ \*\*) և Սալմաստ գաւառներից, որոնք XVII և XVIII դարերում պարսկական հարստահարութիւնից խոյս են առել և բնակութիւն հաստատել Վանում, իրանց հետ բերելով պարսկահայ արուեստն ու ճարտարութիւնը:

Վանի հայը միջահասակ է, թիկնաւէտ, լիք և համարձակ բնաւորութիւնով, դէմքը կլոր է՝ հայկակ. արծուէ ունդով զարգարուած:

Արհեստաւոր ժողովուրդ է վանեցին, 70 տոկոսը պարապւում է ձեռարուեստի կարելի է ասել ամեն ճիւղերով. շատ ոյժ տրուած է ոսկերչութեան և ջահագործութեան արուեստին: Աղնիւ մետաղներից շինւում են ամենայն տեսակ զարդարանքներ, իսկ ընտիր ընկոյզի փայտից և նրա տախտակից զանազան կահկարասիքներ ճաշակաւոր նրբութեամբ. ոչ պակաս առաջադիմել են և դերձակութիւն, երկաթագործութիւն,

\*) Տես «Մուրճ» № 8.

\*\*) Այժմուայ Վանի բարբառը մեծ նմանութիւն ունի Խոյի բարբառին:

կօչկահարութիւնն և ուրիշները, ոստայնանկութիւնը մասնաւորապէս վերջին տարիներում սկսել է ծաղկել, շինուում են «շաշիագ» կոչուած կտորը, ամենաընտիր և գիմաղկուն կտորներ թէ գոյնի, թէ նրբութեան կողմից, արանց զգեստների յարմար, որպէս և մանուսայի մի տեսակը, և սատրանջ: Շատախցի հայերը Վանում բաց արած գործարաններում պատրաստում են «չատխու շայ» կոչուած համբաւաւոր «աբաներ»:

Հայ տարրի մնացեալ տոկոսը կազմում է այսպէս կոչուած առևտրականների—խանութպանների դասը. շատ քչերն են որոնք կառավարչական պաշտօններում են գտնուում, ձեռք բերած լինելով տիրոջ կառավարութեան անսահման վստահութիւնն իրանց հաւատարմութեան մասին առ սուլթանն և առ նրա դահի սեպհական շահերը. ըստ որում կառավարական պաշտօնները վերապահուած են միմիայն թիւրք իշխող տարրին: Վերջին տարիներում միայն սկսուել է հայ ոստիկանների թւի շատանալը՝ անշուշտ ի նպաստ պետութեան շահերի:

Հայ գիւղացու գլխաւոր պարագմունքն է իհարկէ՝ հողագործութիւնը, զբաղմունքը հողի հետ, որ (հողը) վարձատրում է առատութեամբ մշակի ճակատի քրտինքի փոխարէն՝ լինելով պարտոտ և արգասաբեր, արտադրում է լաւ ցորեններ, մասնաւորապէս «աւետիք» կոչուած տեսակը ընտիր խոշոր հատիկներով, գարի, վարսակ, կտաւահատ, որից պատրաստուում է վանեցու ձէթը թէ ուտելու և թէ վառելու համար, որի (ձէթ վառելու) գործածութիւն տակաւին մնում է վան-տոսպցիների մեծագոյն մասին մօտ:

Սակայն երբեմն անգութ իշխողի դիտաւորեալ կամայականութիւնը միացած բնութեան ժլատ զգացումին կը պատրաստեն գիւղացու համար, որի հետ և քաղաքացուն, դառն և չքաւոր օրեր. այդ օրերի շարքումն են մտնում 1880 թ. մեծ սովը, որպէս և վերջերս 1896—1900 թ. թ. սոսկալի թանկութիւնը, որի յեշատակը այժմ էլ՝ այս մի-երկու տարուայ աժախութեան օրերում սարսափով է պահում վանեցին, և որի թողած կործանարար և քայքայիչ խոր հետքերը (գլխաւորաբար գիւղացու համար) մնալու են դեռ երկար՝ իշխող դրութեան, անտանելի կարգերի շնորհիւ:

Վան-Տոսպի գիւղերը դաշտային լինելով, որի վրայ ոյժ է գրւում առհասարակ երկրագործութեանը, հետևաբար չէր կարող անասնաբուծութեան գործն ընդարձակ չափով աճել: Գիւղացու պահած և խնամած անասուններն են ոչխար, այծ, կով, ձի, շատ քչերը գոմէշ, այլև եզ, որոնք նրա երկրագործական պիտոյքն են լրացնում: Դրա փոխարէն այգեգործութեամբ են

պարապուում այն գիւղացիները, որոնց գիւղերը բնութեան բարեհաճութեամբ չըջպատուած են բազմաթիւ այգիներով և խաղողի թփերով. այդ կարգին են պատկանում ինչպէս յայտնի է Շահպաղի, Կուռուպաչ, Աւանց, Լէզկ...

Աւանց գիւղի բնակիչները այգիներ մշակելով գիւղում պահում են և գինետներ. բայց աւանցիների դիւաւոր և շահաբեր պարապուումքն է, չնորհիւ գիւղի յարմարութիւններին և բնակիւն դիրքին՝ նաւաւարութիւն. գործածում են մեծ և փոքր առադաստաւոր նաւեր: Սղգայ գիւղացիք նուրբ և կալուղ եղէգներից (ծիլ) գործում են մի տեսակ կապերտ խսիր կոչուած, որոնք աների, սենեակների հողէ յատակների վրայ են փռում կապերտների տակից: Քաղաքացի կանայք զբաղուում են տնտեսական գործերից զատ այլև ձեռագործներով և պատրաստում են «իւն» կոչուած նուրբ բրդից գործուածներ, շինում են և նոյնիսկ գորգեր: Շինական կանայք ամբան եղանակներում զբաղուում են զլիւաւորաբար դաշտային պարապուումքներով իրանց երկրագործ ամուսիններին օժանդակելու համար, իսկ ձմեռը՝ տանը նստած ժամանակ՝ հիւսում են բրդից այլևայլ գործուածքներ շինական պէտքերին համապատասխան:

Վան-Տոսպը իր բնական և արուեստական բերքերից արտահանում է թէ ի Պոլիս և թէ չըջակայ գաւառները՝ ընտիր ոչխարի աղնիւ բուրդ, որպէս, «մանուսա», «աբա» կոչուած նուրբ գործուածները և շատխու շալի զանազան տեսակները, այլև ոչխար, տաւար, ձի, այծի, եզան և դոմէչի կաշիները, աւելացնենք և Վանայ փամպլիկ սպիտակ կառուները որոնք հորջակուած են, քիւթիւկ կոչուածը՝ ընկոյգի փայտի կոճղերը որոնք եւրոպական գործարանների մէջ նուրբ տախտակների և թիթեղների վերածուելով մեզ կը վերադառնան անհամեմատ սուղ գներով. ինչպէս և միւս արտահանած հում նիւթերը: Ի Պոլիս, որպէս և չըջակայ կարեոր կենտրոններն են ուղարկուում մեր ոսկերիչների և փորագրիչների կատարելութեան հասցրած ձեռագործ շինուածքները—արծաթէ տուփեր, թասեր, գօտիներ: Աչքի ընկնող երեոյթ է, որպէս ասել ենք, որ Վանի բազմաթիւ և անհամար այգիների արտադրած գինու ահագին քանակութիւնն սպառուում է տեղին մէջ միայն առանց մի կաթիլ անգամ արտահանուելու. դրա հակառակը գարնան եղանակի սկզբներում Վանայ ծովից հանուած տառեխը—ձուկը մեծ քանակութեամբ ուղարկուում է Պարսկաստան, Ռուսիա, չըջակայ նահանգները՝ Վան-Տոսպի ազգաբնակչութեան պէտքը լցուցանելուց զատ: Արտահանուում է նոյնպէս ծովի ջրից աւանցի-

ների պատրաստած բորակը («պարակ» ըստ տեղացոյ) որ մինչև Ասորիք է ուղարկուում \*)

Վան-տոսպոյիների պէտքերի համար ներս է բերուում գրանց փոխարէն ևւրոպական ամեն ազգի գործարաններից դուրս եկած ամեն տեսակ ապրանքներ, չնորհիւ այն հանդամանքի որ սուլթանը շատ չնչին մաքս է վերցնում ներմուծուած այդ ապրանքներից:

Վանայ ծովակի վրայ երթևեկող աւանցիների նաւերը հիւսիսից—Արճէշից և Ատլճնազից բերում են առատ և ընտիր ցորեն և ուրիշ արմտիք, Գաւաշ և Կարճկան (ծովի հարաւ. ամ) գաւառներից վառելու փայտ և ածուխ: Մոկսից և ուրիշ շրջակայ գաւառներից գալիս է իւզ, մեղր, նուռ, թուզ, «ռուպ» կոչուած քաղցր հեղուկը՝ չնորհիւ այդ գաւառների կլիմայի տաքութեան և երկրի բերրութեան: Պարսկաստանից ահագին քանակութեամբ ստացուում է գորգ, բամբակ, մեծագին շաւեր, չիթ, քիշմիշ (չամիչի անկուտ և մանր տեսակը), չրպ (պաղլեղ) և այլն կարաւանների միջոցաւ, որոնք ամեն շաբթու՝ մանաւանդ ամառնային եղանակներում, երբ կարաւանի ճանապարհը փակուած չի լինում գալիս են շարան-շարան, բեռնակեր կենդանիներ և այլն կարաւաններում գործածութեան համար, ուղտ, ձի և ջորի, քիշանգամ էշ և եզ:

Վան-Տոսպում կանոնաւոր ճանապարհներ չը կան ամենեւին. ամենաբանուկ ճանապարհը՝ Վան-Էրզրում-Կարին գիծը՝ կանոնաւոր խճուղի չ'ունի. ճանապարհորդութիւն լինում է միայն ձիով և շատ քիչ անգամ ճանապարհորդական թիւրքի կոշտ սայլակներով վրան չորերով և փայտով ծածկուած արևից և անձրբներից պահպանութեան համար իբրև թէ: Գաղաքումն անգամ տակաւին չի ընդհանրացել կառքով երթևեկութիւն. հանրակառքեր ամենեւին չը կան, բացի մի քանի պետական հարուստ պաշտօնեաների՝ սևիական ֆայետոններից: Այգեստանից Բերդաղաքաղաք տանող մի ժամուայ ճանապարհ չուկայ են գնում վանեցիք առաւօտ ոտքով և ոտքով վերադառնում. շատ քիչերն են որ այդ ճանապարհը կտրելու համար ձի գործածեն, այդ համարձակութիւնը տրուել է նրանց միայն այս վերջին միջանի տասնամեակներում \*\*): Սուրհանդակը ստացուում է քաղաքում

\*) Միրախորեան Մ. ճուղկորութեան ի հայաբնակ դաւառ...Պոլիս. 1884 II—47:

\*\*) Այսպէս որ զարմանալի չէր երբ մի քանի տարիների առաջ Վանի արինուշտ և կատաղի Բահրի-փաշան—այժմ կուսակալ Ատանայի—կատաղութիւնից կը փրփրէր ճանապարհի վրայ մի հայ ձիու վրայ տեսնելիս, այնպէս որ

միայն շաբաթը մի անգամ, պատահում է երբեմն, որ մի քանի շաբաթներով պոստը ուշանում է: Ի բաց առեալ Պոլսում հրատարակուող հայերէն (ստացուած հայ թերթերի թիւը 30 օրինակից չի անցնի ներկայումս) և թիւրք թերթերը՝ ուրիշ ոչ մի պարբերական թերթ կամ հանդէս չի կարելի ստանալ պոստով. ամենաչնչին կասկածի դէպքում նամակները, մանաւանդ արտասահմանից եկած, կը բացուին կառավարութեան կողմից և խիստ քննութեան կ'ենթարկուին:

Վանեցի հայը անհանգիստ և դաղթական ժողովուրդ է. մինչև մի տասնեակ տարի առաջ նրա պանդխտութեան զլիսաւոր կենտրոնավայրը և ապաստանարանն Ռիւրքիոյ մայրաքաղաքը—Կ. Պոլիսն էր, սակայն Վան-Տոսպի աշխատաւորը՝ նրա առաջ յայտնի պատճառներով այդ դուռը փակուելուց և իր օջախն ցիրուցան լինելուց ի վեր սկսել է ուրիշ կենտրոններ որոնել. այնպէս որ այս բոլէիս կարելի չէ մի որևիցէ քաղաքի անունը յիշել, լինի երոպական կամ ասիական, նոյնիսկ ֆիլիպեան և ամերիկեան, միով բանիւ աշխարհի ամենայն ծայրերում, ուր վանեցին ոտք կոխած և մի գործ սկսած չը լինի: Նա ճարպիկ է և խորամանկ. բայց առաւելապէս դրական յակովթիւնների տէր, քան բացասական, թէև իրանց ընդունակութիւնները ի շար գործ ղնողներ, վնասակարներ և անպիտաններ էլ անպակաս են լինում, մանաւանդ դրսերում \*): Նրա պանդխտելու և թափառե-

ելը մի օր ճանապարհին մի անկիւնում ցնցոտիների մէջ ընկած մի աղքատ հայ է տեսնում հիւանդոտ և հիւծւած, մեծ հրճուանքով բացադանչում է. «Էրմէնի պէոյլէ կէրէք»—հայը այսպէս պէտք է լինի Ցաւակաւորը 1896 թ. Վանում տեղի ունեցող հայերի կողմից արինահեղ ընդգիմտութեան ժամանակ այնտեղ ականատես չի եղել սուկայն, տեսնելու համար, թէ ինչպէս նրա երևակայած վանեցի գծուծ և ողորմելի հայը իր դարաւոր ստրկացած վիճակովը զէն ի ձեռին մի քանի շաբաթներով կարողացել է դիմադրել կատղած ֆանատիկոս մահմէդական տարրի զինուած շարքերին, թիւրք կանոնաւոր զօրքերի սուիններին և որոտացող և ամեն բան քարուքանդ անող թնգանօթների հարուածներին՝ պաշտպանելու համար Վանի հայ տարրը հաւի պէս խողխողուելու անխուսափելի վտանգից:

\*) Սրբապղծութիւն է պարզապէս այսպիսիների շարքին դասել և վանեցի յայտնի Ոստանիկ Տէր-Մարգարեանն, որի վերջին վարմունքը և խորհրդաւոր վաղճանը Պարիզում 1874 թ. բոլորովին այլ, տարբեր դիտումների պէտք է վերագրել, քան ճգնում է ցոյց տալ Մերսետէս. («Մասիս» շաբաթաթերթ. Պոլիս 1903. № I, II, III)... նրա մէջ պէտք էր որոնել մի ապագայ նոր Չահմիրեանց (Տես. «Մուրճ», 1901. № 11) և ոչ այլ ինչ, թէպէտ նրա միջոցները ներկայ կեղծաւոր դարու բարոյական հասկացողութիւններով մի քիչ դատապարտելի երևան: Սակայն էֆէնդիների աշխարհում ներկայումս այդ տեսակ բարեխիղճ ուսումնասիրութիւն փնտրել անլի քան միամտութիւն կը լինի իհարկէ:

լու արմատները պէտք է որոնել ըստիս նրա աղքատութեան, սոսկ անտանելի չքաւորութեան մէջ: Վանեցի առաջին հայ հարուստը հաղիւհազ 10000 ոսկու (90000 ռուբլի) կանխիկ՝ պատրաստի դրամի կարողութիւն ունենայ և կալուածներով ու վարկով հանդերձ առաւելն 15—20000 ոսկու. իսկ այգայիսիների թիւը մատի վրայ կարելի է համարել, 4—5-ից չէ անցնում, մնացեալը վաճառական կոչուած փոքր խանութպաններ են. այդ մի քանի փոքրաքանակ վաճառականներն են նրանցից վարկով առած ապրանքներով առևտուր անողները:

Առևտուրի ու վաճառականութեան վանի հրապարակը տարէցտարի կայուն վիճակ է ստանում, նախ ժողովրդի պարբերաբար հիւժւոզ չքաւորութեան, ապա ճանապարհների անապահովութեան հետևանք. տարի չի լինում, որ միքանի վաճառականների ապրանքների (մանաւանդ Ռուսիայից եկող) հակերը ճանապարհին չը կողոպտուեն աւաղակիներից և կամ խախուտ և անվրստահելի նաւակների շնորհիւ Վանայ ծովի յատակի բաժին չը դառնան. եթէ ապահով հասնեն էլ, ամիսներ կը տեւեն ևրբեմն \*): Վանի առևտուրը կենդանութիւն է ստանում առաւելապէս աշնան և մասամբ էլ գարնան ժամանակ, երբ շրջակայ գաւառներից քիւրդերը և հայ գիւղացիները քաղաք են թափւում առևտուրի համար. մնացեալ ժամանակներում մեռելային խաղաղութիւն է տիրում Վանայ ընդարձակ շուկայում (չարչի), ուր մի տասն փարայի համար աղքատ վանեցին հարիւրաւոր երզումներ, որպէս և հայհոյանքներ կը տեղացնի իր մուշտարու գլխին. հասարակական կեանքը, իր ճշգրիտ առուժով, մեռած է Վանում, վերջին միքանի տարուայ ընթացքում միայն կեանքի եռուզեօր, շարժման, կենդանութեան փոքրիկ նշաններ են երևում:

Հարուստ վանեցին չը գիտէ ամենևին դորձածել իր ունեցած կարողութիւնը. նա կամ չափազանց գծուծ և կծծիութեան աստիճանի խնայող կեանք կը վարէ աւելացնելու իր մի քանի ղուրուշները մի բնակարան կառուցանելու համար և կամ իրան զէվք ու սէֆայի (կերութում) պիտի տայ՝ փչացնելով սակաւ ժամանակում իր անտեսած առանց այն էլ վտիտ կարողութիւնը. վերջերս մանաւանդ խմելը, ուղիից ըմպելիների անհամութեան աստիճանի հասցրած դորձածութիւնը շատ է ընդհանրացել Վանում մեծ ծաւալ ստանալով, այնպէս որ այս բոլէիս ալքոհոլիզմի տիրապետութեան սահմաններում իւրաքանչիւր

\*) Տարի չի անցնում առանց մի քանի անակովութիւնների:

Թաղը, իւրաքանչիւր փողոցը իր մէկից աւելի «արաղ քաչաղն» (օղեգործը) և զինեաներն (մէյիսունէ) ունի:

Թէյի գործածութիւնը նոր է սկսուել և ե՛ս մասամբ հաճոյքի համար, քան թէ որպէս անհրաժեշտ կարիք. ամենատնտեսական խմիչքներն են թէյը, սուրճը տաճկական փոքր «ֆինջաններով» (բաժակ), օղի (արաղ), զինի, ուրիշ տեսակ սղելից ըմպելիներ, (րոմ, կոնեակ, գարեջուր...) զովացուցիչ խմիչքներ (լիմոնադ...) անձանօթ են առայժմ վանեցուն և մի երկուսին միայն մատչելի: Ճաշերի միջոցին (առաւօտ և երեկոյեան պահերին է լինում վանեցիների կանոնաւոր հացկերոյթը տեղական հանգամանքներին յարմար) դանակ, պատառաքաղ... առանձին ամաններ, բաժիններ ունենալու սովորութիւնը շատ սակաւ, մի-երկուսի մօտը միայն ընդունուել է, այն էլ հիւր ունեցած դէպքում:

Սենեակները կահաւորուած են լինում ասիական ճաշակով, սենեակի (օղա) ճակատում անխուսափելի սէղրը (բազմոց) նրա շուրջը փռուած մինտէրներով (դոշակ) կամ մի քանի նստարաններով (կանախա) և երկու թիկնաթոռներ կազմում են սենեակների կահաւորութեան ամբողջութիւնը, մի մեծ, կլոր և մի քանի էլ փոքր սեղաններով: Գիւղերի խրճիթները կարծես կատարելապէս «Սնապապիս»-ի նկարագրած գետնափորերը լինին իր բոլոր մանրամասնութիւնով: Քաղաքին մերձ եղող Աւանց, Սըղ-գայ... մի քանի մեծ գիւղերն իսկ միւսներից տարբեր մի վիճակ չեն ներկայացնում:

Քաղաքացու տարազը խառնուրդ է ասիականի և եւրոպականի. կանանց մէջ վերջին տարիներս մասնաւորապէս մըտնում է եւրոպական նորաձեւութիւնը ծիծաղելի կերպարանքով: Այր գիւղացին հազնում է տակաւին իր աւանդական քեաղախին, չուռ քեաղախին և չալէ չալվարը:

Ասիական-մահմէդական երկրներին միայն յատուկ փակ կեանքը իր տղեղ կողմերով տիրում է այնտեղ. կինը գուրս է գալիս անից միայն այն դէպքում, երբ եկեղեցի է գնում կամ մի ազգականի մօտ չարսաւների մէջ փաթաթուած:

Մտերմական մօտիկ յարաբերութիւններ տղայի և աղջկայ միջև չը տեսնուած քան է. ամուսնական կապերը կնքում են միջնորդների (առաւելապէս քահանաների \*), պառաւների) միջոցաւ և ծնողաց հաւանութեամբ, որոնց այդ աւանդական ի-

\*) Վտնի քահանայական դասը տգէտ է, ընկած բոլորովին ժողովրդի աչքից և մեծաւ մասամբ մի քանի աղաների քահանայքին խաղալիք: Անցեալ դարու վերջին յիսնամեակում վանեցին մի հատ միայն արժանաւոր քահանայ է ունեցել, իր պակասութիւններով հանդերձ:

բաւուների լիազօրութեան դէմ ընդվզումները հազւադէպ են հնազանդ և հլու որդիների կողմից. այնպէս որ աղան շատ անգամ ամուսնանալուց յետոյ է իր կնոջ երեսը տեսնում, ուր մընաց որ նրան իսկապէս ճանաչած, հաւանած լինէր ընտրութիւնից առաջ: Ազջկայ կողմից նմանապէս անամօթութեան աստիճանի համարձակութիւն կը լինէր անշուշտ ինքն իր ձեռքով իրան յարմար փեսացու ընտրելը. նա ոչխարի պէս պիտի հնազանդի հօր հրամանին մտնելու այն ախոռը, ուր կը քշի նրան խիստ և անողոր ծնողների նիւթական կամ մի որեւիցէ փառասիրական շահախնդրութիւնից գրգռած բռնաւոր կամայակաւնութիւնն: Ամուսնական կապերը կնքուում են 20—27 (տղայոց) և 16—20 (ազջկանց) տարիների մէջ, որից դուրս բացառութիւններ էլ յաճախ են պատահում, առաւելապէս գիւղերում. փողովըրդական հետեւեալ երգի մի կտորը բնորոշում է այդ աղետաբեր սովորութիւնը իր կործանարար հետեանքներով—

Էմալ էնիմ, էմալ էնիմ <sup>1)</sup>,  
Սարեր ձիւն ա, չիւարեր <sup>2)</sup> իմ,  
Եար պզտիկ ա, մալուկր <sup>3)</sup> իմ,  
Հետս չի գայ առնիմ տանիմ:

Միւղիւր <sup>4)</sup> աղա, արեղ սիրելի,  
Էսօր էրթաս հիւաներ պերես,  
Որ քո լաճուն օրրոց չինես,  
Մէջը գնես օրօր ասես,  
Էմալ էնիմ...

Էրիկ մ'ունիմ հաւու ճուտ ա,  
Քչինք վակեախ <sup>5)</sup>, թող խոտ ուտա,  
Էրիկ մ'ունիմ եղին դեղին,  
Կը նմանի գարնան եղին,  
Ձեռնէն բռնեմ տամ գրողին,  
Թողնեմ էրթամ խետ սիրողին,  
Էմալ էնիմ... \*)

Որանք տարիքով աղջիկն է, որ իր օրօրոցի մէջ գնելու միայն յարմար եարը, էրիկը, և իր արգահատելի վիճակը և սև օրը կ'ողբայ: Անգութ և ընչաքաղց ծնողքը յաճախ իրանց

<sup>1)</sup> Ինչպէս անեմ, <sup>2)</sup> ապշիլ <sup>3)</sup> տխրիլ <sup>4)</sup> կառավարիչ (սանջակի, նահէէփ)

<sup>5)</sup> ախոռ:

\*) «Վանայ սագ». Չերենց Գ. II. 39. Քիֆլիս. 1899:

դեռահաս՝ 8—10 տարեկան մատաղատի մանուկներին, ամուսնացնում են մի հասակն առած աղջկայ հետ, որ նրան մայր լինելու միայն յարմարութիւն ունի, սրա բերած ճոխ ջհեղը (օժիտ) և հարուստ կալուածները սեպհականացնելու ակնկալութեամբ միայն:

Քաղաքից ևն յաճախ աղջիկները տանում գիւղը հրրև հարսնացու, քան թէ գիւղերից բերում, զեղջիկական պարզ և անպաճոյճ կեանքին ընտելացած հայ աղջիկը այնքան էլ չի ցանկանում քաղաքացու կին լինել. ուշագրաւ է այս առթիւ ժողովրդի բերանում յաճախ երգուող մի ղեղեցիկ երգ, թէև պարզ, անպաճոյճ, սակայն աչքի ընկնող՝ զդացմունքի անկեղծութեամբ, ճշտութեամբ: Այս երգը կարելի է համարել նոյնպէս և մի նմուշ Վանայ բարբառի, որպէս և հաւաքածոյ հարսանեկան զարդարանքների և զեղջիկական կենցաղի: Երգը տրամախօսութեան բնաւորութիւն է կրում աւելի և տեղի է ունենում գիւղացի կնոջ և իր հասած աղջկայ միջև:

—Քան սև', սև', սևաւոր մարէ,  
Յորին <sup>1)</sup> իմ տուն աւերեցիր,  
Կտրիճն իմ ձեռքէն հանեցիր,  
Իմ կանանչ արիւն էրեցիր:

—Քան սև', սև', սևաւոր ախշիկ,  
Արի քի տամ Վանայ խոջին,  
Որ քի դնի նխշուն օղին <sup>2)</sup>,  
Քեզ հագցնի թուխ կոնտուռէն <sup>3)</sup>,  
Վերէդ քաշի շամ-դարահին <sup>4)</sup>,  
Քո տակ թալի կութնի գոչակ <sup>5)</sup>,  
Քամար <sup>6)</sup> կապի մէջքիդ պարակ <sup>7)</sup>,  
Ատլասից <sup>8)</sup> բարձ դնի ևրեսիդ,  
Դոչիցդ <sup>9)</sup> կախի դեղին ոսկին,  
Էլմաստ մատնիկ <sup>10)</sup> քո մատներին,  
Էլնիս <sup>11)</sup> խաթուն նորա օղին:

<sup>1)</sup> Ինչու, <sup>2)</sup> սենեակ, <sup>3)</sup> կօշիկ, <sup>4)</sup> ձամի (Դամասկոս) մետաքսայ նուրբ գործուած կտոր, <sup>5)</sup> ապրեշումէ (մետաքս) նուրբ գործուածք, <sup>6)</sup> գօտի, արծաթից շինուած և զանազան նախշերով դրուագուած, <sup>7)</sup> բարակ, նուրբ, <sup>8)</sup> կերպասի ամենաընտիր տեսակը, <sup>9)</sup> կտրծք, <sup>10)</sup> մատանի, <sup>11)</sup> լինիս:

—Քա սե', սե', սեաւոր մարէ <sup>1)</sup>,  
 Վանայ խոջին կուրրան կ'անեմ  
 Իմ Սախօի էրկէն բաժին <sup>2)</sup>,  
 Գէոլի-կազի <sup>3)</sup> պարակ վզին,  
 Ուր ջալահուն <sup>4)</sup>, թուխ կոռտըկին <sup>5)</sup>,  
 Սև քէոլողին <sup>6)</sup> չուռ քիաղախուն <sup>7)</sup>,  
 Թուխ մազերաց, թուխ աչքերաց,  
 էրկէն քթին, բէոլ <sup>8)</sup> բեղերաց,  
 Պարկա-բերնին, խոզոտ <sup>9)</sup> ձէնին,  
 Ստ մի շարին, ճէոջ <sup>10)</sup> ակնջին,  
 Մազոտ դոշին <sup>11)</sup>, քաքուլներաց <sup>12)</sup>  
 Շալ չլվարին, կտաւէ շապկին,  
 Մէջաց ճարկին <sup>13)</sup>, նխշուն թաթին <sup>14)</sup>,  
 Ոտաց չարբխին, ուշկըքերուն,  
 Նախրափէտին, գիապանակին <sup>15)</sup>,  
 Փայխի թոռմին <sup>16)</sup>, ուր <sup>17)</sup> շորերաց:  
 Սախօն է հէր <sup>18)</sup> սարեր կան գէր <sup>19)</sup>,  
 Որ հէվարին <sup>20)</sup>, խիտ ուր նախրին,  
 Հօ, հօ անէր, հէ, հէ ասէր,  
 Գառնէր սուն գէր,  
 Որ ինոր ձէնը <sup>21)</sup> ձիկ <sup>22)</sup> անուշ գէր,  
 Գիշեր-ցերեկ սարեր կան գէր \*):

Ինչպէս երևում է, գեղջկուհին հազար անգամ կը նախընտրէ իր համագիւղացի սրտի սիրածի—Սախօի (Սահակի)—որին սակայն մերժելով հանել է իր ձեռքից իր անդուլթ մայրը՝ Վանայ խոջին տալու համար—չուռ քիաղախին, նախրափէտը, սև քուրդը, երկար բոյը, թուխ աչքերը, բաց և անկեղծ դոշը կայլն քաղաքում փթած հարուստի զաւակի ոսկիներէր գէղերից, նախշուն օղայից, կուլթնի գոշակից, շամ-դարահուց և այլն:

<sup>1)</sup> Գը գոհեմ, <sup>2)</sup> հասակ, <sup>3)</sup> լճի (մէջ լողացող) սազ, <sup>4)</sup> թեղանի, <sup>5)</sup> բրդէ անթիւ, կարճ և հաստ բաճկոն, <sup>6)</sup> գիւղացու բրդեայ սրածայր զլխարկ, <sup>7)</sup> տ. <sup>8)</sup> ճոխ, առատ, <sup>9)</sup> խոզոտ, <sup>10)</sup> մեծ, <sup>11)</sup> կուրծք, <sup>12)</sup> խոպոպիկ, <sup>13)</sup> գօտի, <sup>14)</sup> գուլպա, <sup>15)</sup> հովիւների բրդէ հաստ վերաբիւ, <sup>16)</sup> ախոռի մէջ պատշգամբ, <sup>17)</sup> իր, <sup>18)</sup> գնար, <sup>19)</sup> գար, <sup>20)</sup> երեկոյ <sup>21)</sup> ձայնը, <sup>22)</sup> ինձ:

\*) «Վանայ-Սազը», Ջերենց Գ. Ո. Թիֆլիս, 1899. §. 4. Վանայ ժողովրդական երգերը և առհասարակ նրա ժողովրդակ. բանահիւսութիւնը շատ անընշան չափով միայն հաւաքուել և լոյս է ընծայուել. այդպիսիներէր յիշատակութեան արժանի են անմահ Սրուանձաեան կպիսկոպոսի հաւաքածունները, առաւելապէս «Մանանայ», Տէվկանց Ար. վարդապետի ժողովածուները և Ջերենց Գէորգի «Վանայ-Սազը» I. II հատրները կայն:

Վանեցի կինը գեղեցիկ է, առողջ, կարմիր և լիք երեսով, երկար և թուխ մազերով, սիրելի է իր ամուսնուն առաւելապէս իր ջանասիրութեան, սակաւապէտութեան, տնտեսագիտութեան և պենելոպեան հաւատարմութիւն համար Գաղաքացի կինը նոյնիսկ ամենից հարուստ ընտանիքում առաւօտուանից մինչ երեկոյ տանջւում է տան մէջ՝ կատարելով տնային տնտեսութիւն ամենայն աշխատութեան, թոնիր վառելուց, տան լուացքը անելուց սկեալ մինչև ամենաթեթիւ ծառայութեան ու կար ու կութը, չը նայած որ այսուամենայնիւ շատ անգամ զրկանքների, անարգանքների է ենթարկւում իր տակաւին կոպիտ և անագորոյն ամուսնուց, որի, որպէս և արեւլան, հասկացողութեամբ կինը մի ստրկուհի է սոսկ սեռական հաճոյքների բաւականութիւն տուող: Հարսանիքի հանդէսները ներկայումս կատարւում են շատ սլարզ մի քանի ժամուայ բարեկամական համախմբութիւնով միայն: Վերացել են համարեա հին-աւանդական եօթն-օր եօթ-գիշերի առասպելական քէֆերը ու ինչոյքների շարքը, որոնք փեսայի՝ ամուսնացողի անտեսական վիճակը քայքայելուց բացի ուրիշ ոչ մի բանի չէին ծառայում:

## VI

Ով երբեքէ հետաքրքրուել է մեր մամուլի և իրակասութեան պատմութիւնով, նրան յայտնի կը լինի անշուշտ, որ անցեալ դարու կէսերին առաջին մամուլը Հայաստանում հաստատուել է և գործել Վարազայ վանքում, Վան-Տոսպում, հայրենասէր Խրիմեան վարդապետի անխոնջ աշխատութիւնով: Վարազ, մի յետ ընկած մութ անկիւն Գիւրգոտանի, 50-ական թւականները, մի ժամանակամիջոց, երբ ոչ միայն գաւառները, այլ նոյնիսկ քիչ-շատ աչքի ընկնող կենտրոններում լուսաւորութիւնը հազիւ կարողացել էր իր աղօտ նշոյլը սլոնել: Այնպէս որ այնքան էլ հեշտ գործ չէր իր խաւար հայրենիքի տգիտութեան մոայլ վարագոյրը պատառել միս-մենակ՝ չըջապատուած ամեն կողմից աննպաստ հանգամանքներով: Մէկ ոտքը Կ.-Պոլիս, միւսը Վանում դրած՝ ամեն զոհողութիւն և զրկանք կրել, իր քաղցրաբարոզ, գիւթական, սթափեցնող խօսքը «Արծւի» հայրենասէր թեւերով ուղարկել հայրենիքի թմրած, չարչարուած, նեռաւոր որդիներին, զանգակի աւետաւոր հնչիւնների նման բաղխիլ նրանց ընդդարմացեալ ականջներին, հրաւիրել նրանց աւե-

լի բարձր կեանքի, աւելի պատուաբեր կոչումի՝ և միւս կողմից մաքառել իր տակաւին չը կազմակերպուած, չը հաստատուած, բայց թարմ ոյժերով ժամանակի տիրող մոայլ, բլթայնող հասկացողութիւնների ղէմ, որոնք դարաւոր արմատներով ամրացած, կազմ լեզէոններով \*) պիտի հանդիպէին, երբ անտանելի խոչընդոտ, լուսաւորութեան առաջնորդի սկսնակ քայլերին— ահա ինչ էր Խրիմեան վարդապետի գործը:

Թողնենք ասպագայ պատմութեան անաչառ դատաստանին որոշելու թէ մեզ տղէտ և դարաւոր ստրկութիւնից թմրած հայերիս համար ո՞ւմ գործունէութիւնն ու ջանքն է օգտակար եղել և նըպատակայարմար: Խրիմեան միակ վարդապետի անդրանիկ և կենսատու շարժումը իր մամուլով, Վարագայ ժառանգաւորների վարժարանով, նրա հայրենասէր սաներով—որոնք Վասպուրականի ամենայն տին գիւղից սկսեալ մինչև տաճկահայ կարևոր կենտրոնները՝ ցմահ հաւատարիմ իրանց վարդապետի անաղարտ դրօշակին՝ ժողովրդի գրկին մէջ, ոչ թէ վսնական խցում միայն, տքնեցին ու մեռան՝ տալով իրանց արդասաբեր արդիւնքը—թէ Մխիթարի կաթողիկ միաբանութիւնը, հակառակ իր հիմնադրի—Սեբաստացու ուղուն՝ իր 200-ամեայ լճացած գոյութիւնով, իր Սաղմոսի Մեկնութեան 12 հատորներով (գինն 50 ֆրանկ... խեղճ ազգ), Վարք սրբոցներով (50 ֆր.), Ռոլէնի հովմէական պատմութիւնով (80 ֆր.), Ալբերտի, Թովմա Ազուլինացու միջնադարեան աստուածաբանութիւններով և ազգավիաս, պառակտիչ կրօնական սնմիտ պրոպագանդայով թէ Պոլսում և թէ գաւառներում, թող ի Ռուսիա և Պարսկաստան: Իսկ անցեալ տարիների Վանայ դաւանափոխութեան, քսաներորդ դարու շեմքի վրայ կատարուող հացի և հաւաքի իայտառակ առուտուրի առթիւ Վանի կաթողիկների ներկայացուցիչ Մըխիթարեան Անտոն վրդպ. Ջնդօեանի, հայր Շարմրտանի «L' Oeuvre d'Oriente» հրատարակած ինքնատիպ գրութիւնները՝ \*\*) ամօթ, նախատինք միայն կարող են բերել այդ միաբանութեան աւանդական հոշակին, քան թէ փառք:

Նպատակիցս դուրս է նոյնպէս Խրիմեանի, հայոց այդ մեծ երախտաւոր և խնկելի վարդապետին հասարակական-հովուական գործունէութեան և նրա գրական վաստակների, — որոնցից «Հըրաւիրակները», «Թաչի ճառք», «Միրաք և Սամուէլը», «Ժամա-

\*) Հողեղորական տղէտ դասակարգը՝ յանձին Գաբրիէլ (Զիրոյեան) եպիսկոպոսի և աշխարհական աղայական վաշխառու և ազգեցիկ ու վնասակար՝ յանձին մի աղայի:

\*\*) Տես «Մշակ»-ի բանասիրականները 1899, 80-ական թթ.:

նակը» հայ գրականութեան գոհարների սակաւաթիւ շարքը կարելի է դասել—հաշիւը արձանագրելու \*) իհարկէ. ամենից կարեւորն այն է, որ Խրիմեան վարդապետի անկեղծ ոգևորութիւնը և սէրը դէպի իր սիրեցեալ հայ ժողովուրդը ամուլ չի անցել, այլ ներշնչուել է և իր աշակերտների մէջ, որոնք իր բայ արած շաւղով ևն ընթացել:—Սրուանձտեանը (... † 1892) իր տեղադրական, ժողովրդագրական անդուդական հաւաքածուների—«Մանանայ», «Համով-հոտով», «Թորոս ախպար», «Գրոց և բրոց», «Հնոց և Նորոց», որոնք հայրենիքի համն ու հոտն են բովանդակում մի առանձնայատուկ զոդարիկ ոճով—հիմքը Վարազյ վանքումն է դրել: Այնուհետև Վարազը դառնում է կենտրոն և մայրավանք գրողների, հրատարակիչների, լուսաւորութեան առաջնորդների, գիտութեան ղեկավարների համար. երկար տարիներ «Արծիւը» դարձել է արտայայտութեան մի զօրեղ միջոց նրանց տրտունջի, բողոքի, մտրակի, հայաշունչ և հայրենասէր խօսքերի: Այդ բեղմնաւոր միջնորդութեամբ առաջին անգամ կոփեց իր գրիչը ու լարեց մեր ժողովրդական բանաստեղծ Տիգրան Ամիրջանեանը, առաջին անգամ նուագեց իր հայրենիքը՝ ժողովրդի ժպիտն ու ծիծաղը, դարդն ու լացը իր քնարին նիւթ չինելով. ո՞ր սիրտ ունեցող հայը չի հիացել և չի արտասուել նրա գոդարիկ, իմաստալից էլեգիան կարգալիս.

Թո՛ղ, ախպէր, թո՛ղ որ իմ սիրտը կրակ ու բոց վառուած էլնի,  
 Թո՛ղ իմ աչքը կլիկացող պղտոր-պղտոր ախպիւր էլնի:

. . . . . \*\*)

\*) Այս բոլորի ուրուագիծը միայն տես «Արարատ» ամսագիր 1900 №IV.

\*\*) Տաղանդաւոր գրողի քնարական բանաստեղծութիւնների մեծ մասը լոյս է տեսել Վարազյ «Արծիւ Վասպուրական»-ում, մի մասն էլ առանձին բրոշիւրով Պոլսում այն ժամանակ (1860 թ.), երբ նա տակաւին աշակերտ էր Նուբար-Չահնազարեան վարժարանի (ն. Վարժապետեանի անշութեան օրով): Չատ չ'անցած՝ Պոլսում դարձեալ հրատարակում է «Ողբերգութիւն Վարդանայ» և «Ողբերգ-Տրտագայ» արագեղիաները միջակ յաջողութեամբ: Ամիրջանեան 1864 թ. թողնում է մայրաքաղաքի հրատարիչ կեանքը և շտապում իր հայրենիք՝ իր քընարի լարերը թրթռացնող հայրենակիցների վիճակովը ապրելու և նրանց հետ զործելու, ծիծաղելու և լալու: Իր հասարակական գործունէութիւնը սկսում է վարժապետութեամբ այնպիսի մի ժամանակում, երբ Խրիմեանի պատրաստած հողի վրայ մէկը միւսի ետևից բացւում էին նախակրթարաններ, ուսումնարաններ, հայրենիքում էլ Վարազյ տակաւին գործող մամուլից լոյս է ընծայում «Ռուսալ-Պանդուխտ» ողբերգութիւնը, թողնելով և ուրիշ անտիպ գործեր, որոնք միաժամանակ խողացւում էին մի քանի ոգևորուած ազգասէր երիտասարդների աջակցութեամբ Վանում կազմած աղքատիկ բեմի վրայ: Նրա անտիպ «Վեց անհամաձայն եղբայրները» տեղական բարբառով մի տխուր դրամա աւելի, քան

Արժէ յիշել և Վարազայ անխոնջ և բազմավաստակ միաբան տոսպեցի Փիրզալէմեան Ղեոնդ վարդապետը իր հովուական և գրական եռանդուն գործունէութեամբ և իր «Նոտարք Հայոց»-ով՝ հաւաքածոյ բազմաթիւ թանկագին յիշատակարաններէ և իր մի քանի սպաղորուած (թէ Թիֆլիսում և թէ Պոլսում) և անտիպ երկերով, մեծաւ մասամբ իր ճանապարհորդութիւնները դէպի Պոլիս, դէպի Կովկաս և Երուսաղէմ։ Փիրզալէմեան վարդապետը իր բազմարդիւն կեանքի մահկանացուն կնքել է Երուսաղէմում 1891 թ. իր երախտաւոր ուսուցչի զբոհում վերջինիս Երուսաղէմում յաքսոր գտնուած ժամանակ։

Իրանց ակոյն ունին նմանապէս թէ զբսերում ծաղկած և թէ տեղում աճող ժամանակակից ինքնաբոյս մի շարք գրողներն ու գրչակները, որոնց վրայ ժամանակին մատնացոյց է արել երբեմն այնտեղ (Վանում) հիւր եղող համակրելի Տ. Փ-ը՝ Պոլսում հրատարակուող «Մասիսի» 1884 թ. էջերում։ Այս վերջի սարիները սակայն մէկը միւսի կակից վանեցիների զլիսին թափուող սարսափելի և կքեցուցիչ աղէտները կոտրել են նրա գրիչը, կարտել բնարի թելերը, լոնցրել նրա ձայնը։ Գրական շարժումից աւելի ծանրակշիռ նշանակութիւն է ունեցել Վան-Տոսպի լուսաւորութեան և բարգաւաճ յառաջադիմութեան համար և՛ կրթական գործը։ Անցեալ դարու սկզբներից սկսեալ եթէ ոչ զիւղերում, գոնէ քաղաքում եղել է թէ կեկեցեցիների բակում և թէ մասնաւորների ձեռքով դպրոցների գոյութիւն, որոնք իրանց խալիֆայական հանգամանքով Տէր-Թողիկեան տիպի խամբոցներից տարբեր մի բան չեն ներկայացրել, իրանց մի գաժան խալիֆայով փայտը կամ փայտեայ-թաթը ձեռին, ֆալախայի գործիքով, ութ-կանոնով, նարեկով և ժամագրքով։ Դեռ 60-ական թւականներին (XIX դարու) Սրիմեան չկողայի իբրև հակապատկեր և ախոյեան, իր մոլեռանդ հայեաքներով, բթացնող մանկավարժական ուղղութիւնով Վանում լոյս աշխարհ է ընկնում Երուսաղէմից եկած Յովհաննէս վարժապետ «Քոլոլ» մականունեալ, որ ժամանակի ազդեցիկ աղաների՝ Շարան-բէյի և ուրիշների թեարկութեան ներքոյ ծխական վարժարանների մէջ՝ առաւելապէս Նորաշէնու կեկեցուց՝ իր պատւանդանը հաստատած, մեծ ազդեցութիւն է ունեցել ժամանակակից կրթական գործին վերաբերմամբ։ Այս տարտամ վիճա-

կամեղիս, որի նիւթը վերցրել է Վանի ընտանեկան անհամբուշխ կեանքից, բացատրելով նրա պատճառը և մինչև այսօր էլ կործանաբեր հետեանքը, խաղացում է հետաքրքրութեամբ մեր բեմի վրայ։ Նրա «Թնդ ախալէր»-ը... տես Ռուսեայ Պանգուլտ», Թիֆլիս, 1903.

Սեպտեմբեր, 1903.

կը երկար չի տևում սակայն: Բարկանեան ճնշող քրիստոնեայ փոքր ազգերի ազատագրութեան համար մղուած վերջին ուս-  
թիւրքական պատերազմների որտաը իր ազգեցութիւնն է  
ունենում և՛ ազգմական գործողութիւնների կատարուած վայ-  
րերից ոչ շատ հեռու ապրող և նմանօրինակ անընդու-  
նելի մեքենայի ճնշող հարուածներին տուկացող այս բուն  
հայ ժողովրդի մտքի և զգացմունքների վրայ, և յնցում,  
տակն ու վրայ է անում ամենայն ինչ, մի նոր, թարմ, սթա-  
փեցնող հոսանք անցկացնելով նրա ընդարմացած կեանքի և  
գործունէութեան միջով: Զանազան բարեգործակ, ընկերութիւն-  
ներ—«Հայկազեան վարժարանը», Պոլսոյ միացեալ ընկերութեան  
բաց արած «վարժապետանոցը»՝ ապա կենտրոնականի փոխած  
Փ-ի ձեռքով, Սանասարեանի օժանդակութեամբ հիմնուած աղ-  
ջըկանց «Սանդիստեան» վարժարանը մէկը միւսի ետևից բացուած  
էին վանում, բունում կարծես սունկի մնան: Ընդհանուր շար-  
ժում, եռանդ, ոգևորութիւն կար, տակաւին քնած թիւրք կառա-  
վարութեան աչքի առաջ արևի տակ, օր ցերեկով դպրոցական-  
ները և լետարգիական քնից նոր արթնացած երիտասարդութիւ-  
նը առանց քաշուելու, հրացանի և սրոյ շահիւններով և կրակոս,  
ամենաթունդ երգերով վարագում՝ վասպուրականցիների այդ  
երկրորդ էջմիածնում, տօնում էին սահմանադրութեան տարե-  
դարձները (80-ական թուականների սկզբին):

Վարժապետանոցն ու կենտրոնականը չը նայած իրանց  
կարճատև գոյութեան և համառօտ կեանքին՝ մինչև այսօր էլ ամ-  
բողջ քառորդ դարու ընթացքում իրանց բեղմնաւոր և բարերար  
ազգեցութիւնն են ունեցել վան-Տոսպի, նոյնպէս չըջակայ նա-  
հանգների կրթական գործին վրայ:

Շատ չ'անցած սակայն հանդամանքները փոխուած են.  
թիւրք կառավարութեան աչքը բաց է արուած. աւանդական  
ներքին պառակտումը մէջ տեղ իր զլխաւոր գործն է սկսում  
տեսնել, այդ կենսունակ շարժման պարագլուխները քշում են,  
և սկսում է դարձեալ մրափող րէակցիա, կեանքի իսկական ա-  
մայութիւն: Տաճկական վատթար բեժիմից քաջաբերուած՝ տաճ-  
կահայոց համար ճակատագրօրէն անխուսափելի էֆէնդիների  
դասակարգը, աղայութիւնն սկսում է երկարել իր ոտերն ու թևե-  
րը շարունակելու իր եսական կորստաբեր շահատակութիւններն  
արձակ համարձակ, և հրապարակի վրայ գործելու սուպարէզը  
նրան էր մնում, ով որ այդ էֆէնդիստան թևարկութեան էր ա-  
պաւինում և նրա ոյժերին կոթնում:

Վանի ներկայ սերնդի մեծագոյն տոկոսը առայժմս այն-  
պէս էլ հաշտ, հասկացող աչքով չի նայում կրթական գործին

վրայ, որպէս նրա վերածնութեան կարևոր և էական ազդակի. ծնողաց մեծամասնութիւնը որպէս իր ժանշ գաւակը, նոյնպէս և աղջիկը ուղարկում է վարժարան միայն ձևի, մտաբայի համար, որովհետև ուրիշները այդպէս են անում, և կամ որովհետև լըսել է, որ «ուսումը լաւ բան է»: Ներկայումս Վանում գոյութիւն ունեցող աղջային ուսումնարաններից նշանակութեան արժանի են՝ Սանասարեան աղջկանց վարժարանը, որ գոյութիւն ունի 30 տարիներից ի վեր՝ հիմնուած լինելով 1871 թ. ազա Մկրտիչ Սանասարեանի գլխաւոր օժանդակութեամբ, որ նրա ապահով յարատեւութեան համար յատկացրել է մօտ 10000 բուրլու մի կարևոր դրամագլուխ. շէնքը գտնւում է քաղաքի (Այգեստանի) կենտրոնական հայաբնակ Նորաշէն կոչուած մի բարձր, զեղեցիկ և օդասուն դիրքի վրայ. վարժարանը իր և տեղական միջոցների ներածի չափով առել է մայրերի մի նոր սերունդ շատ բաւականին կրթուած և յուսալից: Իգական սեռի համար միւս վարժարաններն են Այգեստանում Արարք եկեղեցու երկսեռ վարժարանի իգական բաժանմունքը և Բերդաքաղաքի Շուշանեան օր. վարժարանը Ս. Պողոս եկեղեցու բաւկում:

Տղայոց վարժարանների մէջ աչքի է ընկնում անցեալ տարի հիմնուած կենտրոնական Հայկազեան միջնակարգ ուսումնարանը, որը պահպանւում է Վանի բոլոր եկեղեցիների ծխականների համերայի միացումով և հովանաւորում է այդ ծխական վարժարանները (որոնք միատեսակ ծրագիր և դասընթացք ունին) աւարտող պատանիներին՝ տալով նրանց հնար եղածին չափով միջնակարգ խնամեալ կրթութիւն 6 տարուայ դասընթացով: Կենտրոնականը պահպանւում է Վան քաղաքի բոլոր եկեղեցիների տուած աարեկան մի որոշ զուամբով և յատկապէս նրա համար եղած (ուսմանհայ բարերար ազա Գր. Սերբերենիկովի) 10000 բուրլու մի կարևոր կտակադրամի տոկոսիքով:

Կենտրոնականի ստորադրեալ թաղային ծխական վարժարաններն են—Նորաշէն եկեղեցու ծխական վարժարանը, Արարք եկեղեցու վարժարանը, Յանկոյսներ եկեղեցու, Ս. Յակոբի և Տիրամայր (Բերդաքաղաքում) եկեղեցիների վարժարանները: Արարանցից բացի կայ և մի անհատական վարժարան, 6 հատի չափ բողոքական հայերի և Ծ-ի չափ կաթողիկ հայերի գաւակների երկսեռ վարժարանները: Հետաքրքիր է անշուշտ Վան-Տասպի կրթական գործի վիճակագրական տախտակը, իր վերջին ֆաղխում, մանրամասնութիւններով \*).

\*) «Բիւզանդիոն» օրագիր. 1903. Պոլիս, № 1997:

## I. Հայ-Հուսաւորչական վարժարաններ.

1. Սանդխտեան աղջկանց ուսումնարան 200 աշակերտուհիներով Այգեհատանի զանազան թաղերից, 10 ուսուցչուհի և ուսուցիչ:
2. Շուշանեան աղջկանց վարժարան, 100 աշակերտուհի, 5 վարժուհի և ուսուցիչ (Բերդաքաղաքում):
3. Հայկազեան-կենտրոնական վարժարան, 80 աշակերտ, 15 ուսուցիչներով (մեծաւ մասամբ այցելու՝ մի քանի ժամով):
4. Նորաշէն եկեղեցու վարժարանը, 200 աշակերտ, 8 ուսուցիչներով:
5. Արարուց եկեղեցւոյ երկսեռ վարժարան 450 աշակերտ և աշակերտուհիներով, 16 ուսուցիչ և վարժուհի:
6. Յանկոյժներ եկեղեցու վարժարանը, 180 աշակերտ, 7 ուսուցիչ:
7. Ս. Յակոբ եկեղեցու վարժարան, 70 աշակերտ, 3 ուսուցիչ:
8. Բերդաքաղաքի Յիսուսեան վարժարան, 170 աշակերտ, 6 ուսուցիչ:
9. Երամեան անհատական վարժարան, 230 աշակերտ, 11 ուսուցչով:

## II. Ամերիկեան վարժարաններ.

10. Ամերիկեան արական վարժարան, 135 աշակերտ (երկու-հայկ. եկ. և բողոքակ. դաւանութեան էլ պատկանող), 11 ուսուցիչներով:
11. Ամերիկ. արական որբանոց, 200 որբ, 4 ուսուցիչ:
12. » իգակ. վարժարան 200 աղջիկներով, 13 ուսուցիչ և վարժուհի:
13. » իգակ. որբանոց 180 աղջիկներով, 7 ուսուցիչ և վարժուհի:
14. » մանկապարտէզ երկսեռ, 10 աշակերտ, 4 վարժուհի:
15. » աղջկանց վարժարան (Բերդաքաղաքում), 70 աշակերտուհի, 5 վարժուհեա և վարժուհի:

## III. Փրանսիական պերերի եւ կաթոլիկ-հայոց վարժարանները.

16. Ֆրանսիական մանչերի որբանոց, 30 աշակերտ որբ,

երկու դաւանութեանց էլ (հայ եկ. և կաթողիկ) պատկանող, 2 ուսուցչով:

17. Ֆրանսիակ. աղջկանց որբանոց, 30 աշակերտուհի, 3 վարժուհի:
18. » մանչերի վարժարան, 100 աշակերտ, 6 ուսուցիչ:
19. » աղջկանց վարժարան, 360 աշակերտուհի, 9 ուսուցչ. և վարժ.:
20. Ֆրանսիական երկսեռ մանկապարտէզ, 40 աշակերտ և 1 վարժուհի:
21. Կաթողիկ հայոց (Վենետիկի Միլիթարեանների ջանքերով բացուած երկսեռ վարժարանը, 150 աշակերտ և աշակերտուհի, 6 ուսուցիչ և ուսուցչուհի:
22. Կաթ. Հայոց երկսեռ մի ուրիշ վարժարան, 110 երկսեռ աշակերտ և աշակերտուհի, 4 ուսուցիչ և ուսուցչուհի\*):

#### IV. Ազգային երկսեռ որբանոցներ.

23. Վարագայ վանքի որբանոց, 60 որբ, 5 ուսուցիչ:
24. Ս. Գրիգոր վանքի հաշուով և բարերարների նպաստներով պահուող աղջկանց որբանոցը Այգեստանում, 70 որբուհի, 4 ուսուցիչ և վարժուհի:

#### V. Գիւղերի ուսումնարաններ.

25. Աւանց գիւղը, 100 աշակերտ, 1 ուսուցիչ:
26. Կուսուպաշ գիւղը, 50 աշակերտ, 1 »
27. Ծվտան » 60 » 1 »
- Այսպիսով ներկայումս Վան-Տոսպի բոլոր ուսումնարանների և որբանոցների թիւը հասնում է 27-ի, աշակերտների (մեծաւ մասամբ իհարկէ՝ հայ եկ. դաւանութեան պատկանող) թիւը 3132 (որբերով հանդերձ) երկսեռ (որոնցից 1592 տղայ, և 1540 աղջիկ, ուրեմն գրեթէ հաւասար թւով), 124 երկսեռ ուսուցիչներով (որոնցից 88-ը ուսուցիչ և 36 ուսուցչուհի), 3 գիւղերի, 210 աշակերտներ, 3 ուսուցիչներով: Կենտրոնականի՝ իր ստորաբաժանումները կազմող ծխական վարժարաններով

\*) Այստեղ սրտի խորին ցաւով պէտք է նկատել, որ ամերիկեան և կաթողիկ (§ II. III.) հայոց վարժարանները՝ ազգային զգացումներից բոլորովին գուրկ, այլասեռուած մի սերունդ են արտադրում միայն...

միասին՝ տարեկան բիւդժէն հասնում է առայժմ 550 օսմ. լիւրայի. Արամեան վարժարանին՝ 200 օսմ. լիւրայի. Սանդխտեան աղջկանց վարժարանին՝ 130 օսմ. լիւրայի: Վանքերի հաշուով պահուած որբանոցների ծախսը հոգացւում է նոյն վանքերի եկամուտներից և բարերարների նպաստներով: Ամերիկեան միասինարների և կաթոլիկների պահած ուսումնարանների ելուժուտքը Աստուած միայն գիտէ:

Այս վարժարանները ղեկավարող ուսուցիչները և ուսուցչուհիները մեծաւ մասամբ սահմանափակ կրթութեան տէր մարդիկ են, որոնց յանձնուում է կարիքից ստիպուած մեր մատաղ սերնդի կրթութեան և դաստիարակութեան ծանրախիչ ին և նուիրական գործը: Միջավայրի կողմնակի աննպաստ հանգամանքներն էլ ոչ նուազ վնասում են իրանց առաջդիմութեան գործին \*): Այս բոլորի վրայ պէսք է աւելացնել սակայն, ինչ որ շատ մխիթարական է, որ այս վերջին մի քանի տարիների մէջ մի բարեշրջական հոսանք է սկսել Վանում, վանեցիկն իր փրկութիւնը, իր բաղձացած կեանքի արմատները սկսել է որոնել իր գաւախների սրտի ու մտքի լաւ և առողջ կրթութեան մէջ, և դրան իբրև հետևանք ցոյց է տալիս նա առանձին բուն հետաքրքրութիւն դէպի իր հասարակական ընկած կեանքի բարելաւումը, խնամք և հոգատարութիւն դպրոցների վերաբերմամբ, որպէս և դէպի իր եկեղեցու պայծառութիւնը—դէպի Հայաստանեայց եկեղեցու լոյս հաւատը, դպրոցը, մայրենի լեզուն—իր անմխիթար կեանքի և գոյութեան երեք էական հիմնաքարերը, որոնց ամբուսութեան և պահպանութեան համար երևում է որ ոչ մի գոհողութիւն չի խնայում ներկայումս սլափուած վանեցիկն:

ԿԱՐՍԵՑԻ

\*) Ինչպէս քիչ առաջ նկատեցինք, ոչ մի արտասահմանեան հրատարակութեան մտաքը թոյլատրուած չէ ներքին գաւառներում (մասնաւորապէս Վանում, որ իր տիրոջ մօտ շատ էլ վտանգութիւն չի վայելում իր հաստարիմ հպատակութեան հաւաստիացումներով 1896 թ. աղէտալի դէպքերի ըմբոստ ցոյցերից յետոյ), մի զրավաճառ միայն ունի ամբողջ գաւառը իր նահանգական կենտրոնով՝ Վանով միատեղ, որ Պոլսում տպագրուած մի քանի փթած դասագրքեր է ծախում, էլ ուրիշ ոչինչ:

# ՆԿԱՐԻՉ ԹԱՇՃԵԱՆ <sup>\*)</sup>

Դրամ 4 գործողութեամբ.

(Ներկայացուած է առաջին անգամ Բագուի Հասարակական Ժողովարանի դահլիճում 1903 թ. մայիսի 8-ին եւ կրկնուած նոյն ամսի 11-ին «Հանրամատչելի Ժողովրդական Զուարճութիւնների» թատրոնում):

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՇՃԵԱՆ, նկարիչ.

ՖԼՈՐԱ, նրա կինը.

ԵՂԻՍԱԲԷԹ, նրա մայրը.

ՎԱՀՄԱՆ, նրա եղբայրը.

ԱՆՆԱ,

ՎԱՐՍԵՆԻԿ,

ՍԱԹԵՆԻԿ,

} նրա քոյրերը.

ՀՌԻՓՍԻՄԷ, Ֆլորայի մօտ ազգականուհին, կին-բժիշկ՝  
նորաւարտ.

ՄԱՆԱՍԵԱՆ, երիտասարդ նկարիչ, Միքայէլի նախկին աշակերտը.

ԲԺԻՇԿ, Միքայէլի լաւ ծանօթը.

ԱՐԳԱՐ, Միքայէլի հօրեղբայրը, խոշոր առևտրական.

ՊԱՐՈՆ Ն.

ՏԻԿԻՆ Ն.

ԹՂԹԱԿԻՑ.

ԿԱՍՍԻՐ.

ԱՅՅԵԼՈՒ.

ՕՀԱՆՆԷՍ, վահանի ծառան.

Պարոն Ն.-ի գործակատարը:

\*) Բարեփոխուած:

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱԹԼՋԻՆ

Մի նախասենեակ, որի մակատի դուռը բացւում է դէպի ընդարձակ դահլիճը, ուր ցուցադրուած են նկարիչ Թաշճեանի պատկերները: Գլխաւոր մուտքը աջ կողմից է: Բեմի առաջնակողմում, մուտքից ոչ հեռու, դըրուած է մի սեղան, որի մօտ նստած է ցուցահանդիսի կասսիրը:

Ժամանակը—աշնան սկիզբը. երեկոյ:

Վարագոյրը բարձրանալուն պէս՝ գլխաւոր դռնից մտնում է մի այցելու:

## ՏԵՍԻԼ 1.

ԿԱՍՍԻՐ, ԱՅՅԵԼՈՒ:

ԱՅՅ. Մի տոմսակ:

ԿԱՍ. (Տալով տոմսակը) Համեցէք այն կողմ:

(Այցելուն անցնում է դահլիճը, որտեղից դուրս է գալիս Թղթակիցը):

## ՏԵՍԻԼ 2.

ԿԱՍՍԻՐ, ԹՂԹԱԿԻՑ.

ԹՂԹ. Գեղեցիկ պատկերահանդէս է... (Մտննալով կասսիրին) Հը՛, ի՞նչպէս է գնում ձեր գործը:

ԿԱՍ. Շատ վատ:

ԹՂԹ. Այո՞:

ԿԱՍ. Սոսկալի անտարբերութիւն:

ԹՂԹ. Ի՞նչ էք ասում:

ԿԱՍ. Հաւատացէք:

ԹՂԹ. Գիտէք ինչ: Ես կամենում եմ լրագրում մի յօդուած գրել Թաշճեանի պատկերների մասին:

ԿԱՍ. Ինչո՞ւ այդքան ուշ:

ԹՂԹ. Մենք լուր տուել ենք իր ժամանակին:

ԿԱՍ. Այո, մի քանի տող լուրերի բաժնում... Բայց դուք կարգացիք այն յանդուգն բեյքենդենաի հայհոյանքը մեր նկարչի մասին: Թաշճեանի պատկերները նա անուանում է «աչակերտական խձրձանք»:

ԹՂԹ. Դա մի անպատկառ յօդուած էր: Արժէ միթէ ուշադրութիւն դարձնել:

ԿԱՍ. Բայց տեսէք, որ դրանից յետոյ յաճախորդների թիւը ինչքան նուազեց:

ԹՂԹ. Թաշճեանը, երևի, շնտ տխրել է, հա:

ԿԱՍ. Այո, իհարկէ: Անել դրուժեան մէջ է... Պարտքերի տակ ճնշուած, յուսահատ...

ԹՂԹ. Է՛հ, ցաւալի է, շատ ցաւալի:—Ես, յամենայն դէպս, մի յօգուած կը գրեմ:—Յ'տեսութիւն: (Թղթակիցը գնում է: Գահլիցից գալիս է Միքայէլ Թաշճեանը, կաստիքը նրան յանձնում է մի այցետոմս):

### ՏԵՍԻԼ 3.

#### ՄԻՔԱՅԷԼ, ԿԱՍՍԻՐ.

ԿԱՍ. Ձեր հօրեղբորից:

ՄԻՔ. Իմ հօրեղբորից: (կարդում է) «Սիրելի Միքայէլ»... Մինչև անգամ «սիրելի»: (Շարունակում է կարդալ) «Յուշահանդէսը փակելու ժամանակ ես պիտի դամքեզ մօտ հարկաւոր դորձով, ինձ կը սպասես:—Աբգար Թաշճեան»:—Հարկաւոր գործով—զարմանալի բան: Բայց ինչ գործ, ինչ առնչութիւն կարող է լինել իմ և նրա մէջ, մի նկարչի և մի առևտրականի մէջ: (Գահլիցի դրան մօտ երեւում են սլարան N. եւ տիկին N.)

### ՏԵՍԻԼ 4.

ՄԻՔԱՅԷԼ, ՊԱՐՈՆ N., ՏԻԿԻՆ N., ԿԱՍՍԻՐ.

Պ. N. Տիկինը շատ հաւանել է ձեր մի պատկերը: Ինչպէս է անունը...

Տ. N. «Բնութեան գրկում»:

ՄԻՔ. Յաջող ընտրութիւն էք արել, տիկին: Դա իմ ամենալու պատկերներից մէկն է:

Տ. N. Հիանալի պատկեր է, հիանալի:

ՄԻՔ. (Գլխով շնորհակալութիւն է յայտնում):

Պ. N. Քանիսով կը տաք էդ պատկերը, որ առնենք:

ՄԻՔ. Գնեքը նշանակուած են: Ձեր ընտրածն արժէ 1200 ռուբլի:

Պ. N. Ա՛ (Չարմացած նայում է կնոջը):

Տ. N. Օ՛ (Կոյնպէս զարմացած): Ի՞նչ էք ասում, պարոն: Նա այնքան էլ մեծ չէ, աւելի մեծերը կան:

ՄԻՔ. Խնդիրը մեծութիւնը չէ, տիկին:

S. N. Բայց եւ այնպէս շնոր թանկ է:

ՄԻՔ. Ո՛չ, տիկին, նա աւելի արժէ: Բայց եւ նկատի ետ ունեցել մի հանդամանք. մեր մարդիկ դեռ սովոր չեն մի գեղարուեստական գործ ըստ արժանւոյն գնահատել:

Պ. Ն. Երկու հարիւր մանէթով չէք տայ:

ՄԻՔ. Դուք ինձ ծանր էք անում:

Պ. Ն. Ինչո՞ւ, ես լաւ դին եմ ապիս:

ՄԻՔ. Ես սակարկութիւն չը գիտեմ:

Պ. Ն. Համաձայնեցէք, պարոն, համաձայնեցէք: Աւելի չ'արժէ:—Մի յիսուն էլ կ'աւելացնեմ:

ՄԻՔ. Դրանք աւելորդ խօսքեր են:

(Պարոն Ն. եւ տիկին Ն. խորհուրդ են անում. Միքայէլն էլ խօսում է կասսիրի հետ):

Պ. Ն. Կինս է շատ հաւանել, թէ չէ ինձ մնար, խոստովանք լինի, ես բաց աչքով հարիւր մանէթ էլ չէի տայ մի պատկերի: Տանք էնքան ունինք որ... Ամեն մի պատից մի պատկեր է ծեփած: Բայց քանիսով առած լինինք լաւ է—10, 15, ամենաշատը 25 մանէթով. Աստուած վկայ, ո՛չ աւելի: Եւ հասարակ բաներ չ'իմանաք. բոլորն էլ մեծ-մեծ, ահա էս մեծութեան, գեղեցիկ, ոսկի շրջանակների մէջ... Հասում:

ՄԻՔ. Դրանք ուրեմն իւղաներկ պատկերներ չեն, այլ հասարակ օլէօգրաֆիաներ:

Պ. Ն. Էլ չեմ իմանում, թէ ինչ են ասում, միայն շատ սիրուն տեսարաններ են... Հն, հիմի ինչ-որ է, խօսքը ձերի մասին է: Վերջնական գինը ասացէք, որ մեր առուտուրը զըլուխ գայ:

ՄԻՔ. Վերջնական գինը ասուած է:

(Պարոն Ն. եւ տիկին Ն. կամացուկ խօսում են. նոյնպէս եւ Միքայէլը կասսիրի հետ):

Պ. Ն. Երեք հարիւրով էլ չէք տալիս:

ՄԻՔ. Պարոն, ես ձեր մատի վրայ տեսնում եմ մի մատանի, որի միայն ակը, կրեի, մի հազար արժէ:

Պ. Ն. Սրն ակը: Հն-հն-հն: Վախենում էք երկու հազար ասէք:

ՄԻՔ. Տեսնում էք, պարոն, Ձեզ համար ոչինչ բան է եղած անշուշտ մի երկու հազար բուբլի համբել ոսկերջի առաջ մի ադամանդի համար, որի վրայ մարդկային միայն ձեռքն է աշխատել. բայց ձեզ օտարոտի, մինչև իսկ ծիծաղելի է թւում, երբ նկարիչը, իր երկարատե աշխատանքի փոխարէն, պահանջում է աւելի պակաս հատուցում և տալիս է ձեզ մի պատկեր, որի վրայ նա իր միտքը և սիրտն է դրել, որի արժանիքը ա-

մենքը խոստովանում են, և որը կարող էր նոյնիսկ իշխանական ապարանքի չքեղ զարգարանքը լինել:

Տ. Ն. Շատ ափսոս, որ դուք ոչինչ չէք կամենում զիջանել:

ՄԻՔ. Տիկին, ես մի ներկարար չեմ: Ես չեմ կարող ստորացնել իմ վրձինի նշանակութիւնը մինչ այդ աստիճան: Դուք մի այնպիսի զին էք առաջարկել, որ...

Պ. Ն. Ուրեմն չէք տալիս էլի:

ՄԻՔ. Անկարելի է:

Տ. Ն. (Դժգոհ) Գնանք, հարկաւոր չէ: (Վերցնում է ամուսնու թիւը, և գնում են: Մտնում է այցելուն):

## ՏԵՍԻՒ 5.

ՄԻՔԱՅԷԼ, ԱՅՅԵԼՈՒ, ԿԱՍՍԻՐ.

ԱՅՅ. Շնորհակալութիւնս եմ յայտնում այն մեծ զուարճութեան համար, որ ինձ պատճառեցին ձեր գեղեցիկ պատկերները: Մի քանիսն այնքան յաջողուած են, որ մարդ յափշտակում է նայելիս:

ՄԻՔ. (Գլխով շնորհակալութիւն է յայտնում):

ԱՅՅ. Հաւատացէք, պարոն Թաշճեան, որ եթէ ես միջոց ունենայի, անպատճառ ձեռք կը բերէի ձեր պատկերներից գոնէ երկուսը—«Բնութեան զրկում» և «Մասիս»: Դրանք գեղարուեստական գլուխ-գործոյներ են:

ՄԻՔ. Ի՞նչ արած: Այդ էլ իմ բախտից: Ունեւորը խնայում է, չ'ունեւորը՝ անկարող:

ԱՅՅ. Սրտանց ցանկանում եմ յաջողութիւն:

(Գլուխ տալով դուրս է գալիս):

## ՏԵՍԻՒ 6.

ՄԻՔԱՅԷԼ, ԿԱՍՍԻՐ.

ՄԻՔ. (Ժամացոյցին նայելով) Արդէն ժամանակ է ցուցահանդէսը փակելու: Դուք կարող էք այժմ գնալ տուն և հանգրտանալ:

ԿԱՍ. Առաւօտեան դամ՝ բանալին վերցնեմ:

ՄԻՔ. Այո, անպատճառ: Կարող է պատահել, որ ես առա-

ւօտն ուչ վեր կենամ, որովհետև այս երևելոյ ևս թատրոն պիտի գնամ:

ԿԱՍ. Շատ լաւ, ևս կը գամ:—Բարի գիշեր: (Գնում է:)

## ՏԵՍԻՒ, 7.

ՄԻՔԱՅԷԼ, (Մենակ).

Ամբողջ տարիներ անսպառ եռանդով տքնել, աշխատել, և վերջիվերջոյ—ահա հետեանքը: Դահլիճը դատարկ, և եթէ պատկերները չեղու ստանային այնտեղ, ինչպիսի արտունջ և բողբոջ պիտի բարձրանար իմ դէմ, թէ ում համար և ինչի համար ևս մեզ նկարել և շարեշար կախել պատերից... (Գրսից լուում է հալի ձայն:) Հօրեղբայրս է: (Շտապում է դէպի դուռը, ուր երևում է նրա հօրեղբայր Աբգարը:)

## ՏԵՍԻՒ, 8.

ՄԻՔԱՅԷԼ, ԱՐԳԱՐ.

ԱՐԳ. Միքայէլ, բարիկուն:

ՄԻՔ. Բարև ձեզ, հօրեղբայրս: Նստեցէք: (Նստում են:)

ԱՐԳ. Հը', ինչ դրութեան մէջ է դործդ. բանուկ է:

ՄԻՔ. Ո՛չ, ևս շատ զժգո՛հ եմ:

ԱՐԳ. Մարգիկ գնում-գալիս են:

ՄԻՔ. Շատ սակաւ:

ԱՐԳ. Բան-ման ծախել ևս:

ՄԻՔ. Մի քանի մանր էսկիզներ:

ԱՐԳ. Ծախսդ կը հանես:

ՄԻՔ. Ամենին:

ԱՐԳ. Յետոյ:

ՄԻՔ. Էլ ինչ յետոյ: Մեծ անյաջողութեան հանդիպեցի:

ԱՐԳ. Լսել եմ, լսել եմ: (Կարծատեւ լուծիւն. ժպտալէմ զըլուխը ծափահարում է:) Միքայէլ, իմ խօսքը կաաարուում է թէ ոչ:

ՄԻՔ. Ի՞նչ խօսք:

ԱՐԳ. Ես քեզ չէի ասում մի ժամանակ, որ քո ընտրած արհեստը քեզ հայ չի տայ, քաղցած-ծարաւ կը թողնի: Հիմա ինչ կ'ասես:

ՄԻՔ. Նոյնը, ինչ որ առաջ: Ես չեմ զգնում, որ նկարչութիւն եմ սովորել: Ես սիրում եմ գեղարուեստը և ամբողջովին

նրան եւմ պատկանում: Չը նայած, որ շատ նեղ օրեր եմ քաշել, շատ տանջուել և չարչարուել եմ, բայց այնուամենայնիւ իմ սէրը այժմ նոյնքան վառ է իմ մէջ, որքան առաջ, և իմ միակ մխիթարութիւնը դանում եմ դարձեալ իմ ստեղծագործական աշխատանքի մէջ:

Ա.Բ.Գ. Շատ գեղեցիկ Բայց թնղ ես մի հարց տամ: Իսկ կինդ, մայրդ, քոյրերդ, միով բանիւ, ընտանիքդ—նոյնպէս մխիթարութիւն են դանում քո այդ, ինչպէս ասացիր, ստեղծագործական աշխատանքի մէջ: (Առւթիւն:) Տեսնում եմ, որ դժուարանում ես պատասխանելու Ոչինչ: Ես կը պատասխանեմ քո փոխարէն: Ո՛չ, նրանք մխիթարութիւն չեն դանում դրա մէջ, որովհետեւ նրանք պահանջում են քեզնից մարդավայել կեանք, իսկ դու գատապարտում ես նրանց աղքատութեան և զրկանքներին:

Մ.Ի.Ք. Իւրաքանչիւր ոք հետեւում է իր ներքին հակումներին և ընդունակութեանց: Ես էլ գնում եմ այն ճանապարհով, որով մղում է ինձ իմ կոչումը:

Ա.Բ.Գ. Ի՞նչ ասել է «կոչում», ի՞նչ ասել է «հակումներ»: Դրանք գատարկ խօսքեր են, եղբայր: Մարդ պէտք է յարմարուի կեանքի պահանջներին, և ինչ բանի մէջ օգուտ չը կայ, նրբանից հեռու պէտք է փախչել:

Մ.Ի.Ք. Ուրեմն ի՞նչ է մնում, որ ես անեմ, ձեր կարծիքով:

Ա.Բ.Գ. Իմ կարծիքով, միայն մի հատ ելք կայ քո առաջ:

Մ.Ի.Ք. Այսինքն:

Ա.Բ.Գ. Թողնել արհեստդ և մտնել ծառայութեան:

Մ.Ի.Ք. (Վրդովուած) Հօրեղբայրս...

Ա.Բ.Գ. Ինչո՞ւ այդպէս վրդովուեցիր:

Մ.Ի.Ք. Մտածեցէք, թէ ինչ էք ասում ինձ:

Ա.Բ.Գ. Ես այս ասում եմ, իբրև սրտացաւ հօրեղբայր:

Մ.Ի.Ք. Դուք զարհուրելի բան էք առաջարկում:

Ա.Բ.Գ. Այդպէս թւում է այժմ, յետոյ դու ինքդ էլ ուրախ կը լինիս:

Մ.Ի.Ք. Ուրախ կը լինիմ: Երբէք, հօրեղբայրս, երբէք, ես իմ մանկութեան օրերից սկսած՝ զգում էի իմ մէջ անզլմաղբբելի սէր և հակում դէպի ստեղծագործական մտորումները: Այդ սէրը դնալով աւելի և աւելի զարգացաւ իմ մէջ, կլանեց ինձ: Եւ այնուհետեւ ես իմ մէջ անզաղար լսում եմ մի ձայն, որ ասում է. «Դու մի զեղարուեստագէտ ես—հաւատարիմ ծառայիր քո կոչման, սովորորու և մարդկանց սիրել այն ամենը, ինչ որ բարձր է առօրեայ կեանքից»: Եւ ես՝ անսայով այդ ձայնին, զընում եմ իմ ընտրած ճանապարհով: Բայց ահա բողբոջին ա-

նակնկալ եկել և կանգնել էք իմ ճանապարհի վրայ և ասում էք ինձ. «Ձգիր այդ բոլորը», որ ասել է թէ՛ «մեայրն սերդ և հանդերսն ներսիդ կայծը»:

Ա.Բ.Գ. Միքայէլ, սիրելիս, ես հօ քո թշնամին չեմ: Ես միայն քո բարին եմ ցանկանում, ուրիշ ոչինչ: Իմ իզճն այն է, որ թէ դու, թէ քո ընտանիքը բախտաւոր լինիք, լաւ ապրէք: Այդ է իմ ուզածը: Եւ դրա համար անո՞ն ինչ եմ առաջարկում քեզ. լաւ լսիր: Գիտես ինչ: Իմ առեարական տան գրասենեակում ինձ հարկաւոր է մի լաւ կորրեկտորդենտ, որ լեզուներ իմանայ: Դու, փառք Աստուծու, լեզուներ գիտես և շատ լաւ կարող ես կատարել այդ պաշտօնը, և քո ծառայութիւնը օգտակար կը լինի թէ ինձ համար և թէ մանաւանդ քեզ համար: Հիմա մտածիր և ասա. լաւ բան չեմ առաջարկում:

Մ.Ի.Բ. (Գլուխը բացասաբար թափահարելով) Ո՛չ, հօրեղբայրս:

Ա.Բ.Գ. Չը կարծես, որ գործդ շատ ծանր կը լինի: Ազատ ժամեր դու միշտ կ'ունենաս: Իզուր մի տատանուիր, վճռիր: Չես զզջայ, եթէ ընդունես:

Մ.Ի.Բ. Երբէք...

Ա.Բ.Գ. Ես քեզ լաւ ուձիկ կը նշանակեմ: Գոհ կը մնաս, Միքայէլ: Ապահով, մշտական սեղ է:

Մ.Ի.Բ. Հօրեղբայրս, ես կը մեռնեմ՝ վրձինը ձեռիս: Այս լաւ իմացէք:

Ա.Բ.Գ. Ազատ ժամանակդ դարձեալ կարող ես պարսպել քո արհեստով:

Մ.Ի.Բ. Ես չեմ կարող ընդունել ձեր առաջարկը, հասկացէք վերջապէս, հօրեղբայրս: Դա անկարելի, անհնարին բան է: Երևակայեցէք, թէ ինչ անտանելի գրութիւն կը ստեղծուի ինձ համար, օրինակ, հէնց այն ժամին, երբ ես գրասենեակում պարսպելիս լինիմ, և այդ բոլորին յանկարծ մի նոր նիւթ, մի դեղեցիկ սրժեռ լուսաւորի ինձ, կլանի ուշք ու միաբոս, և սկսեմ ողորուել, և ցանկութիւն գայ խկոյն եւթ ձեռս առնել վրձինը և կտաւի վրայ իրագործել ինձ յախշտակած դաղափարը... Այն ինչ, կարող է պատահել, որ նոյն այդ ժամին իմ պաշտօնական անյետաձգելի գործը պահանջում է, որ ես կաշկանդուած մնամ գրասեղանի մօտ և անյապաղ աւարտեմ: Դա կը նշանակէ—երկու կրակի մէջ խորովուել:

Ա.Բ.Գ. Ես զարմանում եմ...

Մ.Ի.Բ. Իրաւունք ունիք: Մենք իրար չենք կարող հասկանալ:

Ա.Բ.Գ. (Վեր կենալով) Դու գիտես, եղբայր: Ես քեզ չեմ գորում: Իմ այստեղ գալու նպատակն էր մի բարութիւն անել

իս հանդուցեալ եղբոր որդուն: Բայց իզուր: Բարութիւնս բա-  
նի տեղ չ'անցաւ: Բարսով մնաս: (Գնում է:)

ՏԵՍԻԼ 9.

ՄԻՔԱՅԷԼ (Մենակ).

Ի՞նչ անհասկացողութիւն և արհամարհանք դէպի դեղա-  
րուեստը: Չըհետաքրքրուեց մինչև անգամ անցնել այն կողմ և  
մի աչք ձգել պատկերների վրայ: (Մտնում է Ֆլորան):

ՏԵՍԻԼ 10.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ.

ՖԼ. Միքայէլ, թատրոն դնում ենք թէ ոչ:

ՄԻՔ. Կ'երթանք:—Այս բոպէիս գիտես ով էր այստեղ,

Ֆլորա:

ՖԼ. Ո՞վ:

ՄԻՔ. Իմ հօրեղբայր Աբղարը:

ՖԼ. Ես նրան տեսայ. բարեկեց և անցաւ: Ինչի՞ համար էր  
եկել:

ՄԻՔ. (Գմծիծաղ) Կարո՞ղ ես երեակայել, Ֆլորա, թէ նա  
ինչ էր ինձ առաջարկում:

ՖԼ. Ի՞նչ:

ՄԻՔ. Հն-հն-հն:—Առաջարկում էր ինձ ձգել արուեստս  
և մտնել իր մօտ ծառայութեան:

ՖԼ. (Ուրախ) Իր մօտ ծառայութեան: Ուղի՞ղ ևս ասում,  
Միքայէլ:

ՄԻՔ. Ա՛, ինչպէս ուրախացաւ: Աչքերը փայլեցին:

ՖԼ. Իսկ ի՞նչ պաշտօն էր առաջարկում:

ՄԻՔ. Լինել կորրեսպոնդենտ:

ՖԼ. Դա քեզ յարմար պաշտօն է, Միքայէլ:

ՄԻՔ. Ի՞նչ, յարմար պաշտօն:

ՖԼ. Իհարկէ, շատ յարմար:—Իսկ ոտճիկը:

ՄԻՔ. Խոստանում էր լաւ ոտճիկ:

ՖԼ. Ո՞րքան:

ՄԻՔ. Այդ չ'ասաց:

ՖԼ. Յետո՞յ, ընդունեցի՞ր:

ՄԻՔ. Ես զաւում եմ, Ֆլորա, որ դու ուրախանում ես:

Ֆլ. Ի՞նչ, ուրեմն չես ընդունել:

ՄԻՔ. (Խիստ) Ես նրան բացէիբաց մերժեցի:

Ֆլ. Մերժեցիր: Ափսոս...

ՄԻՔ. Հապա ի՞նչ, ուրեմն ընդունէի:

Ֆլ. Իհարկէ, ընդունէիր: Տէր Աստուած, բախան իր ոտով գալիս է դուռդ ծնծում, և դու քչում ես քեզանից:

ՄԻՔ. Եւ դու այդ լուրջ ես ասում, Ֆլորա: Ուրախ կը լինէիր, եթէ ես...

Ֆլ. Ուրախ կը լինէի թէ խօսք է: Դա մի երջանկութիւն կը լինէր մեզ համար: Կ'ազատուէինք վերջապէս այն բոլոր նեղութիւններէ, որ մենք կրում ենք չբաւորութեան պատճառով, սենք էլ օր կը տեսնէինք, կեանք կը վայելէինք, կարող էինք տուն ու տեղ սարքել, վայելուչ կերպով հաղնուել, մարդամէջ երևալ...

ՄԻՔ. Ո՞վ գիտէ. դուցէ այդպէս իրօք ձեզ համար շատ լաւ կը լինի: Բայց ինչ կը լինի իմ դրութիւնը—այդ է խնդիր:

Ֆլ. Ինչ էլ որ լինի, յամենայն դէպս այժմեան դրութիւնից ոչ աւելի վատ, որովհետեւ այս բուպէիս, ճշմարիտ, ի՞նչ է մեր վիճակը. համարեա ոչինչ չ'ունենք, ամեն բանից զուրկ, աղքատ... Իսկ հօրեղբորդ սոսաջարկութիւնը եթէ ընդունես, դա կը լինի մեզ համար—փրկութիւն:

ՄԻՔ. Փրկութիւն... Յաւալի է լսել այդ բոլորը... Ուրեմն ձեր բախտաւորութիւնը կախուած է իմ անձնուրացութիւնից. ուրեմն դ՞ու ես, Ֆլորա, յանկանում ես, որ ես կոտորատեմ վրձիններս և դէն ձգեմ, հանգչեմ այն հուրը, որ անպարար վառում է իմ ներսը, մնաք բարեաւ ասեմ ոգևորութեանս անդին ժամերին, մոռանամ բնութեան ամբողջ պոէզիան, երազանքը—թողնեմ այս բոլորը և կեանքի ծովի խորքը նետուեմ... Ֆլորա, դու այս ես կամենում արդեօք:

Ֆլ. Մէթէ հօրեղբայրդ քո վասն է յանկանում, որ նա...

ՄԻՔ. Հօրեղբորս համար, այն, շատ դիւրին բան էր, դուցէ և իր սեփական օղախ համար, անխիղճ սառնասրտութեամբ խորհուրդ տալ, որ ես ձգեմ ամեն ինչ և մանեմ իր մօտ ծառայութեան: Դրա պէս մարդկանց համար ի՞նչ բան է գեղարուեստը: Գեղարուեստի սուած բարձր գուարճութիւնները զբանց օտար են: Դրանց մէջ գերակշռում է հողեղէնը, նիւթականը, ոչինչ վերացական, ոչինչ հողոր և վսեմ: Դրանց սիրտը կարծր է, հակումները գրեհական. աղնիւր և վեհը զբանց չէ յափըշտակում. ոսկի հորթի մոլեռանդ երկրպագուներ են զբանք, զբանք բոլորն այդպէս են: Բայց դու, Ֆլորա, ասան, քեզ ի՞նչ պատահեց, որ այդպէս փոխուեցիր: Ես վաղուց է նկատում եմ

ըստ մէջ մի տեսակ սառնութիւն դէպ իմ պարապմունքը, մինչև անդամ, եթէ կ'ուզես, մի տեսակ հեղնութիւն, որ հազիւ կարողանում եւ քողարկել... Ասան, այդ ինչիցն է արդեօք:

Յ՛կ. Այդ շատ բնական է և հասկանալի: Ի՞նչպէս կարող ենք մենք չը ստուշել, մինչև իսկ ջատել այն պարապմունքը, այն արուեստը, որի պատճառով մենք այնքան զրկանք և նեղութիւններ ենք կրել և կրում ենք...

ՄԻՔ. Ֆլորա, Ֆլորա, չէ որ հէնց նոյն այդ արուեստի շնորհիւ էր, որ մենք ճանաչեցինք իրար և իրար սիրեցինք... Յիշում ես արդեօք մայիսի այն գեղեցիկ առաւօտը, երբ դու և ընկերուհիդ, երկուսդ էլ մատղաշ, ծաղկափթիթ հասակում անտասային թռչունների պէս, ուրախ և աշխոյժ եկաք իմ պատկերահանդէսը: Դու սքանչելի էիր, գրաւիչ, թարմ, ինչպէս դարնան առաջին վարդը, որ բացւում է արշալուսի հետ: Քեզ տեսայ թէ չէ, մի ակնթարթում, կարծես ելեկտրական զորութեամբ, սիրոյ կայծ վառուեց իմ մէջ, և ես կլանուեցի քեզանով... Մինչ դու հիացած և ակնդէտ նայում էիր պատկերներին, և քեզնով էի զմայլուած, չէի համարձակում աչքս թեքել քեզանից: Անսայ ժամանակ ջերմ համակրութեամբ լցուած մեր հայեացքները իրար հանդիպեցին, մենք իրար հասկացանք և անխօս ու անձայն սիրոյ ուխտ կապեցինք իրար հետ... Իսկ յետոյ, երբ դուք հրաժեշտ տուիք ինձ և կամենում էիք հեռանալ, ինչպիսի քաղցր, նազելի ժպտով դու ետ նայեցիր դէպի ինձ... Ֆլորա, այդ րոպէին ինձ թւաց, որ դու մի երկնային էակ ես, օժտուած չը նախարհիկ գեղեցկութեամբ, որ քեզ Աստուած է ուղարկել ինձ համար, որպէսզի իմ կեանքի անբաժան ընկերը լինիս, որպէսզի վեաթալուհու նման վառ պահես իմ մէջ սրբազան հուրը, երբ հանգչել ուզենայ, որպէսզի իմ գործունէութեան փշոտ ապարիզի վրայ, երբ վհատել սկսեմ, դու լինիս իմ հրեշտակ պահպանը... Եւ ես չը սխալուեցի: Արդարև, դու այդպէս էիր սկզբումը, մեր ամուսնութեան առաջին տարիները: Սիրելով ինձ՝ դու սիրեցիր և իմ աշխատանքը, սկսեցիր սովորել իմ արուեստը և մինչև անդամ երազում էիր դառնալ երևելի նկարչուհի... Բայց յետոյ փոխուեցիր, կամաց-կամաց սառար դէպի իմ պարապմունքը, և ահան, այժմ, երբ ես աւելի, քան երբեք, կարօտ եմ միսիթարութեան և քաջալերող ձայնի, Ֆլորա, դու ինձ մենակ ևս կամենում թողնել իմ դժուար ճանապարհի վերայ...

Յ՛կ. Ի՞նչ անեմ, սիրելիս, յուսահատուել ևս: Տանեցիք բուրն էլ յուսահատուել ևս: Մենք ապրել ենք ուղում, Միքայէլ, փոքրիշատէ մարգավայել, տանելի կեանք, իսկ քո պարապմունքներ, 1903.

մունքը մեր անհրաժեշտ պիտոյքներին էլ բաւականութիւն չէ տալիս: (Արտասուազին) Մենք հօ չենք ապրում, այլ միայն տանջուում, հալումաչ ենք լինում, ամեն բանից զուրկ, ոչ մի ուրախութիւն, ոչ մի սփոփանք... Դու քո մխիթարութիւնը գտնում ես քո արուեստի մէջ, նրանով տարւում, յափշտակում ես: Իսկ մենք, մենք ինչ անենք, ասան, ինչի մէջ գտնենք մեր մխիթարութիւնը: Հապա մեզ չես խղճում: Ո՛ւր է, երանի չէ, որ մեր ձեռքիցն էլ մի բան գար, ու մենք էլ աշխատէինք օրնիբուն...

ՄԻՔ. Ես հասկանում եմ ձեր գրութիւնը, Ֆլորա, գիտեմ, թէ որքան անտանելի է դատարկ և անխորհուրդ կեանքը, մանաւանդ չքաւորութեան մէջ: Բայց ինչ անեմ, ասան, որ կարողանամ բարւոքել ձեր վիճակը:

Ֆլ. Ընդունիր հօրեղբօրդ առաջարկը:

ՄԻՔ. Բայց դա կը լինի իմ կողմից մի մեծ զոհաբերութիւն:

Ֆլ. Ընտանիքիդ սիրոյ համար արն այդ զոհաբերութիւնը:

ՄԻՔ. Ա՛խ, Ֆլորա...

Ֆլ. Բայց այդ, իսկապէս, մի առանձին զոհաբերութիւն էլ չէ: Ի՞նչ ևս կորցնում, ասան. ընդունելով հօրեղբօրդ առաջարկած պաշտօնը՝ դու հօ չես ծախում նրան քո ամբողջ ժամանակը: Դու միշտ կ'ունենաս ազատ ժամեր, երբ դարձեալ կարող ես պարապել քո սիրած գործով:

ՄԻՔ. Այդ տեսակ պարապմունքից ոչինչ չի դուրս գայ:

Ֆլ. Վերջապէս՝ դու հօ ընդմիշտ չես թողնում վրձինդ: Դա կը լինի մի ժամանակաւոր զբաղմունք, մինչև որ մեր զբոսութիւնը մի քիչ կը լաւանայ: Այնուհետև եղբայրդ՝ Վահանն էլ կ'աւարտի, կը գայ, քեզ օգնութեան ձեռք կը մեկնի, դու կը թեթեանաս հոգսերից, և այն ժամանակ սգևորուիր, ինչքան սիրող կը տայ, թէկուզ դիչեր-ցերեկ պատկերակալի մօտից մի հետանար:

ՄԻՔ. (Գէմքը պայծառանում է) Այդ լաւ ասացիր, Ֆլորա: Վահանը կը գայ, և ամեն ինչ կը բարեփոխուի: (Մտածելով եւ ուրախ) Այն, նա ձեզ կը տայ ձեր ուղած բախտաւորութիւնը, իսկ ինձ — ազատութիւն հոգսերի դերութիւնից: Այն, հիանալի կը լինի: Այն ժամանակ ես ինձ թեթե կը զգամ եթերի նման, ինչպէս արծիւ կը սաւառնեմ վերև, և իմ ստեղծագործութեան հորիզոնը այնպէս կ'ընդարձակուի...

Ֆլ. (Անհամբեր) Ուրեմն ընդունում ես:

ՄԻՔ. Բայց սպասիր: Մի ամբողջ շաբաթ դեռ կայ առաջներիս: Կարող է պատահել, որ հէնց վաղն ևեթ մի ունեոր

գեղարուեստասէր մանի այստեղ և ցանկութիւն յայտնի ձեռք  
բերել իմ ամենաթանկագին սրտակերը, որ արժէ 2500 ռուբլի...

Ֆլ. Դա ուրիշ բան կը լինի: Այն ժամանակ...

ՄԻՔ. Այն ժամանակ մենք մի ամբողջ տարի ապահով  
ենք. ոչ հոգս, ոչ կարիք: Դուք կ'ապրէք ձեզ համար ուրախ,  
երջանիկ... Իսկ ես—կ'երթամ ճանապարհորդելու: Վաղուց,  
չնոտ վաղուց է, որ ես մեր երկրից ելած չեմ: Այնպէս կարօտել  
եմ դրսի աշխարհի սեսութեան...

Ֆլ. Իսկ եթէ չ'արդարանայ մեր յոյսը, որ շատ հաւա-  
նական է:

ՄԻՔ. Այն ժամանակ... Այն ժամանակ—ես չը դիտեմ...  
Յամենայն դէպս մի շաբթից յետոյ շատ բան կը պարզուի—  
Գնանք: (Գնում են):

#### ՎԱՐԱԳՈՅՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԳ

Նկարիչ Թաշմեանի բնակարանը: Մի ընդարձակ սենեակ հասարակ կահաւորութեամբ: Գլխաւոր մուտքը ծակատից, երկու կողմից լուսամուտներ: Աջակողմեան եւ ձախակողմեան դռները տանում են դէպի կացարանի ներսը: Լուսամուտի մօտ դրուած է պատկերակալը: Սեղան, որի վրայ նկարչական այլեւայլ պարագաներ՝ ներկատնակ, վրձիններ, իւղաներկի սրուակներ եւ այլն: Սենեակի պատերից կախուած են պատկերներ՝ ծածկուած բողով: Ծաղիկներ:

Ժամանակը—ձմեռ, կէսօր. դուրսը բուք եւ ձիւն: Առաջին եւ երկրորդ գործողութեան միջեւ անցել է մի տարուց աւելի ժամանակամիջոց:

### ՏԵՍԻԼ 1.

#### ՁԼՈՐԱ, ՄԱՆԱՍԵԱՆ.

ՄԱՆ. Շատ ախտոտում եմ, տիկին, որ պարոն Միքայէլը տանը չէ: Ես վաղուց է չէի տեսել նրան: Պատահամբ մտայ այս քաղաքը և քաղցր պարտքս համարեցի այցելել և հրաժեշտ տալ իմ նախկին ուսուցչին:

ՁԼ. Կ'ուզէք, սպասե՛ք: Ամուսինս շուտով կը գայ ծառայութիւնից:

ՄԱՆ. Ծառայութիւնից... Նա ծառայում է:

ՁԼ. Այո, իր հօրեղբոր առետրական տան զրասենեակում կորրեսպոնդենտ է:

ՄԱՆ. Կորրեսպոնդենտ, առետրական տան զրասենեակում:

ՁԼ. Դուք զարմանում էք, պարոն, որ ամուսինս ծառայում է:

ՄԱՆ. Այո, տիկին, հաւատացէ՛ք, ես երևակայել անդամ

չէի կարող, որ մեր տաղանդաւոր նկարիչը վրձինը թողած՝ մի որեէ առևտրական տան կորրեսպոնդենտի պաշտօն է վարում: Նկարիչ—և առևտրական տան կորրեսպոնդենտ! Շատ խորթ է հնչում: Լաւ, գոնէ ազատ ժամերին նկարում է:

ՖԼ. Ազատ ժամեր նա համարեա չ'ունի:

ՄԱՆ. Ուրեմն նա այլևս բոլորովին ձեռը չէ առնում վրձինը:

ՖԼ. Այս վերջին տարին շատ սակաւ:

ՄԱՆ. Ի՞նչ էք ասում, տիկին:

ՖԼ. Ի՞նչ արած: Մեզ մօտ նկարչի պարագմունքը չէ գրահատում ըստ արժանւոյն: Անկարելի է նրա վրայ յոյս դնել:

ՄԱՆ. Պատկերները չ'էին վաճառում:

ՖԼ. Շատ սակաւ: Դուք պէտք է տեսնէիք, թէ ինչպէս էր յուսահատուած Միքայէլը, երբ փակեց իր վերջին ուղեգահանդէսը: Վաթսունի չափ իւղաներկ պատկերներ կային, որոնց վրայ նա այնքան աշխատանք էր դրել: Եւ վերջիվերջոյ—նչ մի վարձատրութիւն, ոչ մի խրախոյս ապագայ դորձունէութեան: Նրա պատկերահանդէսը մի ամբողջ հարստութիւն էր, բայց, չը նայած դրան, նա ստիպուած էր պարտքեր անելու...

ՄԱՆ. Անկասկած, մեր մայրենի գեղարուեստը աննախանձելի վիճակի մէջ է, բայց... պէտք է սոկալ:

ՖԼ. Այնպէս զայրացած էր ամուսինս... Նա կոտորեց իր վրձինները, դէն՝ ձգեց ներկապնակը, երգուեց այլևս ոչինչ չը նկարել: Նա շարունակ կրկնում էր. «Չ'արժէ մարդարխաներածել դրանց առաջ, որ կոխ տան և անցնեն»:

ՄԱՆ. Եւ իր երգմանը մնաց հաւատարիմ:

ՖԼ. Ո՛չ, չը կարողացաւ: Չ'անցաւ մի ամիս, մէկ էլ տեսնեմ, կամաց-կամաց նոր կտաւ է պատրաստում: «Իսկ երգումը», հարցրի ես: Նա—լսեցէք թէ ինչ է պատասխանում. «Ես պատրաստ եմ մինչև անգամ հոգիս գրաւ դնել սատանայի մօտ, միայն թէ կատար ածեմ այս հոյակապ նիւթը, որ նստած է զլիսիս մէջ և ինձ հանդիստ չէ տալիս»:

ՄԱՆ. Կեցցէ: Այդպէս կը վարուէր ասնն մի իսկական գեղարուեստադէտ, որի համար ստեղծագործութիւնը մի ներքին պահանջ է: Եթէ իմանամ, որ պարոն Միքայէլը, իրաւ, վճռել է թողնել իր արուեստը և այն ընդմիջտ, այն ժամանակ ես ներքան ոչ մի կերպ չեմ կարող ներել: Իմ աչքում դա մի յանցանք է:

ՖԼ. Իսկ երբ կարիքը ստիպում է... Միթէ չը կան, միթէ քիչ են, օրինակ, գրողներ, դերասաններ, որոնք կարիքից հար-

կազրուած՝ ձգում են իրանց ասպարէզը և ուրիշ աշխատանքի մէջ որոնում ապրուստի աղբիւրը:

ՄԱՆ. Այն, և դաւաճանում իրենց կոչմանը: Բայց միթէ, իրաւ, այդ աստիճան մեծազօր է կարիքը, որ նա կարողանում է մնայնել լաւագոյնը, ինչ որ կայ մարդու մէջ... Տիկին, գեղարուեստի գլուխ-գործոցներ գիտեմ ես, որոնք ծնունդ են առել զրկանքի և ծայրայեղ կարիքի մէջ:

ՖԼ. Շատ կարելի է, պարոն: Բայց իմ ամուսինը ուրիշ կերպ չէր կարող վարուել: Նա ինքը մենակ մի գլուխ չէ, այլ մի ամբողջ գերդաստանի միակ նեցուկը և ապաւենը:

(Գրան մէջ երեւում է Միքայէլը, ձեռքին մի պայուսակ: Գէմբի վրայ յոգնուած ինչ և և մելամաղձոտ ժպիտ):

## ՏԵՍԻԼ 2.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, ՄԱՆԱՍԵԱՆ.

ՄԱՆ. Ահն և իմ յարգելի ուսուցիչը:

ՄԻՔ. Մանասեանը... Բարե՛, բարե՛, սիրելիս:—Այս Էրբ:

ՄԱՆ. Այսօր եկել եմ և շուտով պիտի մեկնեմ:

ՄԻՔ. Իսկ ուր:

ՄԱՆ. Արտասահման:

ՄԻՔ. Դարձեալ Մլենխըն:

ՄԱՆ. Այն: Այնուհետև Պարիզ՝ ֆրանսիական շիւրային ի մօտոյ ծանօթանալու:

ՄԻՔ. Ա՛խ, եթէ ես էլ կարողանայի դալ ձեզ հետ, մտնել գեղարուեստի իսկական աշխարհը՝ տեսնելու, թէ արդեօք ինչ նոր հովեր են փչում այնտեղ:

ՄԱՆ. Եկէք գնանք: Գիտէք, պարոն Միքայէլ, դուք այնտեղ շատ կը թարմանաք:

ՄԻՔ. Այն, այդ շատ լաւ կը լինի: Բայց... Էհ, վախենում եմ մեռնեմ, մինչև այդ յաջողուի, և իմ երազը մնայ լոկ երազ:

ՖԼ. «Մեռնել»... ինչ սիրում ես դու կրկնել այդ խօսքը, Միքայէլ:

ՄԱՆ. Տիկինը իրաւամբ բողոքում է: Ի՞նչ մեռնելու ժամանակ է: Դեռ նոր ենք սկսում ապրել, դուք արդէն մեռնելուց էք խօսում:

ՄԻՔ. Ներեցէք, մոռանանք:—Հն, իրաւ, ես մի բան էի կամենում հարցնել: Չէ որ ձեր հայրը հակառակ էր, որ նկարչու թիւն սովորէիք...

ՄԱՆ. Օ՛, սաստիկ դէմ էր: Ասում էր. «կուպէկ չեմ

տայ»... Ինչ կախենք, ինչ ընտանեկան փոթորիկներ... Բայց ես—տարայ յաղթանակը:

ՄԻՔ. Դուք բախտաւոր կը լինիք, ինձ թւում է: Կամքի ոյժ, նիւթական ապահովութիւն... Բայց ինչո՞ւ կանգնած ենք: Նստեցէք, խնդրեմ: (Նստում են) Օ՛հ, ես այնպէս դաղրած եմ:

ՄԱՆ. Պարոն Միքայէլ, տիկինը ասաց, որ դուք այժմ ծառայում էք:

ՄԻՔ. Այո՛, ծառայում եմ\*:

ՄԱՆ. Եւ ձգել էք վրձինը:

ՄԻՔ. Տէր մի՛ արասցէ... Բայց ես ներկայումս այնպիսի վատ պայմանների մէջ եմ, որ դուցէ աւելի լաւ կը լինէր թողնել ամենին: Օրուայ ամենաթարմ ժամերս վատնում եմ գրասենեակում, ուր համրիչների չսկիչսկոյր կատաղեցնում է ինձ, նեարդերս քայքայում:

ՄԱՆ. Բան չ'ունիք դուք էլ, պարոն Միքայէլ: Թո՛ղ կորչի այդ ամենը: Ծառայեցէք ձեր միակ աստուածութեան:

ՄԻՔ. Եւ ես լուրջ մտածում եմ այդ մասին: Այսպէս երկար տեւել չէ կարող իմ գրութիւնը: Ես... մի բան կ'անեմ... ես—վերջ կը տամ...:

ՄԱՆ. Ձեր եղբայրը, լսել եմ, լաւ սաշտօն ունի, միջոցների աէր է: Մի՛թէ նա ձեզ չէ օգնում:

ՄԻՔ. (Գէմրի վրայ խիստ դժգոհութիւն) Իմ եղբայրը... (Մի կողմ) Ես եղբայր չ'ունիմ...:

ՅԼ. (Ման.-ին) Խնդրում եմ, եղբօր մասին չը խօսէք: Անունն անպամ զայրացնում է:

ՄԱՆ. Մի՛թէ:

ՅԼ. Այո՛, խնդրում եմ:

ՄԱՆ. (Կարճատեւ լռութիւն) Պարոն Միքայէլ, նոր ոչինչ չ'ունիք նկարած:

ՄԻՔ. Կայ մի նոր բան: Բայց ես ամաչում եմ ցոյց տալ: Լսենք սակայն ձեր կարծիքը: (Գնում է պատկերակալի մօտ) Եթէ ցանկանում էք իմանալ, թէ ինչ կարող է անել մի զեղարուեստազէտ մարդ յոգնած ձեռքով և կոտրուած սրտով, ահաւասիկ (Վերցնում է քողը)—նայեցէք:

ՄԱՆ. (Ուշադրութեամբ նայում է եւ վրելը թափահարում):

ՄԻՔ. Չէք հաւանում:

ՄԱՆ. Կը ներէք ինձ, պարոն Միքայէլ, բայց ես պէտք է անկեղծ ասեմ, որ դուք երբէք սրանից աւելի անգոյն, անկենդան, սառը, մի խօսքով, աւելի անյաջող գործ չէք արտադրել:

ՄԻՔ. Շատ ուղիղ է: Ես ձեզ հետ համաձայն եմ: Եւ մի հրաշք կը լինէր, եթէ ես իմ այժմեան անհնարին հանդամանք-

ների մէջ դռնէ մի փոքրիկ յառաջադիմութիւն ցոյց տայի: Ընդհակառակը, ես քայլ առ քայլ դէպի ետ եմ գնում: Եւ հասկանալի է պատճառը: Տաղանդը նման է բոյսի. որպէսզի աճի, ծաղկի և պտուղ տայ, հարկաւոր են՝ սպարաբա հող, լոյս և ջերմութիւն. այլապէս նա պիտի թառամի, չորանայ... Ես էլ ահա—(Յանկարծ ծեղը դնում է կրծքի վրայ. անտխորժ զգացմունքից դէմքը կծկում է): Ֆլորա, մի բաժակ ջուր:

Ֆլ. Ա՛խ, Միքայէլ... (Շտապում է ջուր բերելու):

ՄԱՆ. (Խորհրդաւոր) Ղուք սրտի թրթռոց ունիք:

ՄԻՔ. Նոր է սկսել: Առաջ չը կար:

ՄԱՆ. Երկար խօսել ձեզ կարող է վնասել: Դուք հանդըստացէք, պարոն Միքայէլ, իսկ ինձ (Վեր է կենում) թոյլ տուէք հրաժեշտ տալ ձեզ:

ՄԻՔ. Ի՞նչ կայ շտապում էք: (Ֆլորան բերում է ջուր և տալիս նրան խմելու):

ՄԱՆ. Տիկին, ինձ կը ներէք...

Ֆլ. Գնում էք:

ՄԱՆ. Այո՛, մի—քանի ծանօթներին էլ պիտի տեսնեմ և յետոյ—դէպի կայարան: Յանկանում եմ ձեր ամուսնուն կատարեալ առողջութիւն:

Ֆլ. Շնորհակալ եմ:

ՄԻՔ. Կացէք մեզ մօտ ճաշի:

ՄԱՆ. Ուրախութեամբ, եթէ միայն...

ՄԻՔ. Դուք գիտէք:

ՄԱՆ. Ի սէր Աստծոյ, աշխատեցէք մի հնար գտնել բարւոքելու ձեր գրութիւնը... Ափսոս է ձեր տաղանդը:

ՄԻՔ. Ես դեռ յոյսս չեմ կորցրել:

ՄԱՆ. Եթէ ձեզ նման վնասները հեռանան ասպարիզից, այն ժամանակ էլ ո՛վ պիտի մնայ:

ՄԻՔ. Չը գիտեմ, թէ ինչ կարող եմ անել ես այսուհետև: Արդէն սողում եմ դէպի ծերութիւնը: Բայց դուք դեռ բոլորովին երիտասարդ էք: Ձեր առաջ բաց է սպաղայի մի գեղեցիկ հեռապատկեր: Գնացէք և կատարելագործուեցէք: Արտանց ցանկանում եմ այնքան առաջ գնաք, որ մինչև իսկ Եւրոպայում երևելի նկարչի հոչակ վաստակէք և, երբ վերադառնաք հայրենիք, մեր գեղարուեստի աշխարհը ձեզ գրկաբաց ընդունէ:

ՄԱՆ. Շնորհակալութիւն ձեր բարեմաղթութեան համար: —Այժմ ես գնամ: Տիկին, մնաք բարև:

Ֆլ. Բարի ճանապարհ:

ՄԱՆ. (Գրան մօտից) Յարգանքս: (Գնում է):

ՏԵՍԻՆ 3.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ.

ՄԻՔ. (Տրտում մտենալով պատկերակալին և ղիտելով թերակատար պատկերը՝ ձեռքը խփում է ճակտին) Ա՛խ...

ՖԼ. Դարձեալ «ախ»: Ե՞րբ կը վերջանայ քո ախուժախը, Միքայէլ:

ՄԻՔ. Ինչո՞ւ նեղանում ես: Երբ ես ախ եմ քաշում, սիրտըս փոքր ինչ հանգստանում է:

ՖԼ. Իսկ դա ինձ տանջում է:

ՄԻՔ. Ֆլորա, հաւատն ինձ, այնպիսի բողբոջներ են գալիս, որ ես տարօրինակ պահանջ եմ զգում—դոջել, ինչքան ձայնումըս ձայն կայ, հեկեկալ երեխայի պէս:

ՖԼ. Բայց ինչո՞ւ, ասն տեսնեմ, ինչիցն է այդ վիշտը, կարծես աշխարհը քոնն էր—և ձեռքիցդ խլեցին:

ՄԻՔ. Այն, դու ուղիղ ասացիր: Ես ունէի մի աշխարհ, որ իմ ձեռքիցս խլուած է: Դա մի ղեղեցիկ, բանաստեղծական աշխարհ էր, լիքը ոգևորութեամբ և երազներով, հողեզմայ խաղաղութեան և դու փոթորիկների մի աշխարհ, մի աշխարհ էր դա, որ բնութեան հաղար ու մէկ պերճ, պքանչելի տեսարաններով ձօխացած՝ ամեն բողբոջ վկայում էր Արարչազետի յաւիտենական և անհասանելի գերհանձարը... Դա մի դրախտ էր ինձ համար, որից ես արտաքսուած եմ այժմ և դատապարտուած ճակատիս քրտինքով և կեանքս մաշելով մեր օրուայ հայը հայթհայթելի...

ՖԼ. Դրա համար էլ մտածել է պէտք: Հարիւրաւոր, հազարաւոր մարդիկ միթէ չեն շարչարոււմ, քեզանից էլ աւելի, և բոլորը մի կտոր հացի համար չէ:

ՄԻՔ. Եւ երանի՛ դրանց: Ապրելով միայն ապրելու համար՝ դրանք ոչինչ չեն կորցնում. դրանք ուրախ են, դրանց բախտաւորութիւնը նոյնիսկ ապրելու մէջն է: Բայց ինձ համար այդպիսի անխորհուրդ կեանքը զին չ'ունի: Ես մի տանջանք է, մի անէծք է, և ես նման եմ այժմ մի ճամբորդի, որ մտամոռոր գեգերում է աջ ու ձախ ու չը զիտէ, թէ ուր է դնում և ուր պիտի գնայ:

ՖԼ. Է՛հ, ի՛նչ հարկաւոր է այդքան մուայլ աչքով նայել կեանքի վրայ: Կեանքի նպատակը հէնց կեանքն է, որ կայ:

ՄԻՔ. Ո՛չ, ինձ համար՝ ապրել—նշանակում է ստեղծագործել: Այդ էր իմ կեանքի կէտ—նպատակին: Դրա մէջ էր իմ ու-

բախութիւնը. առանց դրան ես մի խղճալի արարած եմ միայն...  
ՖԼ. Օտար մարդու ձայն: Կսեցիր: Կարծեմ բժիշկն է:  
(Մտնելով դրան) Նա է:

(Մտնում է բժիշկը՝ ձեռքերը շփելով ցրտից):

## ՏԵՍԻԱ 4.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, ԲԺԻՇԿ.

ԲԺ. Ինձ կը ներէք, փոքր ինչ ուշացայ: (Շնչում է, գոլորշի)  
Օ՛, սաստիկ ցուրտ է ձեր բնակարանը: Տաւը աստիճան հազիւ  
կը լինի: Այստեղ կարելի է սառչել: Վառարանները լաւ վառե-  
ցէք, թէ չէ ձեր տունը կը դառնայ հիւանդանոց:

ՄԻՔ. Դուրան էլ լաւ ցուրտ է, բժիշկ: Սառնամանիք է:

ԲԺ. Սարսափելի բուք է անում: Նորդի չարութիւնը  
բռնել է. սառցի կտորանք է, որ երեսով է տալիս: Քամու ձե-  
ռից նոյնիսկ եկեղեցու զանգերը հանդիսա չ'ունին. դողում,  
մրմնջում, խղճալի ձայներ են հանում—զանգ-զընգ-ղինգ...

ՄԻՔ. և ՖԼ. (Ծիծաղում են):

ԲԺ. Է՛հ, մայրիկը ինչպէս է:

ՖԼ. Հիմա լաւ է, բժիշկ: Մինչև անգամ խոհանոց է զը-  
նացել:

ԲԺ. Խոհանոց: Երևակայում եմ, թէ ինչ կը լինի հիմա  
ձեր խոհանոցը: Բայց ես արդելել էի նրան առայժմ մտնել այն-  
տեղ: Զարմանալի է, Միքայէլ, այս մեր մայրերի բանը: Ի՞նչ-  
պէս են սիրում խոհանոցը: Կեանքի մեծ մասը, կարելի է ասել,  
անց են կացնում խոհանոցում: Դա իհարկէ, հայ կնոջ անարա-  
բութեան ազդացոյց է, բայց պէտք է մտածել, կարծեմ, և ա-  
ռողջութեան մասին:—Տիկին, խնդրեմ մայրիկին կանչէք:

(Ֆլորան դնում է):

## ՏԵՍԻԱ 5.

ՄԻՔԱՅԷԼ, ԲԺԻՇԿ.

ԲԺ. Նո՛ւ, Միքայէլ, ինչ նորութիւն ձեր գեղարուեստի  
աշխարհում:

ՄԻՔ. Հիմա ես աւելի տեղեակ եմ առևտրական աշխար-  
հի նորութիւններին:

ԲԺ. Հո՛-հո՛-հո՛: Նոր բան չ'ունիս նկարած, մինայլնը:

ՄԻՔ. Ուշադրութեան արժանի ոչինչ:

ԲԺ. Է՛հ, լաւ չէ, բարեկամս: Ծուլութիւնս ես անում:

ՄԻՔ. Ես ծոյլ չեմ, բժիշկ, այլ հիւանդ:

ԲԺ. Հիւանդ ես, կը բժշկենք:—Ի՞նչդ է որ...

ՄԻՔ. Աիրաս է սկսել յաճախ թրթռալ:

ԲԺ. Գո այժմեան պարագմունքը, երեի, սրտովդ չէ, և այդ քեզ մտածել է տալիս, այո՛:

ՄԻՔ. Բաւական չէ, որ մտածել է տալիս, ինձ ուղղակի մաշում է:

ԲԺ. Ե՛կ, Միքայէլ, թնդ պաշտօնդ, որ միանդամայն անհամապատասխան է թէ քո հակումներին, թէ ֆիզիկական կազմաւածքիդ: Նստակեաց աշխատանքը քեզ վնասում է:

ՄԻՔ. Ես, իհարկէ, ուրախ կը լինէի թողնել: Բայց ես այժմ նման եմ մի թռչունի, որ խճճուել է ցանցի մէջ. թրպըրտում, թրպըրտում է, աղատուել չէ կարողանում:

ԲԺ. Ինչո՞ւ:

ՄԻՔ. Բժիշկ, ես անօգնական և մենակ եմ, բոլորովին մենակ...

ԲԺ. Իսկ Վահանը, եղբայրդ: Նա իրան հետո՞ւ է պահում ձեզանից:

ՄԻՔ. Ի՞նչ հնու... Մենք չը կանք նրա համար:

ԲԺ. Ուղի՞նք ես ասում:

ՄԻՔ. Հաւատն, բժիշկ: Ամիսներով ոտ չէ դնում մեր տանը: Կատարեալ անուշադրութեան է մատնել մեզ: Եղբայրական սիրոյ ամենաքնքոյշ զգացմունքը վերաւորուած է իմ մէջ:

ԲԺ. Բայց ինչո՞ւ այդպէս...

ՄԻՔ. Հարստանալ է փափազում մարդը: Եւ ինչպէս է դողում փողի վրայ,—ինչպէս մի նոր Հարպագոն... Այն ինչ, այնպէս դիւրին էր նրա համար օգնութեան հասնել իր խեղճ ընտանիքին: Երեակայեցէք. աւարտեց, եկաւ թէ չէ, իսկոյն տեղ դաւաւ, հասոյթը ամսէ սմիս աւելացաւ, և այժմ նրա երկու շմուռայ եկամուտը աւելի է, քան իմ մի ամբողջ տարուայ աշխատանքի վարձատրութիւնը...

ԲԺ. Դա յանցաւոր անտարբերութիւն է: Օ՛, մեր ժամանակուայ այդ փողի մեծարանքը, շուտ հարստանալու այդ բուռն ունեջանքը ահադին ծաւալ է ստացել... (Գալիս են Եղիսաբէթը և Ֆլորան)

## ՏԵՍԻՒԼ 6.

ՄԻՔԱՅԵԼ, ԲԺԻՇԿ, ՖԼՈՐԱ, ԵՂԻՍՍԵԷԹ.

ԲԺ. Մայրիկ, ես ուզում եմ քեզ հետ մի լաւ կոխ անել: Այդ հիւանդ տեղովդ ինչ բան ունիս խոհանոցում: Կեանքիցդ ձեռ ես վերցրել:

ԵՂԻՍ. Հիմա լաւ եմ, բժիշկ: Շնորհակալ եմ, բաւական նեղութիւն տուի ձեզ:

ԲԺ. Ձէ որ ես արգելել էի քեզ խոհանոց մտնել: Դեռ կարդի չես ընկել: Այ, հէնց այս բողէիս տնքտնքում ես: Մայրիկ, տես, կը մեռնես, մեղք ես: Ախր դու մեր մայրիկն ես: Էլ ո՞վ մեզ համար այնպիսի հրաշալի դաթաներ կը պատրաստի:

ԵՂԻՍ. Այ բժիշկ ջան, ինչ անեմ, համբերութիւնս չի տալիս, անող չը կայ:

ԲԺ. Ինչո՞ւ, խոհարար չ'ունիք:

ԵՂԻՍ. Ո՞րտեղից է:

ՖԼ. Մայրիկ, մենք հօ կանք. ես, աղջկերքը:

ԲԺ. Այս էլ հարադ: Տեսնում ես, մայրիկ:

ԵՂԻՍ. Դեռ ջահիլ են, այ բժիշկ, մեղքս են գալիս, չեմ ուզում շատ նեղացնեմ:

ԲԺ. Իզնուր, իզնուր: Թո՞ղ նրանք էլ սովորեն: Ձէ որ նըրանք էլ ժամանակով իրանց տուն ու տեղը կ'ունենան, տանտիկիներ կը դառնան:

ԵՂԻՍ. Ես էլ հէնց նոր էի վեր կացել:

ԲԺ. Ինչիցէ, Բայց այսուհետեւ, տես, էլ մի ամբողջ շաբաթ խոհանոց չես մտնի: Սենեակում կարող ես ման գալ. յողնեցիր, կը պառկես: Միայն թէ ձեռդ բանի չես տայ, ե խոհանոց—նչ մի կերպ: Հասկացար, մայրիկ:

ԵՂԻՍ. Ինչպէս հրամայում ես, բժիշկ, էնպէս էլ կ'անեմ:

ԲԺ. Է՛հ, հիմա ասան, տեսնեմ, ախորժակդ տեղն է:

ԵՂԻՍ. Գոհութիւն Աստուծոյ, գանգատաւոր չեմ:

ԲԺ. Անքնութիւնդ անցել է:

ԵՂԻՍ. (Հարցական հայացքով նայում է Ֆլորային):

ՖԼ. Բժիշկը հարցնում է. հիմայ լաւ ես քնում:

ԵՂԻՍ. Փառք Ստեղծողին. քունս տեղն է: Վերջին անգամուայ տուածդ գեղը շատ օգնեց:

ԲԺ. Ապա մի զարկերակդ նայեմ: (Նայում է) Հիմա գաղըրած չես, մայրիկ: Ձեռ կամենում պառկել:

ԵՂԻՍ. Հն, շատ շուտ եմ բէզարում:

ԲԺ. Լաւ կ'անես, մի քիչ հանդստանաս:—Դէ, այժմ ինձ թոյլ տուէ՛ք հրաժեշտ տալ: Այսօրուանից ես դադարեցնում եմ իմ այցելութիւնները: Հարկաւոր դէպքում ես միշտ պատրաստ եմ ծառայելու:

ՄԻՔ. Խորին շնորհակալութիւնս, բժիշկ: Մի օր ես պիտի մտեմ քեզ մօտ, որպէսզի ինձ մի լաւ քննես:

ԲԺ. Ուրախութեամբ, բարեկամս, ուրախութեամբ:

ՄԻՔ. Այս տեղս (ցոյց տալով սրտի կողմը) մի ինչ-որ անախորժ բան է կատարոււմ:

ԲԺ. Երբ կ'ուզես: (Գնում է:)

### ՏԵՍԻՒ 7.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, ԵՂԻՍԱՐԷԹ.

ՖԼ. Մայրիկ, տեղերդ չինեմ, որ պառկես:

ԵՂԻՍ. Ախր կերակրին նայող չը կայ: Աղջկերքը ո՛ւր են, է:

ՖԼ. Կերակրին ես կը նայեմ: Իսկ աղջկերքը հարեանս-ների մօտ են:

ԵՂԻՍ. Դէ լաւ: Ես գնամ պառկեմ: Ծնկներս շատ են նեղացնում:

ՖԼ. Գնանք, մայրիկ: (Ֆլորան եւ Եղիսարէթը գնում են: Միքայէլը մնում է մենակ:)

### ՏԵՍԻՒ 8.

ՄԻՔԱՅԷԼ (Մենակ).

Մինչև ճաշը դեռ կայ մի կէս ժամի չափ: Երթամ ներկերը ընդեմ: Տեսնենք, թէ ինչ պիտի դուրս գայ այս չարաբաստիկ պատկերից. ինձ շատ չարչարեց: (Գնում է: Քիչ յետոյ մտնում է Վահանը:)

### ՏԵՍԻՒ 9.

ՎԱՀԱՆ, յետոյ ՍԱԹԵՆԻԿ, ՎԱՐՍԵՆԻԿ և ԱՆՆԱ.

ՎԱՀ. (Կեղծ հագ) Ի՞նչ լուռ է չորս կողմը: Քնած են ինչ է:—Մայրիկ: (Մէկը մուտի ետեւից արագ մտնում են Սաթենիկը, Վարսենիկը եւ Աննան եւ համարեա փաժաժուում են իրենց եղբօր վզովը):

- ՍՍԹ. Վերջապէս եկանք, Վահան:
- ՎԱՐՍ. Այս ո՞ր խաչիցն է, Վահան:
- ՍՆ. Ի՞նչպէս եղաւ մեզ, մտաբերեցիր, Վահան:
- ՎԱՀ. (Ծիծաղելով) Ես ո՞ր մէկիդ պատասխանեմ:—Իսկ դուք  
 ո՞ւր էիք, քոյրիկներս:
- ՍՍԹ. Հարեանների մօտ:
- ՎԱՐՍ. Թուղթ էինք խաղում:
- ՎԱՀ. Թուղթ: Ասելի լաւ զբաղմունք չը գտնաք:
- ՎԱՐՍ. Չանձրանում ենք, Վահան: Անտանելի է մեր  
 կեանքը:
- ՍՍԹ. Իսկ դու իբր թէ չես խաղում, չէ:
- ՍՆ. Օ՛, այն էլ ինչպէս...
- ՎԱՀ. Իմ բանը ջնկ:
- ՍՍԹ. Անցեալ օրը ո՞վ էր կլուբում երկու հարիւր սարել:
- ՎԱՀ. Ես: Բայց դուք ո՞րտեղից իմացաք:
- ՎԱՐՍ. Սատանան լուրը բերաւ: (Ծիծաղում են):
- ՎԱՀ. Թոյլ տուէք ինձ հարցնել, ինչո՞ւ այդպէս պինդ-  
 պինդ փաթաթուէի էք շալերի մէջ: Մտնում էք:
- ՎԱՐՍ. (Յնցում է) Ես դողում եմ:
- ՎԱՀ. Այնքան էլ ցուրտ չէ այստեղ:
- ՍՍԹ. Ի՞նչպէս թէ ցուրտ չէ: Դուրսը սառնամանիք, բուք-  
 բորան. իսկ մենք երկու օր է վառարանը չենք վառել:
- ՎԱՀ. Ինչո՞ւ:
- ՍՍԹ. Փայտներս հատել է:
- ՎԱՀ. Հատել է:
- ՍՆ. Լաւ, դու ինչո՞ւ մեզ մօտ չէիր գալիս, հա՛, Վահան:
- ՍՍԹ. Բանն ասաց: Գայ ի՞նչ անի: Մեր կախներին է կա-  
 րօտ, թէ մեր ախուփախին: Ափսոս չէ մենակ. հոգսերից ա-  
 զատ, գլուխը հանգիստ...
- ՎԱՀ. Օ՛, Աստուած աղատի Սաթօի թունաւոր լիզուից.  
 կարիճի նման խայթում է:
- ՎԱՐՍ. Վահան, դու չը գիտէիր, որ մայրիկը հիւանդ է:
- ՎԱՀ. Ես միայն երէկ իմացայ, այն էլ պատահմամբ: Ապա  
 մի գնանք մայրիկին տեսնենք:
- ՍՍԹ. Հիմա մայրիկը ինչքան պիտի ուրախանայ... (Գը-  
 նում է. նրա ետեւից՝ Վահանը, Վարսենիկը եւ Աննան: Գալիս է Միքայէլը՝  
 ներկայանալով ձեռին: Ընտրում է վրձիններից իր ցանկացածը՝ եւ կանդ-  
 նում պատկերակալի առաջ:)

ՏԵՍԻՒ 10.

ՄԻՔԱՅԷԼ (Մենակ).

Մանասեանի կարծիքը լսելուց յետոյ՝ այս պատկերն աւելի եւ ընկաւ իմ աչքից։ Շատ ճամարիտ է. «անկենդան, անդնչն եւ սանձ»։ Եւ արժէ միթէ աւարտել այս դործը։ Աւելի լաւ չէ ոչնչացնել յոգնած երեակալութեանս այս բռնադրօսիկ ծնունդը։ Ոչնչացնել եւ սկսել նորից։ (Վայր է դնում ներկայակեր եւ վրձինը) Այն, ինչ որ դեռ եւ եփուած, հասունացած չէր այստեղ (Յոյց տալով դուխը), եւ կամեցայ բռնութեամբ դուրս կորզել եւ դնել կտաւի վրայ։—Եւ անհ հետեանքը։ Այսպէս է վրէժխնդիր լինում դեղարուեստը այն անձից, որ նրան դաւաճանում է, ցանկանալով երկու տատուածութեան միաժամանակ ծառայել...

(Գրան մէջ երևում է Ֆլորան)։

ՏԵՍԻՒ 11.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, յետոյ ՎԱՀԱՆ, ԱՆՆԱ, ՎԱՐՍԵՆԻԿ և ՍԱԹԵՆԻԿ.

ՖԼ. (Գէպի ետ նայելով) Միքայէլը.—Նա այստեղ է։

ՄԻՔ. Ֆլորա, ո՞վ է այնտեղ։

ՖԼ. Իսկոյն կ'իմանաս։ (Մտնում են Վահանը եւ քոյրերը։)

ՎԱՀ. Միքայէլ, բարե՛։ (Մտնում է ձեռք տալու։ Միքայէլը՝ խիստ հայեացք ձգելով Վահանի վրայ, հեռանում է իր սենեակը եւ դուռը ետեւից վարկում։ Նրա այս վարմունքը խիստ անախորժ տպաւորութիւն է դործում ամենքի վրայ։ Սկզբում ամենքն էլ ապշած՝ իրար երեսի են նայում։ Քոյրերը անբաւական են եւ միմեանց հետ փսփսում են։ Ֆլորան իրան շատ անյարմար է կղում եւ խոնարհել է դուխը։ Վահանի դէմքը նախ արտայայտում է շինձու ժպիտ, բայց զնալով աւելի եւ աւելի վրդովմունք է ցոյց տալիս։)

ՖԼ. (Մի կողմ) Այս ինչ պատահեց նրան... Ա՛խ, Աստուած։ (Գնում է։)

## ՏԵՍԻԼ 12.

ՎԱՀՍՆ, ԱՆՆԱ, ՎԱՐՍԵՆԻԿ, ՍԱԹԵՆԻԿ.

ՎԱՀ. Այս ի՞նչ է նշանակում:

ՎԱՐՍ. Երազ է տեսել...

ՎԱՀ. Միքայելն ինձանից խորչում է... Փախչում, ինչպէս ժանախտից... Ձէ կամենում մինչև անգամ իմ բարեին պատասխանել... (Գառը ծիծաղ) Ես չը գիտէի, ճշմարիտ, որ ես այդ աստիճան ատելի եմ նրա համար... Է՛հ, ի՞նչ արած, զոռով սիրելի չեա դառնայ... Ինձ մնում է այժմ զըլխարկս վերցնել այսպէս և հետանալ այստեղից: (Ուզում է գնալ):

ՎԱՐՍ. (Նրան պահում է): Վահան, ի սէր Աստծոյ, ներիր նրան...

ՍԱԹ. (Նոյնպէս) Կանց, Վահան, խնդրում ենք...

ԱՆ. (Նոյնպէս) Մի գնա, մայրիկին խնայիր...

ՎԱՀ. Վահ, ինչպէս ես կարողացայ տանել այն վիրաւորանքը... Թողէք ինձ: (Գոյրերը աշխատում են պահել): Թողէք ինձ գնամ, կորչեմ այստեղից... Այս խայտառակութիւնից յետոյ ես մնամ այստեղ, ես էլ կրկին ճա գնեմ այս տան չեմբին—կրքէք և կրքէք: (Շտապ գնում է: Գոյրերը արագ դուրս են վազում նրա ետեւից՝ կանչելով. «Վահան, Վահան, Վահան»!... Մտնում է Ֆլորան՝ սրտնեղութիւնից սաստիկ յուզուած:)

## ՏԵՍԻԼ 13.

ՖԼՈՐԱ (Մենակ).

Ի՞նչպէս բարկացած է Վահանը... Ձեռքից պինդ բռնած պահում են, իսկ նա ես է հրում իրանից... Նա գնաց... (Մտնելով դրանք) Միքայէլ, Միքայէլ, չուա արի այստեղ: (Գալիս է Միքայէլը:)

## ՏԵՍԻԼ 14.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ.

ՄԻՔ. Հը, ի՞նչ կայ, որ այդպէս գոռում ես: Ի՞նչ է պատահել, հրդեհ, անբախտութիւն... Այս էլ Միքայէլը: Ասա՛, ի՞նչ ես հրամայում:

ՅՆ, Միքայէլ, Վահանը հեռուցաւ՝ սաստիկ վիրաւորուած...  
Գնահ, հասիր հտիւրցը, ես կանչիք նրան, ներուժ խնդրիր...

ՄԻՔ. Ի՞նչ...

ՅՆ, Ներում, ներում խնդրիր նրանից, որովհետեւ քո արածը կոպտութիւնն, անքաղաքավարութիւնն էր, Միքայէլ:

ՄԻՔ. Անքաղաքավարութիւն... (Աշխատում է իրեն զսպել):  
Այն, ես նրա հետ... մի քիչ... կոպտա վարուեցի... Ես այդ ըզգում եմ... Բայց ի՞նչ անեմ, Ֆլորա, սիրտս չատ էր լցուած մաղձով, համբերութիւնս հասել էր, ես յանկարծ բռնկեցի: Առաջինը նա է, որ իմ եղբայրական զգացմունքը վիրաւորել է, յոյսերս ոտի տակ տուել. նա է, որ մեզ մատնել է կտտարեալ անուշադրութեան... Աւելի յաւ է, որ նա ինձ նման անքաղաքավարի լինէր, կոպտ լինէր, բայց ոչ այն աստիճան անտարբեր դէպ իր հարազատ ընտանիքը, այն աստիճան անխիղճ և անզգայ:...

ՅՆ. (Ալալազին) Ա՛խ, Միքայէլ, այս ի՞նչ արիր դու:  
(Ծածկելով աչքերը՝ կամայուկ լալիս է):

### ՎԱՐԱԳՈՅՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԳ

Մի առանձնասենեակ վահանի բնակարանում, որը կից է նրա ծառայու-  
թեան գրասենեակին: Արտաքին մուտքը նակատից, կողքի դռներից մէկը  
տանում է դէպի կացարանի ներսը, իսկ միւսը—դէպի գրասենեակը: Ա-  
ջակողմեան պատի մօտ մի գրասեղան եւ քանի մի աթոռներ. գրասեղանի  
վրայ բոլոր անհրաժեշտ պարագաները, նոյնպէս եւ համրիչ, թղթեր, սե-  
ղանի զանգ եւայլն: Չախ կողմում գրուած է զիւան՝ իր կլոր սեղանով  
եւ բազկաթոռներով: Մի պատի վրայ կախուած է քարտ՝ զ: Վարագոյրը  
բարձրանալիս՝ վահանը՝ գրասեղանի մօտ նստած՝ համրիչի վրայ ինչ-որ  
հաշիւներ է տեսնում եւ գրում: Քիչ յետոյ գրասենեակի զոնից մտնում է  
Օհաննէսը եւ քանի մի թղթեր զնելով վահանի առաջ՝ հեռանում է:  
Գլխաւոր դուռը մատնեցով բաղխում է մէկը: Վահանը ձայն է տալիս.  
«Մտէք»: Դրան մէջ երեւում է օր. Հռիփսիմէն՝ ուրախ ժպիտը երեսին:  
Վահանը զարմացած վեր է կենում տեղից:

Ժամանակը—գարուն, երեկոյ, պայծառ եղանակ:

Երկրորդ եւ երրորդ գործողութեան միջև անցել է մօտ մի տա-  
րի ժամանակ:

### ՏԵՍԻՒ 1.

#### ՎԱՀԱՆ, ՀՌԻՓՍԻՄԷ.

ՎԱՀ. Այս ո՛ւմ եմ տեսնում... Օրբորդ Հռիփսիմէն...

ՀՌ. Չէ՛ք սպասում:—Բարև ձեզ:

ՎԱՀ. Բարև, բարև:—Այս երբ: Վաղուց է եկել էք:

ՀՌ. Ո՛չ, այսօր երեկոյեան գնացքով: Կամեցայ ձերոնց  
մօտ գնալ, բայց սուներ չը դտայ. բնակարանը փոխել են: Ուս-  
տի և շտապիցի ձեզ մօտ, որ նրանց հասցէն վերցնեմ:

ՎԱՀ. Նրանց հասցէն: Իսկոյն, այս բոպէիս: Ը', ը', ինչ-պէս է... (Մտածում է):

ՀՈ. (Ծիծաղելով) Ձերոնց հասցէն չը գիտէք:—Այ գարմանայի բան:

ՎԱՀ. Ո՛չ, գիտեմ, բայց փողոցի անունը մոռացել եմ: Սպասեցէք, իսկոյն կը մտաբերեմ: (Աշխատում է յիշել) Ա՛, յիշեցի, յիշեցի: Իսկոյն թերթիկի վրայ կը գրեմ: (Գրում է) Ահա ձեզ մերոնց հասցէն:

ՀՈ. (Վերցնելով թերթիկը) Շնորհակալ եմ: (Կարդում է) Իսկ մօտ է այտեղից:

ՎԱՀ. Ո՛չ, շատ հեռու է: Սա քաղաքի կենտրոնն է, իսկ նըրանք կենում են համարեա քաղաքի ծայրումը: Մի ետ ընկած և խուլ փողոց է:

ՀՈ. Միթէ: Ուրեմն հիմա դժուար է գտնել:

ՎԱՀ. Ես խորհուրդ կը տամ զնալ վաղը, ցերեկով:

ՀՈ. Հա՛, ուրեմն աւելի լաւ է գնամ վաղը: Բայց այնպէս կարօտել եմ Ֆլորային, մանաւանդ Հրանտին... Ի՞նչ հիանալի երեխայ է:

ՎԱՀ. Այո՛, շատ լաւն է:

ՀՈ. Միքայէլը ինքն է, որ կայ: Հիմա ինչքան մեծացած կը լինի:—Մանկական պարտէզ յաճախում է:

ՎԱՀ. Կարծեմ, յաճախում է: Հ՞ը, թէ ո՛չ: Ուղիղն ասած, օրինորդ, ես հաստատ չը գիտեմ:

ՀՈ. Երեի, նրանց մօտ սակաւ էք լինում:

ՎԱՀ. Այո՛, շատ սակաւ: Ձրաղուած եմ:

ՀՈ. Լաւ եղբայրներ էք:

ՎԱՀ. Է՛հ, դուք ասացէք, դուք: Ի՞նչպէս էք, լաւ էք: Աւարտեցի՞ք արդեօք:

ՀՈ. Այո՛, վերջացրի:

ՎԱՀ. Ուրեմն հիմա կարգին բժիշկ էք:

ՀՈ. Ապագան ցոյց կը տայ:

ՎԱՀ. Յաջողութիւն եմ դանկանում:

ՀՈ. Շնորհակալ եմ:—Հա՛, որպէսզի չը մոռանամ... (Ձեռքի քսակից հանում է մի ծրար) Ինձ խնդրել են, որ այս նամակը ձեզ յանձնեմ: Ձեր նախկին collega-ներէրցն է: Ինչ-որ ստանալիք են պահանջում ձեզինից:

ՎԱՀ. Կարծեմ, ձեզ կարելի էր աղատել այդ նեղութիւնից և ուղղակի փոստով ուղարկել:

ՀՈ. Երկու անգամ դիմել են, բայց չէք պատասխանել:—Այժմ ես...

ՎԱՀ. Դուք կամենում էք զնալ:

ՀՌ. Այն, ժամանակ է:

ՎԱՀ. Ձեռն համարձակում ձեզ պահել:

ՀՌ. Յ'տեսութիւն (Գնում է):

ՎԱՀ. Յ'տեսութիւն, օրիորդ: (Վահանը բաց է անում ծրարը, կարդում. յետոյ բարկացած պատում է նամակը եւ ձգում զամբիւղի մէջ: Ձանձրացրին ինձ իրանց գիմումներով... Գրել էի, որ կ'ուղարկեմ, և—վերջ: (Վաւում է հեռախօսի զանգահարութիւնը: Օհաննէսը գալիս յայտնում է. «Ձեզ ինդրում են հեռախօսի մօտ»: Վահանը անցնում է գրասենեակը: Մտնում է բժիշկը:)

## ՏԵՍԻԼ 2.

ԲԺԻՇԿ, ՕՀԱՆՆԷՍ.

ԲԺ. Պարոն կառավարչին կարելի է տեսնել:

ՕՀ. Իսկոյն կը յայտնեմ (Գնում է):

ԲԺ. (Մենակ. նայում է սրտունիսից) Պայծառ լուսնեակ գիշեր... Ի՞նչ սիրուն է ծովի ծփանքը լուսնի շողերով... Ո՞ւր է Միքայէլը, որ այս բոլոր գեղեցկութիւնը պատրաստի վերցնէր և գնէր կառւի վրայ... (Մտնում է Վահանը):

## ՏԵՍԻԼ 3.

ՎԱՀԱՆ, ԲԺԻՇԿ.

ԲԺ. Ներեցէք, որ ես ձեզ խանգարեցի:

ՎԱՀ. Այդ ոչինչ:

ԲԺ. Կարող էք մի քանի բողբոջ նուիրել ինձ:

ՎԱՀ. Ուրախութեամբ: Նստեցէք, խնդրեմ (Նստում են):

ԲԺ. Պարոն Թաշճեան, ես եկել եմ ձեզ մօտ մի շատ կարևոր գործով:

ՎԱՀ. (Առաջարկում է սիգար) Խնդրեմ:

ԲԺ. Շնորհակալ ես ես չեմ ծխում:

ՎԱՀ. Հա՛, ինչո՞ւն է բանը:

ԲԺ. Մէջտեղ լուծելու մի դժուար խնդիր կայ, և ձեզնից շատ բան է կախուած: Խօսքը ձեր եղբոր, Միքայէլի մասին է: Դուք, երեի, հմայած կը լինիք, որ նա մի ամբողջ ամիս հիւանդ պառկած էր...

ՎԱՀ. Կարծեմ, նա հիմա վեր է կացել և գնում է ծառայութեան:

ԲԺ. Այն, գնում է, գնում է: Բայց նա աակաւին կազդու-

բուած չէ, դեռ ես ոտի վրայ հիւանդ է: Գնում է ծառայութեան ակամայ և ստիպուած:

ՎԱՀ. Ի գոհութեամբ սպասէր, մինչև որ առողջութիւնը տեղը կը գար:

ԲԺ. Թոյլ տուէր ինձ յայտնել, պարոն Թաշճեան, որ ներկայ պայմաններէ մէջ նա ոչ մի յոյս չէ կարող ունենալ, որ իր առողջութիւնը երբեք տեղը կը գայ:

ՎԱՀ. Ինչո՞ւ:

ԲԺ. Նա յոգնել է, պարոն Թաշճեան, և չափից դուրս յոգնել է: Մի ուրիշը նրա տեղ գուցէ և զիմանար: Բայց նրա կազմուածքը խիստ քնքոյշ է, համարեա կանացի: Ուժից վեր աշխատանքը, մանաւանդ որ դա նրա սրտովը չէ, խանդարել է նրա նեարդերը, քայքայել է:

ՎԱՀ. Կարճեմ, նրա պարագմունքը բաւական թիթի աշխատանք է:

ԲԺ. Սխալուում էք, համարձակութիւն ունիմ այդ հաստատ ասելու: Օրուայ մեծ մասը նա անց է կացնում գրասենակի մթնոլորտի մէջ, ուր նրա ականջի տակ շարունակ լսելի են համբիշներէ աղմուկը, դրիշներէ ձոձոոցը, հեռախօսի զանգահարութիւնը... Ահա մի այդպիսի մթնոլորտի մէջ—դրա վերան աւելացրէք և ծխախոտից գոյացած մշուշը—Միքայէլը ըստիպուած է ժամերով նստել գրասենակի առաջ և կռացած գրբել, պատուել, նորից գրել և այսպէս անվերջ, անվերջ... Բայց այդ դեռ բաւական չէ: Երբ գալիս է տուն, զգում է, որ ջարդուած է, ուղեղի մէջ թմրութիւն, մէջքը ցաւում է, ձեռքը յոգնած: Նրան հանգիստ է պէտք: Բայց նա հանգստանալ չէ կարող: Նրա սիրտը լցուած է սանդագործութեան կարօտով: Նա շտապում է իր պատկերակալի մօտ, վերցնում է ներկապընակը, վրձինը. կամենում է գոնէ մի վայրկեան մտնել ողորութեան, մտորումների աշխարհը... Բայց—թոյլ մատները չեն զօրում ամուր բռնել վրձինը, ձեռքը գողում է, վրձինն ընկնում է գետին, և այսպէս իր տենչանքը մնում է անկասար... Դուք կարող էք երեակայել, թէ դա ինչ սոսկալի դրութիւն է նրա համար:

ՎԱՀ. Այդ դէպքում աւելի լաւ է բոլորովին թողնել այդ տնային աշխատանքը:

ԲԺ. Բայց դա մի հասարակ տնային աշխատանք չէ, որ հեշտ կարելի էր թողնել: Հարցրէք ձեր եղբորից, և նա կ'ասէ, որ դա իր սէրն է, իր միսթարութիւնն, իր կեանքին պատակը:

ՎԱՀ. Շատ կարելի է:

ԲԺ. Այժմ ես ձեզ յայտնեմ, թէ ինչ դիտաւորութեամբ եմ ես եկել ձեզ մօտ:

ՎԱՀ. Այդ դժուար չէ գուշակել:—Ասացէք:

ԲԺ. Բոլոր խնդիրը նրա մէջ է, որ մենք Միքայէլին փրկենք: Նրան անհրաժեշտ է Ֆիզիկական և մտաւոր հանգստութիւն, այլապէս նա կ'ունենայ մի շատ տխուր վախճան:

ՎԱՀ. Դուք—Ինչ միջոց էք առաջարկում:

ԲԺ. Նախ և առաջ թողնել իր ներկայ պաշտօնը և առհասարակ ամեն մի աշխատանք. յետոյ ամառուայ այս քանի ամիսը, որ առաջներին է, փոխադրուել մի դիւղ սեղ, մի խաղաղ անկիւն, ուր օգը մարուր է, ջուրը առողջարար, չորս կողմ անդորրութիւն և յուզիչ ոչ մի բան, մի խօսքով, նրան ազատել բոլոր հոգսերից և շրջապատել կեանքի բոլոր յարմարութիւններով:

ՎԲՀ. Այդ լաւ կը լինի:

ԲԺ. Բայց այս բոլորն իրադործելու համար՝ անհրաժեշտ է ձեր եղբայրական առատաձեռն օգնութիւնը... Ներեցէք, ձեր գլուխը ցաւո՞ւմ է:

ՎԱՀ. Ո՛չ, ինչո՞ւ հարցրիք:

ԲԺ. Որովհետև դուք այնպէս պինդ սեղմեցիք ձեր ճակատը:

ՎԱՀ. Ես գլխացաւ չ'ունիմ:

ԲԺ. Ա՛, ուրեմն սխալուել եմ... Հնչ, ձեր անելիքը պարզ է: Ձեզ մնում է այսուհետև, իհարկէ, առժամանակ, մինչև որ Միքայէլը բոլորովին կը կազդուրուի, մեն-մենակ ձեր ուսերի վրայ կրել ընտանիքի պահպանութեան բոլոր ծանրութիւնը:

ՎԱՀ. (Հրդեհ, ծանր շնչառութիւն. գլուխը մտախոհ յետում է ձեռքի վրայ:)

ԲԺ. Ես գիտեմ, որ այս առաջարկութիւնը խիստ ծանր կը թւայ ձեզ... Բայց ի՛նչ արած, պարոն Թաշճեան, աշխարհն այնպէս է: Մարդիկ իրենց շահերով և պարտականութիւններով կապուած են իրար հետ. ազատուել միջավայրից—հնար չը կայ:

ՎԱՀ. Ասացէք, խնդրեմ, դուք եկել էք ինձ մօտ իմ կըրօր կողմից, թէ...

ԲԺ. Քնա լիցի: Ես եկել եմ ձեզ մօտ ոչ թէ իբրև ուղարկուած միջնորդ, ոչ, այլ բոլորովին յօժարակամ, ինքնաբերաբար, առանց գրգման որևէ մէկի կողմից, ղեկավարուելով միայն խըղճիս թելադրութեամբ, որ ինձ ստիպում է ամեն միջոց գործ դնել՝ փրկելու Միքայէլ Թաշճեանին, մի անձի, որը ոչ միայն իմ բարեկամն է, այլ և ամենքից ճանաչուած մի տաղանդ, որի կորուստը անչափ զգալի պիտի լինէր մեր նորատի գեղա-

բուևատի համար: Այն ընտիր դէմբերից մէկն է նա, որոնք իրանց փառքով աւելցայնում են նաև իրենց միջավայրի փառքը և պարծանքը:

ՎԱՀ. Բայց ես զարմանում եմ: Եթէ, իրաւ, նա կարօտ է իմ շուտափոյթ օգնութեան, ինչո՞ւ անձամբ ինքը չէ գիմում ինձ և...

ԲԺ. Ներկեցէք, որ ես ձեզ ընդհատում եմ: Առացէք, խընդրեմ, երբ մենք տեսնում ենք, որ մէկը մեր աչքի առաջ խեղդըւում է, մանաւանդ եթէ դա մեր մի հարազատն է, մի՞թէ մենք սպասում ենք, որ նա օգնութիւն հայցէ, և ապա միայն վազենք փրկելու...

ՎԱՀ. Ինչ վերաբերում է իմ օգնութեան, ևս, իհարկէ, կ'օգնեմ... դա իմ պարտականութիւնն է... Ես այդ չեմ ուրանում, բայց... բայց...

ԲԺ. Բայց ինչ:

ՎԱՀ. Ես չը գիտեմ, թէ ոյժս կը պատի արդեօք մի այնպիսի ծանրութիւն վերցնել...

ԲԺ. Յոյս ունիմ, որ ձեր ոյժը կը պատի:

ՎԱՀ. Ես կը մտածեմ, բժիշկ:

ԲՄ. Մտածեցէք, մտածեցէք, պարոն Թաշճեան: Խնդիրը այնքան ծանրակշիռ է, որ արժէ նրա վրայ նոյն իսկ զուխ կուտըրել: Մէջ տեղ կեանքի և մահուան հարց կայ:

ՎԱՀ. Բժիշկ, մի՞թէ, իրաւ, այդ աստիճան վտանգաւոր է Միքայէլի հիւանդութիւնը:

ԲԺ. Սրտի արատ է: Մահը քայլառքայլ հեռուում է նրան, որպէս իր անբաժան ստուերը: Բաւական է մի յարմարաոխիթ— և ամեն ինչ վերջացնու:

ՎԱՀ. Այո՞:

ԲԺ. Այո, այո, անտարակոյտ: Աշխատենք փրկել նրան, քանի դեռ ուշ չէ: Հաւատացէք ինձ, ոչ միայն բարոյական պարտականութիւնը, այլ նոյն իսկ (խորհրդաւոր կերպով) ձեր անձնական շահը պահանջում է, որ շուտով նրան ձեռք մեկնէք և ոտի կանգնեցնէք:

ՎԱՀ. Ես այդ հասկանում եմ:

ԲԺ. Շատ ուրախ եմ (վեր է կենում) Այժմ թոյլ առէք ինձ հրաժեշտ տալ ձեզ:

ՎԱՀ. Յ'աւատութիւն: (Բժիշկը գնում է: Վահանը տիւր է և մտազբաղ: Կրկին նստելով սեղանի մօտ՝ գրիչն առնում է ձեռք, բայց ոչինչ չէ գրում. աչքերը կոնգնամ են մի կէտի վրայ. նա մտամոլոր է եւ չը գիտէ, թէ ինչի համար է վերցրել գրիչը: Քիչ յետոյ նա զայրոյթով գրիչը նետում է մի կողմ, հոգւոյ է անում և տնկորտ քայլերով սկսում

է անցուղարձ անի: Գուոր բացուում է, եւ տնրանրալով ներս է մտնում նրա մայրը՝ Եղիսաբէթը՝ մէջքը մի փոքր կուացած, կռնած իր գաւազանին: Նրան տեսնելուն պէս՝ Վահանը բացազանչում է. «Վա՛հ, մայրի՛կ»... շտապում է ընդ առաջ՝ եւ ձեռքիցը բռնելով՝ բերում նստեցնում է դիւանի վրայ:)

## ՏԵՍԻԼ 4.

## ՎԱՀԱՆ, ԵՂԻՍԱԲԷԹ.

ՎԱՀ. Հը՛, յոգնեցի ես, մայրիկ:

ԵՂԻՍ. Ծնկներս կոտրւում են: (հտնելիս) Վա՛յ, վա՛յ նանի...:

ՎԱՀ. Տեղս շատ բնորձր է, հա՛, մայրիկ:

ԵՂԻՍ. Բարձր ես ասում ու թողնում... Ինչ մենք որ...

(Թեթեւ հագ:)

ՎԱՀ. Հը՛, բնչպէս ես, մայրիկ: Հօ էլ չեմ հիւանդացել:

ԵՂԻՍ. Է՛հ, իմ բանը եօյա կ'երթայ, էսօր կամ, վաղը չը կամ: Դո՛ւ ոնց ես, դու...

ՎԱՀ. Մենք էլ ապրում ենք էլի, մայրիկ. քաջ ենք գալիս:

ԵՂԻՍ. Է՛ր-վախ...:

ՎԱՀ. Մի զոչազ կնց է, մայրիկ: Ի՞նչ ես ակուզախոզ գցել: Կարծես հարիւր տարեկան պառաւ լինիս:

ԵՂԻՍ. Է՛հ, որդիս... Հարիւր տարեկանն էլ ինձնից ջահիլ է: Ես էսպէս շուտ ձերացողը չէի, դուք ինձ պառաւայրիք:

ՎԱՀ. Ո՞վ, մենք:

ԵՂԻՍ. Հա՛, որդի ջան, դուք, գն՛ք, իմ որդիքս:

ՎԱՀ. Ա՛խ, մայրիկ, դու միշտ, միշտ գանդատաւոր ես մեզնից:

ԵՂԻՍ. Ձեր դարգիցը, ձեր անսէրութիւնիցը ես էսպէս կուչ եկայ, գունդուկծիկ գառայ: Դուք որ սէրով եղբայրներ լինէինք, իմ կեանքի վրայ նոր կեանք կ'աւելանար, բայց, (չողոց) ախ...:

ՎԱՀ. Մայրիկ, ի սէր Աստուծոյ, թող այդ ախ քաշկղ-մարդու սիրա է մաշում, հաւատան ինձ:

ԵՂԻՍ. (Կարճատեւ լուծիւնից յետոյ) Ա՛յ Վահան, այ որդի ջան, ախր ասան տեսնեմ, խի՛ մեզ մօտ չեմ գալիս, հը՛: Ձեռ ասում, էնտեղ մայր ունիմ, քոյրեր ունիմ, եղբայր ունիմ, մի գնամ տեսնեմ, կենդանի են թէ մեռած են: Մեր տունը հարամի՛ տուն է, որ չեմ ուզում ոս գնես:

ՎԱՀ. Մայրիկ, Աստուած վկայ, ժամանակ չի լինում: Հա՛-զարումի գործեր կան... Ա՛յ, նայիր:

ԵՂԻՍ. Է՛հ, որդիս... Ասան, սիրտդ է սառել մեղանից:

ՎԱՀ. Ի՞նչպէս թէ սառել:

ԵՂԻՍ. Մի մարդու սիրտ որ եր օջաղի վրայ տաք լինի, նա ժամանակ միշտ կը գտնի: Բայց չէ, դու ուրիշ բանի վրայ ես տաքացել:

ՎԱՀ. Ի՞նչի վրայ, մայրիկ:

ԵՂԻՍ. Ուշուժիտքդ տուել ես փողին ու մեզ մոռացել ես, որդիս: Մի անգամից ես ուզում միլլիոնի տէր դառնաս:

ՎԱՀ. Ի՞նչ ասեմ, մայրիկ: Շատ ուղիղ է քո ասածը: Կեցցես: Դու ինձ հասկացել ես: Այո, ես վճռել եմ հարստանալ, միլլիոնի տէր դառնալ: Եւ ի՞նչ... Դու այդ մեղք ես համարում: Նայիր չորս կողմդ, վերցրու, ուժ կ'ուզես, քանի անուն ես ուզում, տամ: Բոլորը, բոլորը իրանց ուշուժիտքը տուել են հարստանալուն, և շատերին յաջողում է: Յիմարը մեծակ ես եմ, ի՞նչ է:

ԵՂԻՍ. Ես էդ չեմ ասում, որդիս: Իհարկէ, խելօքը նա է, ով կարողանում է փող դատել, ով իր ապագայի վրայ մտածում է: Աշխարհ է. հեռու քեզանից, հեռու մեղանից, սև օրեր են պատահում, մարդ նեղութիւնների մէջ է ընկնում... Բայց իմ ասածը ուրիշ բան է:

ՎԱՀ. Բո՛ւ ասելն այն է, թէ ինչո՞ւ ձեզ մօտ չեմ գալիս, հա՛:

ԵՂԻՍ. Մենակ չը դալդ է: Մեզ թշնամու պէս աչքիցդ գցել ես, որդիս, օտար մարդիկ (լալազին) քեզանից աւելի են սրտացալութիւն անում մեզ համար:

ՎԱՀ. Դու էլ շատ լաւ գիտես, մայրիկ, թէ ինչո՞ւ էլ չեմ ուզում գալ ձեզ մօտ, և թէ ինչո՞ւ սիրտս կարուկեց ձեր տնից... Ես մոռացել էի. ինչո՞ւ կրկին միտս գցեցիր այն սեսաբանը, որ իմ ներսս տակնուվրայ արաւ ու սիրտս լցրեց մաղձով, դառնութեամբ... Երբ ես վերջին անգամ եկայ ձեզ մօտ այցելութեան, դու չը սեսար, բայց քոյրերս վկայ են, թէ ինչպէս ինձ ընդունեց Միքայէլը... Նա չ'ուզեց մինչև անգամ իմ բարեին պատասխանել, արհամարանքով կրեսը դարձրեց ինձնից, անցաւ իր սենեակը և դուռն ամուր դարկեց ետևիցը!... Վիրաւորանքը սոսկալի էր, արիւնը զլխիս տուեց, ես ինձ հազիւ զըսպեցի... Եղբայրս չը լինէր նա, բանը վերջացած էր: Ես նրան... և ու նրան... իսկոյն եկեթ... Է՛հ, լաւ է թողնենք այս... Ամեն անգամ, երբ յիշում եմ, կատաղութիւնս գալիս է, և... և... չը գիտեմ, թէ ինչ անեմ, որ սիրտս հովանայ...

ԵՂԻՍ. Վայ ինձ, վայ ինձ... Մի մայր երկու որդի ունենայ, երկուսն էլ ուսումով, պատուով, ու մօր աչքերի արտա-

սուքը չը ցամաքի, մի ուրախ օր չը տեսնի խեղճը, նստի ու սև բուռի նման վայ տայ իր գլխին...

ՎԱՀ. Է՛հ, լաւ, բաւական է: Հիմա ասելը ինչ է, ասան, տեսնեմ:

ԵՂԻՍ. Ասելս էն է, ինչ որ ասում եմ:

ՎԱՀ. Տանը ինչպէս էք կառավարում:

ԵՂԻՍ. Է՛հ, վայ մեր կառավարուելուն:

ՎԱՀ. Հօ փողի նեղութիւն չէք քաշում:

ԵՂԻՍ. Բաս ինչ, առանց գրան: Մի տանաէք էլ ունինք, Աստու պատիժ է դառել մեր գլխին:

ՎԱՀ. Ինչո՞ւ: Քրեհի համար, իրեի, նեղացնում է:

ԵՂԻՍ. Նեղացնում է նեղացնելուն պէս: Մի երկու ամսուայ քրեհը մնում էր. էլ հանգստութիւն չ'ունինք նրա ձեռիցը: Գնալ-գալով հողիներս հանեց: Ո՛չ առաւօտ է հարցնում, ո՛չ իրիկուն: Ժամանակ-ամժամանակ տուն է մտնում, հացի վերիցը վեր կայնում, քնատեղից դարթեցնում է... «Փողս սուէք, որ, փողս սուէք», ասում է, «թէ չէ դանդաղ կ'անեմ»: Ու վերջունն էլ իր ասածն արաւ անիծուածը:

ՎԱՀ. Գանգամտ է տուել:

ԵՂԻՍ. Վաղը չէ, միւս օրը Միքայէլը գատարան է կանչուած: Խեղճի ձեռին էլ փող չը կայ, որ բերանը ձեռի, ու մընայել է ձեռքը ծոցումը...

ՎԱՀ. Ինչո՞ւ ինձ չէիք դիմում: Ես կը տայի, ինչքան հարկաւոր է:

ԵՂԻՍ. (Խոր հողոց) Է՛հ, որդի ջան... Սիրտս լցուած է, լուրուս կարծ... (Վեր է կենում):

ՎԱՀ, Ինչո՞ւ վեր կացար, մայրիկ:

ԵՂԻՍ. Գնամ կամաց-կամաց:

ՎԱՀ. Մի քիչ սպասիր: (Գնում է սեղանի արկղը քաց անում եւ փող վերցնելով՝ բերում առաջարկում է մօրը): Ա՛ռ, մայրիկ, մի քիչ փող տամ քեզ:

ԵՂԻՍ. (Ձեռքի մերժողական շարժումով) Չէ, չէ, չէ... Ես դրա համար չեմ եկել քեզ մօտ... Ինձ միայն ձեր սէրը, ձեր համաձայնութիւնն է պէտք...

ՎԱՀ. Ա՛յ ձեզ անտեղի հպարտութիւն: Իսկ տան քրեհը, իսկ տանափրօջ գանդատը: Ուրախ կը լինիք, եթէ նա վեր գըրել տայ ձեր կայքը, ձեզ անանկ յայտարարի: Ամօթ չէ մեզ համար: Մի ժամանակ Թաշձեանների անունը պատուաւոր քաղաքացիների շարքումն էր յիշուում, հիմա մենք ինչպէս թող տանք, որ մեր անունը աշխարհի առաջ անարդուի... Վերցրո՛ւ, մայրիկ:

դու այս փողը կը տաս Միքայելին, նա էլ տանտիրոջ կը յանձնի:

ԵՂԻՍ. Անհոգ կայր նա շատ անգամ է փորձանքի մէջ ընկել ու, փառք Աստուծոն, միշտ էր անվնաս աղատուել է: Մի բան կ'անի: Պատկերն էր ուղում ուղարկել մէկին...

ՎԱՀ. Ախր ինչո՞ւ չես ուղում վերջնել, մի ասան, տեսնեմ:

ԵՂԻՍ. Եղբայրդ չի ընդունի... Դու նրան չես ճանաչում, Վահան, չես ճանաչում... Եթէ դու մեր բարին ես ցանկանում, եթէ դուք քեզ մերն ես համարում, դու էս տեսակ ողորմութիւնը կը թողնես ու ինքդ քո ոտովդ կը դաս մեզ մօտ, կը հաշտուես եղբորդ հետ. դու նրանից ներողութիւն կը խնդրես, նա քեզանից... Էն ժամանակ միայն կ'ասես, որ որդիս կորած էր և գտայ: Ու էն ժամանակ եղբայրդ էլ ոտի կը 'գանգնի, խեղճ եթիմներէս բախտն էլ կը բացուի, ես էլ վերջապէս մի օր կը տեսնեմ: (Կամայ-կամայ զնում է:)

ՎԱՀ. Սպասիր, մայրիկ. թող կառք բերել տամ: (Սեղանի դանդը տալիս է. զալիս է Օհաննէսը) Մօրս ճանապարհ գիր մինչև փողոց: Մի լաւ կառք կը վարձես, փողը կը տաս կառապանին, մայրիկիս կը նստեցնես և կ'ասես, ուր տանի:—Մայրիկ, ես վաղը ձեզ մօտ եմ:

ԵՂԻՍ. (Ուրախ) Ի՞նչ ասացիր, որդիս. կրկնիր մէկ էլ:

ՎԱՀ. Մայրիկ, վաղը—ես ձեզ մօտ եմ:

ԵՂԻՍ. Վահան, եթէ չ'եկար, դու էլ իմ սրդին չես!

(Եղիաբէթը զնում է: Վահանը՝ դրան մօտ կանգնած՝ նայում է մօր ետեւից, մինչև նրա իջնելը. նրա դէմքը խիստ մտախոճ արտայայտութիւն է ստացել:)

## ՏԵՍԻԼ 5.

### ՎԱՀԱՆ. (Մենակ)

Եղբօրս հետ հաշտուելը դարձել է անհրաժեշտութիւն: Ուղիղ է, նախնի վիրաւորեց և սաստիկ վիրաւորեց իր սպանիչ արհամարհանքով, բայց իսկապէս չէ՞ որ ես էի նրան տեղիք տուել... Արագ հարստանալու անիծեալ կիրքը, որ ընդհանուր է այժմ, վարակեց և՛ ինձ, և ես իմ անտարբերութիւնը դէպ իմ թշուառ գերդաստանը հասցրի ծայրայեղ անգթութեան... Շատ ճշմարիտ են բժշկի խօսքերը. «Անջատուել միջավայրից—հնար չը կայ!» Որքան կ'ուզես, ծրագիրներ կազմիր, օգային ամբողջներ կառուցիր—իզո՞ւր է բոլորը. կեանքը հողմահալած ուրուականի պէս

հասնում է կանխիկ, ցրիւ է տալիս զեղեցիկ ծրագիրներդ, կոր-  
ծանում է օգային հոյակապ ապարանքդ, ե—վերջ անուրջնե-  
րիդ!.. Ո՛չ, կատարեալ անկման չը պէտք է հասնել: Սթափուեմ,  
քանի զեռ ուչ չէ:—Մաքուր խիղճը և բարի անունը—ամենից  
առաջ!

ՎԱՐԱԳՈՅՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐԲՈՐԳ

Նկարիչ Թաշճեանի բնակարանը (ոչ նախկինը): Գլխաւոր մուտքը ճակատից: Սենեակի պատուհանները փոքր են, զգացում է մաքուր օդի եւ լոյսի պակասութիւն, որովհետեւ պատուհանների առաջ հազիւ երկու արշին հեռաւորութեան վրայ բարձրանում է հորեւան տան պարիսպը, ծածկելով արեւ եւ հորիզոն: Սարք ու կարգը միեւնոյնն է, բայց աւելի հնացած: Ֆլորան կարգի է բերում գրասեղանի իրերը եւ մաքրում փոշին, իսկ Սաթենիկը ջրում է ծաղիկները: Ժամանակը—հետեւեալ օրը, զեղեցիկ առաւօտ:

### ՏԵՍԻՒ 1.

ՖԼՈՐԱ, ՍԱԹԵՆԻԿ, յետոյ Ն.-ի ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

ՍԱԹ. Դուրսը հրաշալի գարուն է, արևը պայծառ, օրը սքանչելի: Հիմա ամեն տեղ ծառ ու ծաղկունք՝ նոր կեանք առած՝ արագ աճում, ծաղկում, փարթամանում են... Միայն իմ ծաղիկներս են, որ թմրած մնացել են և չեն կենդանանում...

ՖԼ. Լոյսի պակասութիւնիցն է, ես կարծում եմ: Մի ծաղիկ, որ արևի ևրես չը սեանի, իհարկէ, գրանց օրը կ'ընկնի:  
ՍԱԹ. Արդէն եապոնական վարդս տերեւները թափել է, մնացել է ցողունը, սեհանն էլ կամաց-կամաց թառամում է... Ափսոս իմ ծաղիկներ... (Ջրում է:)

ՖԼ. (կարծատեւ լուծիւնից յետոյ) Սնթօ, ուղիւղ ես ասում, որ այսօր Վահանը պիտի գայ մեզ մօտ:

ՍԱԹ. Քան, իհարկէ, մայրիկից հարցրու:

ՖԼ. Ի՞նչ հրաշալի բան—գայ, Միքայէլի հետ հաչտուեն...

ՍԱԹ. Ի՞նչպէս անհամբեր սպասում եմ նրա գալուն, եթէ իմանաս...

ՖԼ. Երևակայիր,—մի ամբողջ տարի է, որ Վահանը մեզ մօտ չի եկել:

ՍԱԹ. Մի տարուց էլ աւելի:

ՖԼ. Ա՛խ, զրանց անսէրութիւնը մեզ բոլորիս մաշեց: Մեր տան վրայ, կարծես, աշնան մառախուղ է նստած, ճնշում, ճընշում է: Տեսնես, էլ կը բացուի մեր օրը թէ ոչ:

ՍԱԹ. Այս օրուանից Աստծով կը բացուի... Բայց գիտես ինչ, Ֆլորա: Ես մի բանից եմ վախենում. վնայ թէ յանկարծ Միքայէլը վատ տրամադրութեան մէջ լինի և այն անզամուայ պէս...

ՖԼ. Ես նրան կը զգուշացնեմ:

ՍԱԹ. Անպատճառ, Ֆլորա: Չը մոռանանս, հնա:

(Մտնում է պարոն Ն-ի գործակատարը:)

ԳՈՐԾ. Կարելի է տեսնել պարոն Թաշճեանին:

ՖԼ. Իսկոյն: (Ֆլորան եւ Սաթենիկը գնում են: Քիչ յետոյ երեւում է Միքայէլը՝ լրագիրը ձեռին: Այցելուին տեսնելուն պէս ընդհատում է լրագրի ընթերցումը: Այժմ նրա դէմքը աւելի նիհար է եւ զոնստ. աչքերի մէջ յոգնութիւն եւ թախիծ:)

## ՏԵՍԻԼ 2.

### ՄԻՔԱՅԷԼ, ԳՈՐԾԱԿԱՏԱՐ.

ՄԻՔ. Ա՛, զո՛ւք էք:

ԳՈՐԾ. Բարև ձեզ, պարոն Թաշճեան:

ՄԻՔ. Բարև, բարև: Ստացա՞ք իմ ուղարկած պատկերը:

ԳՈՐԾ. Այո, զուք բարեհաճել էք ուղարկել իմ պարոնին ձեր մի պատկերը...

ՄԻՔ. Այն, որ ձեր պարոնը, կամ աւելի ճիշտ, նրա կիներ, խիստ հաւանել էին:

ԳՈՐԾ. Իսկապէս հիանալի պատկեր է: Բայց կը ներէք, խնդրեմ, ինձ պատուիրեցին վերագարձնել ձեզ...

ՄԻՔ. Վերագարձնել...

ԳՈՐԾ. Այո, հետս բերել եմ: Նախասնեակում յանձնեցի օրիորդին:

ՄԻՔ. Բայց ինչո՞ւ, ստացէք, խնդրեմ: Հիմա էլ զո՛ւր չէ չէ գալիս...

ԳՈՐԾ. Ո՛չ, ինչպէս կարելի է չը հաւանել մի այնպիսի սքանչելի գործ...

ՄԻՔ. Ուրեմն...

ԳՈՐԾ. Թէև, իմ կարծիքով, պատկերը ոչ թէ 300, այլ

հազար բուրբի էլ արժէ, բայց ի՞նչ արած, նրանց հասկացողութեամբ, գինը չստ թանկ է:

ՄԻՔ. Թանկ: (Գտոր ծիծաղ) Իրաւունք ունին, իրաւունք ունին...

ԳՈՐԾ. Բայց իմ պարտնը ուրիշ բան է խնդրում ձեզանից...

ՄԻՔ. Ասացէք, ասացէք, ես լսում եմ:

ԳՈՐԾ. Նա խնդրում է, որ իր այս լուսանկարը բնական մեծութեամբ նկարէք:

ՄԻՔ. Ահ՛ն, ուրեմն նրան հարկաւոր է գնալ գերձակի մօտ և իր չափը վերցնել:

ԳՈՐԾ. Եւ խնդրում էր նկարել ո՛չ թէ սե, այլ իւզաներկ գտնազան գոյներով:

ՄԻՔ. Յետոյ:

ԳՈՐԾ. Յետոյ իմ պարտնը ցանկանում է իմանալ, թէ արդեօք ի՞նչքան կը վերցնէք այս պատկերի համար:

ՄԻՔ. (Գտոր ծիծաղ. գլուխը թափահարում է) Եթէ ծայրայեղ կարիքը չը ստիպէր, լսո՛ւմ էք, ի՞նչ եմ ասում, ծայրայեղ կարիքը եթէ չը ստիպէր, հաւատացէ՛ք իմ ազնիւ խօսքին. ես ոչ մի կերպ չէի ստորացնի ինձ մինչ այն աստիճան, որ ինքս իմ ձեռքով վերցնէի իմ լաւագոյն գործերից մէկը և ուղարկէի ձեր պարտնին, խնդրելով իսկական գնից չորս անգամ պակաս!... Դրանից աւելի ստորացնել իր վրձինը, ես կարծում եմ, թոյլ չէր տայ և ոչ մի նկարիչ...

ԳՈՐԾ. Այն, իհարկէ... Իսկ այս լուսանկարը...

ՄԻՔ. Իսկ այդ լուսանկարին զալով, խնդրում եմ յայտնէք ձեր պարտնին, որ ես այդ պատէրը չեմ ընդունում: Իսկ եթէ նա այդքան սիրահարուել է իր դէմքի վրայ, նա ունի տանը տրիւփօններ,—ահագին հայելիներ, որոնց մէջ ամեն բոպէ, երբ ինքն իրան կարօտում է, կարող է տեսնել իր կերպարանքը բնական մեծութեամբ և ամենաճշգրիտ նմանութեամբ:

ԳՈՐԾ. Ես խորհուրդ կը տայի վերցնել, լաւ վարձատրութիւն կը ստանաք:

ՄԻՔ. Շնորհակալ եմ ձեր խորհրդի համար:

ԳՈՐԾ. Ուրեմն—չէք կամենում ընդունել:

ՄԻՔ. (Խիստ) Ո՛չ: (Սկսում է կարգալ քաղիրը):

ԳՈՐԾ. Ներողութիւն: (Գնում է):

ՄԻՔ. Երթ՛ւք բարև: (Մտնում է Ֆլորան):

## ՏԵՍԻԼ 3.

## ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ.

ՄԻՔ. Ես քեզ չէի ասում, Ֆլորա, որ դրանց առաջ չ'ար-  
ժէ մարդարիտ ձգել, որովհետև կոխ կը աան կ'անցնեն, իսկ  
դու՝ «Ո՛չ, ուղարկիր, ուղարկիր»... Ահա և ուղարկեցի:

ՖԼ. Պատկերը վերադարձել են— շատ հարկաւոր է:

ՄԻՔ. Բայց չէ որ դա մեր վերջին յոյսն էր:

ՖԼ. Ամենինն ո՛չ: Տեսնում ես: (Յոյց է տալիս ականջի օղերը)  
Սրանք դեռ կան... Իսկ եթէ կ'ուզես ուղիղն իմանալ, քո վեր-  
ջին յոյսը— քո կղբայրն է:

ՄԻՔ. Ես քեզ չեմ հասկանում: Ի՞նչ ևս ուզում ասել:

ՖԼ. (Ուրախ) Ես ուզում եմ ասել, որ Վահանը այսօր մեզ  
մօտ է:

ՄԻՔ. Վահանը, մեզ մօտ: Դա անկարելի բան է:

ՖԼ. Հաստատ խօսք:

ՄԻՔ. Ո՞վ ասաց:

ՖԼ. Մայրիկը: Երեկ նրա մօտ է եղել, և նա ասել է, որ  
վաղը, այսինքն այսօր պիտի գայ մեզ մօտ և քեզ հետ հաշտուի:

ՄԻՔ. Զարմանալի հողեփոխութիւն: Չէի սպասում նը-  
րանից:

ՖԼ. Բայց նա անսպասուած պիտի գայ:

ՄԻՔ. Շատ ուրախ եմ, թնղ գայ: Դա պատիւ է բերում  
նրա մեծահոգութեանը:

ՖԼ. Միայն խնդրում եմ, Միքայէլ, ասես, մի՞ գուցէ դար-  
ձեալ այն անգամուայ պէս, բարեկեց փոխարէն, երեսդ գարձը-  
նես նրանից և քաշուես սենեակդ: Նա գալիս է քեզ հաշտու-  
թեան ձեռք մեկնելու, չը նայած այն ծանր վիրաւորանքին, որ  
դու նրան հասցրել ես: Այդ հաշտութիւնից է կախուած մեր ըն-  
տանիքի երջանկութիւնը... Միքայէլ, չը վնի թէ դու փակես  
դուռը մեր բախտաւորութեան առաջ...

ՄԻՔ. Դու կարծում ես, ինձ համար շատ դուրեկան է  
մեր, երկու հարազատ կղբայրներիս, խոտովութիւնը և թշնա-  
մանքը:

ՖԼ. Ուրեմն դու նրան սիրով կ'ընդունես, չէ, Միքայէլ:

ՄԻՔ. (Կարծես, հին վերքը նորոգուեց. կամաց-կամաց յուզուելով)  
Բայց ինչ անեմ: Միթէ ևս մեղաւոր եմ, որ մեր յարաբերու-  
թիւններն այսքան փչացան:

ՅՆ, է՛հ, լաւ, անցածն անցել է: Չ՛արժէ հին դարմանը  
քամուն տալ...

ՄԻՔ. Նա մեզ հետ խիստ տմարդի կերպով վարուեց...

ՅՆ, Վնաս չ՛ունի, դու մեծ եղբայրն ես, ներողամիտ ե-  
ղբր: Նա ջանիլ էր, նա անփորձ էր...

ՄԻՔ. (Յուզուած) Մտածիր, թէ նա ինչ կարող էր անել մեզ  
համար—և չ՛արաւ: Ես մի հատիկ եղ էի՝ լծած մի ծանր սայլի:  
Հողիս դուրս էր գալիս, աչքերս արիւն էր կոխում, տնքալով և  
հեալով էի փոխում իւրաքանչիւր քայլս,—նա, հարազատ եղ-  
բայրս, տեսաւ—և չը թեթևացրեց իմ լուծը: (Համարեա լալազին)  
Մեր խեղճ ընտանիքը հեծում էր ևտին չքաւորութեան մէջ,—  
միակերպ, անզոյն, տխուր կեանք, ո՛չ մի մխիթարութիւն, մեր-  
կուժիւն և սով,—նա այս բոլորը տեսնում էր, և այնուամենայ-  
նիւ ո՛չ մի սրտացաւութիւն, համակրութեան և ո՛չ մի ցոյց!..  
Վշտառողջ և թոյլ՝ ևս հանգչում էի մարող ճրագի պէս, և նա  
անուշաղբութեան մատնեց ինձ... կարիքը, զրկանքները մեզ բո-  
լորիս յուսահատութեան հասցրին,—երբէք նա մօտ չ՛եկաւ, նա  
մատ մատի չը խփեց... Նա իր սպանիչ անտարբերութեամբ  
նայում էր, թէ ինչպէս կամաց-կամաց, կեանքի հոգսերի տակ,  
խեղդում, խրանում էր իմ մէջ հողուս լաւագոյն մասը՝ իմ  
ստեղծագործական աւիւնը, երկնային կայծը... Ի՛նչ ծրագրիւնք,  
ի՛նչ փայլուն յոյսեր մի քանի տարի առաջ—և ի՛նչ սոսկայի հի-  
ասթափութիւն՝ այժմ!

ՅՆ, Բայց այնուամենայնիւ, ևս կրկնում եմ, դու նրան  
պիտի ներես, պիտի ներես եղբօրդ բոլոր սխալները: Նա ինքն  
էլ, եթէ կ՛ուզես, մեղաւոր չէր այնքան, ինչպէս դու կարծում  
ես: Նա տեսնում էր, որ ընկեր-բարեկամ, ծանօթ-անծանօթ,  
մեծ ու փոքր, մի խօսքով, բոլորը մի տեսակ տենդային թափով,  
խենթերի նման գլխապատառ վազում են հարստութեան ետե-  
ւից... Հոսանքը զօրեղ էր, յափշտակեց և նրան, ու նա գնաց  
հոսանքի հետ... Բայց ահա նա զգում է, կամենում է փարա-  
տել իր հին մեղքերը—և գալիս է քեզ մօտ հաշտութեան ձեռք  
մեկնելու համար: Մի՛թէ կրկին երես կը դարձնես նրանից, մի-  
թէ կրկին ևս կը մղես այն ձեռքը, որը պարզում է քեզանից  
ներում խնդրելու: (Վերջին խօսքերի վրայ դուրը բացում է, եւ երե-  
ւում է նկարիչ Մանասեանը՝ ուրախ, առողջ, ծիծաղկոտ դէմքով, ցիլինդրը  
ձեռին: Նրան տեսնելուն պէս՝ Միքայէլը շտապում է ընդառաջ, Մա-  
նասեանը եւս արագ գալիս է նրան հանդիպելու: Սիրալիր եւ կարօտափն  
ողջագուրանք:)

## ՏԵՍԻԼ 4.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, ՄԱՆԱՍԵՍՆ.

ՄԱՆ. Իմ թանկագին ուսուցչին յարգանքս: (Տիկնոջ էլ բարե-  
ւելուց յետոյ՝ դիմում է Միքայէլին:) Ի՞նչ նիհարել էք:

ՄԻՔ. Բարե, սիրելիս: Ի՞նչպէս էք:

ՄԱՆ. Ինչպէս անսնում էք—ուրախ և առողջ:

ՄԻՔ. Թոյլ տուէք շնորհաւորել ձեզ ձեր առաջին պատ-  
կերահանդիսի յաջողութեան համար:

ՖԼ. Շնորհաւորում եմ և ես:

ՄԱՆ. Շնորհակալութիւնս:

ՄԻՔ. Քիչ առաջ ես դրա զնահատութիւնն էի կարդում  
լրացրի մէջ: Ի՞նչ գովեստներ, ի՞նչ սքանչացում... Կարդում եմ  
և, ճշմարիտ, հաւատալս չէ գալիս: Ի՞նչպէս, մտածում էի ինքս  
ինձ, սա այն Մանասեանը չէ, որ ինձ մօտ նկարչութեան զա-  
սեր էք վերցնում, որին սովորցնում էի յոյս և ստուերի ու հե-  
տապատկերի կանոնները... Չէ անյակ ընդամենը մի տասը տա-  
րի— և որքան մեծ յառաջադիմութիւն, ի՞նչպիսի հսկայական  
թռիչք...

ՄԱՆ. Գիտէք, պարոն Միքայէլ, իմ քննադատը, կարծեմ,  
մի քիչ հրապուրուել է և ասել աւելի, քան հարկաւոր էր. այն-  
պիսի բաներ է չոսյլել, որոնց արժանացնում են միայն երեւելի  
վարպետներին:

ՄԻՔ. Այդ խօսքերը պատիւ են բերում ձեր համեստու-  
թեանը: Եթէ իմանաք, ես այժմ ինչպէս եմ հետաքրքրուած  
ձեզանով, ինչպէս կ'ուզէի անսնել ձեր վրձինի արտադրութիւն-  
ները:

ՄԱՆ. Ինձ էլ սաստիկ հետաքրքրում է ձեր կարծիքը,  
իբրև մի հմուտ գեղարուեստագէտի կարծիք:

ՖԼ. Դուք այստեղ չը պիտի բանաք ձեր ցուցահանդէսը:

ՄԱՆ. Ինչպէս չէ, տիկին: Վաղն և եթ: Ես եկել եմ այս  
քաղաքը յատկապէս այդ նպատակով:

ՄԻՔ. Ուրախալի է այդ լսել:

ՄԱՆ. Սենեակը արդէն վարձուած է:

ՄԻՔ. Հիանալի:

ՄԱՆ. Ահաւասիկ ես բերել եմ ձեզ համար պատուաւոր  
տոմսակներ: (Յանձնում է տոմսակները):

ՄԻՔ. Շնորհակալ եմ: Կը դանք իհարէ:

ՄԱՆ. Նոյնպէս և ձեզ, տիկին, կը խնդրէի շնորհ բերել իմ պատկերահանդէսը:

ՖԼ. Ուրախութեամբ:

ՄԻՔ. Ուրեմն վաղը կը բացուի:

ՄԱՆ. Այո՛: Այսօր կը վերջացնեմ պատկերների դասաւորութիւնը, և վաղը ժամը 10-ից արդէն բաց է մինչև երեկոյեան իննը, և այսպէս մի ամբողջ ամիս:

ՄԻՔ. Քանի հատ է:

ՄԱՆ. Ընդամենը երեսուն:

ՄԻՔ. Բայց լրագրի մէջ ասուած է, կարծեմ, երեսուն երեք:

ՄԱՆ. Այդքան էր: Բայց երեքն արդէն վաճառուած է:

ՖԼ. Երեքը վաճառուած:

ՄԱՆ. Այո, և բաւական թանկագին պատկերներ:

ՄԻՔ. Քանիսով:

ՄԱՆ. Այդ երեք կտոր պատկերների համար ևս ստացել եմ ընդամենը 1500 ռուբլի:

ՖԼ. Լսում ես, Միքայէլ, 1500 ռուբլի...

ՄԻՔ. Կեցցէք, կեցցէք: Շատ ուրախ եմ: Դա մեծ յաջողութիւն է: Բելորն էլ, իհարկէ, ժանր, այո՛:

ՄԱՆ. Դիմանկար և ժանր: Ես սիրում եմ նկարչութեան այն ձևը, որտեղ կարելի է խօսել մարդու հոգուց:—Ահա և պատկերահանդիսի ցուցակը: (Տալիս է մի թերթիկ):

ՄԻՔ. (Աչքի անցկայնելով ցուցակը) Ձեր ցուցահանդէսը խոստանում է վերին աստիճան հետաքրքրական լինել:

ՖԼ. Տհւր ինձ նայեմ, Միքայէլ: (Նայում է):

ՄԻՔ. Ո՛րքան ժամանակում էք նկարել այս ամենը:

ՄԱՆ. Վերջին երկու-երեք տարուայ ընթացքում:

ՄԻՔ. Բնզմնաւոր վրձին է:

ՄԱՆ. Ես արագ նկարող եմ:

ՄԻՔ. Բոլորն էլ նկարել էք արտասահմանում:

ՄԱՆ. Մի մասը Փարիզ, մի քանիսը՝ Միւնխըն:

ՄԻՔ. Յետոյ, մասնակցում էիք, իհարկէ, այնտեղի սալոն-ներում:

ՄԱՆ. Այո, մի քանի անգամ մասնակցել եմ և, պէտք է ասած, միշտ սիրալիր ընդունելութիւն էի գտնում: Լրագիրներն էլ երբեմն զովասանքներ զրում էին իմ մասին: Այդ կողմից ևս շատ դո՛ւ եմ: Մի պատկերս, օրինակ, զնուած է և այժմ գտնուում է մի թանգարանում. երկուսն էլ ուղարկուած են զաւստուկան միւլդէոնները:

ՄԻՔ. Հազար երանի ձեզ: Եւրոպայի գեղարուեստական

կենտրոնները ուրի տակ տուած և ինչ սքանչիլի գլուխ-գործոց-  
ներ տեսած կը լինիք...

ՄԱՆ. Այն, իհարկէ: Բայց ոչ բոլորը: Բոլորն ի մօտոյ ճա-  
նաչելու համար՝ հարկաւոր են երկար տարիներ և նամանաւանդ  
միջոցներ... Ճիշտ է, ինձ լաւ ծանօթ են այժմ Լուսիբը, Բերլինի  
սղգային միւզէոնը, Դրեզդենի և Միւնխընի հուշակաւոր պատ-  
կերասրահները, Պետերբուրգի Էրմիտաժը... բայց այս դեռ  
բոլորը չէ: Դեռ մնում են Հոլլանդիան, Իսպանիան, Իտալիայի  
մեծ մասը... Մի խօսքով, դեռ շատ բան կայ տեսնելու: Այդ էլ  
ապագայում:

ՄԻՔ. Տայ Աստուած, որ դրանց տեսութեանն էլ արժա-  
նանաք: Բայց այդքանն էլ կարծեմ բաւական է, որ ձեր դե-  
ղագիտական հասկացողութիւնների մէջ մեծ յեղաշրջում կա-  
տարուէր:

ՄԱՆ. Եւ կատարուեց: Հին և նոր ժամանակների հանճա-  
րեղ վարպետների գործերը ինձ շատ և շատ բան սովորեցրին:

ՄԻՔ. Գեղարուեստին ծառայողը ահա այսպէս պէտք է  
լինի, Ֆլորա,—անտառային թռչունի պէս ազատ:

Ֆլ. (Կիսակատակ) Քեզ չենք խանգարում: Կարող ես դառ-  
նալ անտառային թռչուն, եթէ այդ քեզ հաճելի է:

ՄԱՆ. (Նոյնպէս կատակով) Մի պայմանով, աիկին, որ դուք էլ  
դառնաք անտառային թռչուն և հետեւէք ձեր ամուսնուն. ապա  
թէ ոչ, դուք կը մնաք մենակ և կարօտը կը քաշէք: (Ծիծաղում  
են:) Հա, իդէպ, առայէք, խնդրեմ, պարոն Միքայէլ, դուք ինչ  
էիք անում այս վերջին տարին:

ՄԻՔ. Ես—թմրում էի և ուրիշ ոչինչ:

ՄԱՆ. Ի՞նչ էք ասում:

ՄԻՔ. Այն, հաւատացէք ինձ:

ՄԱՆ. Ոչինչ չէք նկարել:

ՄԻՔ. Ոչինչ:

ՄԱՆ. Այդ շատ ցաւալի է:

ՄԻՔ. Այն, թանկագին բարեկամս, գլորում էի դէպի ցած,  
և որքան դուք աւելի և աւելի վեր էք բարձրանում կատարե-  
լութեան աստիճաններով, այնքան էլ ես աւելի և աւելի ցած  
էի գլորում անկման ճանապարհով:

ՄԱՆ. Պարոն Միքայէլ...

ՄԻՔ. Զարժէ մինչև անդամ խօսել իմ մասին:

ՄԱՆ. Ինչու ձեզ այդպէս դատաւիտում էք:

ՄԻՔ. Որովհետև ես մէկն եմ այն վատ արարածներից, ո-  
րոնք դաւաճանում են իրենց կոչմանը և իրենց քանքարը, այդ  
գեղեցիկ երկնային պարգևը, հողի տակը թաղում... Ո՛չ, իմ մա-

սին չը խօսենք: Գուր, դուք պատմեցէք ձեր տպաւորութիւններին, ձեր ճամբորդութիւններին... Ես բոլոր ուշադրութիւնս լարած՝ կը լսեմ: Խօսեցէք: Ի՞նչ նոր հովեր, ի՞նչ նոր հոսանքներ կան այնտեղ, դեղարուեստի այն օրհնակ աշխարհում: (Ընդմիջում:)

ՄԱՆ. (Նայելով ժամացոյցին) Ա՛, արդէն ուշ է: Ինձ սպասում են: Ներեցէք, խնդրեմ: Մի ուրիշ անգամ ես կը դամ ձեզ մօտ և երկար-երկար գրոյց կ'անենք միասին այդ նոր հովերին: (Կամենում էր հրածեշտ տալ, յանկարծ մի բան է յիշում: ) Ա՛խ, իրաւ, քիչ էր մնացել մոռանայի: Չէ որ ես յիշատակի նուէր եմ բերել ձեզ համար իմ նկարչական գործերին: (Գրան մօտ ածողի վրայ դրում է պատկերը՝ շրջանակով եւ փաթաթում: Մանասեանը վերցնում է արտփերը եւ մատուցանում Միքայէլին: ) Իմ առաջին դեկաւլարին ամենախորին յարգանքը:

ՄԻՔ. Շնորհակալ եմ: Ես խիստ զգացում եմ ձեր երախտագէտ սրտի այսպիսի ջերմ արտայայտութեամբ:

ՄԱՆ. Չ'արժէ, չ'արժէ:—Պատիւ ունիմ, տիկին:

ՖԼ. Յը տեսութիւն:

ՄԻՔ. Մէթէ չէիք կարող փոքր ինչ ուշանալ: Միասին կը նայենք այս պատկերը և յետոյ...

ՄԱՆ. Խնդրում եմ, ներէք: Չեմ կարող: Ժամադիր եղած եմ: Սիրում եմ ճշտապահ լինել: Յը տեսութիւն: (Գնում է: Միքայէլը բաց է անում պատկերը, եւ Ֆլորայի հետ ուշիուշով դիտում են: Ֆլորայի դէմքի վրայ նկատելի է հիացում. իսկ Միքայէլի երեսը արտայայտում է միաժամանակ թէ՛ զոհուածին եւ թէ՛ թախիծ: )

## ՏԵՍԻԼ 5.

### ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ.

ՖԼ. Աքանչելի պատկեր է: Չէ, Միքայէլ: «Հայ գեղջկուհին սղբիւրի մօտ»: Շատ գեղեցիկ է: Եւ ի՞նչ զարմանալի նրբութիւն կայ այնտեղ...

ՄԻՔ. (Հոգւոց) Այո՛, շատ յաջող է: Կենդանի կանգնած է աչքի առաջ իսկական հայուհին իր բնորոշ դիմադժերով, իր ինքնատիպ արտայայտութեամբ:

ՖԼ. Ի՞նչ հարուստ գոյներ և ի՞նչ ներդաշնակութիւն:

ՄԻՔ. Ճիշտ է, ճիշտ է:

ՖԼ. Ծով-ծով աչքերին նայիր, Միքայէլ: Կարծես սրանց մէջ կրակ է վառում:

ՄԻՔ. Ուղիղ է: Աչքերը արտայայտիչ են:

ՖԼ. Բայց ափսոս, որ պատկերի դիրքը չատ փոքր է: Իմ կարծիքով, այս է սրա միակ պակասութիւնը:

ՄԻՔ. Միակ պակասութիւնը... Իսկ Փոնը: Չես նկատում, թէ ինչ անբնական դոյնով է չաղախուած: Բոլորը—մանիչակադոյն:

ՖԼ. Բայց, չը նայած դրան, սա մի իսկական վարպետ-նկարչի գործ է:

ՄԻՔ. Ես չեմ ուրանում, որ սաղանդի դրոշմը ակնյայտնի երևում է պատկերի վրայ, բայց...

ՖԼ. (Յափշտակուած) Հիմա կարելի է ասել, որ մեր գեղարուեստի հորիզոնում մի պայծառ աստղ է ծագում:

ՄԻՔ. (Կծու ծիծաղով) Ես քեզ խորհուրդ կը տամ մի քիչ չափաւորես քո յափշտակութիւնը:

ՖԼ. Ինչո՞ւ, ես ուղիղ չեմ ասում:

ՄԻՔ. Ձուս ճշմարտութիւն է քո ասածը:

ՖԼ. Հեղինութիւնը թո՞ղ և, եթէ քաջութիւն ունիս, խոստովանուիր. միթէ սրա նկարողը՝ Մանասեանը բարձր չէ՞ մեր բոլոր նկարիչներին:

ՄԻՔ. Իբրև գիմանկարիչ, այո՛, գուցէ և...

ՖԼ. Ինչ անուն կ'ուզես, տներ, բայց ես հաստատ խօսք եմ ասում, մինչև օրս ոչ մի պատկեր ինձ վրայ այնքան խորը սոցաւորութիւն չէ գործել, ինչպէս սա:

ՄԻՔ. (Չսպուած բարկութեամբ) Ի՞նչպէս կարող ևս դու այդ ասել, Ֆլորա: Ի՞նչպէս կարելի է դրան համեմատել միւսների հետ, որոնք սասը, տասնհինգ, քսան տարի է տքնում, աշխատում են գեղարուեստի ասպարիղում, որոնք իրենց տաղանդը վաղուց է ապացուցել են և իրենց ձեռքերի մէջ նմանը չունին... Մանասեանը, այո՛, մի շնորհալի նկարիչ է, գուցէ և փայլուն ապագայ է խոստանում, բայց նա այսօր զեռ ևս մի սկզբնակ է! Իսկ դու նրան արդէն երկինք ևս բարձրացնում! (Անց ու դարձ է անում անհանգիստ և յուզուած):

ՖԼ. Օ՛հ, ես տեսնում եմ, որ դու կամաց-կամաց սկսում ես տաքանալ, բորբոքուել... Ասա՛, խնդրեմ, ինչո՞ւ ես բարկանում:

ՄԻՔ. Ես չեմ բարկանում: (Նստում է) Ես միայն զարմանում եմ, որ դու ասած խօսքերդ լաւ չես կշտադատում:

ՖԼ. Կարծում ես, ես չեմ հասկանում, թէ ի՞նչ է կատարում ներսդ:

ՄԻՔ. (Վեր կենալով) Ի՞նչ է կատարում:

ՖԼ. Շատ պարզ է: Դու... Մանասեանին...

ՄԻՔ. Մանասեանին—ինչ:

ՖԼ. Նախանձում ես:

ՄԻՔ. Նախանձում... Այո՛, դու դուշակեցիր: Ես նրան նա-

խանձում եմ: Առաջին անգամ կեանքումս ես զգացի նախանձ գէպի իմ արուեստակիրը... Բայց այն, ինչ որ կրում եմ այժմ, այն չար նախանձը չէ, որ ձգտում է ոչնչացնել ախոյեանին, այլ այն բարի և կարող նախանձը, որ կրակ է վառում մեր ներքը, փոթորկում է մեր հոգին և, ինչպէս մի խթան, մղում է գէպի առաջ, գէպի վեր, գէպի կատարելութիւն...:

ՖՆ. Արժէ միթէ այդքան յուզուել զրա համար:

ՄԻՔ. Մինչդեռ նա, հոգով սրտով իր սուրբ կոչման նուիրում, ձգտում էր միշտ գէպի վեր, գէպի զեղարուեստի բարձր սահմանները, ստեղծագործութեան գագաթնակէտը, և նոյն այդ ժամանակ փառւմ, բորբոսնում էի իմ շրջապատի ճահճի մէջ!...

ՖՆ. Է՛հ, ո՞վ է մեղաւոր. ոչ դու, ոչ մենք: Չախորդ հանգամանքներ, ձեռք ու ոտք կապուած...:

ՄԻՔ. Անմեղ հրեշտակներ... Ի՞նչ էր ձեր մշտական ճիգն ու ջանքը, եթէ ոչ սատը ջուր ամէլ սգեսրտիթեանս վրայ, անջատել ինձ իմ արուեստից, թոփչներս կապկապել...:

ՖՆ. Հիմա էլ մենք մեղաւոր զուրս եկանք:

ՄԻՔ. Այն, զո՛ւք, զո՛ւք... Դուք իմ ստեղծագործութեան վրայ նայում էիք, իբրև մի կթան կովի վրայ: Երբ անաք, որ իմ վրձինը չէ տալիս ձեզ վայելուչ ապրուստ և ապահովութիւն, դուք բոլորդ զինուեցիք իմ դէմ, սկսեցիք ծաղրել, արհամարհել իմ պարագմունքը: Այն բողբոջներին, երբ ևս յախտակուած իմ վրձինով՝ կեանք և բնութիւն էի ներշնչում կտաւին, ականջիս տակ անդադար ձեր ձայնն էր հնչում. «Միքայէլ, ձգի՛ր վրձինդ, զա մեզ հաց չէ տալիս, Միքայէլ, մտի՛ր ծառայութեան. մեզ հաց, հաց է հարկաւոր...» Օ՛հ, այդ ձայնը ևս չեմ մոռանալ, մինչև հիմա էլ կարծես ականջումս է... Նա մարդկային ձայն չէր, այլ իմ թաղման, իմ յուշարկաւորութեան զանգակն էր այն!.. (Ձեռքը կրծքի վրայ):

ՖՆ. Մի յուզուիր, Միքայէլ: Չէ որ բժիշկը արգելել է:

ՄԻՔ. Օ՛, անիծեալ, անիծեալ...:

ՖՆ. Տեսնում ես, ես որ ասում եմ: Սիրտդ է, հա:

ՄԻՔ. Կեանքս, կեանքս է թրսրտում այստեղ, պատուել է ուղում իր պատեանը... Սպասիր, սպասիր, անիրաւ, դեռ ժամանակը չէ: Դեռ ամեն բան կորած չէ ինձ համար: Ո՛չ, ես չեմ կամենում հաւատալ, որ ամեն ինչ կորած է: Ես դեռ ընդունակ եմ աշխատելու, և կը սկսեմ մի նոր, փառաւոր աշխատանք: Հարկաւոր է միայն, որ ևս կեանքիս ձեռ փոխեմ, կեանքիս ձանապարհը փոխեմ... Ինձ կազգարուել է պէտք, թարմանալ... Իմ գլուխ-գործոյները դեռ ինձ սպասում են, դեռ առա-

ջրս են... (Մտածում է) Ահա—հէնց այս բոպէիս մի հոյակապ սիւժետ լուսաւորեց իմ միտքը... զաղափարը դեռ ես աղօտ, դեռ սակաւ անորոշ, բայց, ըստ ամենայնի, մի հանճարեղ պորձ պիտի լինի դա, արժանի նոյնիսկ Բէնկլիւնի վրձինին... Միայն հարկաւոր է մտածել, լաւ մտածել, ե այն—միայնակութեան մէջ, այն, անպայման միայնակութեան մէջ! (Մտախոհ հեռանում է միւս սենեակը, դուռը ետեւիցը վրայ բերում եւ սկսում այնտեղ անց ու դարձ անել:)

## ՏԵՍԻԼ 6.

ՖԼՈՐԱ. (մենակ).

Տէր Աստուած, ինչպիտի նախանձ է վառուել նրա մէջ ե ուտում է ներսը... Նա կարող է մինչև անգամ խելազարուել: (Մտնում է Հռիփսիմէն՝ ուրախ եւ զրկաշաց: Փաթաթուում են:)

## ՏԵՍԻԼ 7.

ՖԼՈՐԱ, ՀՌԻՓՍԻՄԷ.

ՀՌ. Ֆլորա:

ՖԼ. Հռիփսո ջան:

ՀՌ. Ի՞նչպէս ես, հոգիս կաւ չես երևում: Ապա մի նայիմ աչքերիդ՝ Օ՛, մի ինչ-որ թախիժ է նստած աչքերիդ մէջ... :

ՖԼ. (Հողոյ) Կեանքը գիտէ, սիրելիս—Իսկ դու ի՞նչպէս ես

ՀՌ. Ի՞նչպէս տեսնում ես:

ՖԼ. Կաւ ես, լաւ ես, հոգիս. լցուել, սիրունացել ես: Հանուիր, խնդրեմ:

ՀՌ. Իսկոյն: Ես այսօր ամբողջ օրը ձեզ մօտ եմ: (Հանում է վերնազգեստը եւ դիտարկը: Ֆլորան նրան օգնում է: Այնքան խօսեմ, որ զլուխներդ ասնեմ: Ձեզ բողբոջ այնպէս կարօտել եմ, ժանաւանդ Հրանտին... Ա՛խ, Հրանտիկ, Հրանտիկ, հրեշտակ է: հրեշտակ... Ո՛ւր է նա, հա՛, տանը չէ:

ՖԼ. Մանկական պարտէյ է դնացել, շուտով կը գայ:

ՀՌ. Է՛հ, յետոյ: Սոս ա.հ.ս.է.մ է, ինչ էք անում, ի՞նչպէս էք անց կացնում ձեր ժամանակը—արդեօք ուրձիս, տխուր... :

ՖԼ. Շատ տխուր, Հռիփսօ. միատեսակ, ձանձրալի... :

ՀՌ. Միբայելը ի՞նչպէս է:

Ֆլ. Գոգոս է իր վիճակից. ինքն էլ միշտ հիւանդ:

ՀՌ. Ոչխնչ, բժիշկը այստեղ է...

Ֆլ. Ա՛խ, իրաւ, դու արդէն աւարտել ես, բժիշկ ես: Ծնորհաւորում եմ:

ՀՌ. Շատ շնորհակալ եմ: Իսկ միւսները ինչպէս են՝ մայրիկը, աղջկերբը:

Ֆլ. Մայրիկը՝ խեղճը բոլորովին հալից ընկել է, աղջրկերքն էլ իմ օրումս:

ՀՌ. Այսինքն պարապ-սարապ մտն էք դայիս ե սպանում ժամանակը:

Ֆլ. Հապա ինչ:

ՀՌ. Այդ լաւ չէք անում, Ֆլորա, թո՛յլ տուր ինձ նկատել: Ինչո՞ւ դուք էլ չէք աշխատում: Մի՞թէ չէիք կարող, օրինակ, դբաղուել գասերով, կարուձև անել, կամ մի ուրիշ բան: Հապա մեղք չէ Միքայէլը: Հոգսերի բոլոր ծանրութիւնը պցել էք նրա վրայ, իսկ դուք քաշուել մի կողմ: Վերջապէս ես չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է մնալ շարունակ անդորձ, անդորձ, անդորձ: Աստուած վկայ, ես կը մեռնէի ճանճրոյթից, եթէ...

Ֆլ. Դու որ կաս, մի տղամարդ ես:

ՀՌ. Այդ միևնոյն է. բոլորը պէտք է աշխատեն՝ թէ կին թէ տղամարդ... (Ընդմիջում): Ֆլորա, ինչ ծանր է այստեղ օդը:

Ֆլ. Մենք սովորել ենք:

ՀՌ. Ի՛նչ անտանելի բնակարան է: Աւելի լաւը չը գտնւք:

Ֆլ. Ինչո՞ւ չէ: Գտնել կարելի է, բայց գները անմատչելի են, թանկ ու կրակ:

ՀՌ. Բայց այստեղ ապրել չի լինիլ: Բակը կեղտոտ, անկարդ, իսկ ներսը... Բոլոր սենեակներն էլ այսպէս են:

Ֆլ. Համարեա բոլորը:

ՀՌ. Այսպէս ցո՞ծ, մո՞թ, խեղդուել:

Ֆլ. Սա դեռ ամենից լաւն է:

ՀՌ. Խոնաւութիւն էլ կայ, ինչպէս երեսում է:

Ֆլ. Այն անկիւնը չես տեսնում:

ՀՌ. (Մտնելով դիտում է) Ա՛յ, ա՛յ, ա՛յ—մինչև անդամ պատտառը բորբոսնել, փակ է... Ո՛ւհ, դոնէ պատուհաններն էլ է բաց պահեցէք, օդ խաղայ... (Ինքը բաց է անում պատուհանը): Ա՛յ այսպէս: Օ՛հ, հաղիւ մի քիչ մաքուր օդի հոսանք մտաւ այստեղ: (Նայում է պատուհանից): Իսկ այս ինչ պատ է, և ինչքան էլ բարձր, կարծես Բաբելոնի աշտարակը լինի: Ուրեմն ձեր բնակարանի մէջ արե չէ՞ թափացնում:

Ֆլ. Եւ ո՛չ մի ճառագայթ:

ՀՌ. Ա՛, ուրեմն փառք տուէք Աստծուն, որ դուք կարո-

զացել էք դեռ կենդանի մնալ և չէք բորբոսնել այն պատի նըման... Ի՞նչպէս կարելի է, ասն խնդրեմ, այգբան անփոյթ լինել զէպի առողջապահական պայմանները... Միթէ Հրանտիկն էլ այս նեխուած միջնորդարի մէջ է խաղում, վաղվում, բնում... Խեղճ կրեխայ, ի՞նչպէս խղճում եմ նրան:

Ֆլ. Սիրելիս, ով չի ուզենայ լաւ բնակարանում ապրել, լաւ սնունդ ունենալ, լաւ հագնուել... Բայց—միթէ դու չը դիտես մեր դրութիւնը:

ՀՌ. Ձեր գրութիւնը... Ես չը գիտեմ... վնաս է:

Ֆլ. Անասնելի է: Միքայէլը՝ խեղճը մենակ, մի աշխատաւոր, իսկ ընտանիքը՝ անազին: Երեւի, քեզ դեռ յայտնի չէ, որ նրա հանգուցեալ քրոջ որբերն էլ աւելացան մեր տանը, Միքայէլի վղին մնացին, և աճն մի սարի է, որ մեզ մօտ են: Ի՞նչպէս հասցնի խեղճ Միքայէլը, քանի՛ կտոր լինի նա: Պարտքերն էլ սի կողմից են խեղճում...

ՀՌ. Միթէ ձեր գրութիւնը այդ աստիճան աննախանձելի է, հոգիս:

Ֆլ. Այո, Հոփիսո, եթէ իմանաս, թէ ինչեք է կատարուել մեր տանը վերջին տարիները...

ՀՌ. Միքայէլը տանն է:

Ֆլ. Այո բողբիս կը կանչեմ: (Վտանում է դրան, որ բաց անի, բայց դուր փակ է: Չայն է տալիս) Միքայէլ: (Դրան ետեւից լըսում է Միքայէլի ձայնը. «Ինձ մի խանդարիր»)

ՀՌ. Ի՞նչ ասաց:

Ֆլ. Ասում է. «Մի խանդարիր» Բայց նա չը գիտէ, որ դու այստեղ ես, թէ ոչ իսկոյն կը գայ: (Բաղխում է դուրս:) Միքայէլ, բնց դուռը, Հոփիսոն եկել է մեզ մօտ: Այն, Հոփիսոն, Հոփիսոն: (Միքայէլը դուր բաց է անում եւ երեւում է շեմքի վրայ զարմացած եւ ուրախ):

## ՏԵՍԻՒ 8.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, ՀՌԻՓԻՍԻՄԷ.

ՄԻՔ. Ա՛, օրիորդ Հոփիսիմէ: Բարե՛:

ՀՌ. Չէ՛ք սպասում:

ՄԻՔ. Ամենեկին:

Ֆլ. Ես էլ չի սպասում բոլորովին:

ՄԻՔ. Ի՞նչպէս էք:

ՀՌ. Ծնորճակալ եմ, լաւ:—Իսկ դուք, պարոն Միքայէլ, կարձես ձերացել էք:

ՄԻՔ. (Յոյց տալով մապերը) Նայեցէք, արդէն սպիտակ թեւեր են երևում...

ՀՌ. Այդ ոչինչ: Բանն այն է, որ հողով չը ծերանաք:

ՄԻՔ. Այն, հողու ծերութիւնը սարսափելի է:

ՀՌ. Բայց ձեր դէմքի վրայ ես յոգնութիւն եմ նկատում, մի տեսակ մեկամաղձոտ փպիտ, սր խօսքով դժուար է նկարագրել, միայն կարելի է զգալ:

ՄԻՔ. Այն, ինչ որ դուք նկատում էք իմ դէմքի վրայ, իմ անցեալ, չարքաչ կեանքի զրոյնն է, օրիորդ... Այն, մենք ծերացանք, մենք հաշիւից դուրս եկանք: Հիմա ասպարէզը մնում է ձեզ, երիտասարդ ոյժերից:

ՖԼ. Հոխիսօն արդէն աւարակ է, զիտես, Միքայէլ:

ՄԻՔ. Այն:

ՀՌ. Այն, արդէն:

ՄԻՔ. Ծնորհաւորում եմ: (Կտտակով) Ինձ կը բժշկէք:

ՀՌ. (Կիտակատակ) Ուրախութեանդ, միայն մի պայմանով, որ դուք առանց այլիայլութեան և անյասպաղ դուրս դաք այս բնակարանից, որովհետեւ սա հիւանդութիւնների բունն է:

ՄԻՔ. Շատ ճշմարիտ է, և մենք այստեղ երկար մնալու չենք:

ՖԼ. Իհարկէ, նչ:

ՀՌ. Եւ վերջապէս միթէ սա նկարչի բնակարանն է: Նոյն իսկ մի փոքրիկ հորիզոն, երկնքի մի կասր էլ չը կայ, որ նայի մարդ, և սիրաբ ըստելի: Միթէ այս տունը ձեզ արամազրում է նկարելու:

ՄԻՔ. Ամենեկն:

ՀՌ. Հապա ինչպէս էք կարողանում նկարել:

ՄԻՔ. Ես էլ չեմ նկարում. թողել եմ ամեն ինչ և ծառայում եմ:

ՀՌ. Հաւատում արդեօք:

ՄԻՔ. Թե՛ղ վկայի Ֆլորան:

ՖԼ. Ուզի՞ղ է ասում, Հոխիսօ, թողել է:

ՀՌ. Ահանջովս լսածին դժուարանում եմ հաւատալ:

ՄԻՔ. Այդ ինձ էլ երազ է թւում:

ՀՌ. Տէր Աստուած, նկարիչ թաշճեանը, զեղարուեստի երկրպագուն, նա, որ մի ժամանակ վրձինը չէր թողնում ձեռքից, որի սակզմադործութեան մէջ էր ամբողջաբար իր ամբողջ աշխարհը, ձգել է իր վրձինը... Եւ դու, Ֆլորա, կարողացել ես անասրեր արգել նայել մի փայլուն տաղանդի կործանման...

ՖԼ. Ա՛խ, դու չը գիտես մեր հանգամանքները ե...:

ՄԻՔ. (Լուրջ) Դու լսիր նրան, լաւ լսիր:

ՀՌ. Ոչ մի հանգամանք ես չեմ կամենում իմանալ: Ինչ որ էլ ասես, հոգիս, ես քեզ գատապարտում եմ: Պարոն Միքայելը կարող էր հարկադրուած զգալ իրեն այդ քայլն անելու. բայց դու չը պիտի թոյլ տայիր: Դու պէտք է փաթաթուէիր, կախ ընկնէիր նրա վզովը, արտասուքն աչքերիդ աղաչէիր, որ նա այդ քայլը չ'անէր:

ՖԼ. Հոբիսօ, սիրելիս, հասկացիր վերջապէս, որ գեղարուեստը, մանաւանդ նկարչութիւնը մեզ մօտ ապրուստ չէ ապիս:

ՀՌ. Պարոն Միքայել, միթէ, ճշմարիտ, դուք ընդմիջտ թողել էք ձեր վրձինը:

ՄԻՔ. Ո՛չ, ես լուրջ մտածում եմ, թէ ինչպէս կարող եմ նորից վերածնուել:

ՀՌ. Օ՛ր, այդ անհրաժեշտ է... Այն, ձեզ վերածնուել է պէտք: Ես կարծում եմ, իւրաքանչիւր անհատ, որ ի բնէ օժտուած է ձիրքերով, պատկանում է ոչ միայն իր մերձաւորներին և իրեն, այլ առաւել եւ իր միջավայրին, և դուք, որ ունիք տաղանդ, պիտի տաք մեզ այն, ինչ որ ձեզանից սպասում ենք—գեղարուեստական գլուխ-գործոցներ: Հակառակ դէպքում դուք պարտական էք մնում ամենրի առաջ!

ՄԻՔ. (Ողևորուած) Լսում ես, Ֆլորա...

ՀՌ. Այն, ուշքի եկէք, սթափուեցէք, քանի գեռ ուշ չէ...

ՄԻՔ. Այս ձայնը ինձ կոչում է դէպի նոր կեանք...

ՖԼ. Կուշտը քաղցածին... Հօ դիտես այս առածը: Հոբիսօն շատ բան չը գիտէ:

ՄԻՔ. Ես հօ դիտեմ, և այնուամենայնիւ կ'ասեմ. կեցցէ Հոբիսիսիմէն:—Վաղուց է, շատ վաղուց, որ ես կարօտ էի այսպիսի ջերմ քաջալերութեան: Ծնորհակալ եմ, օրինորդ, շատ շը-նորհակալ եմ (Սեղմում է նրա ձեռքը): Ֆլորա, ահա մի կենմարդ, նոյնպիսի քնքոյշ արարած, ինչպէս և դու, բայց և նոյն ժամանակ սրբան առնական և բարձր թռիչք երկրի այս կարծր զանգուածից դէպի վեր... Ա՛խ, ինչ երջանիկ կը լինէի ես, եթէ դու և քոյրերս, փոխանակ ինձ եւ մասնակից անելու ձեր մանր կոխներին ու խռովութեանց, ահա այսպէս, օրիորդ Հոբիսիսիմէի նման, իմ կոչումն յիշեցնէիր ինձ, կշտամբէիր ինձ թըմրութեանս համար և նոր կեանքի, վերածնութեան յորդոր կարգայիք ինձ... Այն ժամանակ ես թերևս չէի հասնի այս խղճալի գրութեան, որ մի խայտառակ անկում է ինձ նման մի դպրու-լի, փնձ կենդանու համար...

ՀՌ. (Ֆլորային) Ի՞նչպէս յուզուած է:

ՖԼ. Միքայել, խնայիր քեզ...

ՄԻՔ. Օ՛հ, անիծենայ, անիծենայ թմրութիւն... Ես այս ինչ արի... Սարսափելի է... Ես սպանեցի իմ հոգու մաքուր, ազնիւ այն մասը, որ իմ անունը պիտ անմահացնէր... Աստուած ինձ պարգևել էր մի շնորհ, և ես այն կենդանի թաղեցի: Ես իմ պիղծ շնչովս հանգցրի և այն սուրբ կայծը, որ ի բնէ միշտ վառ էր այտուեղ... Եւ այս բոլորը—մի կտոր հացի համար!.. Օ՛, չարագործ, խելազան, անձոռնի ստրուկ!..

ՖԼ. Միքայէլ, սիրելիս, բաւական է, որքան քեզ դատափետեցիր: Դու մեղաւոր չես: Յանցաւորը մենք ենք քո առաջ, մենք և ուրիշ ոչ ոք!.. Ներքի մեզ, ներքի, աղաչում եմ...:

ՄԻՔ. Ոչ ոք մեղաւոր չէ, ես քեզ ասում եմ, ոչ ոք, բացի ինձանից. ոչ ընտանիք և ոչ միջավայր, այլ ես և միմիայն ես! Փոխանակ կուրծքս ժայռի պէս դէմ տալու բախտի հարուածներին, ես թուլացայ և ընկճուեցի, ինչպէս չորացած եղևին!

ՀՌ. Ինչպէս երևում է, մեծ վիշտ էք կրել այս վերջին տարիները...

ՄԻՔ. Մի ամբողջ դրամա: Դուք չք գիտէք, օրիորդ, թէ ինչպէս է լցուել սիրտ, որքան դառնութիւն է հաւաքուել այտուեղ: Ծնորհակալ եմ ձեզանից: Դուք եկաք օգնութեան սուղիղ այն ժամին, երբ ես սրտնում էի իմ վրկութեան ճանապարհը և նայնիսկ դտել էի այն, բայց դեռ վարանում էի, գնայ այն ճանապարհով թէ ոչ: Բայց ձեր անսկիսկալ երեւալը, ձեր կշտամբանքը, ձեր մաքի ազնիւ թափը, խարազանի հարուածի պէս, գիպաւ ինձ, սթափեցրեց ինձ, վանեց թմրութիւնս, և ահա—վճռուած է այն հարցը, որ քանի տարի է տանջում էր ինձ, ինչպէս կոչմար:

ՀՌ. Այսինքն:

ՄԻՔ. Թողնել ծառայութիւն, կեանքի հոգսերը, մտածմունքը և բոլոր էութեամբ նուիրուել կրկին պաշտելի սուղծագործութեան:

ՀՌ. Ի՞նչ լաւ բան կ'անէք:

ՖԼ. Միքայէլ, դու թուում ես պաշտօնդ թողնել:

ՄԻՔ. Այո, անպատճառ: Ես կամենում եմ գտնել իմ կատարելութեան ճանապարհը, որ ես կորցրել եմ, և այն ճանապարհով գիմել դէպ առաջ, միշտ առաջ, ինչպէս անում էի դործունէութեանս փառաւոր շրջանում: Կար մի ժամանակ, երբ ես ընկած սար ու ձոր, ինչպէս Դամայանթի, գեղեցկութիւն էի որոնում իմ շուրջը—խորունկ կիրճերում, լեռների բարձունքին, անտառների թաւուտի մէջ, ծովեզրեայ ժայռերի վրայ... Մինչդեռ այժմ—ինչ եմ ես, ասացէք. մի կենդանի գիակ, ոչնչութիւն, մի չնչին գեւուռ, որ գալարում է ճահճային տղի մէջ!..

ՅԼ. (Ծածուկ՝ Հոփսիմէին) Հոփսո, ի սէր Ասածոյ, նրան հանգստացրնւ, սաստիկ յուզուած է, սրտի արատ ունի...

ՀՌ. Սրտի արատ... Ինչու ինձ չուս չ'սասցիր:

ՄԻՔ. Ա՛խ, ինչ ուշ եմ ես խելքի գալիս...

ՀՌ. Ո՛չ, դեռ ուշ չէ: Մի յուզուէք, ինչդրեմ. բաւական է, հանգստացէք: Ձեզ վճիռը վճիռ է: Դուք կը թողնէք ծառայութիւնը ե...

ՄԻՔ. Այո՛, զրո՞ղը տանի, ես այլեւ կորրեպոնդենսո չեմ, ես նկարիչ եմ ե կը մեռնեմ՝ վրձինը ձեռիս!

ՀՌ. Այո՛, բայց նախնառաջ ձեր ատողջութիւնը: Կը կազմուէք—յետոյ դարձեալ կեցցէ՛ գեղարուեստը:

ՄԻՔ. Իսկ նա (ցոյց տալով Ֆրրային) չի կանգնի արդեօք իմ ձանապարհի վրայ, չի ստի արդեօք. «Ինչո՞ւ ես կամենում մեզ փողոց նետել»:

ՅԼ. Երբէք ես այդ չեմ ասի, երգւում եմ Հրանտի արեւոյլը: Թո՞ղ քո կամքը լինի. արա՛ ինչ կ'ուզես: Գնա՛ քո կոչման ետևից: Մենք քեզ մենակ չենք թողնի այլեւ. մենք քեզ կ'աջակցենք, բոլորս կ'օգնենք՝ թէ ես, թէ քոյրերդ, թէ եղբայրդ: Օրնիրուն կ'աշխատենք, մեղուների փեթակ կը դարձնենք մեր տունը, կարուձև կ'անենք, դասեր կը տանք... մի խօսքով, հոգսերի բոլոր ծանրութիւնը միայն քեզ վրայ չի բնկնի, կը թեթևացընենք քո բերք...

ՄԻՔ. (Ուրախ եւ սաստիկ զգացուած) Օ՛, եթէ այդ խօսքերը ես լսած լինէի քեզնից մի քանի տարի առաջ, ես—փրկուած էի...

ՀՌ. Դուք փրկուած էք, փրկուած էք ե՛ւ այժմ, մի՛ յուսատուէք:

ՅԼ. Հաւատա՛, Միքայէլ, որ մենք այսուհետեւ քեզ պիտի փայտայենք, գուրգուրանք. ամեն միջոց, ամեն յարմարութիւն կը ստեղծենք քեզ համար, սրպէտղի դու հնարաւորութիւն ունենաս քո բոլոր էութեամբ նուիրուել քո սիրած գործին...

ՄԻՔ. (Ողեւորուած է. աչքերը փայլում են:) Ուրեմն մենք այսուհետեւ սկսում ենք մի նոր կեանք!.. (Յանկարծ նրա դէմքի վրայ նշմարում է տանջանք)... Եթէ միայն... ուշ չէ արդէն... (Կուրծքը բռնած է. հայացքը արտայայտում է սարսափ եւ յուսահատութիւն: Այդ ժամանակ քեմի ետեւ լսում է ծիծաղ եւ աղմուկ:—Այս ինչ աղմուկ է դուրսը... (Ֆրրան շտապում է դրան մօտ:)

ՅԼ. Աղջիկերքը ուրախութիւնից գժուել են: Վահանն է եկել, Վահանը...

ՄԻՔ. Վահանը...

ՀՌ. Ձեզ վտա էք զգում...

ՄԻՔ. (Յոյց է տալիս, որ օդի պակասումը ինն է զգում:) Օ՛հ...  
 Օճո՛ղ! (Ընկնում է սրտի պայծիւնից:)

ՖԼ. (Յուսահատ) Հա՛խիսօ, փրկի՛ր, նա դնո՛ց: (Լալիս է:)

ՀՈ. (Նայելով զարկերակը) Վերջացաւ! (Աղմուկի վրայ շտապ մտնում է վահանը, յետոյ քոյրերը:)

ՏԵՍԻՒ 9.

ՖԼՈՐԱ, ՀՈՒՓՍԻՄԷ, ՎԱՀԱՆ և ՔՈՅՐԵՐԸ.

ՎԱՀ. Ի՞նչ է պատահել:

ՀՈ. Բորբոսնած միջնուրբաի մէջ լոյսը հանդու՛մ է: Սա էլ  
 մի լոյս էր, որ հանդաւ: (Ամենքը լուռ արտասւում են:)

ՎԱՐԱԴՈՅՐ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

## ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ \*)

### XII

Ես քեզ գրեցի անցեալ անդամ, սիրելիս, որ շվէյցարական գիւղական դպրոցի մասին դարձեալ ասելիք ունիմ: Այժմ շարունակում եմ, յուսամ այդ քեզ չի ձանձրացնի:

Ինչպէս յայտնի է, գրագիտութիւնը Շվէյցարիայում ընդհանուր է, բացառութիւն չը կայ: Համաձայնիք ինձ հետ սակայն, որ «գրագիտութիւն» բառը բաւական առաձգական է, գրագէտ է և նա, ով գրել-կարդալ գիտէ մայրենի լեզուով, ինչպէս և նա, որ գրա հետ միաժամանակ հէնց դպրոցից դուրս է բերել որոշ հասկացողութիւններ իւրաքանչիւր անհատի բազմապիսի պարտքերի և իրաւունքների վերաբերեալ: Հին ժամանակ, մի քանի դար առաջ, գրագիտութեան սահմանները շատ որոշ էին և համարեա բոլոր երկրներում միակերպ՝ չնորհիւ կըրօնի բացառիկ գերիշխանութեան դաստիարակութեան խնդրում և ուսուցման միակողմանիութեան: Վերջին երկու դարերում գրական գիտութիւններն ու փիլիսոփայութիւնը մի շարք այնպիսի կարևոր փոփոխութիւններ առաջ բերին մարդկային հասկացողութիւնների մէջ, որ հասարակական, անհատական յարաբերութիւնները տակնուվրայ եղան: Կեանքի կատարեալ կերպարանափոխութիւնը և նրան զուգընթաց բաղմամբիւ նոր պահանջներ, նոր չափեր, բարոյական, նիւթական, հասարակական և ազգային, ժողովրդական կրթութեանը տուին մինչև այդ օրերը չը տեսնուած կարևորութիւն:

Մեր աչքի առաջ այժմ համարեա բոլոր աւելի կամ պակաս քաղաքակիրթ երկրներում ժողովրդական կրթութեան հո-

\*) Տես «Մուրճ» № 8.

զի վրայ կատարուած է մի պայքար, որի առաջնակարգ կարևորութիւնը ասպոցուցում է իր ուժգնութեամբ: Քաղաքական և ազգային, գաղափարագային և կրօնական շահերը բաղխուած են իրար, իսկ յաղթանակի առարկան ժողովրդական կրթութեան դործն է: Այն գիտակցութիւնը, թէ այսօրուայ մանկութիւնը վաղուայ մարդկութիւնն է, պայքարող կողմերին մշտմ է բոլոր հնարաւոր և նոյնիսկ անհնարին միջոցներով ձեռք ձգել ապագայ սերունդը կազմադարելու իրաւունքը և նրա բնաւորութեան մէջ չեւտել իր կամքը, իր հասկացողութիւնները և այսպիսով ասպահովել իր անմիջական ու հեռաւոր շահերը:

Ժողովրդական կրթութեան շուրջը մղուող պայքարի մէջ առաջնակարգ դերը խաղում է բնականապէս պետութիւնը, որ իւրաքանչիւր երկրում աշխատում է մատաղ սերունդների գոտաբարակութիւնն իր ձեռքի տակ ունենալ: Մէկ տեղ նա՝ պետութիւնը իր սեփական կղերի ձեռքից է դուրս քաշում ժողովրդական կրթութիւնը, մի ուրիշ տեղ իր ձեռքի տակ ունեցած բոլոր նիւթական կարողութեամբ ծանրանում է զանազան հետերոմեն տարրերի վրայ, որոնց քաղաքական ճակատագիրը այդ հնարաւոր է զարծնուծ:

Դու անշուշտ լրագրերի միջոցով հետևում ես արտասահմանեան կեանքին և երևի ծանօթ ես մօտաւորապէս այն մեծ պայքարին, որ հանրապետական Ֆրանսիան ստիպուած է մղել իր կաթողիկ կղերի դէմ՝ ժողովրդական զարթոյնների մէջ աշխարհական սղին, ասմկալարական սկզբունքները, քաղաքացիական ժամանակակից լուսաւոր հասկացողութիւնները սերմանելու համար: Գիտես նոյնպէս, թէ եկեղեցին սրպիսի տակուտութեամբ, ինչ անօրինակ յամառութեամբ դիմադրում է պետութեանը իր հնազոյն ժառանգութիւնից չը զրկուելու համար: Կեանքի և մահուան կռիւ է նրա համար: Այդ կռիւը հին է, սիրելիս, տրտաշայտութիւններն են տարրեր այս կամ այն ժամանակում: Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը պետութեան և եկեղեցու մէջ ապահարզան առաջ բերելով, այդ կռիւը զարձրեց սակի սուր, աւելի ուժգին: Դա հնի և նորի, գիտութեան և խաւարի պայքարն է, որ քանի գարերից իվեր յեղյեղում է առանց վերջնական լուծման յանգելու: Բոլոր նշաններից երևում է սակայն, որ ֆրանսիական երրորդ հանրապետութիւնը որսչել է այս անգամ վախճանական եղբի յանգել:

Դու անշուշտ այնքան միամիտ չես լինի կարծելու, որ ֆրանսիական հանրապետութիւնը նոյնքան իրաւունք կ'ունենար, եթէ այդ խիստ միջոցները ձեռք - սնէր իր իշխանութեան տակ զանուող մի կամ միքանիս ազգութիւնները՝ օրինակ ալժիրը լինե-  
Սեղաեմբեր, 1903.

րի կամ հնդկաչինացիների դէմ, թէ նա բռնի կերպով և ժողովրդրդական կրթութեան միջոցով յանուն ինչ-որ պետական շահերի ստիպէր իր հպատակ այդ փոքր ազգերին մոտանալ իրանց լեզուն, կրօնը, ազգութիւնը: Յանուն խզծի և մաջի ազատութեան ազգերին չեն տրորում ոտքի տակ, նրանց գերագոյն անհատական իրաւունքները չեն ոչնչացնում:

Նախաբանս գուցէ մի փոքր երկար եղաւ, բայց, կարծում եմ, ոչ անօգուտ և ոչ անտեղի: Շվէյցարիայի ներքին խաղաղութիւնը և ժողովրդական դատարարական թեման հարցում իշխող կատարեալ համերաշխութիւնը զնահատելու համար հարկաւոր էր տեսնել, թէ ինչ է կատարում այդ փոքրիկ երկրից քիչ հետո: Նամակիս սղզբում ստացի, որ ժողովրդական կրթութեան խնդրում պետութիւնը մեր օրերում երկու տեսակ պայքար է մղում. մէկտեղ նա կուում է իր սեփական կզերի դէմ, ինչպէս Ֆրանսիայում, մի այլ տեղ նա ժողովրդական դպրոցի միջոցով աշխատում է ոչնչացնել իր ծոցում ապրող հետերոսփն տարրերի ազգային ինքնուրոյնութիւնը, պատմութեան սրբազորած տրադիցիաները: Փամանակակից Շվէյցարիան չի ճանաչում ոչ մէկը և ոչ միւսը: Նրա դպրոցները աշխարհական են, այնտեղ իշխում է աշխարհական ոգի, կղերականութիւնը իր նեղ մտքով անծանօթ է: Կրօնի դասաւանդութիւնը, ինչպէս տեսար իմ անցեալ նամակից, զրուած է այնպիսի պայմանների մէջ, որ նա անզօր է միակողմանի ազդեցութիւն ունենալ կամ բնդհարումն առաջ բերել տարբեր դաւանութիւնների մէջ: Միւս կողմից՝ չը նայելով որ Շվէյցարիայում կողք կողքի ապրում են երեք լեզու, ինչո՞ւ չ'ասենք երեք ազգութիւններ (գոնէ ծագումով)—գերմանացի, ֆրանսիացի և իտալացի—այնուամենայնիւ ազգային կամ սեւելի ճիշտ լեզուական գերիշխանութեան հարց անգամ չը կայ: Շվէյցարիայի մեծամասնութիւնը գերմանախօս է, այնուհետև ֆրանսիախօս և շատ փոքրիկ մասը իտալախօս: Շատ բնական էր կարծել, որ աւելի զօրեղ տարրը, օրինակ գերմանախօսը զլուխ ունենալով Դաշնակցութեան կենտրոն բերնը, կ'աշխատէր իր լեզուն բնդհանուր դարձնել, բայց իրականութիւնը յոյց է տալիս, որ այդպիսի ձգտման դադափար անգամ չը կայ, և իւրաքանչիւր շվէյցարացի ամօթից կը կարմրէր մի այդպիսի փորձի առաջ: Ես յիշում եմ, նախ անցեալ տարի գերմանական մի թերթ յօդուածներ տպագրեց այն մասին, թէ գերմանական Շվէյցարիան բաւականաչափ ուշադիր չէ դէպի իր լեզուն, թէ ֆրանսերէնն աւելի է տարածւում գերմանախօս կանտոններում: Յիւրիսի (գերմանախօս)

թերթերը արհամարհանքով պատասխանեցին, թէ դերմանացի-  
նների գործը չէ Շվէյցարիայի ներքին խնդիրները յուզել:

Այսպիսով շվէյցարական բազմադեզու և բազմակրօն (և թէ  
կարելի է ասել) ժողովուրդը արտաքին տարբերութիւնների  
ներքոյ կարողացել է գտնել մի միութիւն, ընդհանուր հայրե-  
նիքի պատմական ճակատագրի, ապրած անցեալի միութիւնը և  
իր ենքնուրոյնութիւնը հաստատել է այդ միութեան վրայ:  
Ամենքն էլ շվէյցարացի են, ինչ լեզուով էլ խօսեն, ինչ դաւանու-  
թիւն ունենան: Կրօնը և լեզուն, որպէս պատմական ժառան-  
գութիւն շվէյցարական ամբողջութիւնը կազմող իւրաքանչիւր  
տարրի, որպէս անկապտելի իրաւունք անհատականութեան,  
որպէս հոգու և խղճի գերագոյն արտայայտութիւն՝ ազատ են  
մնացել ամեն մի օտնձգութիւնից՝ ազգային քաղաքական միու-  
թիւնը համերաշխութեամբ ամրապնդելու համար: Այս քաղաքա-  
կըրթուած գեղջուկների քաղաքական իմաստութիւնը արդարև  
սքանչելի է:

Ահա, սիրելիս, այդ քաղաքական իմաստութիւնը, այդ քա-  
ղաքացիական օրինակելի առաքինութիւնն է, որ հիմունք է  
ծառայում շվէյցարական ժողովրդական կրթութեանը, դա այն  
չափն է, որ ընդունուած է այս երկրում հասկանալ «ընդհա-  
նուր գրագիտութիւն» տերմինի տակ: Շվէյցարական բոլոր հաս-  
տատութիւնները իրանց վրայ կրում են ներքին բազմազանու-  
թիւնը ընդգրկող այդ միութեան կնիքը, օժանդակում են նրա  
զարգացմանը, ամենից աւելի բնականապէս դպրոցն է, ստորին  
ժողովրդական դպրոցը, որ այս փոքրիկ երկրի կազմակերպու-  
թեան, ազատ վարչութեան մեծ իղէան գուրդուրում, խնամում  
է քնքշութեամբ և սիրելի զարձնում սերունդներին:

Մի փոքր մօտիկից նայենք շվէյցարական ժողովրդական  
դպրոցի ծրագրին: Պարտադիր ուսմանելի առարկաներն են.

Մայրենի լեզու:

Թւաբանութիւն:

Աշխարհագրութիւն:

Քաղաքացիական ուսումն (Instruction civique):

Վայելչագրութիւն:

Գծագրութիւն:

Երգեցողութիւն:

Մարմնամարզութիւն:

Ձեռքի աշխատանք:

Բնական գիտութիւններից տարրական հասկացողու-  
թիւններ և նրանց գործագրութիւնը կեանքի մէջ:

Տնտեսութիւն և առողջապահութիւն (միայն աղջիկներին համար):

Իւրաքանչիւր շվէյցարացի երեխայ պարտաւոր է 7—16 տարեկան դառնալը նուիրուելու այս առարկաների ուսանելուն: Որպէսզի որոշ գաղափար տուած լինիմ իւրաքանչիւր մանկան մտաւոր պատրաստութեան մասին դպրոցն աւարակուց յետոյ, ևս այստեղ կը դնեմ նրանց սովորածի մինիմումը այն առարկաներից, որոնք ամենից աւելի սատարիչ են հանգրստանում քաղաքացիական և անհատական առաքինութիւնների մշակելուն և ընդհանուր զարգացմանը:

Այսպէս՝ աշխարհադրութիւնից ևւրաքանչիւր շվէյցարացի դպրոցն աւարակուց յետոյ դիտէ՝—շվէյցարական բոլոր կանտոնները, նրանց ֆիզիկական և քաղաքական կազմակերպութիւնը, դիտէ իր երկրի վաճառականութիւնը, երկրագործութիւնը, գլխաւոր արդիւնարերութիւնը: Ընդհանուր աշխարհադրութիւնից ծանօթ է 5 աշխարհների ֆիզիկական և քաղաքական կազմութեանը: Եւ այնուհետև դպրոցից դուրս իր լրացրի ընթերցանութեամբ նա կարողանում է հետեւել համաշխարհային անցքերին, դիտէ ազգերի համախմբումները, հասկանում է մեծամեծ ընդհարումների պատճառները, որ նա քննադատում է և յայտնում է իր կարծիքը: Գուէջ աշխարհի ոչ մի անկիւնում այնպէս լաւ ծանօթ չը լինին արեւելեան և մասնաւորապէս հայկական հարցին, որքան Շվէյցարիայում. մեր արիւնտ անցքերից և ոչ մէկը սրանց ուշադիր աչքից չի խուսափել: Երանի թէ իւրաքանչիւր հայ մարդ այնքան բան հասկանար իր սեփական ձակատագրից, որքան այդ հասկանում է օտար շվէյցարացին:

Բնական գիտութեան դասաւանդութիւնը յարմարեցրուած է իւրաքանչիւր տեղի ֆլորային ու ֆաունային: Բացի ընդհանուր կենդանաբանական, բուսաբանական, քիմիական գիտելիքները, վերջին տարիներում աշակերտները սովորում են նաև մարդագետիները, օգտակար խոտերը, նրանց անուցանող յատկութիւնը, վեասակար միջոցները ևայլն: Իսկ ուր որ այգեգործութիւն կայ, այնտեղի դպրոցում աւանդում է վաղի մշակութիւնը, արուեստական պարարտացումը, իրազողի հիւանդութիւնները, բժշկութիւնը: Վերջին տարին աշակերտները ծանօթանում են իրանց տեղի մասնաւոր արգիւնարերութեան հետ, կաթի, հացի, պտուղների, ձուի, մսի, բանջարեղէնների կազմութեան հետ: Սովորում են նոյնպէս արհեստ պարունակող և առանց արհեստի ըմպելիները և զգեստեղէնի յատկապրած հում

նիւթերի տեսակները—ինչպէս քաթան, բամբակ, բուրդ, մետաքս, կաշի եւ այլն:

Այսպիսով չը կայ մի հաս շվէյցարացի, որ իր երկրում բնութեան երկոյթներէի, կամ քաղաքակրթական սրտայայտութիւններէ առաջ ապուշ կարուած մնայ: Կայծակ, որստ, աստըղեր, եղանակի փոփոխութիւններ, ելեկտրականութիւն, ելեկտրաքարշ, երկաթուղի, տելեֆոն, զանազան մեքենաներ, քիմիական այլնայլ փորձեր էլ նրա զարմանքը չեն շարժում: Նախապաշարմունքները հալածուած են այս երկրից, մարդը կանդ է տակ բաց բնութեան հանդէպ, աշխատում է և ապրում:

Ես ոչինչ չ'ստացի լեզուի և սրտամտութեան մասին, որովհետեւ հասկանալի է, որ նրանք առաջնակարգ տեղ են բռնում և ամենալայն չափով ուսուցանուած: Չեմ խօսի նոյնպէս մնացած առարկաներ ծրագրի մասին, որովհետեւ այսպիսով նամակա շատ կ'երկարէր. կ'ասեմ միայն, որ դիւզերում առանձին ուշք են դարձնում երեխաներին սովորեցնել դաշտային և այգեգործական աշխատանքները, անկարանութիւն, սրտուստա կայն, իսկ ազջիւններին կարուծե ու ձեռագործ, տուն կառաւարել, հիւանդ խնամել, մի փոքր գեղագործութիւն:

Դրա փոխարէն ևս մասնաւորապէս կանդ կ'ասեմ շվէյցարական դպրոցներում աւանդուող այն օրիցինալ առարկայի վերայ, որ ևս թարգմանեցի քաղաքացիական դատախարակութիւն — «Instruction civique»:

Այս բոլորէն իմ առաջն է այդ առարկայի գաստանդման համար կազմուած գաստգիրքը՝ «Cours élémentaire d'instruction civique». հեղինակն է յայտնի Նու.մա Դրոզը, մի անուն, որ մի առժամանակ, աւանդ, շատ կարճ ժամանակ, 1895-ին կապուեց մեր յոյսերի հետ: Գննի մօտիկից եմ ծանօթանում այս գաստգրքի, հեղինակի առաջնորդող ոգու, նրա զղացմունքների հետ, այնքան աւելի է մեծանում ցուս, որ Նու.մա Դրոզը մեզ համար միայն անուն մնաց:

Ինձ թուում է, որ շվէյցարացի մանուկը լաւ քաղաքացի զանապու համար կարիք չ'ունի դպրոցում առանձին ժամեր նու իրել ուսուցչի բերանից լսելու իր սարտքերն ու իրաւունքները: Բաւական է, որ նա մեծանում է Շվէյցարիայում, ապրում է այս ազատ ու առողջ միջավայրում, տեսնում է իր շուրջը կատարուածները, իրանց մեծերի սրածները: Ամենքը և ամեն ինչ, նոյնիսկ լեւներն ու ձորերն այս երկրում հզօրապէս օժանդակիչ են լաւ գաստախարակութեան: Բայց շվէյցարացիք այնուամենայնիւ պէտք են համարել առանձին ժամեր յատկացնել դպրոցում իրանց զաւակներէի քաղաքացիական գաստախարակութեանը,

և նրա դասագիրքը կազմել է մի այնպիսի մարդ, որպիսին է Նուժա Դրոզը, չվէյցարական լաւագոյն քաղաքիներէից մէկը:

Սիրելի ընկեր, իւրաքանչիւր ժողովուրդ իր քաղաքացիական դաստիարակութիւնը, առաջնորդող բարոյական սկզբունքներն ունի: Եւ այդ դաստիարակութիւնը լաւագոյն չափն է որոշելու մի երկրի քաղաքակրթութեան աստիճանը. որչափ ստոր է կանգնած մի ժողովուրդ, մի հասարակութիւն, նոյնքան աւելի անտրոշ, խառնիխուռն են նրա բարոյական հասկացողութիւնները, պարպերի և իրաւունքի սահմանները, նոյնքան լի է հակասութիւններով նրա կեանքը:

Լոգիկայի, հետեղական սիստեմի վրայ հաստատուած բարոյականութիւնը յատուկ է բարձր կուլտուրայի հասած ժողովուրդներին, որոնք առաջնորդոււմ են բանականութեամբ, արդար օրէնքերով և ոչ թէ վայրիվերոյ ու խախուտ սովորութիւններով, նախապաշարմունքներով, կրօնական առասպելներով: Ահա թէ ինչու ևս որոշեցի մի փոքր աւելի երկար կանգ առնել չվէյցարացիների քաղաքացիական դաստիարակութեան վրայ:

Նուժա Դրոզից աւելի լաւ բացատրել չեմ կարող քաղաքացիական դաստիարակութիւնը, ուստի ես բառադրստ կ'արտապրեմ նրա զրքի յառաջաբանը, որ մի տեսակ ընդհանուր ծրրագիր է մնացածի:

1) «Քաղաքացիական դաստիարակութիւնը, ասում է Դրոզ, նպատակ ունի պատրաստել լաւ քաղաքացիներ: Դուք մեծանում էք, սլ իմ փոքրիկ բարեկամներ, և ձեր ծնողները ձեր բանում են: Կամաց-կամաց նրանք գերեզման կ'իջնեն, ընդունակ կը լինէք դուք այն ժամանակ նրանց տեղը բռնել: Այն, եթէ ձեր մանկութիւնից սկսած պատրաստուէք լաւ քաղաքացի դառնալու:

2) «Լաւ քաղաքացին նա է, ով սիրում է իր հայրենիքը, ով ճանաչում է իր իրաւունքները և ով կատարում է իր պարտքը դէպի իր համաքաղաքացիները:

«Մեր սիրուն հայրենիքի՝ Շվէյցարիայի պատմութիւնը մեզ տալիս է քաղմաթիւ լաւ քաղաքացիների օրինակ: Նա ցոյց է տալիս մեզ, թէ որպիսի ջանքերի, անձնուրացութեան գնով մեր հայրերը կարողացել են ձեռք բերել անկախութիւն, ինչ նեղութիւններ են կրել այդ անկախութիւնը օտարներից պաշտպանելու համար: Նա մեզ սովորեցնում է, որ միութեան և զոհի պատրաստակամութեան ոգին է, որ Դաշնակցութեանը տուել է ոյժ և բարգաւաճումն. այդ ոգին է, որ արտոյայտուում է՝ «մէկը ամենքի և ամենքը մէկի համար» մեր ազգային զեղեցիկ զե-

ւիզի մէջ: Սովորեցէք ուրեմն ձեր պատմութիւնը սիրով, ո՛վ մանուկ շվեյցարացիներ, և աշխատեցէք լինել արժանի դաւակներ ձեր հայրերի:

3) «Իրաւունքն այն է, ինչ որ արդար է, պարտքը իրաւունքի յարգանքն է:

«Աստուած դրել է մեր հոգու մէջ արգարութեան և անարգարութեան գիտակցութիւնը: Ձեր մերձաւորին չարիք չը պէտք է անէք, որովհետև չէիք կամենայ, որ նա նոյնն անէր ձեզ: Պարտական էք ընդհակառակը նրան բարիք անել, որովհետև ուզում էք, որ նա նոյնն անէ ձեզ: Ձը կայ իրաւունք ասանց պարտքի, պատիւ և իրաւունք միևնոյն մեղալի երկու երեսներն են: Մի կրկնէք շարունակ, թէ «սա իմ իրաւունքն է», մտածեցէք նոյնպէս ձեր պարտքի մասին և կատարեցէք այն:

4) «Մարդը ստեղծուած է հասարակութեան մէջ ապրելու համար:

«Ինչքն ու փորձառութիւնն այդ ապացուցանում են: Երեսխաններն ինչպէս կը մեծանային, և թէ ծնողները նրանց ճշգրէին ծնունդից յետոյ, ինչպէս այդ անում են շատ կենդանիներ:

«Մի հատ մարդը մենակ ինչպէս պիտի կարողանար իր բոլոր կարիքները հոգալ:

«Աֆրիկայի և Աւստրալիայի վայրենիներն անգամ ապրում են ցեղերով: Էլի մի ապացոյց, որ մարդը մենակ առանց հասարակութեան ապրել չի կարող:

5) «Ամեն մի հասարակութիւն կարիք ունի կազմակերպութեան և կանոնների:

«Երբ դուք հուսաբերում էք խաղալու, սահմանում էք կանխաւ խաղի կանոնները: Ո՞վ խախտում է այդ կանոնը կամ խաբում, դուք նրան պատժում էք:

«Ընտանիքի մէջ ծնողները սահմանած կանոններ ունին, որոնց պէտք է հպատակուեն երեխաները: Անհնազանդը պատժուում է:

«Մի ցեղի, մի ազգի մէջ էլ կանոններ են հարկաւոր, զըլխաւորներ են պէտք կանոնները յարգել տալու համար, այլապէս ամեն բան տակնուվրայ կը լինէր, զօրեղները կը ճընչէին թոյլերին, խորամանկը թակարդի մէջ կը ձգէր միամիտին: Պարտք և իրաւունք էլ գոյութիւն չէին ունենայ:

6) «Ամեն մի փողովուրդ, որ իր կենցաղի կանոնները և մի ընդհանուր կազմակերպութիւն ունի, կազմում է մի պետութիւն:

7) «Քաղաքաբնական գաստարակութիւնը մեզ սովորեցը-

նում է ճանաչել նախ այն ընդհանուր սկզբունքները, որոնցով պիտի առաջնորդուի իւրաքանչիւր լաւ կազմակերպուած հասարակութիւն, և երկրորդ՝ հայրենի հաստատութիւնները:

«Իմ փոքրիկ բարեկամներ, երբ դուք խնայէս կը հասկանար, թէ ինչ են նշանակում այս սիրուն խօսքերը՝ հայրենիք, ազգային ժողովրդական իշխանութիւն, ազատութիւն, հասարակութիւն, եղբայրութիւն, ռամկավարութիւն, դաշնակցութիւն (Ֆեդերացիա) և ուրիշ շատերը, որ յաճախ լսում էք, այն ժամանակ դուք կը կարողանաք աւելի արդիւնաւէտ կերպով ուսումնասիրել չվէյցարական հաստատութիւնները:

«Այն ժամանակ աւելի լաւ կը հասկանար, թէ ինչ մեծ սիրոյ է արժանի այն հայրենիքը, ուր ծնուել էք, և թէ պարտական էք աշխատել ձեր բոլոր ուժերով արժանի լինել այդ հայրենիքին»:

Այս ընդհանուր հիմունքները վրայ կազմուած ծրագիրը, որով չվէյցարական քաղաքացին մշակում է իր հողին, չափազանց հետաքրքիր պարունակութիւն ունի, բայց տարաբաղաւրար ևս անկարող եմ մանրամասնութիւնների մէջ մտնել քեզ շատ հասկանալի պատճառներով: Կ'առնեմ միայն ընդհանուր կէտերը: Ծրագիրը բաժանուած է երեք մասի, ա. ընդհանուր սկզբունքներ, բ. հայրենի հաստատութիւններ և գ. կանտոնային հաստատութիւններ:

Առաջին մասում երկխոսները լիովին դադարեալ են կազմում հայրենիքի մասին և թէ կառավարչական ինչ ձևեր կան աշխարհում—միապետութիւն, սահմանադրական միապետութիւն, հանրապետութիւն: Բացատրուում են վարիչ իշխանութիւնները, օրէնսդրական, գաղական, վարչական համայնքը և միջազգային իրաւունքը, ինչքան այդ հետաւոր է:

Երկրորդ մասով ուսանում են մանրամասն կերպով Շվէյցարիայի կազմակերպութիւնը—Դաշնակցութիւնը, ժողովրդական իշխանութիւնը, Շվէյցարիան միջազգային անսակէտով կայն:

Երրորդ մասով իւրաքանչիւր կանտոնի դատիկ մանրամասն կերպով սովորում է իր փոքրիկ հայրենիքի սահմանազրուութիւնը, նրա յարաբերութիւնը մեծ հայրենիքի՝ Շվէյցարիայի հետ, նրա պարտքն ու իրաւունքը Դաշնակցութեան մէջ, կանտոնային իշխանութիւնները, եկեղեցի, դպրոց, համայնք:

Ես ասացի, սիրելիս, որ մանրամասնութիւնների մէջ մըտնել անկարող եմ, բայց քեզ մի մօտաւոր դադարեալ տալու համար, թէ ինչպէս են չվէյցարացի երկխոսից քաղաքացի պատը-

րաստում, մէջ կը բերեմ մի կտոր Դրօզի գասազրբից որպէս նրմուչ:

Այսպէս՝ աշխատանքի մասին ասուած է.

«Մարդու առաջին կարիքն է կարողանալ ազատօրէն վաստակել իր ապրուստը: Հետեւողէս նա իրաւունք պիտի ունենայ ընտրել աշխատանքի իր ցանկացած ձևը: Ահն այս է, որ կոչուում է աշխատանքի ազատութիւն:

«Քայց այս ազատութիւնը մի անպարունակ խօսք կը լինէր, եթէ մարդու աշխատանքի պատուը կարելի լինէր նրանից խլել բռնի ուժով կամ նենգութեամբ: Այսակերպ առաջ է դալիս սեփականութեան յարգանքը:

«Իւրաքանչիւր սը, որ ստեղծել է մի օղակ, նա պէտք է աէր լինի իր տան մէջ: Հակառակ իր կամքի ոչ սը իրաւունք չ'ունի նրա տունը մտնել, բացի այն դէպքից, երբ ոճիր կայ դործուած: Այս ազատութիւնը կոչուում է բնակարանի անբռնարարելիութիւն»:

Այստեղ ես կանչ կ'առնեմ:

Այսպիսով ինչպէս տեսնում ես, սիրելիս, իւրաքանչիւր շվէյցարացի պատանի ժողովրդական դպրոցն աւարտելուց յետոյ՝ ջնօճիւ քաղաքացիական լայն դաստիարակութեան՝ զիտէ իր պարտերը և իրաւունքները թէ իբրի մարդ և թէ իբրև քաղաքացի: Նա ճանաչում է իր հայրենիքի անցեալն ու ներկան, զիտէ բոլոր հաստատութիւնները — դատական, վարչական, զիտէ օրէնքները, հասկանում է պաշտօնեաների պարտքերը և իրաւունքները: Իր պարտքը կատարում է սրբութեամբ, որովհետև սիրում է իր հայրենիքը, հպարտ է նրա քաղաքացիութեամբ, և յարգում է իր երկրի օրէնքները, որոնց մէջ ինքը մաս ունի իբր քուէարկող: Որչափ պարտական է դէպի հասարակութիւնը, նոյնքան խստութեամբ պահանջող է իր իրաւունքների վերաբերմամբ, որոնցից մի մաղ չի դիժի: Այն գարչելի սողունները, որոնք յայտնի են մեր դաւառական կենտրոններում «վաքիլ» կամ «խնդիր գրող» անուններով, որոնք ծծում են մեր խեղճ ժողովրդի արիւնը ջնօճիւ նրա կատարեալ սպիտութեան, այստեղ միանգամայն անծանօթ են: Եթէ այդպիսի տիպեր հրաշքով յայտնուէին Շվէյցարիայում, կարծեմ նրանք միակը կը լինէին, որոնց տեղական իշխանութիւնները բանտ կը նետէին, որովհետև նրանցից աւելի ծանր յանցապորձներ այստեղ չեն ճարուում: Շվէյցարական ժողովուրդը իր երկրի արդարագատութեանը գիմելու համար այդ կարգի աւազակ միջնորդներին զիմելու, խնդիր գրել տալու կարիք չ'ունի: Նա զի-

տէ իր իրաւունքը, հասկանում է օրէնքը, ճանաչում է նաև հաստատութիւնն, ուր պէտք է դիմել:

Թէ մինչև որ աստիճան չվէյցարային զիջել չը դիտէ, երբ որեւէ չնչին ապօրինութիւն է տեսնում, ապացուցանում է հետևեալ փաստը.

Այս տարի մայիսից չվէյցարական երկաթուղիները մասնաւոր ընկերութիւնից անցան Գաշնակցութեան ձեռքը: Երկաթուղային պաշտօնեաների համագրեւտի, մասնաւորապէս զըլխարկի վրայ այդ աթիւ մի քանի չնչին փոփոխութիւններ կատարուեցին. ի միջի այլոց գրուեցին երկու աստեր C. F. — «Գաշնակցութեան երկաթուղիները» սկզբնատառերը: Այդ փոքրիկ փոփոխութիւնը (զլխարկի) ամեն տեղ միաժամանակ չը կատարուեց. թէև երկաթուղիները արդէն անցել էին պետութեան ձեռքը, բայց կային պաշտօնեաներ, որոնք դեռ կրում էին զըլխարկներ հին տառերով: Այդպիսի պաշտօնեաներից մէկը գնացքի մէջ ըստ սովորութեան տոմսակ է պահանջում ճանապարհորդից, վերջինս մերժում է ցոյց տալ: Պահանջում է պատճառը, չի պատասխանում, հասնում են կայարան: Խնդիրը հասնում է կայարանի պետին:

— Ինչո՞ւ չէք տալիս ձեր տոմսակը:

— Ո՞ւմը, գարձեալ հարցնում է ճանապարհորդը յամառաւար:

— Երկաթուղային պաշտօնեային:

— Այդպիսին չը կար գնացքի մէջ:

— Իսկ սո՞ւ:

— Ես նրան չեմ ճանաչում, որովհետև զլխարկի վրայ C. F. տառերը չ'ունի, դուցէ և նա բնաւ պաշտօնեայ չէ:

Կայարանի պետը ժպտալով ներողութիւն խնդրեց՝ պատուիրելով պաշտօնեային փոխել զլխարկը:

Սա շտաբանցութիւն է, կամ աւելի ճիշտ՝ բժախնդրութիւն է, կ'ստես դու. համաձայն եմ քեզ հետ, բայց դարձեալ շատ աւելի լաւ է այսպիսի շտաբանցութիւնների մէջ ընկնել, քան թէ ամենայն օր տեսնել բազմաթիւ մանր ու մեծ ապօրինութիւններ, անարդարութիւններ ու լսել:

Որովհետև բանը օրինակների հասաւ, մի քիչ էլ խօսենք մեր երկրի օրինակներից: Ես քեզ պատմել եմ այն զիւղացուարկածը, որ առաջին անգամ երկաթուղով ճանապարհորդելիս տեսնում է, թէ ինչպէս մի աղայ, որ անշուշտ տոմսակ չ'ունի, նստարանի տակ թաղնուեց, երբ կանդակաորը կանչեց, թէ «կոնտրոլը գալիս է», և առանց մտածելու ինքն էլ ծածկւում է նստարանի տակ, բոլորովին հաւատապաճ, որ երբ կոնտրոլը

գալիս է, տոմսակ ունենան թէ չէ, այդ միևնոյն է, բոլոր ճանապարհորդները պէտք է թափնուեն: Սա էլ չափազանցութիւն է, այնպէս չէ, բայց ես միշտ կը նախադասեմ չվէյցարացու բրծախնդրութիւնը, քան այս արտասուելի տղիտութիւնը:

Բայց ինչո՞ւ անձանօթներին և օտարներին դիմենք, մեր գիւղացի Բաղօի յայտնի արկածը: Բաղօն մի անգամ ուեսին վիրաւորել էր, կարծեմ մի աքացի էր տուել: Այդ պատահում է զիւղերում. և Բաղօն գիտէր, որ դրա համար իրան կը պատժեն, բայց գիտէր և այն, որ այդ պատիժը պաւան կը տայ. ճիպտաի մի քանի լաւ հարուածներ թիկունքին, մի քանի օրուայ բանտարկութիւն: Բանտ ու ծեծ, այս երկսից չէր վախեցնում Բաղօն, ինչպէս և ոչ մի զիւղացի, դա այնպէս բնական է: Չը գիտեմ սակայն ինչպէս պատահեց, որ այս անգամ Բաղօի կոյր բազդից բանը դաւառապետին հասաւ: Ես այժմ էլ, այնքան տարիներից յետոյ, լաւ յիշում եմ այն սարսափելի իրարանցումը Բաղօնից տանը, երբ չափար ստախկանը մտրակը խաղաղանկով, կարմիր էսպոկաններն ուսերին, եկաւ ու յայտնեց, թէ «Բաղօին նաչալնիկը էս սնաթիս ուզում է»: Հնչտ է ասել՝ «Նաչալնիկը ուզում է»... ամենքը մտածեցին, որ «էդ անիծած ուսը մի օյին է խաղացել, բանը ուզորվնի է գարձել»: Բաղօն ծնիները դողալով ճանապարհ ընկաւ, իսկ երեք եղբայրներն էլ ահուզողով հետեկցին նրան: Հասան:

—Տօ, դու քանի գլխի տէր ես, որ ուրք ես վերցնում ուսի վրայ: Բաղօն հազիւ կարողացաւ կանգնած լսել այս խօսքերը ու իսկօյն ծնիների վրայ ընկաւ, սողաց գէպի դատաւորի ոտները: Նրան վերկացրին և բանտ տարան գաւառապետի հրամանով: Դրսում եղբայրներն սպասում էին՝ ձեռքերը դրած ծոցերին: Նրանց առջևից անցնելիս՝ Բաղօն մի յետին յուսահատ հայեացք գցեց նրանց վրայ ու ասաց լայակումս՝

—Ախպէրներ, ես որ դնացի, ամանաթ ձեզ իմ երեխաները:

Խեղճ Բաղօն հաւատացած էր, թէ իրան տանելու են Սիբիր: Նրան Սիբիր իհարկէ՝ չը տարան, նոյնիսկ դաւառապետից Բաղօն աւելի հնչտ պրծաւ, քան թէ զլաւայից, վերջինս երկի կը ծեծէր էլ, բայց և այնպէս այդ արկածը այնքուն վախեցրեց սղբամիլի մարդուն, որ այնուհետև փայլուն կոճակներ կամ ստախկաններ հեռուից երևալուն պէս նրա ոտներն սկսում էին դողդողալ:

Այս օրինակը, սիրելիս, կարծեմ չափազանց պերճախօս է մեր ժողովրդի անձայր տղիտութիւնը ցոյց տալու համար: Բա-

դօն ինքր մեր խաւար գիւղն է, որ ոչ իր պարտքն է ճանա-  
չում և ոչ իրաւունքը:

Յ' գրութիւն!

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

## ԳԻՄՆԱԶԻՍՏԻ ՕՐԱՏԵՏՐԻՑ \*)

(Նուէր իր հայ ընկերներին)

Յունուարի 25-ին.

Մամուլի մէջ մեծ աղմուկ հանեց Անգրէի «ԵՅ  
ТУМАНЪ» գրուածքը, որը վերցրուած է գիմնադիտի  
կեանքից: Գիմնադիտի ներքին կեանքը, նրա մտաւոր-  
բարոյական ֆիզիոնոմիան այնքան մտաացուած մի բան  
է, որ չի կարելի չուրախանալ, որ վերջապէս գիմնադիտ-  
ուր գրականութեան մէջ հետաքրքրութեան առարկայ  
է դառնում:

Անգրէի պատմութեամբում շօշափուում է գիմնա-  
դիտի աւելի բարոյական, քան մտաւոր աշխարհը...

Մի մառախլապատ օր է. գիմնադիտ Պուլուշան  
տանջուում է իր սենեակում: Նրա սքառում, ներսում նոյն  
մառախլուղն է, նոյն անորոշութիւնն է, որ տեսնում է  
պատուհանից՝ դրսում... 18 տարեկան է նա, բայց  
արդէն ձանձրացել է կեանքից. այն սարսափելի հիւան-  
դութիւնը, որ նա ստացել է և նրանով վարակուելու

\*) Տես «Մուրճ» № 8:

և ամեն շունչով դիտակցութիւնը նրան մի բոլորէ անգամ հանգիստ չեն տալիս, մի բոլորէ անգամ մոռացնել չեն տալիս նրա սոսկալի գաղանկը... Տէր Աստուած, այսքան շուտ գեռ մի երկու տարի առաջ նա մի անմեղ, վառվռուն աղայ էր, սրբաբար աղանկ, մաքուր, իգեալական սիրով սիրում էր նա այն գիմնագիստկային, որի կուսութեանը նոյնիսկ նա այժմ չի ուզում հաւատալ...

Իսկ այս երկու վերջի տարիների ընթացքում նա կորցրեց իր անմեղութիւնը, իր կուսութիւնը, զուարթութիւնը, թարմութիւնը, աշխոյժը. երկու տարուայանբարոյական կեանքը դրեց վերջիվերջոյ իր անհնջելի կնիքը խեղճի վրայ... և նա այժմ չը գիտէ՝ ինչպէ՞ս ազատուել այդ ակառի ճանկերից...

Ո՞ր են առաջուայ վառ յոյսերը ազագայի վերաբերմամբ. ո՞ր է անհոգ, երջանիկ կեանքի հեռանկարը, որ նա երազում էր առաջ... Նա այն ժամանակ այնքան հաւատում էր կեանքին և չէր էլ կասկածում, որ լնդամենը մի երկու տարուց յետոյ իր բոլոր աղանկ ձգտումները, գաղափարները մի ցնորք, մի երազ պիտի համարէ... Ախ, ինչու նա այժմ առաջուայ նման իր սիրած գիմնագիստկայի մէջ չի տեսնում հրեշտակին, ինչու սիրելին այնքան անիծեալ կասկածներ է զարթեցնում նրա սրտում... չէ՞ որ նա չէ փոխուել, չէ՞ որ նա նոյն ուրախ, նոյն անմեղ աղջիկն է...

Ինչո՞ւ կորցրել է նա իր հաւատը դէպի մարդիկ, դէպի իր ներքին ոյժերը...

Ինչո՞ւ երիտասարդը չ'ունի մէկը, որին նա կարողանար հաղորդել իր սրտի գաղանկը, որից նա ոյժ ստանար իր գեղազգութիւնը տանելու... Որքան պէտք է նրան հասկացող, սիրող մի մարդ... ճրքան նա մենակ է և որք իր հիւանդութեամբ... Նա այժմ իրան կրկնակի գեղազգ էր զգում, որովհետև գեղազգութիւնն ունէր իր գեղազգութիւնը և՛ տանելու, և՛ ուրիշների թշնամական հայեացքից ծածուկ պահելու...

Հայրը, սրը կարող էր մեղմացնել իր որդու

Թշուառութիւնը և աղատել նրան, իր սովորական սառնասրտութեամբ, իր սովորական ինքնաբաւականութեամբ և հեզնական վերաբերմունքով դէպի իր օրդին, աւելի ևս շտապեցնում է վերջինիս հեռանալը տանից և մի ելք գտնելը...

Եւ նա գնում է... ուր... ինքն էլ չը գիտէ. զգում է միմիայն, որ մի ներքին ոյժ քաշում-տանում է նրան դուրս, հեռու... և նա գնում է...

Անառակ կինը էլի հանդիստ չի տալիս խեղճին... այստեղ, փողոցում նա է միակ մարդը, որ ուշադրութիւն է դարձնում նրա վրայ, հետաքրքրւում նրանով. նա է միակ մարդ, որ պատրաստ է առաջնորդելու նրան... և Պաւլուչան, առանց իրան հաշիւ տալու, առանց գետակցելու՝ թէ ուր և ինչի համար է գնում, քայլում է բնագագօրէն այդ կնոջ յետևից... Կնոջ փրաւորական խօսքերը, նրա կոպիտ վերաբերմունքը դէպի Պաւլուչան հանում են երիտասարդին անտարբերութիւնից, ապառիայից և այնքան գրգռում զզուանքի, ատելութեան, արհամարհանքի զգացմունքը դէպի այդ կեղտոտ արարածը և լցնում նրա սիրտը վրէժինդրութեան ծարաւով, որ Պաւլուչան անասելի տանջանքների և մահուան է ենթարկում այդ կնոջը և յետոյ ինքը իրան սպանում...

Մի՞թէ պատանի-երիտասարդի մենակութեան, որբութեան զոհերի թիւը այսքան շատ է, Տէր Աստուած: Արդեօք մարդկային էութեան, անհատականութեան զգացմունքի՞ մէջ սրտնեղ մեր այս գժբաղբութեան պատճառը, ցաւի արմատները, թէ՛ այժմեան սոցիալական պայմաններում կամ երկուսի մէջն էլ հաւասարապէս ..

Պատանի-երիտասարդը զգում է ընկերոջ, իրան հասկացող և մտերիմ, սիրող սրտի կարօտ և կարիք. նա մենակ է... մենակութիւնը խեղդում է նրան... Կնոջ մէջ է նա ստիպուած լինում դանել իր փրկութիւնը... նրանից է նա ոյժ և կեանք հայցում...

Սոցիալական պայմանները հեշտացնում են այդ և դյուրմ խեղճին անառակ կնոջ գիրկը... մաքուր, ազնիւ զգացմունքը գէպի կինը խորտակում է և նրա անդ բռնում անասնական կիրքը, անասնական վերաբերմունքը գէպի կինը... Այդ հողի վրայ կնոջ հետ ունեցած յարաբերութիւնները, իհարկէ, չեն կարող ոչնչացնել մենակութեան զգացմունքը, սիրող սրտի կարօտը յագեցրած չէ, և պատանի-երիտասարդը շարունակում է զլալ իրան աւելի մենակ, աւելի սրբ... Նրա ներքին այժը կամաց-կամաց սպառւում է... մի անակնկալ գժբազգութիւն, և հոգեկան հաւասարակշռութիւնը արդէն խանգարուած է... Իրսից չը կայ ոչինչ օգնութիւն, գրսում կայ մի ցուրտ, կայ սառը անտարբերութիւն... Եւ պատանի-երիտասարդը յուսահատութեան մէջ գիւմում է ինքնասպանութեան ծայրայեղ միջոցին...

Սակայն կայ մի ուրիշ ելք էլ. դա վերջնական, անյատակ անկումն է...

Ով կամաց-կամաց կորցնում է իր բարոյական այլանդակութիւնը հասկանալու և զգալու ընդունակութիւնը, ով կորցնում է իր անկման ամբողջ գիտակցութիւնը,—նա, իհարկէ, ինքնասպանութեան չի գիւմում, այլ շարունակում է ապրել մինչև իր կեանքի վերջը այնպէս, ինչպէս ապրել են և ապրում են նրա պէս հազարաւորները, այնպէս, ինչպէս դուցէ գեռ երկնք պիտի ապրեն շատ շատերը...

Այժմ՝ աշակերտական հասարակական կարծիքը զեկավարում են վերջինները, սրտնք գառտապարտում են հէնց նրանց, ով իրան հեռու է սպահում անառակ կեանք վարելուց...

«Կին, կին», լսում ես ամեն տեղ, ամեն կողմ, ամեն մի վայրկեան... Կինն է գիմնադիստի ձգտումների և ցանկութիւնների սկիզբը և վերջը, ալֆան և օմեգան... Սակայն ի՞նչ է ներշնչում կինը գիմնադիստին... Միմիայն անասնական կիրք... Կինը զուարճութեան, իքնընամուտացման մի զեզեցիկ միջոց է... Նա է կեանքի

նպատակը... Նրանից է նա ուղում առնել այն, ինչ չէ տալիս ոչ ընտանիքը, ոչ դպրոցը, ոչ շրջանը...

Եւ գիմնազիայի ճնշող մթնոլորտից և կապանքներից ազատուելու օրը այն չափով է թանկ և ցանկալի գիմնազիստի համար, որքան նա հնարաւորութիւն կը տայ նրան աւելի ազատ և համարձակ կերպով որսալ այդ կնոջ...

Այսպիսի պայմաններում ասել, թէ Անդրէեւի գրութեանը վնասակար մի գործ է, և այդ կարծիքը ահագին բանակուսի, վիճաբանութիւնների առարկայ դարձնել, նշանակում է բոլորովին կամ շատ մակերևոյթօրէն գիտենալ, ճանաչել ժամանակակից գիմնազիստին...

Մեզ ոչ թէ պէտք է արգելել այդ պատմութեան ընթացանութիւնը, այլ ցանկալ և ամեն կերպ աշխատել շատացնել այսպիսի գրութեանների թիւը, որոնց մէջ համարձակ կերպով մերկացրուած է գիմնազիստի ներքին կեանքը, ներկայացրուած նրա հոգեբանութիւնը, դուրս բերուած նրա մտաւոր-բարոյական ֆիզիոնոմիան... Միայն այդ դէպքում կարելի կը լինէր շատ և շատ չարիքների առաջն առնել. իսկ կուրծք ծեծելով, աշխատելով գիմնազիստից ծածկել թղթի վրայ գրուած այն, ինչ նրան շատ լաւ յայտնի է կեանքից, և կարծել թէ հէնց դա է իսկական բարոյական դաստիարակութիւնը, — դա նշանակում է իր քթի ծայրից դէնն ուրիշ ոչինչ չը ճանաչել և չը տեսնել...

Իսկ մենք առանց ձեր թոյլտուութեան կը կարգանք «Въ туманѣ»-ի նման գրութեանը և կ'աշխատենք նրանցից ստանալ այն, ինչ դուք, հասակաւորներդ, մեզ պիտի տայիք, բայց կարճամտօրէն չէք ուղում և չէք տալիս...

Փետրուարի 9-ին.

Դպրոցում այսօր գրական-երաժշտական առաւօտ էր:

Երաժշտական մասը աշակերտ-մասնակցողների ապշեցուցիչ տեխնիկայով և համարձակ խաղով, խաղի մեղմութեամբ և անարատութեամբ մեծ զուարճաթիւն պատճառեց ինձ, մի աւելորդ անգամ ապրել տուեց ինձ ոչ-իրական կեանքով:

Սակայն աւելի խորը տպաւորութիւն և յուզմունք պատճառեց ինձ մեր ուսուցչի կարգացած Մարկ-Տվենի մի փոքրիկ պատմուածքը, որը չունենալով մի առանձին գեղարուեստական արժէք, մտքի, դաղափարի կողմից շատ գեղեցիկ է և տպաւորիչ...

Ամերիկայի մի ժամանակ ծաղկող գործարանական քաղաքներից մէկում, որի տխուր հետքերը միայն ասում են անցորդին, որ եռացել է այստեղ մի ժամանակ կեանքը,—ապրում է մենակ մի հարուստ մարդ... 19 տարի է, որ նա այս անապատում մենակ ապրում է... 19 տարի առաջ նա կորցրեց իր կնոջ, որին անսահման խանդավառ սիրով սիրում և պաշտում էր նա... Մի անգամ վերջինս գնաց իր ծնողների մօտ և էլ յետ չեկաւ. անյայտ չարագործները ճանապարհին վերադարձի ժամանակ նրան սպանել էին...

Խեղճ ամուսինը կնոջից նամակ էր ստացել, որով վերջինս հաղորդում էր, որ շաբաթ օրը ելեկոյեան անպատճառ տանը կը լինի... Որպիսի անհամբերութեամբ նա սպասում էր իր սիրեցեալ կնոջ... Եկաւ շաբաթը, եղաւ երեկոյեան ժամի 9-ը, և նա իր հրեշտակին տեսնելու տեղ՝ իմացաւ նրա սպանութեան դաժան լուրը... Այդ լուրը անջնջելի հետք թողեց նրա վրայ... Այդ հետքը նրան հնարաւորութիւն է տուել և տալիս է գեռ հաւատալ, որ ոչինչ սպանութիւն չէ գործուած, որ կինը գեռ կենդանի է և շուտով կը վերա-

դառնայ, և ամեն տարի կնոջ սպանութեան տարեդարձի օրը նա սրտատրոփ սպասում է իր կնոջ գալուստը... Ամբողջ տարին նա միայն այդ յոյսով և հաւատով է ապրում... Հաւատը և յոյսն են միայն խեղճին կեանք ներշնչում, ապրել տալիս... Եւ նա շարունակում է ապրել և հաւատալ: Քանի կայ այդ հաւատը, քանի կայ այդ սէրը, նա կը սպասի և կ'ապրի. մեռաւ այդ հաւատը, մեռած է և նա...

«Հաւատում ես, որ կայ Աստուած», հարցնում է «На днѣ» պիէսում Պեպելը Լուկային: «Եթէ հաւատում ես— կայ, եթէ չես հաւատում— չը կայ... Ի՞նչ քանի որ հաւատում ես, կայ», պատասխանում է Լուկան, կեանքի այդ հմուտ փիլիսոփան:

«...Честь безумцу тому, кто на челове́чество навѣтъ сонъ золотой!»— ահա Լուկայի փիլիսոփայութեան միտքը...

«Ի՞նչ ես ընկել ճշմարտութեան յետևից, գուցէ նա փուշ է քեզ համար», ասում է նա, ուղենալով հասկացրնել՝ թէ ճշմարտութիւնը չի կարող լինել մարդու կեանքի յենակէտը, այլ միմիայն յոյսը և հաւատը կարող են այդ գերը կատարել. սրանք են նրա գոյութեան սիւները... Ճշմարտութիւնը ընդունակ է ոչնչութիւն ստեղծել, իսկ ոչնչութիւնը մարդու համար մահ է...

«Մարդն է միակ ճշմարտութիւնը», ասում է Լուկան. «ամեն բան նրանումն է, ամեն ինչ նրա համար է. ուրեմն ինչո՞ւ յանուն ինչ-որ անյայտ ճշմարտութեան զրկել նրան հաւատից և յոյսից: Ոչ. մարդու համար կարելի է և անհնար է չ'օգտուել և ստով, որովհետև կայ սուտ միսիթարական և կայ սուտ հաշտեցնող. սուտը արգարացնում է այն ծանրութիւնը, որը ճխլել է բանուորի ձեռքը... Ես գիտեմ, ի՞նչ բան է սուտը... Ո՛վ հոգով թոյլ է, ո՞վ ապրում է ուրիշի հիւթերով... նրան սուտը անհրաժեշտ է... Մէկին նա պահում-պաշտպանում է, միւսը նրանով է ծածկւում... Իսկ ո՞վ իր գլխի տէրն է...

ով անկախ է և չի ուտում ուրիշինը... նրա ինչին է պէտք սուտը:

Սուտը սարուկների և տէրերի կրօնն է... Ճշմարտութիւնը ազատ մարդու Աստուածն է...»

Այն, ով հոգով թոյլ է, ով թշուառութիւնից, դժոխային տանջանքներից ջոկ ոչինչ չէ տեսել կեանքում, ով մի կտոր հացի համար «օր ու արև» չի տեսնում, նրան պէտք է սուտը և այն, ինչ ստով և ստի վրայ է հիմնուած, հաւատը և յոյսը—աւելի լաւ վիճակի, երջանիկ օրուայ հաւատը և յոյսը, սա մխիթարական սուտն է, թոյլերի, թշուառների, սարուկների սուտը...

Բայց ահա և հաշտեցնող սուտը, կեանքից սիրուած զաւակների, տէրերի, երջանիկների սուտը... Մուտը նրանց թոյլ է տալիս զանազան շինծու արդարացումներով և պատճառաբանութիւններով քնեցնել իրանց խիղճը միլիոնաւոր մարդկանց դժբաղդութեան վրայ հիմնուած անձնական երջանկութեան վերաբերմամբ. սուտը հաշտեցնում է այդ բազմաւորների բարոյական էութիւնը բանուորի շարքաչ և դժօխային վիճակի հետ...

Երկու դէպքում էլ մարդկանց անհրաժեշտ է սուտը... Չը լինէր այդ սուտը, և մարդը նոյն սոցիալական պայմաններում դժուար թէ կարողանար ապրել... Քանի որ կան ստրուկներ և տէրեր, քանի որ մարդու անհատականութեան, ազատութեան համար տեղ չը կայ երկրի վրայ,—սուտը միշտ կը թագաւորէ...

Եթէ այդ այդպէս է, ինչու զրկել մարդուն այդ ստից և նրանով գոյութիւն սնեցող յոյսից և հաւատից. չէ՞ որ միայն սրանք են նրա համար կեանքը տանելի դարձնում...

Չրկել մարդուն հաւատից և յոյսից՝ նշանակում է դործել գողութիւններից, թալանի տեսակներից ամենամեծը և ամենաանխիղճը... Այն, պէտք է յարդել մարդուն և այն ամենը, ինչ ստեղծել են նրա խելքը, նրա ձեռները... մարդը լաւ բանի համար է ստեղծուած...

Ի՞նչ փոյթ, որ չը կայ յոյսի և հաւատի առարկան,

որ այդ բոլորը սուտ է. դու միայն հաւատան, և քեզ համար գոյութիւն կ'ունենայ այն, ինչին որ դու հաւատում ես. քո ինչ գործն է օբստրիւտ ճշմարտութիւնը... Բաւական է, որ քեզ համար, քո գլխում, քո սրտում գոյութիւն ունենայ քո սեփական ճշմարտութիւնը, քո հաւատի և յոյսի առարկան...

Մարդն է գերագոյն ճշմարտութիւնը...

Փետրուարի 21-ին.

Երևակայութիւն, լիրիզմ, Ֆրագիորութիւն,—այս երեք խօսքերով կարելի է բնորոշել մեր աշակերտական շարագրութիւնները, որոնցից մէկը մենք գրեցինք անցեալ օրը, և որի համար ես լաւ թւանշանն ստացայ... Այն գործը, որ մեզ աւաճարկուած էր ինձ, ծանօթ չէր. ինչ անէի. ստիպուած էի գիմել էլի «մուսայիս», որը այսպիսի կրիտիկական գրութիւնից միշտ կարողանում է փառաւոր կերպով հանել ինձ... Եւ ես զուտ տալի այդ փրկարար «մուսայիս», որը թոյլ է տալիս մեզ դըրել այնպիսի հարցերի մասին, որոնց մասին շատ քիչ բան գիտենք, որոնց գրելու համար ոչ մամեր, այլ օրեր են պէտք... Գրեցէք, գրեցէք, ասում են մեզ... և մենք՝ զլուխներս կախած՝ գրում ենք... Փոյթ չէ՝ թէ փաստերի տեղ կը լինին փքուն ֆրագներ, փոյթ չէ՝ թէ արամաբանական հետևողականութեան տեղ կը լինի մի անհասկանալի խառնաշփոթութիւն... փոյթ չէ՝ թէ շարագրութեան միտքը հասկանալու համար պէտք է իրան շարագրողին գիմել և բացատրութիւններ պահանջել նրանից, երբ շատ անգամ վերջինս ինքն էլ չի հասկանում, ինչ է գրել... Այս բոլորը դատարկ բաներ են. կան գեղեցիկ, նախշուն ֆրագներ. այսքանը արդէն բաւական է...

Փրանգներ, ալֆա և օմեգա կազմող ֆրանգների  
դիւթիչ աշխարհ...

Ապրիլի 17-ին.

Երեկ Գրիգորից նամակ ստացայ. Գրիգորն է գուցե իմ միակ մտերիմ ընկերը, որը հասկանում է ինձ. ես էլ նրան շատ լուս եմ հասկանում—նա ինձանից մե՛նակ է, նա ինձանից որը է: Ես սիրում եմ նրա անկեղծ և ազնիւ բնաւորութիւնը. ես սիրում եմ նրա մըտախոհ և լուրջ դէմքը... նրա նամակները միշտ յուզում են ինձ, միշտ մի առանձին հոգեկան հաճոյք են պատճառում:

Ահա թէ նա ինչ է գրում:

Սիրելի Արմենակ!

Էլի ուշ եմ պատասխանում քո նամակին, էլի նոյն ծուլութիւնը, էլի նոյն ժամանակը, ժամանակը!!!...

Ինչ արած, երևի այդ է անողորմ ճակատագրի կամքը: Ո՞վ կարող է դիմադրել նրան. չէ որ ինքը, Մեծ Զեւէսը, աստուածների և մարդկանց հայրը, պիտի ենթարկուէր այդ անիրաւ և անխիղճ ճակատագրի քմահաճոյքին...

Լուռ էի, այո, բայց չը կարծես թէ քնած էի, հանգիստ էի... Իմ լուռեան ընթացքում ա՛յնքան բան կար յուզելու, տանջելու համար...

Ո՞ւր ես պողպատի պէս ամուր, պղնձի պէս զիլ ծայն ունեցող, նետի պէս անշեղ, ուր ես կրակոտ, շանձաճար զու խօսք, որպէսզի քո ոյժի զօրութեամբ կարողանամ հասկանալի դառնալ ընկերոջս, կարողանամ իմ զղացածի փոնէ մի ստուերը ներկայացնել իմ մտերմին...

«Увы! онъ счастья не ищетъ  
И не отъ счастья бѣжитъ!  
Подъ нимъ струя свѣтлѣй лазури,  
Надъ нимъ лучъ солнца золотой!  
А онъ, мятежный, проситъ бури,  
Какъ-будто въ буряхъ есть покой!»

Արտայայտութեան սրբախի ոյժ, կորով, մտքի եւ զգացմունքի սր-  
պիսի խորութիւն եւ լայնութիւն...

«А онъ, мятежный, просить бури...»—Այո, ես փոթորիկ  
եմ միայն փնտրում, եւ փոթորիկների ու անվերջ կասկածանքների մէջ  
պիտի գտնեմ իմ հանգիստը, իմ երջանկութիւնը...

Կամ Աստուծոն, կամ Մամոնային, ասաց Տոլստոյը...

Ես ընտրեցի առաջինը. սա է ազնիւ եւ վեհ ճանապարհը. բայց  
փոթորիկների, յուզմունքների, կասկածանքների եւ կուռի միջից է զնու-  
այդ կախարհող ճանապարհը...

Ձը կարծես, սիրելիս, որ ես խօսում եմ այն կասկածի մասին, որի  
համաձայն ճշմարտութիւնը գտնել անհնար է, ուստի եւ պէտք է ձեռները  
ծալիլ եւ նստել, ինչպէս ռուսներն են ասում «у порога хижины  
смотреть на багряное море...» Ո՛չ, հազար անգամ ո՛չ. իմ կաս-  
կածը Գեկարտի կասկածն է, կասկած-մետոզը, ճշմարտութիւնը իմանա-  
լու միակ եւ ուղիղ ճանապարհը: Այդ ճանապարհի մասին ես էլ կ'ասեմ  
այն, ինչ ասել է Կանտեմիրը բանաստեղծութեան մասին.

«Всѣхъ непріятнѣй тотъ, что босы проклали  
Девять сестеръ. Многіе на немъ силу потеряли,  
Не дошедъ; нужно на немъ потѣть и томиться!»

«... И дорогой свободной иди, куда влечетъ тебя  
свободный духъ...» եւ այդ ազատ, անյապ դանախների տակառի  
պէս անյատակ, ոգին է, որ ինձ քաշում, հանգիստ չի տալիս...

Երբ պրոֆ. Գրոտի «Նոր փիլիսոփայութեան պատմութեան ամենու-  
նըշմանւոր մոմենտներն» էի կարդում, ամբողջ պիշերներով ես քուն չէի  
կարող լինել... Ճշմարտութիւնը իմանալու հնարաւորութիւնը եւ այն միտ-  
քը, որ նա կարեւոր է մարդու համար, որ անպատճառ պէտք է նրան ծա-  
ռայեմ, մի բոպէ անգամ ինձ հանգիստ չէին տալիս եւ ծայրայեղ ու սար-  
սափելի եզրակացութիւնների հասցնում ինձ...

Ինչպէս մի ոճրագործ բանտի մէջ պապակւում եւ տանջւում է իր  
խղճի անողորմ խայթոցներից, նոյնպէս եւ ինձ իմ երեւակայութեան մէջ  
պատկերացող մեծ փիլիսոփաների դէմքերը յուզում, ծնշում էին կուրծ-  
քըս... Ես օդի պակասութիւնից խեղդւում էի, շարժուել չէի կարող, ասես  
ոտքերս եւ ձեռներս կապուած լինէին... եւ օդ էի ուզում, ազատութիւն  
էի հայցում...

Մինտի «Տրամաբանութիւնը», Բելլինսկին Ի՛նչեր ասացին ինձ...  
Օ, օտձ է... Ես սարսափում եմ, ես ինձ կորցնում եմ...

Անձայր եւ անյատակ ովկիանոսի ալիքների մէջ խեղդուող  
մարդու նման ես խլում ու պինդ բռնում եմ ձեռս ընկած ամեն մի  
տաշեղը... աւա՛ղ. կատարի ալիքների նորանոր հոսանքները վիճխարի

ոյժերով զարկում, ջարդում են ինձ վրայ եւ իրանց փրփրացող փշրանքների մէջ ինձ քաշում աւելի ներս, խորը, անդունդը...

Ո, բաւական է, բաւական է, որքան բեզ յուզեցի իմ ծանձրալի տողերով, իմ լացով ու կոծով...

Այժմ ես մի քիչ հանգիստ եմ, որ դու մասամբ կը բաժանես իմ սիրտը այրող, մի հողին մաշող, կրծող վէրքերը...

, Մի մոռանայ քո որբ ընկերոջ, շուտ-շուտ գրիր...

Քո Գրիգոր:

Մի քանի օր անց՝ ստացայ դարձեալ մի նամակ.

Սիրելի Արմենակ!

Չը նայելով, որ քեզանից նամակիս պատասխանը դեռ չեմ ստացել, քայց զգում եմ մի այնպիսի անյարժելի պահանջ արտայայտելու սիրտս մաշող մտքերը, որ գրիչը ձեռիցս չեմ ուզում վայր դնել, ուզում եմ գրել եւ գրել... Ի՞նչ կարելի է համեմատել այն թեթեւութեան հետ, որ ես ըզրում եմ իմ սրտինը թղթին կամ մտերմիս յանձնելիս...

Այո, ապրել նշանակում է զարդանալ, առաջ գնալ, շարժուել, իր մտածող «եսը» արտայայտել...

Մեր հոգու գործունէութեան գլխաւոր զսպանակն է՝ ձգտում դէպի անվերջը, անսահմանը... Այնտեղ, ուր չը կայ այդ ձգտումը, չը կայ եւ կեանք. իսկ ուր չը կայ կեանք, շարժում, զարդացում, սրտգրեսս,—այնտեղ եւ չը կայ ինքը «մարդը»...

«Երանի այն մարդուն», ասում է Բելինսկին, «որ՝ ոչ իբրեւ անհոգ ու անգործ դիտող նայում է ազմուկով ընթացող կեանքի այս ովկիանոսին. ով տեսնում է նրա մէջ ոչ նաւերի միայն կտորտանքները, կատաղի փրփրացող ալիքները եւ մռայլ՝ կայծակի շանթերով միայն լուսաւորուող դիշերը. ով նրա մէջ տեսնում է ոչ յուսահատութեան միայն ճիչերը եւ կործանման աղաղակները,—այլ ով չի կորցնում այդտեղ իր աչքից ուղեցոյց աստղը, որը կուի եւ ձգտումների նպատակն է ցոյց տալիս. ով չի մրնում խուլ դէպի լոյսի ձայնը. մարտնչիւր եւ մեռիւր, եթէ այդ հարկաւոր է,—երջանկութիւնը քո առաջն է, եւ եթէ ոչ դու, քո եղբայրները կը վայելեն նրան եւ կը փառաբանեն Աստծուն, նրա ճշմարտութեան ոյժը»:

«Երանի նրան, ով՝ չը բաւականանալով ներկայ իրականութեամբ, իր սրտում աւելի լաւ կացութեան իդէալն է պահում, ապրում եւ շնչում է մի մտքով՝ նպաստել իդէալի իրականացման երկրի վրայ՝ բնութեան տուած ոյժերի համեմատ. իմ վաղ առաւօտ եւ՝ սրով, եւ՝ խօսքով, եւ՝ բա-

հով, եւ՝ աւելով—նայելով, որն է նրա ոյժերին համապատասխանում, զուրս է գալիս ընդհանուր աշխատանքի համար. ո՞վ գալիս է իր եղբայրների մօտ ոչ ուրախութեան միայն խնջոյքին, այլ եւ լաց ու կոծին ներկայ լինելու»...

«Երանի նրան, ով՝ երջանկութեան ջերմ ծարաւով տարուած՝ ընկնում է «կատարելագործման» սուրբ գործի կուռ ժամանակ ոյժի հանգրտացնող գիրկը, այն ոյժի, որը նրան կանչել էր դէպի կեանքի գործը, եւ սրբազան հիացմունքի մէջ բացագանչում է. «Ամեն բան—քեզ եւ քեզ համար, իսկ իմ ամենամեծ վարձը—սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո!»

Այս մի քանի տողերում բանաստեղծը կարողացել է արտայայտել այնքան, որքան մի ուրիշը հազիւհազ զուցէ կարողանար արտայայտել հարիւրաւոր երեսների վրայ. այս տողերում բանաստեղծը իր վրչի ամենակարող զօրութեամբ ընդգծել է մարդու կեանքի եւ գործունէութեան ամբողջ ծրագիրը...

Առանց աւելորդ խօսքերի, առանց նախշուն բառերի կրկնենք եւ մենք. «Ամեն բան—քեզ, ճշմարտութիւն. իսկ մեր ամենամեծ վարձը—սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո!»

«Ուրեմն հոգ չը տանէք,» ասաց մարդկութեան Մեծ Ուսուցիչը, «եւ չ'ասէք՝ ինչ ուտենք, կամ ինչ խմենք, ինչ հագնենք. որովհետեւ այդ բոլորը փնտրում են եւ հեծանոսները, եւ որովհետեւ ձեր երկնային հայրը զիտէ, որ զուք կարօտ էք այդ բոլորին: Փնտրեցէք ամենից առաջ Աստուծու արքայութիւնը եւ նրա ճշմարտութիւնը, իսկ մնացած բոլորը կը լինի ինքնըստինքեան»:

Ահա ամենամեծ Մարդու աստուածային խօսքերը! Ահա կեանքի ճշմարիտ իմաստը, ահա մարդու կեանքի նպատակը!

Ճշմարտութիւնը, միմիայն ճշմարտութիւնը մեզ պիտի քաշէ առաջ՝ կեանքի փոթորկայոյզ ովկիանոսի մէջ փայլող ուղեցոյց աստղի նման...

Անհամբեր նամակիդ սպասող՝

Քո՝ հոգով մօտ, բայց տարածութեամբ հեռու ընկեր՝ Գրիգոր.

Յ. Գ. Գիմնագիական պարապմունքներիս մասին ոչինչ չեմ գրում, որովհետեւ դպրոցական տարիներս, ժամերս մասին մտածելը միշտ իմ արիւնն է պղտորում. ամբողջ տասը տարի գիմնագիան ծծել է իմ ամենալու հիւթերը, ամբողջ տասը տարի նրա ընթիմը դամոկլեան սրի պէս կանգնած է եղել իմ դիտի վրայ եւ չէ թողել ինձ մի ազատ քայլ անել...

Նոյնը.

Այդ նամակներին ես պատասխանեցի հետեւեալ գրութեամբ.

## Սիրելի Գրիգոր!

Ներիր ինձ, որ քիչ ուշացրի նամակս: Քո վերջին երկու նամակներն էլ իր ժամանակին ստացայ: Քեզ հեռաքրքրող և յուզող հարցերը նոյնքան ուշադրաւ և սիրելի են ինձ համար:

Նամակներիդ մէջ դու այնքան բան ես ասել, որ ինձ մնում է միայն իմ ուշադրութիւնը դարձնել մի կարևոր հարցի վրայ միայն, որը դու անորոշ ես թողել և համարեա մոռացութեան տուել... Ահա հէնց այդ հարցն է, որ իմ աչքում ահագին կարևորութիւն ունի, և որը ես կ'աշխատեմ նամակիս մէջ պարզել...

Քո վերջին նամակների հիմնական, զեկավարող միտքն է ճշմարտութեանն ծառայելը. իսկ ճշմարտութիւնը, ասում ես դու, բոլորիս համար մէկ է, ուստի և նա, ո՞վ ճշմարտութեան է ծառայում, կոսմոպոլիտ է:

Աւելորդ կը լինէր վիճել այն բանի դէմ, որ օբյեկտ ճշմարտութիւնն է մարդու միակ փրկութիւնը, և ճշմարտութիւնը պէտք է լինի մեր ուղեցոյց աստղը... Չը մտանանք միայն մի բան, որ մարդն է միակ ճշմարտութիւնը, գերագոյն ճշմարտութիւնը, և նրա բարօրութիւնն է մեր ամենաառաջի և ամենավերջի գործը և նպատակը...

Բայց եթէ մենք կանգ առնենք այս գեղեցիկ խօսքերի վրայ, եթէ բաւականանանք լսկ այս չքնաղ ձգտումներով և մեզ երբէք հարց չը տանք՝ թէ ինչպէս, ինչ ճանապարհով, ինչ միջոցներով մենք կարող ենք ծառայել այդ գերագոյն նպատակին, մարդ-ճշմարտութեանը, — մենք դժուար թէ մի մազաչափ անգամ ծառայած լինենք երբևիցէ այդ վեհ գաղափարին...

Մենք պէտք է մտածենք, արդեօք ամեն մի անհատ, ամեն մի ազգ հնարաւութիւն ունի՞ գնալու մի ընդհանուր ճանապարհով այդ իդէալին հասնելու համար:

Թողնենք անհատին մի կողմ, խօսենք աւելի խոշոր միաւորի, ազգի մասին:

Իւրաքանչիւր ազգ պէսպէս պատմական, տեղագրական, ցեղական տարբեր հանդամանքների շնորհիւ դրուած է առանձին և տարբեր պայմանների և դրութեան մէջ:

Աւելորդ է ասել, որ բոլոր ազգերն էլ, ինչպէս և անհատները, զգում են մեծ կամ փոքր չափով ճշմարտութեան ծարաւը, և ճշմարտութիւնը բոլորի համար էլ նոյնն է, ինչ որ «մայրը իր զաւակի համար», ինչպէս ասում է Գորկիյի Լուկան: Բայց բանը հէնց նրանումն է, որ այդ ընդհանուր ծարաւը յագեցնելու համար ամեն մի ազգ ունի իր պատմական միջոցները, որոնց թւումն է և ազգի լեզուն:

Շատ էլ հեռու չեմ լինի ճշմարտութիւնից, եթէ ասեմ, որ ազգի լեզուն ամենակարևոր միջոցն է «կատարելագործման» իդէալին հասնելու սուրբ գործում: Լեզուի մէջ է դրուած նրա ամբողջ հոգեբանութիւնը, նրա մէջ են ամփոփուած նրա կուլտուրական՝ կամ աւելի ճիշտը՝ հոգեկան կեանքի բոլոր երևոյթները, նրա յուժորը, նրա ուրախութիւնը և թախիծը, մի խօսքով՝ դարերով մշակուող ժողովրդի մտքի բոլոր արտայայտութիւնները: Լեզուն է մեր միակ դանձը, կենդանի գանձը, որից մենք շատ բան ունենք սպասելու և ստանալու. նա է մեր աչքի լոյսը, և նրա համար մենք ոչինչ չը պիտի խնայենք, որովհետեւ եթէ կայ մի միջոց՝ դարերով ճնշուած, խոր խաւարի մէջ խարխափող մի ազգ կուլտուրայի բարիքներին մասնակից անելու—դա մեր լեզուն է, և նրանից դուրս մեզ համար չը կայ փրկուութիւն:

Ահա ինչու մենք պիտի սիրենք, անչափ սիրենք մեր մայրենի լեզուն... Ախ, եթէ գիտենայիր ռոքան է սիրաս ցաւում, երբ տեսնում եմ շուրջս հայ երիտասարդներ, կրթուած երիտասարդներ, որոնք բողբոլին զուրկ են մայրենի լեզուի փայփայանքներից, նրա հաշտեցնող, մխիթարող և բուժիչ զօրութիւնից և հմայ-

քից, որոնց մասին էր գրում Տուրգենևը իր հրաշարի խօսքերը.

«Պատկածանքների, ծանր մտածմունքների օրերին իմ հայրենիքի վիճակի մասին—գուեա իմ միակ նեցուկը և ապաւէնը, ո՛վ դու մեծ, ճշմարիտ և ազատ ուսու լեզու! Չը լինէիր դու, ինչպէս չը յուսահատուէիր, տեսնելով այն բոլորը, ինչ որ կատարուում է մեր տանը»...

Ապրելով հայրենքից հեռու, օտարութեան մէջ, Տուրգենևը, այս՝ հոգով և արիւնով անարատ եւրոպացին, իր միակ միտքարութիւնը և յոյսը դտնում է իր մայրենի լեզուի մէջ, որի ամեն մի քաղցր հնչիւնը, ամեն մի գիւթիչ խօսքը յիշեցնում են նրան և պատկերացնում նրա առաջ մայրենի ազգը՝ իր սչուրախ անցելով և մեծ ապագայով...

Մեղանում, հայ գիմնադիտաներիս շրջանում, այնքան է արմատացել արհամարհական՝ կամ ամենաքիչը անտարբեր վերաբերմունքը գէպի մայրենի լեզուն, որ ո՛վ մեծամասնութեան արամադրութեան հակառակ՝ աշխատում է սովորել և գիտենալ նրան այնպէս, ինչպէս պէտք է, ո՛վ մայրենի լեզուին նայում է այլ կերպ և նրա դասն է պաշտպանում ընկերների շրջանում, հռչակում է գիմնադիտաների մօտ իբրև մի «թիւ պատրիստ»... Բայց, ասա խնդրեմ, մի՞թէ չի կարելի գիտենալ իր լեզուն, հետաքրքրուել մայրենի գրականութեամբ և լինել կոսմոպոլիտ այն մտքով, ինչպէս դուես հասկանում այդ խօսքը...

Եթէ մենք հետևողական լինենք և արամաբանօրէն գտանք, անշուշտ Սոկրատէսին էլ, Քրիստոսին էլ թիւ ազգասէրների շարքը պիտի գտանք, որովհետև որանք մայրենի լեզուով են քարոզել...

Այո, կոսմոպոլիտիզմը չի կարող և չի բացատրում մայրենի լեզուն և նրա կուլտուրական դերը...

Ես համոզուած եմ, որ դու նոյնքան սիրում ես մեր լեզուն, որքան և ես. համոզուած եմ, որ համաձայն ես ինձ հետ այն խօսքերի և մտքերի նկատմամբ, որ ես յայտնեցի մայրենի լեզուի մասին...

Ես համոզուած եմ նոյնպէս, որ միմիայն անխիղճ, անսիրտ մարդիկ են, որ իրանց հոգու ամբողջ դատարկութիւնը և փոքրութիւնը ծածկելով «կոսմոպոլիտիզմի» վեհ անուան տակ և նրան մի տեսակ ցուցանակ կամ վահան շինելով, շատ և շատ տխմարներ, դիւրահաւատներ, միամիտ գլուխները մնորեցնում են՝ իրանց անձնական շահերը աւելի ճարպիկ կերպով պաշտպանելու համար... և միմիայն այդպիսի՝ ոչ մի սրբութիւն չը ճանաչող մարդիկ են, որ հրաժարուում են իրանց լեզուից, այդ կարևորագոյն գործօնից՝ մարդկային մտքի արտայայտութեան և փոխանակութեան համար...

Եթէ ինձ այս իմ համոզմունքի համար կ'անուանեն թթու ազգասէր, կամ լոկ ազգասէր, կամ կոսմոպոլիտ, գիտցիր, որ այդ ինձ համար սչինչ նշանակութիւն չ'ունի. չէ՞ որ բառի, խօսքի մէջը չէ, սիրելիս, իսկութիւնը, գործը, այլ նրանում՝ թէ ինչ է հասկանում մարդ այդ բառի շրջանակի մէջ...

Բայց թողնենք!

Քննութիւնները արդէն մեր քթի տակ են. շուտով կը վերջացնենք մեր բոլոր հաշիւները գիմնադիայի հետ: Առջևում մեզ սպասում է օւստանողական կեանքը՝ իր փոթորիկներով, իր անհոգ և հոգսերով լի կողմերով...

Այո, թողնում ենք գիմնադիան... մենք գիտենք ինչ ենք թողնում մեր յետևում; բայց չը գիտենք ինչ է սըպասում մեզ այն մ'ութ հեռուում, որ անվերջ յոյսերի, դեղեցիկ յոյսերի հետ և՛ երկիւղ է ներշնչում ինձ...

Ո՛րքան բան կայ գրելու, արտայայտելու, բայց նամակի միջոցով մի՞թէ հնարաւոր է բաւարարութիւն տալ մեր պահանջներին, մի՞թէ ամեն բան կարելի է հաւատալ նամակին... Աստուած տայ, ամառս կը տեսնուենք

միմեանց հետ, այն ժամանակ մեր էլ ինչին է պէտք նամակը...

Քո ընկեր Արմենակ.

—  
Ապրիլի 28-ին.

Վերջնական քննութիւններին եմ պատրաստուում:  
Երբէք գուցէ այնքան և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան ոյժ չեմ զգացել իմ մէջ, որքան այժմ... Թւում է՝ թէ քննութիւններին տեղ անառիկ բերդեր լինէին իմ առաջ, ես կը տիրէի նրանց, սարեր լինէին իմ առաջ, ես կը գլորէի նրանց...

Ազատութեանս հեռանկարը յազթում է բոլոր խոչընդոտները...

Բացօդեայ պարապմունքներս, թարմ օդը աւելի ևս ուժեղացնում են իմ եռանդը և կազդուրում ձմեռուայ՝ սենեակի փակ կեանքից և գիմնազիական թանձր մթնոլորտից թուլացած ներվերս...

—  
Մայիսի 20-ին.

Քննութիւններին մեծ մասը անցաւ. մնացին մի երկու թեթև առարկաներ:

Պատրաստում եմ ամբողջ դասագրքեր, շատ անգամ նոյնիսկ աւել, քան պէտք է, և նրա համար միայն, որ մի երկու տող թարգմանեմ... Ես լրջօրէն եմ վերաբերում քննութիւններին, իսկ դուրս է գալիս, որ նըրանք միայն հանաք, ձևականութիւն են...

Ուրեմն արժէ՞ խօսել նրանց մասին. ինչ արած, մենք էլ նրանց հետ Յամուսովի պէս կը վարուենք.  
„Подписано, такъ и съ плечъ долой!..“

Մայիսի 27-ին.

Ազատ եմ արդէն, սակայն դեռ չեմ կարողացել ընտելանալ այդ մտքերի հետ: Տէր Աստուած, սրբախի անհամբերութեամբ էի սպասում այն օրին, երբ հնարաւորութիւն կ'ունենամ բոլորովին հաշիւներս մաքրել դիմնազիայի հետ: Եկաւ այդ օրը. նոր, ազատ քաղաքացու զգեստով ես դուրս եկայ փողոց, նոր միայն ըզդացի, որ մի ինչ-որ՝ շատ սիրելի և սրտիս նուիրական բան աշակերտական զգեստիս հետ կորաւ ինձ համար յաւիտեան...

ՊԱՆԴՈՒԽՏ

---

## Ո՛՛՛, ԼՆՒ Է ԿՈՐՉԻԼ...

(ՊԼԵՂԷՆԻԻԳ)

Ո՛՛՛, լճւ է կորչել, չքանալ անհետ,  
Քան սիրել խաւար, հաշտուել չարի հետ,  
Քան եղբօր անկման չարախինդ վրկայ՝  
Նայել անհաղորդ, նայել անըզգայ:

Ո՛՛՛, լճւ է, որ մարդ իւր հետ անբաժան  
Վաղաժամ տանէ մըթին գերեզման  
Ե՛ւ սըրտի բորբոք, և՛ հոգու յոյզեր,  
Ե՛ւ լճյս-անուրջներ, ոսկի՛ երազներ,

Քան փոխէ զուարճ քընի հետ անյագ  
Ե՛ւ ազնիւ կըռիւ, և՛ ազնիւ վաստակ  
Եւ ողջ էութեամբ թաղուի աննըճմար  
Փահահատ տըլմում ու ցեխում իսպառ...

Ա.Լ. ԾՍՏՈՒՐԵՆՆ

\* \* \*

Օտար, ամայի՛ ճամբէքի վերայ  
Իմ քարաւանս մեղմ կը ղօզանջէ.—  
Կանգնիր, քարաւանս, ինձի կը թւայ,  
Թէ հայրենիքէս ինձ մարդ կը կանչէ:

Բայց լճու է շուրջս, ու շշուկ չը կայ  
Սյս անապատում, ծով-անապատում.  
Ա՛խ, հայրենիքս ինձ խորթ է հիմա,  
Ու քնքուշ սէրս ուրիշի գրկում:

Կնոջ համբոյրին էլ չեմ հաւատում.  
Շուտ է մոռանում նա վառ արցունքներ.  
Շարժուիր, քարաւանս, ինձ ո՞վ է կանչում.—  
Գիտցիր, լուսնի տակ չը կայ ուխտ ու սէր...

Գնա՛, քարաւանս, ինձ հեռդ քաշ տար  
Օտար, ամայի՛ ճամբէքի վերայ,  
Ուրաւեղ կը յօգնիս, գլուխս դիր վար,—  
Ժեռ քարերի մէջ, փշերի վերայ...

Ա.Ի. ԻՍՍ.ՀԱԿԵԱՆ

## ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Շահ-Աբաս-մեծը, իր տարագրած հայ-ժողովրդի սիրտը Պարսկաստանի հետ կապելու և նրանով իր ազգը լուսաւորելու նպատակով, ինչպէս յայտնի է, շնորհեց նրան զանազան արտօնութիւններ, որոնց մէջ առաջին տեղն է գրաւում կրօնական ազատութիւնը:

Երբոր հայերը հասան Սպահան և հիմնեցին Նոր-Ջուղան (1606 թ.), Մեծ-Մէլլդանի թաղում շինեցին մի շատ անարճոյճ և անշուք վանք՝ տալով նրան Հին-Ջուղայում ունեցած «Ամենափրկիչ» վանքի անունը: Յետոյ 1654 թ.ա.հանին, քանդելով նախկին կառուցածը, հասարակութեան հանդանակութեամբ և Դաւիթ առաջնորդի հսկողութեամբ ինն տարուայ ընթացքում վերջացաւ այժմեան փառաւոր վանքը, որի բակում գնտուղ հոյակապ զանդակատունը կառուցուել է 1702 թ. Յովհաննջան Ջամալեանցի ծախքով: Վանքն ունի եօթն զանազան երեսներ կամ բակեր \*):

Եկեղեցին, որ կառուցուած է առաջնորդարանի և զանգակատան երեսների մէջ տեղում, կրում է Յովսէփ Արեմաթացու անունը (նրա մասունքը ունենալու պատճառով), և որի տօնի օրն էլ կատարում է վանքի տօնախմբութիւնը: Եկեղեցու բոլոր պատերը ներսի կողմից, բարձրաբերձ կաթուղիէից մինչև երկու արշին մնացած յատակին, զարդարուած է հին և նոր կտակարաններից և ազգային-եկեղեցական պատմութիւնից

\*) Հին յիշատակարաններում վանքիս տրուած է «սարսափելի» անվանը:

նիւթ վերցրած իւզաներկ պատկերներով և ոսկեզօծ, ծաղկանկարներով: Իսկ ամբողջ եկեղեցու շուրջը, ուղիղ յատակից մինչև նկարների մօտը, զարդարուած է ամենաընաթիւր զարդանկարուած յախճապակիով: Պատմութիւնը այս եկեղեցու զեղեցիկ նկարների դործը տալիս է «տիեզերալոյս» Յովհաննէս անունով մի անղացի վարդապետի, սակայն բոլոր նկարների շքեղութիւնը ընդհանրապէս, իսկ ոմանց նրբութիւնը մասնաւորապէս վկայում են, որ աւելի խտարացի հմուտ նկարչի դործ է (որը չի մոռացել բեմի առաստաղին նկարուած 12 առաքեալներին մէջ՝ արքայութեան բանալիները դնել Պետրոսի ձեռքը), քան մի հայ վարդապետի: Նկարների մէջ նրբութեան կողմից անսօջին սեղն են բռնում խաչելութեան և խաչից իջնելու նկարները, իսկ շքեղութեան կողմից ամբողջ հիւսիսային պատը բանոց՝ դասաստանի նկարը:

Այս եկեղեցին միւս եկեղեցիների նման կանանց և տղամարդկանց առանձին բաժանմունքներ չ'ունի, որովհետև կառուցման ժամանակից մինչև մի քանի տարի արանից առաջ ժողովրդական եկեղեցի չէր և հետեապէս կանանց մուտքը խտաւարդելուած էր այստեղ: Եկեղեցու երկայնութիւնը մինչ ընդարձակ բեմը մօտ 53 սանաչափ է, իսկ լայնութիւնը 41 սանաչափ: Գմբէթը բարձրադիր է, և վրան ինչպէս և բոլոր միւս եկեղեցիների գմբէթների վրայ հանդուում է փայլուն և յաղթական խաչ:

Սոյն Ամենափրկչեան վանքը միևնոյն ժամանակ Պարսկաստանի և Հնդկաստանի ընդարձակ թեմի արքեպիսկոպոսոսնիստ առաջնորդարանն է, որի հոգևոր իշխանութեան ներքոյ են գտնուում Անդալիսից մինչև Բուչիրը, ամբողջ Հնդկաստանը, Բիրմանաստանը և Ճաւայի կղզիները:

Ունի իր առաջնորդական խորհրդարանը, ուր վճուում են Նոր-Ջուղայում տեղի ունեցած բոլոր վէճերը և դատերը տոանց կառավարական Բ. Դրան գիմելու, նոյնպէս բոլոր թեմի հոգևոր գործերը: Խորհրդարանի նախադահն է թեմակալ առաջնորդը, իսկ անդամներն են վանքի միաբանները և մի քանի քահանաներ:

Ամենափրկչեան վանքի առաջնորդը իր ընդարձակ թեմի ժողովրդի ոչ միայն հոգևոր տէրն և իշխանն է ճանաչուած կառավարութեան մօտ, այլև մարմնաւոր պետը, ներկայացուցիչը և դատաւորը: Թեմակալ առաջնորդը Ս. Էջմիածնից իր աթոռը

հասնելիս, թէ Թէհրանում և թէ այստեղ Սպահանում, կառավարութիւնից արոււմ է նրան ֆարմաններ՝ վերոյիշեալ արտօնութիւնների և իրաւունքների համար:

Ամենաիրկիչ վանքի առաջին առաջնորդն էր Սերովը 1605—1613. նրանից յետոյ Սաչատուր Ա. Կեսարացին, որ տեղական ոյժերով սպարան հաստատեց—1620—1646. ապա Դաւիթ Ա. Ջուղայեցի, որ սկիզբն դրեց վանքի երկրորդ շինութեան 1652—1683. Ստեփաննոս Ջուղայեցի, որ 1688-ին լուսաւորչական և պապական հայերի միջև ծագած խռովութիւնների ժամանակ մեծ դեր խաղաց և սպազրեց «Հակաճառութեան» գիրքը: 1697-ին էջմիածնից հրաւիրուեց դահնկեց Նահապետի տեղ կաթողիկոսանալու, բայց Նահապետի կուսակիցների շարախօսութեամբը մատնուեց Երևանի խանի ձեռքը, և 1000 թուման տուգանքի ենթարկուելով՝ դրուեց բանա, ուր և մեռաւ 1698-ին: Սրա յաջորդը՝ Աղէքսանդր Ջուղայեցի, որ 1706-ին ամբողջ ազգի ընտրութեամբ և արքունական հրովարտակով գնաց էջմիածին և կաթողիկոս կարգուեց մինչև մահը: 1706—1725 Մովսէս Ա. Ջուղայեցի, որի ժամանակ տեղի ունեցաւ ավզանների յարձակումն Սպահանի վրայ և Նոր-Ջուղան անտանկի ցաւերի ենթարկուեց:

Յաջորդ առաջնորդներից նշանաւոր են. Յարութիւն 1801—1810, որ Գէորդ կաթողիկոսի հետ միասին աշխատեցին ազատել վանքը իր 4000 թուման պարտքից և յաջողեցան էլ Հնդկաստան և Թուսաստան ուղարկած նուիրակների հանգանակութեամբ:

Յովհաննէս Բ. 1832—1736, էջմիածնի միաբան, որի ժամանակ սով ընկնելով, կարողացաւ փրկել ժողովուրդը սովից և ազատել Նոր-Ջուղան մաթալի-չահի մահուան պատճառով ծագած խռովութիւնից և աւարառութիւնից:

Յովհաննէս Սուրենեան 1842—1848 ղրբմցի. սա գնեց վանքի համար «Սիւննեանց» տունը, որը վանքի այժմեան արդիւնաբեր կալուածների առաջինն է:

Թադէոս Բէգնապարեան երևանցի 1851—1863, որ ուղարկուեց Ներսէս աշտարակցու ընտրութեամբ, և որի սիրելին ու հաւատարիմն էր: Սրա խոհեմ և աշխուրջ կառավարութեան շնորհիւ թէ վանքը, թէ եկեղեցիները և թէ դաւառները ձեռք բերին մի շարք յետ խլուած և բռնարարուած արտօնու-

թիւներ ու իրաւունքներ, որոնք պատկանելի դարձրին առաջնորդին: \*)

Մովսէս դանձակեցի 1874—1871, որի ժամանակ կառուցուեց Ամենափրկ. վանքի առաջնորդարանը:

Գրիգորիս Յովհաննիսեան 1872—1888, ֆիլիպպուպուսեցի, Պոլսի «Ազգ. Կենտրոնական Վարչութեան» կրօնական ժողովի այժմեան ատենագետը, որի ժամանակ կառուցուեց սղայոյ «Կենտրոնական դպրոցը»:

Մաղաքիա Տէրունեան 1898—1900, որի ժամանակ կառուցուեց «ս. Կատարինեան» օրիորդաց դպրոցը:

Ամենափրկ. վանքի արդիւնքը գոյացուում է հետեւեալ ազբերներէրից—Դրամագլխի տոկոս, վիճակաւոր քահանաների տարեկան տուրք, կալուածներէ վարձ, Թաղաւորական պարգև, դաւաններից և քաղաքներից ստացած նուէրներ, ժողովուրդի տարեկան տուրք, ձեռնադրութեան և ամուսնութեան համար վճարելիք նուէր, և այլ մանր-մունր հասոյթներ:

Վանքի անշարժ կալուածքներն են. 30 կրպակներ և խանութներ, 1 տօնավաճառի հրապարակ, 1 անտառ, 6 տներ և 20 այգիներ: Բոլոր կալուածքները չափուում են 180 քառակուսի շրիք:

Թեմակալ առաջնորդը ստանում է 500 պարսից դստն (85 բուրլի) ամսական ոտճիկ և բոլոր ծախքերը:

Ամենափրկչեան վանքը իր հիմնարկութեան օրից ի վեր՝ ունեցել է հարուստ մատենադարան, լիքը հայրենիքից իրանց հետ բերած թանկագին գրչադրերով: Նոր-Ջուղան երբևէն ներկայացնում էր մի մտաւոր կենտրոն... վանքը այն ժամանակներում կարող էր Հայաստանի ամենահարուստ գրադարանը համարուել: Սակայն 1750—1790-ական թուականներին, Պարսկաստանում տիրող հարստահարութիւնների ու բռնութիւնների ժամանակ, երբ ամեն մէկը հազիւ հազ իր գլուխը պահելու հոգսըն էր քաշում, հին ձեռագիր գրքերից շատ շատերը կամ անդամնալի կերպով անհետացան մէջ անդից և կամ չնչին դներով վաճառուեցին պարսիկ ղեղավաճառներին և վառօղազործներին:

\*) Ունի առանձին կենսագրութիւն. դիմն է 30 կող.

Այժմեան մնացած ձեռագրերի թիւը հասնում է 350-ի: Հին մագաղաթեայ գրչագրերից ոմանք վանքի միաբանների տղիտուլեան շնորհիւ զրկուել են իրանց ոսկեղծ և իւզաների ընտիր պատկերներից, ճակատադարձերից և լուսանցադարձերից, զո՞ դառնալով խաչագործների շահամուլթեան:

Այս մատենագարանում, բացի գրչագրերից, կան և բաւական քանակութեամբ ապագիր գրքեր հին գրականութիւնից: Վերջերս հոգևոր իշխանութիւնը ուշագրութիւն է գարձրել և և կարելի եղածին չափով աշխատում է ճոխացնել նոր գրականութեամբ ևս:

Նոր-Ջուղայի, ինչպէս և բոլոր հայաբնակ գիւղերի և քաղաքների եկեղեցիներում, առանց բացառութեան, կան շատ կամ քիչ թւով գրչագիրներ, որոնցից շատերը մագաղաթեայ են: Բացի սրանցից, զանազան անհասանքի աներում էլ գտնուում են այդ գրչագիրներից, որոնցից ոմանք գրուած են հէնց տեղն ու տեղը Նոր-Ջուղայում և ճի դառն ժամանակի: Յանկալի էր, որ հոգևոր իշխանութեան ձեռքով այս բոլորը հաւաքուէին Ամենափրկչեան վանքի մատենագարանը, և կազմուէր մի պատկառելի և վանքին պատւարեր մատենագարան: Այդ գէպքում, ամենայն հաւանականութեամբ, Ամենափրկչեան մատենագարանը կ'ունենայ աւելի քան 1000 օրինակ զանազան զըրչագրեր \*):

Նոր-Ջուղայում ստարանական դործի սխուածքը հրաչքի պէս մի բան է լինում: Վանքիս առաջնորդ Սաշատուր կեսաբացին իր միաբան ընկերներով մամուլ է շինում, տառեր է ձուլում, թուղթ է պատրաստում և այսպէս կարգի բերելով մի տպարան, 1640 թ.ին սպայրում է «Վարք հարսնց» անունով գիրքը: Պարզ է, որ առանց մասնագէտ վարուեալի, այլ հէնց այնպէս՝ ինքնահնար միջոցներով զլուսի բերուած առաջին սպայրութիւնը պէտք է ունենար մի խումբ խոշոր թերութիւններ և ունեցաւ էլ. սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ բոլորը ամեն նպատաւոր միջոցներից զուրկ և մահմէդական յետ ընկած մի քաղաքում ճղնող մի խումբ հայ կրօնաւորների արգիւնք է, մարդ սուղում, հիանում է:

Սաշատուր կեսաբացին 1639 թ.ին Եւրոպա է ուղար-

\*) Իալուտ Ջերմագանեանը 1853 թ.ին գնել է Նոր-Ջուղայից 120 հատոր ձեռագիր աւետարան և հետը տարել Գովկաս:

կում իր աշակերտներից մէկին՝ Յովհաննէս վարդապետին, որ պէսզի տպագրութեան արհեստը սովորելով՝ վերադառնայ իր սկսածը կատարելադործելու:

Յովհաննէս վարդապետը մի ամբողջ տարի թափառելով, վերջը կանգ առաւ Իսաւրիայում, չրջեց Վենետիկ ու Հոմ, Լիվորնօ և Ամատերդամ և մի շարք խոչընդոտների զիմադրելուց յետոյ վերջապէս յաջողեցաւ բերել Նոր-Ջուղա մի տպարան իր յարմար տաներով: 1647 թ.ին նա հրատարակեց «Պարզատունար» անունով գիրքը, և մտադրութիւն ունէր զործը շարունակելու, երբ ինչ-ինչ պատճառներով սախլուած եղաւ գընալ Էջմիածին: Յովհաննէս վարդապետի հետանալով՝ տպարանըն էլ փակման գատապարտուեց:

1688 թ.ին Ստեփաննոս Եպիսկոպոսի Հնորհու կրկին բացուեց այս տպարանը և տպագրուեց նոյնի հեղինակած «Գիրք հակաճառական ընդդէմ պապականաց»: Յետոյ մի միջոյ էլ այսպէս քարշ գալով՝ նորից փակուեց:

1844-ին բառաւիարնակ նոր-ջուղայեցի Մանուկ Յորդանանեանը ուղարկեց Ամենափրկիչ վանքի համար մի տպագրական մամուլ իր բոլոր պարագաներով: Այս հին սխտեմի մամուլը կարգի բերող Հունենալուն պատճառով մինչև 1872 թ.ականը մնում է անգործածական, բայց յետոյ գոծածութեան մէջ մտնելով՝ անընդհատ աշխատում է մինչև ներկայ ժամանակըս:

Այս տպարանը, որ միևնոյն ժամանակ վանքի պաշտօնական մամուլն է, հաստատութեան օրից մինչև այժմս, բացի պաշտօնական գործերից և բրոշիւրներից, տպագրել է և 44 գիրք, որոնց մի մասն կրօնական բովանդակութիւն ունի, միւս մասն էլ զգրոցական դասալրքեր են:

1892 թ.ին, վանքիս առաջնորդ՝ Նսայի արք-Եպիսկոպոս Աստուածարեանը Թիֆլիսից բերել տուեց նորածոյլ յարմարաւոր տաներ և հին մաշուածների տեղը մտցրեց ի գործադրութեան Հին տաներով տպագրածների գլուխ գործոցն է երկհատոր «Պատմ. Նոր-Ջուղայու»-ն, աշխատ. Յար. Տէր-Յովհաննեանցի, իսկ նոր տաներով տպագրածների մէջ՝ «Աւագ-շաբաթ»-ը:

## ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքիայի քաղաքակրթական անընդունակութիւնը:—Եւրոպաձև գալրոցներու բացումը և գրագիտութեան տարածումը:—Գրականութեան ծնունդը:—Փրանսական ազդեցութիւնը գալրոցներու և գրականութեան վրայ:—Գրական յետամնացութեան պատճառները:—Լրագրութիւնը սկիզբ գրականութեան:—Թուրք գրագէտին մէջ տղգայնական գրողի բացակայութիւնը:—Գրականութեան մէջ մըշակուած սեռը:—Գրական նոր շարժումը:—Ձիա բէյ:—«Մապոյտ և սև» վէպը:

Թուրքիան ապրելով Եւրոպայի քթին սակ, հակառակ արևմտեան քաղաքակրթութեան հետ ունեցած իր դարուօր շփումին՝ չէ կրցած մարել արիւնի և աւերումի իր պապակը, մինչև այսօր տակաւին չէ յաջողած խնդդել իր ցեղական բնազդները և կերպով մը յարմարուիլ քաղաքակրթութեան տարրական սահանջներուն:

Ինչո՞վ պէ՛տք է բացատրել այդ երկոյթը: Անշուշտ իր աշխարհակալական ձեռնարկները, կոխենքու, յազթութեանց, ինչպէս և պարտութեանց անհանգիստ ու տենդոտ կեանքը՝ իրեն թոյլ չեն տուած նուիրուելու մտաւոր, իմացական գործունէութեանց, բայց այդ փաստը անգոր է արդարացնելու թուրք ցեղի մտածման ու գրականութեան աչք ծակող ոչնչութիւնը: Շատ ժողովուրդներ կզեր են աշխարհակալ, ինչպէս հռոմայեցիները, մինչև իսկ արաբները, բայց այդ երկու ժողովուրդներն ալ իբեանց անընդհատ բաշխումներուն մէջ ժամանակ ու առիթ ունեցեր են, կա՞՞մ աւելի ճիշդ, գտեր են, ստեղծելու զգրականութիւն, զեղարուեստ:

Այդ աշխարհակալ ազգերը՝ իրենց բոլոր սաք կոխած երկիրներէն, իրենց բոլոր նուաճած ժողովուրդներէն միայն նիւթապէս չեն օգտուիր սակայն, այլ և մտաւորապէս, բարոյապէս Իսկ թուրք յեզը՝ համարեա անընդունակ է գանուեր իւրացնելու յաղթուած ժողովուրդներու քաղաքակրթութիւնը, անոնց զլալու, մտածելու և արտայրելու եղանակաները:

\*  
\* \*

Կեանքը սակայն անողոք է իր պահանջներով: Ամենարայասական յատկութիւններ ունեցող յեզն անդամ, դոնէ իր ինքնապահպանութեան բնաղղէն մղուած՝ կը ձգտի ստեղծել իրեն համար այնպիսի պայմաններ, որոնց միջոցով կարելի պիտի ըլլայ իր գոյութիւնը երկարաձգել, այսինքն յարմարուիլ միջավայրին, ժամանակի ողիին:

Այդ բնական օրէնքին հնազանդելու անհրաժեշտութիւնը թուրքն ալ զգաց:

Մինչև անցեալ դարու վերջին քառօրէն թուրքը չը գիտէր թէ ինչ է ուսումը, կանոնաւոր դպրոցներու երես չէր տեսած: Մուլանները միայն կը հաւաքէին իրենց մօտ թուրք աշակերտները ու կարդայնել կու տային դուրանը:

Թուրք կառավարութիւնը՝ սուս-թրքական վերջին պատերազմէն յետոյ յանկարծ արթնդաւ ու տեսաւ, թէ ինք չատ ետ մնացած է ոչ միայն Եւրոպայէն, այլ նոյնիսկ իր բնութեան, իր բոյարձակ քմահաճոյքին տակ ապրող խեղճուկ, պզտիկ հայ ազգէն: Ու անմիջապէս, կայսրութեան բոլոր անկիւններուն մէջ բացուեցան կանոնաւոր եւրոպական սիստեմով դպրոցներ, որոնք միայն արտաքինով հոյակապ, գեղեցիկ, փայլուն չէին, այլև ներքինով: Բազմաթիւ դպրոցները շուտով թուրք ժողովուրդին մէջ տարածեցին գրագիտութիւնը, ոչ միայն Պոլիսը, այլև ամբողջ գաւառները ունեցան իրենց միջնակարգ դպրոցները: Այդ դպրոցներուն համար ուսուցիչ պատրաստելու հոգը իր վրայ առաւ Պոլիսը: Սուլթանիէ և Միլլիէ դպրոցներ երկրին համար ոչ միայն քաղաքային սալտոնեաներ, ինչպէս գայմսդամ, միւթէնարիֆ, վալիներ հատուցին, այլև գաւառներու միջնակարգ վարժարաններուն համար ուսուցիչներ:

Կրթական շարժումը այնքան արագ ու կանոնաւոր առաջ գնաց, որ մէկ քանի տարիէն իր ետև թողուց հայ վարժարաններն ու կրթական գործը:

\*  
\* \*

Բնականաբար, դպրոցները՝ ժողովուրդին մէջ տարածելով գրադիտութիւնը, ճամբայ բացին գրականութեան, երևան հանցին մարդիկ, որոնք իրենց ներքին աշխարհը՝ յուզումներն ու մտածումները՝ գեղեցկօրէն արտայայտելու կարող էին:

Բայց, պէտք է մտքի առաջ ունենալ որ՝ թուրքերը, թրքահայերուն պէս, ինչպէս իրենց դպրոցական գործի կազմակերպութեան, նոյնպէս իրենց գրականութեան հիմարկումի առաջին օրերուն գործեցին ֆրանսական ազդեցութեան տակ: Թուրք սարրական ու միջնակարգ դպրոցները, իրենց օրինակ վերցուցին ֆրանսական տարրական դպրոցները (école primaire) և միջնակարգ վարժարանները (lycée): Պարոյ Բերա թաղի Սուլթանիէ դպրոցը անուանուած է Գալաթայի լիսէն (lycée de Galata): Այդ դպրոցի աստուշը կարծեմ մինչև այսօր ալ ֆրանսացի է: Կարգ մը գասեր կ'աւանդուին ֆրանսերէն լեզուով: Երկրին մէջ ախրող երոպական լեզուն ֆրանսերէնն է. անկէ յետոյ կու գայ անգլիերէնը. իսկ վերջերս, գերմանական կառավարութեան՝ Բարձրագոյն Դրան մօտ գտած մեծ վարկին ու ազդեցութեան պատճառով պարարտ հող գտած է նոյնպէս գերմաներէնը, որը հաւանականաբար, Բազդագի երկաթուղիի շինութեամբ, ամենատարածուած լեզուներէն մէկը պիտի ըլլայ Թուրքիոյ մէջ:

Թուրք գրականութիւնը աճած է նմանապէս ֆրանսական ազդեցութեան տակ: Թուրք գրագէտը եթէ երոպական լեզուի մը ծանօթութիւն ունի, այն ալ ֆրանսերէնն է: Եւրոպական գրականութենէն ֆրանսական հեղինակները միայն թարգմանուած են թուրքերէնի: Այդ թարգմանութիւններուն մէջ հայերն ալ մեծ դեր կատարած են, որովհետև կան հայեր, որոնք շատ աւելի խորապէս ուսումնասիրած են թուրքերէնը, որ խառնուրդ մըն է արաբերէնի, պարսկերէնի և թուրքերէնի, և շատ աւելի լաւ գիտեն, քան շատ մը թուրք գրողներ: Բայց հայերու մասնակցութիւնը թուրք գրականութեան մէջ կայացած է ֆրանսական հետաքրքրաշարժ և դիւրամարսելի հեղինակութեանց թարգմանութեան մէջ: Ֆրանսացի մտածել տուող հեղինակներէ զրեթէ ոչ մէկուն գործերը թարգմանուած են, որովհետև թուրք հասարակութիւնը ասկաւին խորհելու վարժ չէ, հետեաբար չը պիտի սպասէր լուրջ գործեր: Թուրք ժողովուրդը՝ բոլոր երեսայ ժողովուրդներու պէս հտկում ունի զէպի առասպելական սրատմութիւններն ու թոյն-զաշոյնական վէպերը:

Թուրք թարգմանիչները միննոյն ուղղութեան հետեւած են: Գարոօրիէօէն, Էմիլ Ռիշբուրէն, Ժիւլ Մառիէն անգին չեն անցած:

Բայց այդ տեսակ վարնոց գրականութեան մը ծաւալումն պատճառը թուրք ժողովրդի անպատրաստականութեան, գրական, գեղարուեստական թերի պատիրարակութեան մէջ միայն փնտրելու չէ: Կան երկու խոշոր ազգակիներ եւ, զոր երբեք աննկատ պէտք չէ թողուլ:

Առաջինը լեզուական հարցն է: Երկրորդը թուրք կայսրութեան մէջ տիրող բռնի պայմանները:

\*  
\* \*

Լեզուական հարցը՝ թուրք գրականութեան համար, զոր գեան հանդուցի մը ձին է ստացած: Թրքական լեզուով գրականութիւն փորձող ամեն շրջանակներու մէջ, ըլլայ թուրքիոց մէջ կամ թուրքիայէն դուրս, օրինակ Եգիպտոսի, Կովկասի մէջ, կայ երկու տիրող գլխաւոր կարծիք, ուղղութիւն:

Առաջին ուղղութիւնը հիներուն է:

Երկրորդը նորերուն:

Քիչ վերն ակնարկեցինք թէ թուրքերէնը խառնուրդ մըն է արաբերէնի, պարսկերէնի եւ թուրքերէնի: Արդ մինչև վերջին 5—10 տարիները՝ թուրք գրողը սրբան իր լեզուն խճողէր արաբերէնով եւ պարսկերէնով, այնքան ինքզինք հպարտ կը զգար: Ու այս մտածումով հին գրողը կ'աշխատէր գործածել ամենախրթիմն, ամենէն քիչ գործածուած արաբ կամ պարսիկ բառեր: Անկասկած ասիկա չափազանցութիւն մըն էր: Այս չափազանցութեան իբրի հակադրեցութիւն, կարգ մը նոր գրողներ պահանջեցին որ թուրք լեզուէն վտարուին արաբերէն ու պարսկերէն բառերն ու ստացուածքները: Ասիկա ալ ուրիշ ծայրայեղութիւն մըն էր:

Պիտոյ Կենարոնական վարժարանին մէջ եւ ու բոլոր գասակիցներս հանդիսատես եղած ենք այդ երկու հակառակաց կարծիքներու խուլ ընդհարումին: Թուրք լեզուի եւ գրականութեան համար ունեցինք երկու ուսուցիչ: Մէկը չեմ յիշեր ի՞նչ բէյ, լեզուի ուսուցիչ էր եւ հին ուղղութեան կը պատկանէր, միւսը Րէչիտ բէյ գրականութեան եւ շարագրութեան ուսուցիչ էր եւ նոր ուղղութեան մարդ: Առաջինը մեղի մտրհակներ, ազերսագրեր գրել ու շարագրել կու տարահագին խթնաբանութիւններով եւ դարձուածքներով, սրոնց մէջ տիրապետող արաբերէնն ու պարսկերէնն էին: Իսկ Րէչիտ բէյ անոր բոլորովին հակառակը: Միւսին քսան տողով աւարտած ազերսագրերը ինձ երկու-երեք տողի մէջ կը պատուիրէր վերջացնել եւ մանաւանդ գործածել սրբան կարելի է թուրք բառեր:

Թուրք ժողովուրդի համար ոչ արաբերէնն ու ոչ ալ պարսկերէնը ազգային լեզու է, նրան անհասկանալի են այդ երկու լեզուները, մանաւանդ անոր համար, որ անոնք ոչ մէկ ազգականութիւն ունին թուրքերէնի հետ:

Ահա այդ պարսկան հանդոյցը: Հին ուղղութեան հետևողները ժողովրդին անհասկանալի են. իրենց լեզուով անկարելի է սակզծել ժողովրդական գրականութիւն: Նորերը՝ ազգատ, չափազանց սահմանափակ լեզուի մը անձուկ շրջանակին մէջ բանասարկուած են:

Երկրորդ զլխաւոր պատճառը՝ երկրին մէջ տիրող պայմաններն են: Տպագրական խօսքի, մամուլի ազատութիւնը այնքան ճնշուած է Թուրքիոյ մէջ, որ անհնար է նոյնիսկ այդ մասին գաղտփար կազմել տալ: Տպագրական օրէնք, հոյ չէ թէ ըլլայ ամենախիստը, գոյութիւն չունի: Ու հրապարակախօսը, գրողը չը պիտէ թէ լինջ բաներու վրայ հրաւունք ունի գրելու կամ չը գրելու: Ամենահասարակ նիւթերու վրայ այսօր կարող էք գրել, վաղը ոչ: Պղտիկ գաղտփար մը տալու համար անսանձ կամայականութեան մասին, յիշենք մէկ երկու վաստեր: Ոնէ գրուածքի մէջ արդիւրուած է գործածել աստղ (կըլզըզ) բառը, պալլատ բառը ու տակաւին կարգ մը ուրիշ բառեր: Դիտեցէք որ արդեւքը գաղտփարներու, մտածումներու մասին չէ, այլ նոյնիսկ բառերու մասին:

Ասկէ մէկ քանի տարի առաջ օրավորները իրաւունք ունէին իրենց սիւնակներուն մէջ ոտանաւորներ տպելու. այսօր հանդէսներուն միայն թոյլատրուած է ոտանաւոր տպելը: Ինչո՞ւ, լինջ գատողութեամբ, մարդ չը պիտէ:

\*  
\* \*

Թուրք գրականութեան սկիզբը կզած է լրագրութեամբ: Եւ որովհետեւ լրագրութիւնը բացառապէս Պոլսոյ մէջ երկան կելած ու ծաղկած է, թուրք գրականութիւնն ալ մայրաքաղաքի մէջ սահմանափակուած է:

Գաւառներու մէջ, իւրաքանչիւր կուսակալանիստ քաղաք ունի պղտիկ պաշտօնաթերթ մը, որ կառավարական հաղորդագրութեանց միայն յատկացուած է: Իւրաքանչիւր թերթ իր գաւառի անունը կը կրէ և կը հրատարակուի շաբաթը մէկ անգամ: Այս պամաններուն մէջ, պարզ է, թէ գաւառը լեզու չունի, և գաւառացի գրողը ինքզինքը արտայայտելու միջոցէն զուրկ է: Իսկ ընդհակառակը Պոլիսն ունի լրագրական հրատարակութեանց ամբողջ շարք մը, օրաթերթ թէ հանդէս: Այսպէս

օրինակ «Սարահ», «Իզգամ», «Թարիզ», «Թէրճիմանը Հազի-  
գամ» ամենայայնի թուրք թերթերն են. իսկ ամենատարա-  
ծուած հանդէսն է «Մալիմաթը», որուն խմբագիրը, կ'ըսեն թէ,  
ազատ մուսք ունի սուլթանի մօտ: Գրականութեան ամենամեծ  
սատարողը եղաւ «Իզգամը», որուն խմբագիր-տնօրէնը Պոլ-  
սոյ Իրաւագիտական դպրոցէն շրջանաւարտ է: «Իզգամ»-ով  
է որ սկսաւ գրական նոր շարժումը:

Թուրք գրականութեան մէջ այն երկոյթը կը գետուի. ինչ  
որ թրքահայ գրականութեան մէջ: Երկրի մտաւոր, գրական  
գործունէութիւնը կենտրոնացած ըլլալով Պոլսոյ մէջ, գրողները  
կտրուած են բուն ժողովրդէն, աշխատող, արգիւնարերող, կեն-  
ստնակ տարրէն, և հետեւաբար իրենց գրականութիւնը գեղոյն,  
արուեստակեալ և անհարազատ է:

Թուրքերուն համար, անլութեան և արուեստականութեան  
այս պարագան սուեյի ծանրակշիռ հանգամանք մը ունի անով  
մասնաւանդ, որ թուրք ժողովուրդը առաւել կրօնային համայնք  
մըն է քան սազ մը: Թուրք գրագէտը գրկուած է թանկագին  
նեքնչարանէ մը, ազգային աւանդութիւններէ, սովորութիւն-  
ներէ, ձգտումներէ և տենչանքներէ, որոնք ուէ ազգի գրական  
գործիչին համար մտածումի, յուզումի և ստեղծագործութեան  
ազբիւրներ են:

Թուրք գրողը չ'ունի արտաքին սգեորութեան խորունկ  
ազբիւրներ, հասարակական գործիչին յատուկ խանդավառու-  
թիւններ և վհատումներ, ստիպուած է տեղերելու կարգ մը  
մաշած, հազար անգամ երգուած ու ծամծուած զպայումներու  
շուրջը, որոնց մէջ զլիսւոր ու առաջին տեղը կը բռնէ սէրը:

Նւ. արդարեւ թուրք խղճուկ գրականութիւնը, ընդհանրա-  
պէս, միակ լար մը հնչեցուցած է, սիրոյ լարը:

Լրագրներու մէջ և մասնաւոր հատորներով թուրք գրա-  
գէտը երգած է սէրը, սոխակը, վարդը, զեփիւռը և բնականա-  
բար Վոսիորի «գեղածիծաղ» ակունքը: Այլ լուսնակ գիշերով՝  
Վոսիորի վրայ, թուրք խանդներու պոռոյաներ, նաւակներու  
մէջ սիրաբանութեան նկարագրութիւններ, յախտեան հաւա-  
տարիմ մնալու պայմանադրական ուխտեր, մէկ խօսքով ոտման-  
տիկ ամենավարնոց գրականութեան մը հատարակ տեղիքները,  
աներով, սներով և աւանդներով համեմուած՝ կը լեցնեն, կ'սղո-  
ղեն թուրք գրականութեան էջերը:

Գրական սեւերէն թուրքերը մշտիւմ են բանաստեղծու-  
թիւնը միայն: Թատրոնը, գրական ու գեղարուեստական քննա-  
դատութիւնը, վէպը երկար ժամանակ անձանօթ մնացած են իրենց:

Վերջին ժամանակներս սակայն, գրական քննադատութիւնն ու վէպը մուսք գտան թուրք գրականութեան մէջ: Զուտ իմացական ու գիտակից շարժում մը կամայ-կամայ կ'ըսկսի ծայր տալ: Թուրք նորագոյն գրադէաները՝ ֆրանսական գրականութեան մէկ քանի խոշոր զէմբերու ազդեցութեան տակ, իրենց սիրոյ միօրինակ ու ձանձրալի քնարը լքած կը թռին և կը ջանան ժողովրդի գրական դաստիարակութեանը պատրաստող աշխատութիւններ մէջառել հանել:

Զիտ բէյ, թուրք նորագոյն գրող մը այս ասարուայ սկիզբներուն հրապարակ հաներ էր Տենի, Բուրժէի, Զուլի, Ֆլորէ-սի կայլն անձին ու գործերուն նուիրուած գրական ուսումնասիրութեանց հատոր մը, որ նորօրինակ ու յատկանշան երևոյթ մըն է թուրք գրականութեան մէջ: Այդ գործը բաւական հետաքրքրութիւն արթնցուց թուրք գրական շրջաններու մէջ:

Ուրիշ հեղինակ մը, Խալիզ Զիտ բէյ, Մայի վէ Սիահ (կապոյտ և սև) անուն վէպով մը, այս պահուս թուրք ընթերցողներու ուշադրութեան առարկան դարձած է: Կապոյտ եւ Սեւ վերնագիրը արդէն ինքնին բաւական ընտրոշ է: Այդ անունը ցոյց կու տայ թէ Խալիզ Զիտ բէյ ֆրանսական գրականութեան մտէն ծանօթ է և ինքը ուղղակի ազդուած է ֆրանսացի խորագէտ հոգեբան գրողէ մը՝ Ստենդալի Կարմիրն ու Սեւը (le Rouge et le Noir) երկնատոր գլուխ-գործոյէն: Ինչպէս Ստենդալի նոյնպէս Խ. Զիտ բէյի վէպը հոգեբանական գործ մըն է: Զիտ բէյ, իր ընտրած նիւթով՝ կը թեակիտէ մինչև հիմա թուրք գրականութեան մէջ անկախ ճամբու մը վրայ:

Ահա Կապոյտ եւ Սեւի նիւթը.

Աճմէդ ձէմիլ, փաստաբանի մը որդին՝ աշակերտ է Միւլքիէ կայսերական վարժարանին: Հայրը չուտով կը մեռնի, ու ձէմիլը կը հարկադրուի, տակաւին դպրոցի ընթացքը չ'աւարտած՝ ընտանիքը իր աշխատանքով ապրեցնելու: Ձէմիլ ունի դասընկեր մը, Հիւսէին Նաղմի, որ հարուստ ընտանիքի զաւակ է: Երկու երիտասարդները, միեւնոյն գրասեղանի վրայ սուրած, զիրար շատ կը սիրեն: Երբ ձէմիլ եր հայրը կը կորցնէ, կը դիմէ իր հարուստ ընկերոջ, ոչ թէ նիւթական օգնութեան յոյսով, այլ անոր մտերիմ խորհուրդներով առաջնորդուելու համար: Նաղմի իր բարեկամը կը զրդէ գրական աշխատանքներ, թարգմանութիւններ կատարելու և այդ նպատակով անոր տրամադրութեան տակ կը գնէ իր ձուկ գրագարանը: Ձէմիլ սնած է ուժանոտիկ հեղինակներով, Կամարթինով, Միւսէով և իրեն զփուսար կու դայ գրավածուսի մը յանձնարարած «Գոզին Աղջիկը» անուն ատփակ, սպանս թիւններով

և թուճաւորումներով լեցուն վէպը թարգմանելու Բայց աղբուստին հարկէն բռնադատուած կը կատարէ պահանջուած աշխատութիւնը: Գրավաճառը՝ վարձքը հազար նւղութիւններով կը հատուցանէ, այն ալ ոչ ամբողջը, այլ մէկ մասը, 100 ֆր.: Հ. Նազմի կ'առաջարկէ հանդէսներու համար թարգմանութիւններ ընել, և իր ստացած ֆրանսական մէկ հանդէսը կը յանձնէ ձէմիլին, որ թարգմանական յօդուածներով կը յաջողի քիչ-չատ գրամ շահել: Շահու այդ պղտիկ պղբերին վրայ կ'աւելնան մէկ քանի մասնաւոր դասեր:

Ձէմիլ օր մը կիմանայ թէ Միրաթը Շուուն լրագիրը մէկը կը վնտրէ թերթօն-վէպի մը թարգմանութեան համար: Կը ներկայանայ, և թարգմանութիւնը իրեն կը յանձնուի: Ձէմիլ այլևս իր ապրուստի հողը չ'ունի: Մէկ երկու տարիէն չըջանաւարտի վիպակոնն ալ կը ստանայ, բայց փոխանակ պաշտօնի մը հետամուտ ըլլալու, Միրաթը Շուուն թերթին խմբագրութեան անգամ կը գտնայ: Իսկ իր ընկերը՝ Հ. Նազմի, հարուստի զաւակ, հզօր պաշտպանութիւններու շնորհիւ կը մտնէ արտաքին գործոց պաշտօնատունը: Երկու ընկերներու մտերմութիւնը այդ վայրկեանէն կը գաղբի: Մէկը պաշտօնակց է, հետեւեալ փտող շէնքի մը պահպանութեան կուսակից, միւսը հրատարակախօս, հետեւեալ գեղձումներու թշնամի: Իրենց մէջ այլևս գաղափարի և ձգտումներու ոչ մէկ կապ կարող է գոյութիւն ունենալ...

Ու օր մը երկու շոգենաւ կը հետանան Պալիսէն: Մէկին մէջ է նախկին հարուստ դասընկերը, արտաքին գործոց նախարարութեան մէջ պաշտօնատար Նազմին, որ իր հաւատարմութեան հաստատ ապացոյցները տուած ըլլալով բռնակալութեան, պաշտօնի բարձրացում ստացած է և կը մեկնի Եւրոպա: Միւս նաւ, որ կը բանի Սուէզի գծին վրայ, կը տանի Ահմէդ ձէմիլը, միւս դասընկերը... բայց ուր կը տանի նաև իր ձակտի քրտինքով ապրել ուխտող այդ դժբաղդ երիտասարդը... զուցէ արտօր դէպի Արաբիա:

Հեղինակը, հարկադրուած՝ լռելեայն անցած է այս կէտին վրայէ:

Ձէմիլ շոգենաւի տախտակամածին վրայ նստած կը մտորէ: Սև գիշեր մըն է: Ալիքները «երկար ու թանձր օձերու նման գալարուելով ու թաւալելով կը ծաւալէին դէպի ծովի խաւարչրտին անհուն տարածութիւնները և անձանօթ լեզուով մը զինքը կը հրաւիրէին իրենց ծոցը: Այդ մութ ալիքներուն զիրկը նետուիլ արդեօք, փախչելու համար կեանքի թշուառութիւնը հեղնող վաղուան արևի լոյսէն...»

Այդ սեւ գիշերը իրեն կը յիշեցնէ ուրիշ գիշեր մը, որ սահայն կապոյտ էր ու ջինջ ու ազամանդազարդ: Բերա, Թէփէ-Պաշի պարակզին մէջ էր և կը գիտէր Ոսկեզնուրը: Ինչ մեծ տարբերութիւն այն կապոյտ գիշերին և այս սեւ գիշերին մէջ, ուր տանհինգ տարուան կեանք մը կայ: Առաջինը յոյսի գիշերն էր, երկրորդը մասյլ յուսահատութեան:

Ահա ինչո՞ւ համար գիրքը կը կոչուի *Կապոյտ եւ Սեւ*:

Խալիզ Զիա բէյ վիպական այս գործողութեան շուրջը ցանցնած է կարգ մը խորհրդածութիւններ ու զատողութիւններ բանաստեղծութեան, թուրք սաղազափութեան վրայ: Վէպը 417 էջէ կը բաղկանայ և հասած է երկրորդ տպագրութեան: Զիա բէյի արժանիքը կը կայանայ ճէմիլի հոգեբանական այլապլ վիճակներու և թուրք ժողովրդի ընկերական կեանքի և բարբերու բասական յաջող նկարագրութեան մէջ:

Խալիզ Զիա բէյի թուրք գրականութեան մէջ երևումը պէտք է համարել թուրք գիտակցութեան զարթնումի առաջին քայլերէն մէկը:

ՏԻԳՐԱՆ

## ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ \*)

(Les affaires sont les affaires)

Կովեդիա 3 գործողութեամբ

ՕԿՏՍԻ ՄԻՐԲՈՒ

(Թարգմանութիւն ֆրանսերէնից)

ԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Միւս օրը առաւօտեան

Բեմը ներկայացնում է մի փոքրիկ սալոն à la Լիզովեկոս XVI՝ հին հարուստ կարասիքով կահաւորուած, սակայն տեղ-տեղ մի քանի ան-ներդաշնակ, աչք ծակող մանրամասնումիւններով: Խորքի պատը զարդա-րած է մետաքսէ ցանցերով... Ձախ կողմին մի բացուած դուռ տանում է դէպի նոյնպէս շքեղազարդ դահլիճ: Մի այլ դուռ՝ դէպի Իսիդոր Լըշայի կաբինետը: Աջ կողմին մի մեծ պատուհան բացուած է պարկի վրայ, որ լուսաւորուած է արեւի ճառագայթներով: Մի վաղեմի թանգազին կահի վրայ կաէ Amour—վիրաւորական կերպով moberne, այլափոխուած եւ ծաղրելի, մի վարդ ձեռքին մատուցանելիս... Գեղեցիկ անօթների մօտ՝ թանգ եւ շոյլ հնուածիւններ (bric-à-brac). Աջ եւ ձախ պատերի վրայ իշխանուհիների եւ վաղեմի ազնուականների պատկերներ: Մի աչքի ընկ-նող տեղից կախած է Իսիդոր Լըշայի մեծադիր en pied նկարը, երկու կողմին ելքտրական ռեֆլեկտորներ:

\*) Տես «Մուրճ» № 8:

## ԱՆԱԶԻՆ ՏՆՍԱՐԱՆ

## ԺԵՐՄԷՆ, ԿՍՌԱՎԱՐԻՉՐ.

(Վարդգոյրը բացուելիս ժերմէն մի սեղանի առջև նստած՝ մտայնոր, անուշադրութեամբ ձերթում է մի պատկերազարդ գիրք: Յետոյ բարձրանում, գնում է պատուհանի մօտ, անհամբեր նայում, կարծես նա մէկին սպասելիս լինէր: Կառավարիչը պորտֆելը կռնի տակին՝ զուրս է գալիս Իսիդորի կաբինետից: Լուռ առանց կանգ առնելու քարեւում է ժերմէնին եւ գնում դէպի բեմի խորքի զուռնը:)

ԺԵՐՄԷՆ. Պարոն Դր Լա Ֆոնտարնէլ...

ԿՍՌ. Օրիորդ...

ԺԵՐՄԷՆ. Իմ հօր մօտիցն էք գալիս:

ԿՍՌ. Այո, օրիորդ...

ԺԵՐՄԷՆ. Ես կարծում էի՝ թէ նա զուրս է գնացել:

ԿՍՌ. Հն, նա հէնց ճիշտ այս բողէին սրահով զուրս է գալիս... Գոմն է գնում, կարծեմ...

ԺԵՐՄԷՆ. Ինչպէս էր նա այս առաւօտ:

ԿՍՌ. Շատ լաւ... շատ ուրախ:

ԺԵՐՄԷՆ. Շատ ուրախ... Նա ձեզ ոչինչ չ'ստանց:

ԿՍՌ. Առանձին ոչինչ, օրիորդ: Հեռախօսով երկար խօսեց... այն երկու ինժիներներն մասին: Այնուհետեւ մեր գործերով զբաղուեցինք: (Փոքր լուռիւն):

ԺԵՐՄԷՆ. Մի փոքրիկ նեղութիւն յանձն կ'առնէք, պարոն Դր Լա Ֆոնտարնէլ:

ԿՍՌ. Մեծ ուրախութեամբ, օրիորդ:

ԺԵՐՄԷՆ. Ժիւղը... Պարտիզպանը... Վոպերդիւից արդէն հեռացաւ:

ԿՍՌ. Այո, երեկ երեկոյեան...

ԺԵՐՄԷՆ. Նա այլևս այստեղ չի վերադառնալ:

ԿՍՌ. Ես շատ կը զարմանամ, եթէ հէնց էզուց, վաղ առաւօտեան նա իմ գրասենեակում չը դանուի... Ես լաւ եմ ճանաչում այդ խեղճ թշուառներին... նրանց դիմադրութիւնը մէկ օրից աւել չի տևում...

ԺԵՐՄԷՆ. (Կառավարչին մի ծրար տալով) Կարճ էք նեղութիւն կրել՝ նրան յանձնել այս փոքրիկ գումարը:

ԿՍՌ. Իհարկէ, օրիորդ...

ԺԵՐՄԷՆ. Առանց նրան յայտնելու՝ ումնից է այդ...

ԿՍՌ. Նա իսկոյն զլիտի կընկնի՝ թէ ումնից է...

ԺԵՐՄԷՆ. Դուք պավիլյոնն էք գնում:

ԿԱՌ. Այ՛ն...

ԺԵՐՄԷՆ. Եթէ կարելի է, նեղութիւն կրեցէք Գարրօին սակ, որ ես ցանկանում եմ նրա հետ խօսել:

ԿԱՌ. Շատ լաւ...

ԺԵՐՄԷՆ. Ես մի քանի տեղեկութիւններ ունեմ նրանից հարցնելու:

ԿԱՌ. Օրիորդ, դուք լաւ գիտէք, որ ես միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու...

ԺԵՐՄԷՆ. Շնորհակալ եմ ձեզանից... (Կառավարիչը գլուխ է տալիս եւ կամենում է հեռանալ). Պարոն Դը Լա Ֆոնտընէլ... (Փոքր լուծիւն) Երեկ երեկոյեան այստեղ տեղի ունեցաւ մի շատ ցաւալի... սոսկալի դէպք... (Կառավարիչը ձեռքի մի շարժում է անում, կարծես խնդրելիս լինէր, որ դրա մասին այլեւ չը խօսուի): Ես ներդուրթիւն եմ խնդրում ձեզանից... (Ձեռքը մեկնում է նրան):

ԿԱՌ. (Շատ յուզուած). Օ՛հ, օրիորդ... (Բռնում է նրա ձեռքը եւ համբուրում: Այդ շարժման ժամանակ նա վայր է գցում իր պորտֆէլը: Ժերմէն շտապով վերցնում, տալիս է նրան: Կառավարիչը կակազելով) Օ...րիորդ... օրիորդ...

ԺԵՐՄ. Իւրաքանչիւրը՝ իր հերթին...

ԿԱՌ. (Բողոքովին յուզուած, կոկորդը՝ սղմուած). Ես արժանի չեմ, օրիորդ, ձեր բարութեան... Ես վատ եմ ապրել... Կեանքից... հասարակութիւնից դուրս մի էակ էի ես... երբ հանդիպեցայ ձեր հօրը... Ի՞նչ կը լինէի ես առանց նրան եւ այստեղ... առանց ձեզ... (Սրբում է արտասուքի մի կաթիլ). Դուք չը գիտէք...

ԺԵՐՄ. (Նրա խօսքը մեղմութեամբ կտրելով). Որ դուք զըժբախտ էք... ես այդ գիտեմ եւ զրանից աւելի ես այլեւ ոչինչ չեմ կամենում իմանալ...

(Սալոնի դրան շեմքի վրայ երեւում են Ֆինկ եւ Գրուզ)

### ԵՐԿՐՈՐԳԻ ՏԵՍԱՐԱՆ

ԺԵՐՄԷՆ, ՖԻՆԿ, ԳՐՈՒԳ, ԿԱՌ.Ա.ՎԱՐԻՉԸ.

ԳՐՈՒԳ. Ներդուրթիւն, օրիորդ:

ԺԵՐՄ. (Քիչ գոռոզ քաղաքավարութեամբ). Դուք իմ հօրս էք վնասում:

ԳՐՈՒԳ. Այ՛ն, օրիորդ...

ԺԵՐՄ. Հայրս դուրս է գնացել...

ՖԻՆԿ. Ես ուրախութեամբ եմ նկատում, որ դուք երեկուայ նման այլեւ տկար չէք:

ԺԵՐՄ. Բողոքովին ոչ: (Կառավարչին). Պարոն Դը Լա

Ֆոնարնել... նեղութիւն կրեցէք ուղեկցել այս պարոններին  
հօրս մօտ:

(Երանք դուրս են գնում):

### ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԺԵՐՄԷՆ, յետոյ ՏԻԿ. ԼԸՇԱ, ապա ՄԻ ՍՊԱՍԱԿՈՐ.

(Ժերմէն՝ յուզուած, անհամբեր սկսում է նորից քայլել. նա ջղային սաս-  
տիկ գրգռուած դրուծեան մէջ է: Մտնում է տիկ— Լըշա՝ զարդարուած,  
մի պատարագազիրք էլ ձեռքին):

Տ. ԼԸՇԱ. (Դրան մօտից). Ժերմէն... ինչպէս, դու զեռ պատ-  
րաստ չես...

ԺԵՐՄԷՆ. Պատրաստ:

Տ. ԼԸՇԱ. (Բողբոզին ներս գալով.) Ձէ որ ժամն է:

ԺԵՐՄԷՆ. Ի՞նչի ժամը...

Տ. ԼԸՇԱ. Եկեղեցի, պատարագ գնալու ժամը... (Նա նըս-  
տում է մի բազկածոռի վրայ եւ ձեռնոցների կոճկելը վերջացնում):

ԺԵՐՄԷՆ. Ես եկեղեցի չեմ գնում...

Տ. ԼԸՇԱ. Լնւ... լնւ... Դա ի՞նչ նոր ֆանտազեա է...

ԺԵՐՄԷՆ. Դա ոչ նոր բան է... ոչ էլ ֆանտազեա... Ես  
եկեղեցի չեմ գնում նրա համար, որ դա ինձ դուր չէ գալիս...

Տ. ԼԸՇԱ. Քո հայրը սաստիկ կը բարկանայ... Գիտես՝ նա  
կամենում է՝ որ մենք ոչ մի պատարագ էլ բաց չը թողնենք,  
մանաւանդ այժմ...

ԺԵՐՄԷՆ. Դա իմ գործս չէ՝ թէ իմ հայրը ի՞նչ է կամենում  
և ինչ—ոչ... Ես հեռուում եմ միայն իմ ճաշակին... Իսկ իմ ճա-  
շակը ինձ թելադրում է, որ այս առաւօտ ես այստեղ մնամ...

Տ. ԼԸՇԱ. (Յուսահատուած). Ահա... նորից սկսում է...

ԺԵՐՄԷՆ. Քանի որ հայրս յանկարծ սկսել է եկեղեցին  
այդպէս սիրել... ինքը ինչո՞ւ չէ գնում...

Տ. ԼԸՇԱ. Որովհետեւ նա... այս տարի... հակակղերական է...  
Սակայն իր գործերի, մանաւանդ իր ընտրութեան տեսակէտից  
նա օգտակար է համարում, որ մենք եկեղեցի գնանք... Թէև  
դա հաւանականաբար մի մեծ արգիւնք չի ունենալ, բայց և այն-  
պէս միթէ չի կարելի է այս բաւականութիւնը նրան տալ...

ԺԵՐՄԷՆ. Հիանալի է...

Տ. ԼԸՇԱ. Դա մի քաղաքական կոմբինացեա է...

ԺԵՐՄ. Շատ լաւ... միայն այդ կոմբինացիայի մէջ ես  
չեմ մտնում...

ՏԻԿ. ԼԸՇԱ. Բացի այդ... դա քեզ համար մի տեսակ ման-  
գալ... դրօսանք է... Զուարճութիւններից այնքան զուրկ ես  
դու...

ԺԵՐՄ. (Սառնօրէն) Ես զուարճութիւնների պահանջ չ'ու-  
նիմ...

ՏԻԿ. ԼԸՇԱ. (Տխրութեամբ իր աղջկան նայելով). Ճիշտն ասած,  
իմ խեղճ երեխայ, ես չը գիտեմ՝ մի քանի ժամանակից իվեր  
լինչ է քեզ պատահել... Յամենայն դէպս, անշուշտ, ոչ լաւ բան...  
Միշտ մի տեսակ տենդային դրութեան մէջ, շարունակ յու-  
ղուած... մեր դէմ աւելի և աւելի զրգոտւած... Ոչ որի չեւ ու-  
ղում տեսնել... Երբ մի մարդ է դալիս մեզ մօտ, զու նրա հետ  
կօպիտ և անքաղաքալարի... թողնում, կսկոյն հեռանում ես...  
Ո՛րքան հաճելի է այդ մեզ համար... Խօսել քեզ հետ այլևս ան-  
կարելի է... Այնպիսի բառեր ես արտասանում, որ մարդու վրայ  
սարսափ են բերում... Եւ զու գեւ զարմանում ես, որ երբեմն  
քեզ վրայ բարկանում ենք... Բոպէներ են լինում, որ ինքս ինձ  
հարց եմ տալիս... չը լինի՞ թէ իրօք դու քիչ խելագարուել ես...  
Վերջապէս... աստ... տեսնենք՝ ինչ կայ, ինչ է քեզ պատահել...

ԺԵՐՄ. Ոչինչ...

ՏԻԿ. ԼԸՇԱ. Հիւանդ ես:

ԺԵՐՄ. Ո՛չ...

ՏԻԿ. ԼԸՇԱ. Եթէ տանջւում ես զու մի որևէ պատճառով...  
աստ ինձ... (Աւելի դորովաղին) Վերջապէս... չէ որ ես քո մայրն եմ...

ԺԵՐՄ. (Աւելի մեղմաբար). Ես տանջւում չեմ...

Տ. ԼԸՇԱ. Գու սաստիկ վիշտ ես ինձ պատճառում... Աղ-  
նիւ խօսք, կարծես, քեզ չարչարում, տանջում են, ամեն ինչից  
զրկում... Գուցէ զու զժգոհ ես մեղանից մէկն ու մէկից... Ա-  
ստ, յայտնիր...

ԺԵՐՄ. Ո՛չ... ոչ...

Տ. ԼԸՇԱ. Ուղղակի անհաւատալի է, անհաւատալի...

Այստեղ զու ազատ ես, որպէս օդ... Գնում ես... դալիս... Որ-  
պէս մի տղայ, անում ես, ինչոր քէֆդ է տալիս... Նոյն իսկ  
հէնց այս սոսուօտ զու ինձանից երեք հարիւր ֆրանկ ես  
խնդրում... Ես տալիս եմ... Ես կարող էի քեզանից հարցնել,  
պահանջել, որ ինձ ասեա՝ ինչ պիտի զու անես այն փողի-  
րով... Սակայն ես այդ չեմ անում... Ես տալիս եմ քեզ այն-  
պէս... առանց մի որևէ պայմանի... Շատ կը գտնես այսպիսի  
մայրեր, չէ... Եւ վերջապէս չէ որ երեք հարիւր ֆրանկը մի  
պատկառելի գումար է... Գո բարեգործութիւն անելիք էլ... այն  
էլ այնպիսի մարդկանց համար... որ հոգա, ողութեան արժանի  
չեն... Այն, այն... Վերջապէս աստ, ինչ ես ուզում...

ԺԵՐՄԷՆ. Ես ոչինչ չեմ կամենում... Դրանից այլևս չը խօսենք... Խնդրում եմ, մայրիկ ,դրանից այլևս չխօսենք...

Տ. ԼԸՇԱ. Սա ինչ զժրախառութիւն է, Աստուած իմ... Երկու երեխայ ունենամ... Մի որդի, որ երբէք այստեղ չի լինում... որ ինձ տանջանք է միայն պատճառում... Մի աղջիկ, որի ուշը-խեղքը միշտ ուրիշ տեղ է... որի նչ ցանկութիւններն են ինձ յայտնի, նչ էլ մտքերը... որից ես չեմ ստացել նչ մի ժպիտ, նչ մի զորով... (Խոր հառաչում է)

ԺԵՐՄԷՆ. Սակայն... մայրիկ, դա... իմ մեղք չէ...

Տ. ԼԸՇԱ. (Գլուխը շարժելով). Անկասկած իմ մեղքն է... Այո... այո... Ինձ քաջ յայտնի է, որ ես մի բարձր, մի կրթուած կին չեմ... Քեզ հետ չեմ կարող խօսել բարձր առարկաներից... որոնց մասին դու և Գարրօն էք անկասկած խօսում...

ԺԵՐՄԷՆ (Հակիրճ կերպով). Մայրիկ... Խնդրում եմ... Բաւական է...

Տ. ԼԸՇԱ. Ինձ այդպէս չեն կրթել... Դա ճիշտ է... Ես մի առողջ բանականութեան տէր կին եմ... (Ղուռթիւն) Ոստակցութեան ժամանակ... սա աւելի անախորժ է... սակայն կեանքի մէջ դուցէ աւելի անհրաժեշտ...

ԺԵՐՄԷՆ. Սակայն, մայրիկ... հարցը բոլորովին դրա մասին չէ...

Տ. ԼԸՇԱ. Հնա... վերջապէս... Օ՛հ, Աստուած իմ (Տեղից բարձրանում է), Ուրեմն վճռուած է... Ձեռ գալիս, գնանք եկեղեցի...

ԺԵՐՄԷՆ. Ես քեզ հաւատացնում եմ... Ես աւելի տանը մնալն եմ ցանկանում...

Տ. ԼԸՇԱ. (Յանկարծ անհանդուածաբար). Ուրեմն... Ես ստիպուած կառքը փոխել պիտի տամ... (Հնչեցնում է զանգակը). Դու տեսնում ես, որ քո քմահաճոյքը բոլորին էլ նեղութիւն է պատճառում... (Ներս է գալիս ծառան). Գնաչէք, տխուստանք յայտնեցէք, որ հին coupé-ն լծեն... և միայն մի ձի...

ԾԱՌ. Ես հէնց եկել էի տիկնոջը յայտնելու, որ կառքը արդէն պատրաստ է...

Տ. ԼԸՇԱ. Victoria կանոքը:

ԾԱՌ. Այո... տիկին...

Տ. ԼԸՇԱ. Այդ ես չեմ ուզում... Ասա, որ coupé-ն լծեն, հին coupé-ն...

ԾԱՌ. Շատ լաւ, տիկին...

(Դուրս է գնում):

ԺԵՐՄ. Դու կ'ուշանաս... Պատարագին չես հասնիլ...

Տ. ԼԸՇԱ. Ոչինչ... քիչ էլ մնայ... Ինձ բաւական է...

Սակայն ես չեմ կարող մենմենակ երկու ձիանի victoria-ի մէջ նստել, գնալ... դա իմ ոյժից վեր է... նրա մէջ ես ինձ մի տեսակ վատ եմ դրում... Գու՛յ է դա յիմարութիւն է... ես ասելիք չունիմ դրա դէմ... Բայց ես մենմենակ նրա մէջ ամաչում եմ... իմ կողքին կամ պիտի մի ժարդ լինի... կամ կապոյներ... (Առուժիւն) Մինչև կառքը լծել-պատրաստելը գնամ, մի քանի կարգադրութիւններ անեմ... (Մի րոպէ մտածմունքի մէջ է ընկնում): Ես յոյս ունիմ, որ այն երկու պարտնները այս երեկոյ կը մեկնեն...

ԺԵՐՄ. Ես անտեղեակ եմ:

Տ. ԼԸՇՍ. Ես չը գիտեմ՝ ո՞վքեր են նրանք... որտեղից են գալիս... բայց տարօրինակ գէմքեր ունեն...

ԺԵՐՄ. Ո՛չ աւելի տարօրինակ քան միւսները, որ բերում է այստեղ իմ հայրը... Բոլորն էլ միմեանց նման են:

Տ. ԼԸՇՍ. Անտարակոյս... Գործնական մայրիկ են դըրանք... Բայց եւ այնպէս Իսիդորի տեղ են լինէի, դրանցից կը դպուշանայի:

ԺԵՐՄ. Միենոյն բանը նրանք իմ հօր մասին կ'ասեն...

Տ. ԼԸՇՍ. Լ՛աւ... ը՛ւ... Այլեւ չարասիրտ մի լինիր... Դու ինձ չես համբուրում:

ԺԵՐՄ. Ինչու չէ, մայրիկ...

(Համբուրում է նրան):

Տ. ԼԸՇՍ. Ա՛խ, եթէ դու կամենաս... Եթէ քո այս անպիտան փոքրիկ զուլսոյ կամենայ... Ժպտան, ինձ ուրախացնելու համար զոնէ մի անգամ մի լաւ ժպտան... (Ժպտում է, միայն տըխուր, ակամայ կերպով): Իսկ այն երեք հարիւր ֆրանկը... Ո՞ւմ համար էր...

ԺԵՐՄ. Ա՛խ, մայրիկ... չէ՞ որ դու ինձ խոստացել էիր...

Տ. ԼԸՇՍ. Լ՛աւ, ը՛ւ... (Գնում է... Հասնելով դրան մօտ՝ նա երեսը յետ է դարձնում) Իմ պատարագազիրքը... (Ժերմէն պատարագազիրքը սեղանի վրայից վերցնելով՝ տալիս է մօրը) Հ՛ա... Եթէ քո եղբայրը մինչև իմ վերադարձը գայ... լաւ կը լինէր, որ դու նրան մի ըւլ խրատես... Տեսնենք՝ այսօր ինչ նոր խաբար է բերում...

ԺԵՐՄ. Ես Քասաիէի վրայ ոչ մի ազդեցութիւն չ'ունեմ... Եւ վերջնապէս նա անում է այն, ինչ որ իրան է դուր գալիս...

Տ. ԼԸՇՍ. Ի՞նչ արած... (Խնդրելով) Հագուստդ փոխիր... Նախաճաշակին լաւ հազնուած լինես... Ես ուզում եմ, որ դու զեղեցիկ երեաս... Խոստանում ես...

ԺԵՐՄ. Այո՛, մայրիկ:

Տ. ԼԸՇՍ. Շաա զեղեցիկ... (Դուրս է գնում):

## ՉՈՐՐՈՐԳԻ ՏԵՍԱՐԱՆ

## ԺԵՐՄԷՆ, ՊԱՐՏԻԶՊԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԸ.

(Ժերմէն սկսում է յուզուած մտնգալ: Պարտիզպանի օգնականը զալիս և բոյսերը փոխելու: Ժերմէնին տեսնելով՝ նա տատանուում է՝ մտնէ թէ չէ):

ԺԵՐՄ. Եկէք... եկէք...

ՊԱՐՏ. ՕԳՆ. Ներեցէք... ներողութիւն... օրիորդ... Այս առաւօտ քիչ ուշացանք... Ժիւլը մեկնում էր... (Հին բոյսերը վերցնում, տեղը նորերն է դնում: Փոխում է նոյնպէս եւ Amour-ի ձեռքին գտնուող վարդը, ապա յետ ու յետ դնալով նայում, դիտում է: Հիացած) Որքան գեղեցիկ է...

ԺԵՐՄ. Նոր պարտիզպանը եկել է:

ՊԱՐՏ. ՕԳՆ. Այն, հէնց այժմ տեղափոխուում է մեզ մօտ... Մօրուքաւոր... մի բարձրահասակ... սև մարդ է... Անբաղաճաւարի... Կոպիտ... (Աշխատանքը շարունակելով) Օրիորդ, այս առաւօտ ծաղիկներ չէք պահանջել...

ԺԵՐՄ. Ո՛հ... Շնորհակալ եմ:

(Պարտիզպանի օգնականը գործը վերջացնելով, հին բոյսերը վերցնում, ուզում է դուրս գնալ: Մտնում է Լիւսիէն):

ՊԱՐՏ. ՕԳՆ. Բարի օր, պարոն Գարրօ:

ԼԻՒՍԻԷՆ. Բարեւ, բարեւ... (Պարտիզպանի օգնականը դուրս է գնում):

## ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ՏԵՍԱՐԱՆ

## ԺԵՐՄԷՆ, ԼԻՒՍԻԷՆ

ԼԻՒՍ. (Պարտիզպանի օգնականի հետանալուց յետոյ). Քեզ հօ ոչինչ չի պատահել:

ԺԵՐՄ. Ոչինչ... ես ուզում էի քեզ տեսնել... քեզ հետ խօսել... Առաւօտեան փոստով ոչ մի լուր չը ստացար:

ԼԻՒՍ. Աւաղ, ո՛չ մի: (Լուռ թիւն):

ԺԵՐՄ. Լիւսիէն, գիտեա ինչ... այսօր և եթ հարկաւոր է մի բան վճռել... Այսպիսի անորոշ, անյայտ դրութեան մէջ... երկար ապրել մենք չենք կարող... շարունակ երկիւղի և սպանիչ անվճռականութեան մատնուած... Ես գոնէ այլևս անկարող եմ...

ԼԻԻՍ. (Տխրութեամբ). Չէ որ դու հաշտուել էիր՝ քիչ էլ համբերլր

ԺԵՐՄ. Համբերել... չարունակ համբերել... Օրեր, շաբաթներով համբերել... հպատակուել... Մինչև երբ... Մեր բարօրութեան, մեր երջանկութեան օրերն են դրանք, որ մենք կորցնում ենք... Նախ այս մշտնջենական նեղութիւնը... այս ամենօրեայ կեղծիքը արժանի չեն սչ քեզ և սչ ինձ... Ապա այս սոււնը՝ որպէս մի ահագին ծանրութիւն, ինձ ճնշում, խեղդում է... Այդ ծանրութիւնը այժմ իմ ուժերից վեր է... համբերել ես այլևս չեմ կարող... Մի անգամ ընդմիջու... իմ սիրելի Լիւսիէնս, արիաբար, բոլորի առջև, օր ցերեկով լինենք այն, ինչոր ենք իսկապէս...

ԼԻԻՍ. Ես քեզ նորից խնդրում... աղաչում եմ՝ մի չտապիր... միայն մի քանի օր ես... Այն նամակները դու հօ տեսար...

ԺԵՐՄ. Նամակները:

ԼԻԻՍ. Ամենալուրջ խոստումներ են պարունակում...

ԺԵՐՄ. Խոստումներ...

ԼԻԻՍ. Սակայն, իմ սիրելիս, անկարելի է, որ ես շուտով մի պաշտօն չը ստանամ... և այդպիսով կարող լինեմ քեզ դռնէ նիւթսկան գրկանքներից ազատ պահել...

ԺԵՐՄ. Կարիք չը կայ, որ նրան մենք այստեղ սպասենք... Եթէ մենք մի այգպիսի բախտ ունենալու ենք... նա կարող է մեզ ժողալ... և մի ուրիշ, այս տնից հետու տեղ, ուր մենք կը լինենք... երկուսս միասին միայնակ... մտածիր՝ երկուսս միասին...

ԼԻԻՍ. Սակայն դուցէ... վաղը...

ԺԵՐՄ. Վաղը... Ինչո՞ւ վաղը... Ինչո՞ւ վաղուան յետաձգել... Ո՛չ... հարկաւոր է վերջացնել իսկոյն և եթ... եթէ դու ինձ սիրում ես...

ԼԻԻՍ. Եթէ ես քեզ սիրում եմ...

ԺԵՐՄ. Լաւ ուրեմն, լսիր... (Բռնելով նրա ձեռքերը): Երբ այս դիչեր ես վերադարձայ իմ սենեակը... ես չը կարողացայ քնել... Ես գեւ լսում, զգում էի քեզ... այնքան այրող... այնքան կենդանի էին քո խօսքերը... քո գգուանքը... քո համբոյրները... Ես այլևս չէի կամենում միայնակ մնալ... Սպասեցի մինչև առաւօտ... երբ բոլորովին լուսացաւ... և սենեակիցս իջայ... գնացի դաշտը... ապա հասայ անտառը... անցայ... գնացի... գնացի... գնացի... Սկզբում դա ինձ վրայ շատ լաւ ազդեց... Իմ ջղերը հանդարտուում, խաղաղուում էին... Ես ամբողջովին լեցուած էի անհուն ուրախութեամբ և թարմու-

թեամբ... Ես մտածում էի քո մասին... մեր անհուն և փայլունի սիրոյ մասին... փայրենի՝ ինչպէս այն ծառերը, բրնձի շաղաթաթախ ճիւղերին մեղմ, հանդաբա զիպչելով անցնում էի ես... փայրենի՝ ինչպէս այն ծաղիկները, որոնց գողարիկ նուրբ բուրմունքն էի ես ներշնչում... Յետոյ ես քայլերս ուղղելի գէպի տուն... Ես գնում էի կամաց-կամաց... Սիրաս անգործ... Երջանիկ էի ես... այն գրեթէ երջանիկ... Յանկարծ... անսասի ծառերի արանքով... ևս նկատեցի մեր գրեհակը... որ չցուած էր հետուում... Մի սարսափելի հարուած էր, որ ևս ստացայ. կարծես մահն էր իմ գիմացը կանգնած... Մի սոսկալի... մի տհուլի բող էր այդ... Երբէք այդպիսի պարզ կերպով գրեհակը չէր պատկերացել իմ առջև... իր իսկական, ֆիզիքական պատկերով... Ես պարզ կերպով տեսնում էի այն ամենը, ինչ որ նա իր մէջ թաղչնում է... ինչ որ նա ճմլում, ջախջախում է... այն ամենը, որ ինչ որ նա սպանում է... իր շուրջը... Այն անսասաններ... այն գաշտերը... այս պարկը... արևի ճառագայթներով լուսաւորուած անողոք քարի այս դանդուածը... ոճիր, ոճիր էին կոչում... Որքան ոճիրներ էին այդ ամենի տակ ծածկուած... Դու չես գանիլ այստեղ խոտի նչ մի ծիղ... նչ մի փոքրիկ քար... նչ մի կածան, որ գողացուած չը լինի... Եւ այն հողից, որ ևս ման էի գալիս... այն հողից, որ ինձ է պատկանում... չէ որ նա իմն է... ևս միմիայն լաց-արատաւ էլ լսում... և միմիայն արիւն էի տեսնում... Ինձ թւում էր, որ իմ շուրջը գտնուող ամեն, ամեն ինչ ինձ՝ «գող... գող...» էր կոչում... Իմ ուրախութիւնը յանկարծ տանջանքի փոխուեցաւ... իմ սէրը՝ զայրոյթ և ատելութեան... Ո՛չ... նչ... ևս այլևս անկարող եմ... ևս այլևս անկարող եմ... այստեղ մնալ... Ես կարծում էի, թէ քեզանով միայն կարող կը լինեմ ապրել... թէ քեզ հետ միասին ևս կարող էի ամեն ինչ տանել, համբերել... Սակայն նչ... Եւ եթէ ևս այստեղ մընամ, Լիւսիէն... գուցէ քեզ ևս սկսեմ ստել...

Լիւս. Ուրեմն... դու ուզում ես մեկնել այստեղից:

Ժե՛րՄ. (Ուժգին). Այո՛... ճի, այո՛...

Լիւս. Ո՞ւր գնանք:

Ժե՛րՄ. Ուր որ լինի...

Լիւս. Ինչո՞վ կ'ապրենք:

Ժե՛րՄ. Մի՞թէ ևս աշխատել չեմ կարող... Ես ետանդ... կամք ունիմ ազատ և երջանիկ լինելու...

Լիւս. Իսկ աշխատանք... Կ'ունենաս Օ՛հ, իմ սիրելի Ժերմէնս... հաւատա ինձ... Իրական կեանքը ևս աւելի լաւ եմ ճանաչում... այնպիսի ծանր, նեղ հանգամանքներում եմ գրտնուել, կեանքի հետ այնպիսի պայքար մղել... Սկսել քեզ հետ

մի այդպիսի կեանք, որ ես միայնակ քիչ էր մնում բոլորովին ընկճուէի... ենթարկել քեզ մի այդպիսի փորձանքի... ճ՛ն ճ՛ն... իննայիր, ազատիր ինձ այդ տանջանքից... Դու չը դեռես՝ թէ թշուառութեան մէջ ինչ սարսափելի մտքեր են անցնում մարդու գլխով... Մարդ երբեմն իր կեանքն է թշուառութեան զոհ բերում... իսկ յաճախ կորցնում, մոռանում է ինքնասիրութիւն, խիղճ... և որ ամենալաւան է և սէր... Եթէ այդպիսի սարսափելի բողբոջներում մարդ զժբախտութիւն ունի սիրահարուելու... Սակայն չէ՞ որ ես ես ունէի և՛ մտաւոր կարողութիւն... և՛ եռանդ... ձեռքս էլ մի արհեստ... յամառ և հաստատ կամք աշխատանքով անկախութիւն ձեռք բերել... Այդ ամենը ես ունէի... միայն դորձ-աշխատանք չ'ունէի... Այն, երեք տարի անընդհատ ես աշխատանք, դորձ եմ փնտրել... բայց, աւանդ, իզուր... Ես բաղիսել եմ բոլոր գոները... զարձակ իզուր... ճ՛ն մի դուռ նոյնիսկ կիսով չափ չը բացուեցաւ... Անհաւատալի է այս քեզ թուում, չէ... Սակայն դա իրողութիւն է...

ԺԵՐՄ. Իմ խեղճ Լիւսիէնս:

ԼիՒՍ. Որպէսզի սովից բոլորովին չը մեռնեմ... լսում ես... սովից... ես ստիպուած էի ընդունել անարդ աշխատանք... երբեմն խայտառակ, ամօթալի կոմպրոմիսներ անել... Օ՛հ, եթէ ես քեզ պատմեմ իմ այդ կեանքը... Սակայն չէ՞ որ ես տղամարդ էի, այսինքն մի էակ, որ ունի որոշ արածնութիւններ և իրաւունքներ... որին հասարակութիւնը... ասում են... թէ թոյլ է տալիս ամեն սեռակ գործունէութիւն... բաց է անում բոլոր ասպարէզները... Իսկ դո՞ւ... մի կին ես... և հասարակութիւնը քեզ չի ճանաչում...

ԺԵՐՄ. Դու այնքան էլ ինքդ քեզ վրայ զստան չես եղել... Այժմ մենք երկու ենք... Երկուսս միասին կը կուուենք...

ԼԷՒՍԻԷՆ. Երկու ենք... որ երկու անգամ աւելի տանջուենք... որ երկու անգամ յաղթուենք... Ահա թէ ինչու եմ ես երկչոտ և խոճեմ...

ԺԵՐՄ. Իսկ ինձ հէնց այդ է համարձակութիւն և յոյս սուտղը...

ԼԷՒՍԻԷՆ. Քո էքզալտացեան ինձ սարսափեցնում է, սիրելիս... Այժմ քանի որ քո կեանքը... քո ապագան իմ հոգացողութեանն է յանձնուած... իմ պարտքն է քեզ ծանօթացնել, ցոյց տալ կեանքը այնպէս, ինչպէս նա կայ, և ճ՛ն այնպէս, ինչպէս երազում է քո կրակոտ, վեհանձն բնաւորութիւնը, որ չարունակ ձգտում է անկախ լինել... Կեանքի մէջ անկախութիւն չը կայ...

ԺԵՐՄ. Քանի որ նա սանջանքի և ոճրի մէջ է... զուցէ  
երջանկութեան և մարբութեան, ամբո՞ւթեան մէջ ևս լինի...

ԼԻՒՍԻԷՆ. Ո՛չ մէկում... և ո՛չ միւսում...

ԺԵՐՄ. Իսկ սիրոյ մէջ...

ԼԻՒՍԻԷՆ. Աւանդ...

ԺԵՐՄ. Ուրեմն... զու ինձ չես սիրում... Եթէ զու սիրոյ  
մէջ կոյր և վեհ հաւատ չունես, որ յաղթում է ամեն, ամեն  
ինչ, ուրեմն զու ինձ չես սիրում...

ԼԻՒՍԻԷՆ. Ես սիրում եմ, աշխարհիս ամեն ինչից աւելի  
ևս քեզ եմ սիրում...

ԺԵՐՄ. Որ այդպէս է, էլ մի վիճաբանիր... վերցրո՛ւ ինձ...  
տանք ինձ... Իրականութիւնը միայն այն է, ինչ որ սէքն է ըս-  
տեղծում... Մնացածը ոչինչ է... մնացածը գոյութիւն չունի...

ԼԻՒՍԻԷՆ. Հէնց այդ մնացածն է ամբողջ կեանքը... Նա  
կարող է մեզ փշրել, ջարդել... ինձ համար ոչինչ... ևս սովոր  
եմ... Իսկ դ՞ու... ևս քեզ սիրում եմ բուն, խորունկ, յաւիտե-  
նական սիրով... ահա թէ ինչու ևս չեմ ցանկանում իմ երջան-  
կութեան հետ խաղ խաղալ... այլ կամենում եմ նրան պահել...  
կը կամենայի նրան պաշտպանել և քո վեհանձն անխոհեմու-  
թիւններից...

ԺԵՐՄ. Լա՛ւ է, լաւ...

ԼԻՒՍԻԷՆ. Դու կասկածում ես:

ԺԵՐՄ. Ոչ... ո՛չ... ո՛հ ո՛չ... Միայն զու դատում ես ազա-  
մարդուն և զիանախանին յատուկ երկչոտ խելքով... Իսկ ևս...  
իմ մէջ խօսում, ճշում է կանայի սիրաբ... Դու ևս երազների  
և ցնորքների մէջ ապրում... ևս եմ բնութեան և կեանքի մէջ...  
Լա՛ւ... ասա՛ տեսնենք, զու ինչ ևս կամենում անել...

ԼԻՒՍԻԷՆ. Դարձեալ սպասել...

ԺԵՐՄ. Լա՛ւ... Իսկ եթէ քո սպասածդ չը լինի... երբեք  
չ'իրագործուի...

ԼԻՒՍԻԷՆ. Դա անկարելի է...

ԺԵՐՄ. Սակայն քիչ առաջ զու երկիւղ էիր կրում... Վեր-  
ջապէս... ենթադրիր, որ չ'իրագործուի... (Լիւսիէն լռում է)  
Տեսնում ես... (Լռութիւն) Ոչ... այստեղ մի ուրիշ բան կայ, որ  
զու չես ասում... Սակայն մի քանի օրից ի վեր քո խօսքերից...  
քո ձև ու շարժումներից ևս այն զգում, նկատում եմ... Ահա  
ասեմ թէ ինչ...

ԼԻՒՍԻԷՆ. Ուրիշ ոչինչ չը կայ... հաւատացնում եմ քեզ...

ԺԵՐՄ. Իմ հայրը... Քեզ վատ ևս զգում, խիղճդ այնքան  
էլ հանգիստ չէ նրա նկատմամբ...

ԼԻՒՍ. Ո՛չ ձեր հօր... այլ զուցէ իմ նկատմամբ...

ԺԵՐՄ. Դա միևնոյն է... Միայն այժմ ուշ է... դրա մասին առաջ էր հարկաւոր մտածել... Եւ յետոյ խղճի անհանգստութիւն իմ հօր... պ. Իսիդոր Լըչայի նկատմամբ... անկեղծաբար ասած... դա մի աւելորդ շոայութիւն է...

ԼԻԻՍ. Ես նրան չատ բան եմ պարտ:

ԺԵՐՄ. (Ուսերը թռնուելով) Ինչպէս պ. Դը Լա Ֆոնտրենէլը... Իմ հայրս սուրբ... մարդկութեան բարերար դարձած... Որպիսի դառն հեղինակութիւն...

ԼԻԻՍ. Մի ծաղրիլ: Նա ինձ թշուառութիւնից է ազատել... Ես այժից ընկել, բոլորովին ուժասպառ էի, երբ նա ինձ ձեռք կարկանդեց...

ԺԵՐՄ. Որպէսզի քեզ աւելի ստորացնէ... որպէսզի քո մտաւոր կարողութիւնները... գիտութիւնը և քո բարոյական առաքինութիւններն ի չարն գործ դնէ... Անկարող լինելով շահագոծել... նրանց դարձրեց մի անվայել մասկարադ... Ինչպէս դու ինքդ ես առում, մի պատրանք...

ԼԻԻՍ. (Տխրուժեամբ). Ես այդ սնապարծութեամբ ասացի... չար սնապարծութեան բողբոջի...

ԺԵՐՄ. (Ետտաշար). Սակայն ես... ես չեմ կամենում որ դիպչեն, ստորացնեն այն մարդուն, որին ես սիրում, որով ևս պարծնում եմ... (Լրուժիւն): Միթէ մենք միմեանց սիրելու համար կարիք ունենք ուրիշների համաձայնութեան, հրապարակական երգումների... հանդիսաւոր ստորադրութիւնների... Չէ որ ես այստեղ ամեն օր հօրիցս սովորեցայ, որ դաշինքը, պոչմանագրերը նրա համար են միայն, որ նրանց խախտեն... երգումները՝ որ նրանց դրժեն... (Աւելի հանդստուժեամբ) Իսկ ինձ... ազատել է նա արդեօք ինձ թշուառութիւնից... երբ և է նա ինձ ձեռք մեկնել է արդեօք...

ԼԻԻՍ. (Գորովապիւն տխրուժեամբ). Լաւ հասկայիր... խնդրում եմ... իմ սիրելի Ժերմէն... Ես չեմ կամենում քո հօրը պաշտպանել... Գուցէ դու հիմք ունես, անկասկած, և իրաւունք նրան չը սիրելու... բանի որ նրա պատճառով դու այնքան տանջուել ես... Սակայն չէիր կարող նրան չը սիրել առանց անողորմաբար նրան դատելու...

ԺԵՐՄ. Ես նրան իմ ատելութեանս չափ եմ դատում... Դրա դէմ ես ոչինչ չեմ կարող անել... (Լիւսիւն ցնցում է). Ի՞նչ պատահեց քեզ:

ԼԻԻՍ. Դու ինձ չատ վեշտ ես պատճառում...

ԺԵՐՄ. Ինչու ես դու ինձ այդ ասում:

ԼԻԻՍ. Համոզուած ես արդեօք, որ քո հօրը ճանաչում ես,

համոզուած ես դու արդե՞ք, որ քո հայրը իր արարքները պատասխանատուն է...

ԺԵՐՄ. Եթէ իմ հայրս խելագար լինէր... ես կարող էի այդ տանել... ես կարող էի նոյնիսկ նրան սիրել, իմ սիրովս նրան բժշկել... Բայց... նա խելագար չէ... Մի մարդ, որ այնքան յամառ է... մի մարդ, որ իր ամենամահաբեկ լինելով քամահաճոյքների ժամանակ խակ իրան կրքէք չէ կորցնում, որ նոյնիսկ իր անմտութեան մէջ այնքան լաւ է տրամաբանում,—նչ, նա խելագար չէ...

ԼԻԻՍ. Իմ խեղճ Ժերմէնս... (Քաշում է Ժերմէնին իր մօտ... վերցնում է նրա դուխը, մեղմ, փաղաքշական շարժումներով): Իմ սիրելի յամառ վայրենիս... Օ՛հ, եթէ ես կարողանայի այս զըլխիդ մէջ մտցնել աւելի ներողամտութիւն և աւելի դուրս... Ա՛խ եթէ ես կարողանայի... (Համբուրում է նրա ճակատը) սրան տալ... կեանքի աւելի ձեռք ըմբռնումը... (Երկար նայում է նրան): Քո տանջանքների պատճառը աւելի դու ինքդ ես, քան քո հայրը...

ԺԵՐՄ. Բոլորովին ոչ... բոլորովին ոչ...

ԼԻԻՍ. Այն... այն... Դու տանջուում ես զերմարդկային կրազներով... անկախ, կատարեալ արդարութիւն... Եւ քո այդ իղէալը, օ՛հ հուռտա ինձ, ցաւերով լի սպազայ է պատրաստում քեզ համար... Ես սուրբ չեմ... ես եւ բոլորի նման մի մարդ եմ... ունիմ լաւ և վատ կողմեր... վատ կողմեր դուցէ աւելի շատ... Եւ երբ մի օր դու կը նկատես, որ ես եւ մի մարդ եմ... մի խեղճ, հասարակ մահկանացու և ոչ քո վառ երևակայութեամբ ստեղծած քիմերը, ցնորքը... ո՞վ կարող է երաշխաւորել, որ այդ օրը դու ինձ չես ապիլ... Այն ժամանակ ինչ կանես...

ԺԵՐՄ. Յիմարութիւններ ես խօսում...

ԼԻԻՍ. Ո՛չ, սա շատ բնական է... Եւ ամենուրեք դու միշտ միևնոյն բանը կը ասես, ինչ որ ձեզ մօտ է... աւելի կամ պակաս... այս կամ այն ձևով... Արտաքինը կարող է փոխուել... բայց հոգին միևնոյնն է մնում... Մարդկային խեղճ հոգին է այդ՝ իր ազահուլթեամբ, իր շահերով... իր եղծիչ կրքերով... իր ոճիրներով... բայց և իր ճակատագրական թշուառութիւններով... Նրան աւելի խղճալ է հարկաւոր, քան ասել... Որովհետև նոյնիսկ ամենաբնիկուած մարդու... ամենախստասիրտ ոճրագործի մօտ միշտ կարելի է տեսնել, գտնել լուսոյ մի փոքրիկ ճածանչ... որը նրան գթութեան արժանի է դարձնում...

ԺԵՐՄ. Գթութիւն... Սակայն քանի որ իմ սիրտս լի է գթութեամբ... անա թէ ինչու նա լի է և ատելութեամբ...

(Ախսիէն մեզմ կերպով ձերմէնից յետ է քաշում. ձերմէն նրան նորից իրան է մօտեցնում) Լա... լա... սիրալիր եղիր... վերադարձիր... (Առուծիւն... ձիգ թափելով) Ես քեզ բոլորը չը յայտնեցի... ծնողներիս և իմ ամօթխածութիւնը խնայելով... ևս քեզ բոլորը չ'ասացի... Եւ ևս սխալուեցայ... Որովհետեւ սիրող զոյգը պարտ է ամեն ինչ ընդհանուր գարձնել... Երանց ուրախութիւնը... իրանց վիշտը և իրանց ամօթը... Քեզ յայտնի է իմ կեանքի միայն մի մասը... սակայն քեզ ծանօթ չէ իմ ամբողջ կեանքը... իմ ներքին և դադանի կեանքը... է՛հ. իմացիր և այն... Արժէ որ իմանաս, երբեւտ ևմ քեզ... Իմ մայր... Ոչինչ կամ շատ քիչ բան է ներկայացնում... Ես նոյնիսկ չար չէ... Ես կարծում է՝ թէ ինձ սիրում է... բայց նրա սերտը՝ ուրիշների օրինակին հետեւելով՝ քիչ-քիչ, առանց իր գիտութեան, կոչուեցաւ... փոքր խիղճ ունէր, այն էլ յղիութեան և հարստութեան մէջ անհետացաւ... Իր դէպի ինձ ունեցած, ինչպէս ինքն է անուսնում, քնքուչութեան հետ նա միացնում է այնպիսի գոհնակ, այնպիսի անարգ, այնքան օտար, մայրական սիրոյ հետ ոչ մի կապ չ'ունեցող հոգսեր,—որ ևս՝ հակառակ իմ թափած ճիգերի և գերծ գրած դատողութիւնների, երբէք չը կարողացայ նրան մայր համարել, իմ մայրը համարել...

ԼԻԻՍ. Դու նրա նկատմամբ մեծ պահանջներ ևս ունեցել:  
ԺԵՐՄ. (Քիչ զրգուած). Ի՞նչ ևս ինձ այդպէս նեղացնում...  
Ընչու ևս ինձ այդպէս զղային գարձնում... Ես նրանից ոչինչ չէի խնդրում... երբեմն մի մպիտ... մատահութիւն... բարութիւն... այն բարութիւն... Միթէ իրօք շատ բան ևմ պահանջել... Բայց դու նրան չես ճանաչում... Ես պարտ էր այս տան մեղքը քաւել... Ես կարող էր հեշտ իրադրժեղի բարիքներով,—եթէ բնական աստաածեանութիւն չ'ունէր,—իր կանայի վարեողութեամբ կարող էր թեթեացնել, նուազացնել այն շարիքը, որ ատրածում է իմ հայրը ամենուրեք... Սակայն նա ոչինչ չարեց, ոչինչ... Ես զգում է, թէ և մութ կերպով, բայց զգում է իմ հօր բոլոր մեքենայութիւնները, մութ գործերը, մոլեգին և արիւնարբու ակործակը... Բայց և այնպէս չը նայած իր վտըրիկ զանդաաներին, փոքրիկ ըողոքներին, նա՝ շնորհիւ իր ամուսնական պարտականութիւնների սխալ ըմբռնման, պաշտպանում է հօրս բոլոր գործերը, նրանց ծառայում... և հարկաւոր եղած զէպքում նրանց վրայ նոյնիսկ նորերն աւելացնում... (Աւելի զոտնութեամբ). Եւ ևս նրան մեղադրում ևմ ոչ նրա համար, որ նա ինձ չէ սիրում, այլ որ ևս ինքս չը կարողացայ ներան սիրել... այնպէս, ինչպէս ևս կը ցանկանայի սիրած լինել իմ հարազատ մօրը...

ԼԻԻՍ. Սակայն, իմ սիրելի ժերմէնս, քո ասածներդ լսելուց յետոյ ես նրան աւելի եմ խղճում... Մարդիկ գթութիւն են չարժում աւելի իրանց թուլութիւններով, երբեմն ծաղրելի կողմերով, քան իրանց առաքինութեամբ... Որքան ես քո մօրը ճանաչում եմ, նա մի խեղճ, թոյլ և մութ արարած է... փարթամ հարստութեան մէջ ինքն իրան կորցրած... աքսորութեան մատնուած... Նա անում է այն, ինչ որ կարող է...

ԺԵՐՄ. (Գողալով). Իոկ իմ հայրը... նա ես այն է անում, ինչ որ կարող է... Արևանգում... բորսային ճարպիկ խաղեր... շանտաժներ... դավանք... խաբեքայութիւն... որ նա «գործեր» անունով է քողարկում... և սպանութիւններ... Ահա նրա պատմութիւնը:

ԼԻԻՍ. Դու միայն վատն ես տեսնում, երբէք լաւը չես նկատում, որ դոնում է միշտ վատի մօտ... Սակայն չը նայած հօրդ վատ, սարսափելի բնաւորութեան... նա մեծ մեծ բաներ էլ է կատարել...

ԺԵՐՄ. Իմ ինչիս են հարկաւոր... քանի որ նա ինձ համար ոչինչ չի արել... Մեծ բաներ... Օ՛հ, թող ինձ իմ ասելիքս վերջացնեմ... Նա այսօր պահանջ եմ գումար քեզ յայտնելու, քո առաջ ազգակիցու իմ բոլոր զգումները... Ներք ես կը վերջացնեմ... դուրսէ գու կը հասկանաս և այն ժամանակ կը կայացնես քո վճիռը... Ահա այդ երկու անձանց մէջ եմ ես ապրել... մեծացել... Անխնամ... աչքաթող՝ մի օտար էի ես... ընտանեկան կենդանուց էլ ցած... Երեակայում ես Պարիզի մեր տունը և այստեղ՝ այս գղեակը... և ինձ նրանց մէջ... Մի կատարեալ դժոխք... ուր ես ոչ մի անգամ չը պատահեցի խաղաղ, անգործ հայացքներ... ուրախ, երջանիկ դէմքեր... ուր ես ոչ մի անգամ չը լսեցի քաղցր և բարի խօսք... Տեսողային աճապարանք... յուզմունք... դժբախտութիւն... ծամաճոռող ծիծաղ... ոճրի ապրթէոզը... Մարդիկ են անբնդհատ գալիս... դնում և այլևս չը վերադառնում... ինչպէս երեկ՝ չը գիտեմ որակիցի եկած այն երկու յիմարները... նրանք այս երեկոյ պիտի վերադառնան՝ կորցնելով իրանց հարստութիւնը, եթէ ունեն և իրանց պատիւը, եթէ դեռ պատիւ ունեն... (Լրումիւն:—Աւելի ցաւազին ձայնով): Պատահում են երբեմն մեղսակից դէմքեր... սակայն աւելի յաճախ՝ զոհեր... անձանթ թշուառներ, սրոնց լաց ու կոծի, ծայրայեղ կարօտութեան մասին ես իմանում էի հօրս պատմուածքներից... Երեկոները, ընթրիքի ժամանակ, հայրս նստում օտարների և մեր առաջ պատմում էր իր քաջագործութիւնները... Ո՛րպիսի չարագուշակ խնդրութեամբ... մարդասպանի խիական քրքիջով նա մեզ պատմում է՝ թէ ինչպէս է խաբել սրան, կողոպտել միւ-

սին... պատիւը արատաւորել մի երրորդին... Եւ դու զեռ ինձ կշտամբում ես, թէ ես դուժ չ'ունեմ... Ա՛խ, Լիւսիէն, Լիւսիէն... դու չը դիտես... այս երկար ու ձիգ նզովուած տարիները ընթացքում ես միմիայն գթութեամբ եմ ապրել... Փնդոցում սգաւոր կնոջ և փոքրիկ երեխաներ հոնդիպելիս ինքս ինձ հարց էի տալիս. «դուցէ սրանց սղի պատճառը ես մենք ենք»: Մէկի արտասուքը տեսնելիս ինքս ինձ ասում էի. «դուցէ մեր պատճառով է արտասուում»:

ԼԻԻՍ. (Խորին խանդաղատանքով) Ի՞նչու ես դու քեզ այդպէս տանջում...

ԺԵՐՄ. Դժբախտաբար... դրանից ես արդէն տուժել եմ... Բանկիր Գաբրիէլ Դոֆէնի մասին դու ոչինչ չես լսել:

ԼԻԻՍ. Այո, լսել եմ:

ԺԵՐՄ. Եւ դիտես, թէ, նա ինչպէս է մեռել:

ԼԻԻՍ. Գիտեմ, ինքնասպանութեամբ...

ԺԵՐՄ. Նրա ինքնասպանութեան պատճառը մենք ենք եղել... (Լէւսիէն ցնցում է) Այո, այո, պատճառը մենք ենք եղել... Ես չեմ կարող քեզ լաւ բացատրել այդ գրամայի բոլոր մանրամասնութիւնները... Առեարական դորժերից առհասարակ ես ոչինչ չեմ հասկանում... Սակայն ահա թէ ինչ կարողացայ եւ իմանալ... ինչ իմ ականջիս հասաւ... ինչ որ Պարիզում խօսում էին ամենուրեք... Լրագիրները... ո՛չ... նրանք համբ էին... չէ որ հայրս նրանց պաշտօնակիցն էր... Եւ յետոյ նա անկասկած նրանց կաշառած կը լինի... (Ժերմէնի ձայնը դողողում է... Դէմքը ցաւ եւ տանջանք է արտայայտում):

ԼԻԻՍ. Քո այդ յիշողութիւնները քեզ ցաւ են պատճառում... իմ սիրելի Ժերմէնս... Ձեռքերդ այրում են... Հեկեկանք եմ ես քո ձայնից լսում... բաւական է... ես քեզ խնդրում եմ...

ԺԵՐՄ. Ո՛չ... ո՛չ... բնդհակառակը, դա ինձ թեթևութիւն է պատճառում... կարծես մի ցաւ, որ ինձ տանջում, խողխողում է, հանում ձգում եմ ինձանից... (Շարունակելով) Դոֆէն վասնդի մէջ, յուսահատ, չ'իմանալով ինչ անել՝ վերջին ծայրայեղ միջոցին է դիմում... դալիս է իմ հօր մօտ և խնդրում՝ իրան ազատել... Թէ ինչ առուծախս է նրանց մէջ տեղի ունենում, — ես այդ չը գիտեմ... ինչ գտնուիք... ինձ անյայտ է... Միայն գիտեմ այն, որ հօրս մի խաբուսիկ օգնութեան... դուցէ մի աննշտն խոստման համար Դոֆէն ստիպուած իր բանկի բոլոր մնացած ակցիաները բերում, յանձնում է իմ հօրը պահելու, լսում ես՝ պահելու... Մի քանի օրից յետոյ յանկարծ բորսայում ծախուում են միևնույն ակցիաները միանգամից, բոլորը միասին... Դա մի ընդ-

հանուր սարսափ էր... Արժէթղթերը իջնում են... նրանց հետ միասին խորտակում է և Դոֆէնի տակարական տունը... Դոֆէնը՝ դունա... խելագարուած... զէնքը այլայլուած, վազում, դալիս է իմ հօր մօտ... Խնդրում... սպանում... հօրս առջև ծնկաչոք կանգնած աղերսում... «Ձեր կողմից դա մի ոճրագործութիւն է»։—«Ոչ, դա իմ երաւունքն է»։ «Դուք ինձ կորստեան էք մատնում»։—«Ես ինձ ապահովացնում եմ»։ «Սակայն ես կին, երկխաներ ունեմ»։—«Ես նոյնպէս»։ «Դուք ինձ ինքնասպանութեան դուռն էք հասցնում»։—«Ճաստ իմ հարկաւորն է»... Դոֆէնը վերագոնում է տուն և ատրճանակի մի հարուածով վերջ գնում իր կեանքին... Les affaires sont les affaires...

ԼիւիՍ. Քստմենկի է... Սակայն չէ որ Դոֆէնը նոյնպէս մի խաբերայ, մի գող էր...

Ժե՛Մ. Այդ ժամանակ նա մի թոյլ... մի դժբախտ, մի յաղթուած էակ էր... Օ՛հ, Լիւսիէն:

ԼիւիՍ. Գուցէ դա մի առասպել է:

Ժե՛Մ. Օ՛հ, լռիր... Ձուա ճշմարտութիւն... Ես գնացել էի տիկին Դոֆէնի մօտ... նա ամեն ինչ ինձ պատմեց... Ես նրա ոտքերն ընկնելով նրանից ներողութիւն եմ խնդրել... և նրա հետ միասին արտասուել... Եւ այս մէկը չէ... երկու, երեք... հարիւր... հազար այլ զէպքեր... Այժմ դու կարող ես ասել, որ ես հօրս դատելու իրաւունք չունեմ... (Լիւսիէնը լռում է): Այժմ հասկանում ես դու արդեօք՝ թէ ինչու ես ուզում եմ թողնել, հեռանալ այս տանից, ուր իւրօքանչիւր մի քար, հողի իւրաքանչիւր մի կտոր արտասուքներով ողողուած է գնուել... (Լիւսիէնը լռում է): Ես քեզ ասում էի, որ իմ ծնողները ինձանով երբէք չեն զրազուել... Ես սխալուեցայ... Ո՛չ, նրանք հողում էին իմ մասին և, այ, դու կը տեսնես՝ որպիսի սնձնուիրութեամբ և ընտանեբար... Իմ հայրը ինձ ամուսնացնելու համար մի տարօրինակ սովորութիւն ունէր... այն է՝ իմ միջոցով մեծ գումարներ կորդել կամ ձեռնառու պայմաններ կատել... Մի շահաւէտ գործ իր օգտին ծառայցնելու, ի նախատ իրան վճարու համար նա ինձանով էր մարդկանց հրապուրում... Ես նրա համար այլեւ մի մարդկային էակ չէի... այլ դարձել էի փոխանակութեան արժէթուղթ, սպեկուլիացիայի արժէթուղթ... Աւելին կ'ասեմ, յաճախ նա առուծախօր վերջացնելուց, պայմանագրերը կապելուց յետոյ ինձ էլ վրան աւելացնում, փեշքէշ է անում... այնպէս, ինչպէս մտադործը միւր կշռել-վերջացնելուց յետոյ, իր մուշտարու խաթրի համար մի փոքրիկ կտոր միս է կարում, պցում... Ո՞վ կարող է ասել, որ այս բոպէին այն Գրուզի և Ֆինկի հետ նա հէնց ինձանով չէ առևտուր անում...

ԼԻԻՍԻԷՆ. Քո կիրքը քեզ չեղում, սխալեցնում է, իմ սիրելի Փերմէնս... Ի՞նչու միայն քո հօրն ես մեղադրում, երբ բոլորն էլ ամուսնութեան վրայ այդպէս են նայում... Քանի որ երկու սիրող էակների սուրբ միութիւնը դարձրել են իսկ և իսկ առուծախտի առարկայ, դաշինք, նոտարի մօտ կապուած, կնքուած, ստորագրած պայմանագիր... աւելի կամ պակաս վստայողութիւն, աւելի կամ պակաս լուստառակութիւն այդ առուծախտի ժամանակ... ոչ մի բան չի փոխում... դարձեալ ամուսնութիւն է... Քիչ առաջ դու ինքըդ էիր ասում... մեզ ինչ՝ քանի որ մենք ազատ, մաքուր, սուրբ սիրով ենք միմեանց հետ կապուած... Մոռացիր, Փերմէն, այդ անցեալը... ես քեզ ազաչում, պաղատում եմ...

ՓԵՐՄ. Ես կը մոռանամ... եթէ դու կարող ես, եթէ դու կամենաս ինձ մոռացնել տալ... Եւ ահա ինչ եմ կամենում ես քեզ ասել... Փոխանակ այդ կեանքի դէմ ապստամբելու... ես կարող էի նրա հետ հաշտուել, նրան ընդունել... Միայնակ... առանց իրախուսանքի... առանց նեցուկի... առանց բարեկամի... մարդ վերջիվերջոյ պայքար մղելուց յոգնում է... Օրինակը... սովորութիւնը... բարոյական միայնակութիւնը... կարող են յազմել ամենամեծնուն խղճատութիւն... և ամօթխածութիւն... Խայտառակութեան, ամօթի և ոճրագործութեան այս մթնոլորտում ես՝ անպիտակցարար կարող էի անկումից անկման գալով, գալ հասնել Քասովիէի դրութեան... Թէ ինչպէս և ինչու ապականութիւնից ես ազատուած եմ մեայել... ճիշտն ասած, ինքս էլ լաւ չը գիտեմ... Ես կարծում եմ, որ դրա պատճառը սկզբում իմ զայրոյթը, ծնողներիս դէմ մղած իմ պայքարն էր... յետոյ իմ սէրը... Սակայն սրպիտի տարօրինակ մտքեր եմ ես իմ գլխիցս հեռացրել... Ա՛խ, Լիւսիէն... Լիւսիէն... Եթէ ես քեզ ասեմ... որ քանի-քանի անգամ... զգուած... ծնողներիցս վրէժխնդիր լինելու... նրանց ստորացնելու մի վայրենի ցանկութեամբ... քիչ էր մնում գայթակղուէի, անձնատուր լինէի սպասաւորների կամ ախտատան ծառայողներից մէկն ու մէկի կրքերին...

(Նրա ծայնը փոխում է, կոկորդ սեղմում):

ԼԻԻՍ. Փերմէն... (Խանդաղատանքով բռնկուած վերցնում է նրա ձեռքերը) Փերմէն, լսիր... այդ մի ասա... երբէք այդպէս մի լսօսիր... ճիշտ չէ քո ասածը...

ՓԵՐՄ. Նրանց գէմքերը իրապէս աւելի պակաս հինիկ և մութ էին. քան մարդկային այն բոլոր էակների, որ գալիս գրնում էին մեզ մօտ...

(Արտասում է)

ԼԻԻՍ. Փերմէն... Փերմէն... հանգստացիր... պաղատում

եմ... Գո լստահութիւնը... քո ուղղամտութիւնը... քո ոգու վեհանձնութիւնը... քո ամբիժ սրբութեան իրէտալը... ազատ ե արդար կեանք ունենալու բուն ցանկութիւնդ... ե քո տանջանքները... Աճա թէ ինչի համար եմ ես քեզ սիրում. աւելի այդ ամենի, քան քո զեղեցիութեան համար... Հէնց դրա, հէնց այդ ամենի համար էր... որ ես քիչ առաջ ցնցուեցի... Լաւ ուրեմն... մենք կը մեկնենք... այն Մենք կը մեկնենք, երբ դու կամենաս... Եթէ կամենաս... հէնց այսօր...

ԺԵՐՄ. Այո... այո... Սակայն ոչ իբրև գողեր, որ թագնըւում են... Մենք կը մեկնենք բոլորի ներկայութեամբ... պարզերես, բաց ճակատով... հանգիստ սրտով...

ԼԻԻՍԻԷՆ. Այո...

ԺԵՐՄ. Եւ ամեն ինչ ինձ թող... իմ սիրելի Լիւսիէնս... Ես հասկանում եմ քո խղճահարութիւնը, քո կասկածները... Գանի որ ես այդ չ'ունեմ... ես պիտի գործեմ Վերադարձի, սիրելիս, պաւլյիոն: Հարկաւոր է, որ քո հաշիւները մաքուր լինեն, քո մատեանները՝ կարգին: Ես չեմ ցանկանում, որ իմ հայրը կարող լինի... այդ կողմից քեզ մի որեէ բանում մեղադրել... Համբուրիք ինձ... Գրկիր ինձ ամուր, ամուր (Նրանք զրկատուութեամբ են): Դու ոչ մի բանում չես փոշմանիլ, միամիտ եղիր... Երբ մենք երկուսս միասին կը լինենք... միասին, հետու այստեղից... դու կը տեսնես, ինչպէս ես ուրախ կը լինեմ... այս իմ տղեղ աչքերը երբէք... երբէք այլեւ տխուր չեն լինի... ե դու էլ ինձ այլեւ չես կշտամբիլ... ե ինձ այնպէս կը սիրես... ես քեզ այնպէս կը սիրեմ... Դու կը տեսնես, կը տեսնես՝ ինչպէս մենք երջանիկ, բախտաւոր կը լինենք...

ԼԻԻՍ. Այո, այո... երջանիկ կը լինենք... եթէ միայն դու չը կամենաս, որ մեր երջանկութիւնը մնալանից, կեանքից բարձր, չնաչխարհելի լինի...

ԺԵՐՄ. Չար... (Լուռիւն) Մեր երջանկութիւնը... միթէ շատ ջանք գործ դրիր... մինչև որ կարողացար նրան նուաճել... (Լուռիւն) Փող ունես...

ԼԻԻՍ. (Սմաչելով) Այժմ բաւական... ունեմ... Պարիզում կը ճարեմ... կը գտնեմ...

ԺԵՐՄ. Գնա... զնա... իմ խեղճ սիրելիս: Եւ զղեակից մի հետանալ...

(Լիւսիէնը դուրս է գնում)

(Ժերմէնը ուրախ-զուարթ նայում է նրան):

Ս. ՇԵՆԱՆՑ

(Գը շարունակուի)

## ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐԿԻՑ

### ԱԼԿՈՂԸ ՍԵՈՒՆԴ Է ԹԷ ԹՈՅՆ

Ալիոլակահնութիւնը մաքերը զբաղեցնող կարևոր խնդիրներէն մին է: Պաշտօնական մարմիններ, մասնաւոր ընկերութիւններ, անհատական ուժեր ամէն ճիւղ կը թափեն տարուէ տարի յարաճուն հերպոլ մեծցող չարիքն առաջն տանելու համար: Ալիոլակահնութիւնը մարդկութեան վրայ խուժող ազէաների մեծազոյններէն և անողսքներէն մին է: Փճացնող, քայքայող, սպառող մի զօրութիւն է այն որ իր չարիքները ի զործ կը գնէ ոչ միայն ներկային, այլ և ապագային վրայ. արդարև ալիոլամոլը ոչ միայն իրեն կը մլտաէ, կը փճացնէ, այլ իր սերունդին, իր անմեղ սերունդին, որը կը լինի ջղային, հիւանդոտ, տարախոխիկ հիւանդութիւններէ աւելի սրածագիր, տկարակազմ, լուսնոտ, յիմար, տխմար եայլն, հայլն Ուրեմն այն աղչը, ուր ալիոլամոլութիւնը մեծ յառաջագիտութիւն է քրած, գէպի իր կործանումը, իր փճացումը կը դիմէ արագաքայլ:

Միտա գովելի են այն ամէն ջանքերը, բնկերական թէ անհատական, որոնք աղէտքին առաջն տանելու կը ձգտին: Յաւեա բարերար ջանքեր են անոնք, որոնք կը թափուին մարդը, մոլորեալ և իր չափը չը ճանչցող մարդը, իր տարրական շահերուն գիտակից ընելով և ազատելու համար իր քիմքն ու զգայարանքները, ինչպէս և ստորին զգայումները զգուսող չա-

փազանցութիւններէն, որոնց կատարելագլխս զերի եղած է նա, իր արժանապատուութիւնը կորսնցնելով:

Ամէն կերպով դովելի և քաջալերութեան արժանի ևն հակաշկուական ընկերութիւնները, որոնց թիւը պէտք է մեծցընեն ամէն անոնք, որոնք դիտակցութիւնն ունին ազէտին մեծութեանը, և բարի կամեցողութիւնը՝ իրենց նմաններին օգտակար լինելու:

Այս անհրաժեշտ մի քանի սողերէն յետոյ, զիմենք թէ ալիովը սնունդ է թէ թոյն: Շիտակն ըսելով, վերի սողերէն վերջ այս հարցումը մի քիչ անտեղի չէ: Միթէ ալիովը կրնայ սնունդ լինել երբ անհունապէս վնաս կը հասցնէ մարդկութեան: Թոյն է ան ու զօրաւոր թոյն: Տեսէք սա խեղճ մարդը, անոր ծնկերը կը կթոտին, քայլերը անհաստատ ևն, պատէ պատ կը զարնուի, աչքերը մարած ևն, դէմքը կասկարմիր դարձած է. մարդաձև մի մտակոյտ է նա, առանց մարդկային դիտակցութեան, առանց մարդու արժանապատուութեան: Կր բարբանջէ, կր բարկանայ, կը սպառնայ ուրիշներու, իր նմաններուն, և կամ կ'իշխայ գետին կապարի պէս ծանր ու մեռելահիւսն քունով կը խորթայ: Մի մարդ է դա որ արսէնթով, օղիով կամ վոգկայով է գինովցած: Սա մի ուրիշը որուն ձևաքերը կը դողան, աչքերը վայրագ աբսոլյայտութիւն ունին, մի հնաուուրց ալիւլամոլ է: Տխմար երեոյթ ունի, անոր առողջութիւնը քայքայուած է, ներքին գործարանները, մանաւանդ ուղեղն ու ջղային դրութիւնը մեծապէս խանգարուած, նոյնիսկ փճացած ևն, հիւսնշութիւնների մեծապէս տրամադիր է անոր ամբողջ կազմուածքը, հայն, հայն: Ալիւլն է այս բոլոր չարիքների պատճառը, հետեաբար նա չը կրնար սնունդ լինել, նա բացարձակ մի զօրաւոր թոյն է:

Յանցաւորը սակայն ալիովը չէ այլ մարդը որ, հակառակ իր բանականութեան, վարուել չը գիտէր անոր հետ: Ամէնէն օգտակար առարկան այլ վնասակար, նոյնիսկ վտանգաւոր կըրնայ դառնալ երբ չարաչար կերպով գործածուի: Ամէնէն օգտակար գործիքը մի անխելահասի ձեռքերին մէջ մեծապէս վտանգաւոր կրնայ լինել: Ու մարդուն ընթացքը ալիւլին գէմ պարպապէս մի անչափահաս ու անխելահաս տղու վայել ընթացք է:

Ալիւլը ինքնին մի չարիք չէ. մարդը իր ալիւլամութեամբը չարիք ըրած է այն: Այստեղ, ինչպէս ամէնուրեք, իր չարիքը ճանչնալուն, սահմանէն անդին անցնելուն մէջ կը դրանուի չարիքը: Այն օրը որ բանաւոր վարմունք ունենայ մարդ ալիւլին նկատմամբ, այն օրը սա մի աղէտ լինելէ վաղըրելով, մի մեծ օրհնութիւն կարող է դառնալ:

Չուրը, որ մեզ այնքան պիտանի, անհրաժեշտ մի նիւթ է, մահացու հետեանքներ կ'ունենայ երբ չարաչար ու չափազանց կերպով գործածուի: Միթէ բուն սնունդներն ալ չեն մնասեր մարդուս երբ պէտք եղածէն շատ աւելի չափով ածնուին: Միւս կողմանէ, չէ՞ մի որ նոյնիսկ բուն թոյները մի որոշեալ քանակէ վար վտանգաւոր, երբեմն ալ մնասակար չեն, ու մինչև իսկ իբրև դեղ օգտակարապէս կը գործածուին:

Գործածութեան մէջ չափազանցութիւնը մի կողմ զնկելով է որ կը հարցուի. ալիտը սնունդ է թէ թոյն: Այս հարցումին պատասխանը դրուած է արդէն դարերի երկար շարքին մէջ. շատ հին ժամանակներէ ի վեր մեր նախահայրերն ալիտը գործածած են զինիի, գարեջուրի և ուրիշ խմորեալ ըմպելիքների ձեռն տակ, շատ ջրախառնեալ և չափաւոր կերպով, ի բաց առեալ, հաւանականաբար, բնականական ուրախութեան և ածնական օրերի խնջոյքների առին: Մարդ կարծես ամէն ատեն ու ամէն տեղ զգացած է խմորեալ ըմպելիքների պէտքը: Ուր որ խաղողը փոքրաքանակ է կամ անծանօթ, ուրիշ բերքեր ծառայած են անոնց պատրաստութեանը: Գարեջուրին գործածումը շատ հին է: Վայրենիներն ալ իրենց խմորեալ ըմպելիքներն ունին:

Գարաւոր գործածութիւնը կ'ըսէ ուրեմն թէ ալիտը մի սնունդ է, մի օգտակար ըմպելի, երբ շատ չափաւոր կերպով և ջրախառն վիճակի մէջ կը գործածուի: Մեր նախահայրերը չէին ճանչնար, բարեբաղբարար, այսօրուան թունաւոր ըմպելիքները, տեսակ-տեսակ արաէնթները, բիզէրը, վերմուտը, ամէսը, օզին. կայն, որոնք ախորժակ բացողի ծածկանունին տակ պահուելուամ, իրենց չարաչուք գործը կը տեսնեն:

Գարաւոր գործածումի պատասխանին քով դիտութիւնն ալ լերած է իրենը, կատարուած բազմաթիւ խուզարկումների և փորձերի վրայ հիմնուած: Էնստիտի-Պասսէյսի գիտուն սընօրէնը՝ Մ. Դիւլլօ, այդ փորձերի օմանց վրայ յենած քաջ բարձայն կը յայտարարէ թէ ալիտը թոյն չէ այլ սնունդ: Այս յայտարարութեան վրայ է որ վերջերս այս խնդիրը շատ տաք փճարանութիւնների ասիթ տուաւ: Բնախօս (physiologist) ըլլալի, ատողջարան, կայն, իրենց թեր ու դէմ կարծիքները աւելի կամ նուազ ազմիպի կերպով պարզեցին. հետախուզական ընկերութիւնները անէճք կարգացին Մ. Դիւլլօի դիտուն, մինչդեռ ալիտի գործարանատէրներն և ալիտամոլները, մեծանուն գիտունին միտքը լաւ չը հասկնալով, իրենց շահաբեր ու սիրական ըմպելիքին անմեղութեանն ու անվնասութեանը համո-

ղուած, մինչև երկինք բարձրացուցին՝ ալկոլը իբրև սնունդ յայտարարող գիտունը:

Նոր փորձերը, որոնց վրայ հիմնուած է Մ. Դիւլիօ, կատարուած են Ամերիկայի մէջ, ՄՄ. Էտուտարը և Բէնէզիկիօս կողմէն:

\*  
\* \*  
\*

Ամերիկացի գիտունների, ինչպէս և անոնցմէ առաջ ուրիշների կատարած փորձերը անսնելէ առաջ, պէտք է պատասխանել սա մի քանի հարցումներին. ինչ է սնունդը, ինչ պաշտօն կը կատարէ, ալկոլը իր քիմիական բնութեամբը իբրև սնունդ ծառայելու ընդունակութիւնը ունի:

Առնենք, իբրև օրինակ, մի շողեչարժ մեքենայ: Որպէսզի ա աշխատի, անպատճառ պէտք է որ ածուխ սպառէ—լինի պարզ ածուխ, հանքաածուխ կամ պետրոլ: Միւս կողմանէ, մեքենան գործելով կը մաշի, պէտք է անոր մաշած մասերը նորոգել միշտ: Այսպէս ուրեմն եթէ կ'ուզենք որ մեր մեքենան կանոնաւոր կերպով գործէ պարտինք նորոգել հետզհետէ անոր փտած ու մաշած մասերը ու ածուխ սպառել, ածուխ փտել, այսինքն ջերմութիւն արտադրել, որը մեքենական աշխատութեան պիտի փոխուի: Տրուած լինելով մի մեքենայ, կարելի է որոշապէս հաշուել թէ որքան ածուխի սպառում կը պահանջէ ան գործելու համար:

Մարդկային մարմինը կարելի է նմանցնել ածուխ սպառող մի մեքենայի. ածուխ բառը կը կրկնուի, որովհետև հիմա կը կտրականութեամբ գործող բազմաթիւ մեքենաներ կան: Մեր առած սնունդը ուրեմն երկու պաշտօն ունի կատարելու. մին է շինել ու աճեցնել մեր մարմնին այլևայլ գործարանների և մասերի հետկէնները, բջիջները (cellule) և միանգամայն նորոգել մաշածները երբ մարմինը զարգացման չրջանին մէջ կը գտնուի, իսկ միայն նորոգել մաշած բջիջները երբ մարմինը, այլևս անցուցած լինելով զարգացման չրջանը, կայուն կամ ձերացող վիճակների մէջ է. միւսն է ջերմութիւն արտադրել, որի մի մասը պիտի ծառայէ կենդանական ջերմութեան աստիճանը անխախտ պահելու, միւս մասն ալ պիտի փոխուի մեքենական աշխատութեան, անոր շնորհիւ է որ պիտի կրնանք քալել, Ֆի որեւէ շարժում ընել, մի որեւէ ձեռական աշխատութիւն կատարել և այլն:

Այս տողերէն ետք դիւրին է սնունդին սահմանը տալ. սնունդ է այն նիւթը կամ գոյացութիւնը (substance), որ կը

նպաստէ մեր կազմուածքին շինութեանը և նորոգութեանը, կամ հարկաւոր ուժին արաւազութեանը, առանց որեւէ կերպով միասակար ազդեցութիւն ընելու: Սահմանին վերջին մասը կարծոր է և կը պարունակէ չափի և պատրաստութեան խնդիրները: Այսպէս օրինակի համար, քաղախը սնունդ է իր սովորական վիճակին մէջ և թէ փոքր քանակութեամբ առնուի, իսկ երբ մեծ քանակութեամբ գործածուի կամ վերջին աստիճան բարկ վիճակի մէջ, ինչպէս կը դանուի քիմիական լաբորատորներին մէջ, միասակար ազդեցութիւն կ'ընէ մեր բջիջներին վրայ, հետևաբար սնունդ լինելէ զաղբելով թոյն կը լինի: Պէտք է որունմ թէ քանակը և թէ պատրաստութեան կերպը միշտ աչքի առջևէ չը հեռացնել:

Սնունդները երկու մեծ խումբի կը բաժնուին, սնունդ որոնք շինող և վերանորոգող են, և սնունդ որոնք ջերմածին, հետևաբար ուժածին են: Առաջիններէն են միսը, հաւիթը, պանիրը, հացը իր սնձանի (gluten) մասովը: Այս նիւթերը քիմիական կերպով կազմուած են չորս տարրերէ՝ բնածուխէ (carbone), թթուածինէ (oxygène), ջրածինէ (hydrogène) և բորակածինէ կամ ազոտէ: Չորս տարրերէ կազմուած լինելուն համար կը կոչուին նաև քառատարր մարմիններ: Անոնց վրայ պէտք է աւելցնել նաև մետաղական մի քանի ազեր, որոնք ևս շինութեան և նորոգութեան կը ծառայեն: Երկրորդ խումբէն են նշայաւոր մարմինները, իւղերը, չաքարը, կաշն. ասոնք կը կազմուին երեք տարրերէ՝ բնածուխէ, թթուածինէ և ջրածինէ. հետևաբար եռատարր մարմիններ են: Այս եռատարր սնունդները մարսողութեան միջոցաւ անցնելով արեան մէջ, կրակարանին մէջ նետուած ածուխին դերը կը կատարեն, կ'այրին ու ջերմութիւն կ'արտադրեն: Այրելու համար հարկաւոր թթուածինը կ'առնենք թոքերու միջոցաւ, որոնց շնորհիւ նաև կ'արտաքսենք առանց այրելէն ծնունդ առած նիւթերը, այն է՝ ջրաչոյին և ածխական թթուն (acide carbonique): Շոգեչարժ մեքենային մէջ ալ ածուխին այրումը ծնունդ կու տայ ածխական թթուին:

Ալիլը, կազմուած լինելով բնածուխէ, թթուածինէ և ջրածինէ, կարող է միայն ուժածին սնունդի դերը կատարել, բայց չը կրնար որեւէ կազմիչ, շինիչ և նորոգող դեր ունենալ: Այսպէս ուրիմն խնդիրը կը սահմանափակուի:

Մի մարդ, որ արտասովոր կերպով մարմնական աշխատութիւն չ'ընէր, ընդհանրապէս 2,800 կալորի ջերմութեան պէտք ունի 24 ժամուան մէջ: Կալորին՝ է մի գրամ ջուրը մի աստիճան տաքցնելու համար հարկաւոր ջերմութեան քանակը: Մարմնական աշխատութիւն ընող մարդը բնականաբար աւելի

մեծ քանակի պէտք ունի. կան գործաւորներ, որոնք իրենց աշխատութեան տեսակին համաձայն, մինչև 5000 կալորի ջերմութեան պէտք ունին: Արդ այդ հարկաւոր ջերմութիւնը, ինչպէս վերը տեսանք, կ'արտադրեն ետատար մարմինները, նըշայաւոր մարմինները, ճարպը, խղերը, շաքարը հայլն: Աւնենք այս վերջինը. մի գրամ շաքարը այրելով 1 կալորի ջերմութիւն կ'արտադրէ, ըսել է թէ սովորական աշխատութիւն ընող մարդը 700 գրամ շաքար ուտելով կրնայ գոհանալ: Մի գործաւոր որ օրը մի կիլօգրամ շաքար կ'ուտէ, իրեն հարկաւոր ուժածին սընունդը կ'առնէ: Աւելորդ է ըսել թէ շաքարին հետ պէտք է որ նաև սնունդի միւս խումբէն ալ մի բան ուտէ:

Մի գրամ ալիլը այրելով կուտայ 7 կալորի ջերմութիւն, ըսել է շաքարին տուածին գրեթէ երկու անգամին չափ: 10 աստիճանի մի լիտրա գինին, կրք այրենք, կ'արտադրէ 700 կալորի ջերմութիւն. ուրեմն, արեսականօրէն, չորս լիտրա գինին կամ մի լիտրա օղին (40 աստիճանի) ամբողջ մի օր պիտի կրնան բաւել պէտք եղած ոյժը արտադրելու համար. այլևս ոչ ճարպաւոր, ոչ նշայաւոր նիւթեր, ոչ ալ շաքար ուտելու. հարկ չը կայ: Իսկ գործնականի՞ն մէջ, այստեղ խնդիրը բոլորովին կը տարբերի:

Ռուսական կառավարութիւնը չսփեկառերէն շատերը, ինչպէս և Բալտիկ ծովի վրայ բանող չսփեկառերը աշխատանքներու համար ամուրի տեղ մազուտ կը գործածէ, որովհետև կը տեսնէ որ այս վերջինը աւելի խնայողական է: Ասոր համար մեքենաների կրակարանները պէտք եղած փոփոխութիւնը կրած են: Ուրիշ տեղեր, ուր ջուրի զօրաւոր հոսանքներ և անհուններ կան, ելեկտրականութիւն կը գործածեն, որովհետև սա ամուրի կամ ուրիշ մի որեւէ ուժ արտադրող միջոցէ աւելի խնայողական է: Ելեկտրաշարժ մեքենաներն ալ հարկաւոր փոփոխութիւնը կրած են իրենց շինութեանը մէջ:

Հարցումը որ կը ներկայանայ մեզի հետեւալն է. ալիլը որ այրելով մեծ քանակութեամբ ջերմութիւն կ'արտադրէ, մեր մարմինն մէջ կրնայ անմիտ գործել: Մեր մարմինն վառարանը այդ նիւթը այրելու յարմար է միթէ: Եթէ այո, շատ լաւ է, որովհետև ալիլը, ուժի տեսակէտով, խնայողական է, եթէ ոչ—պէտք է էսկոյն մի կողմ գնել այն, որովհետև անկարող ենք մեր վառարանը փոխելու: Գիտութիւնը կրնայ վերջին աստիճան կատարելագործեալ մեքենաներ հնարել, որոնք պիտի գործեն ելեկտրական կամ ուրիշ նորապիտ գործութիւնների միջոցաւ. մեր մարմինը իր զիտցածէն անդին չ'անցնիր բնաւ, իր

ածուխէն զատ ուրիշ բան չը ճանչնար: Մեզ կը մնայ ուրեմն համակերպիլ անոր գործելու եղանակին:

Մեր մարմինը, կամ մեր վառարանը կրնայ առանց վեատուելու ալիով գործածել: Այս հարցումին պատասխանելու համար ականենք հին և նոր փորձերէն մի քանիները:

\*  
\* \*

Գերմանացի նշանաւոր քիմիագէտը, Լիբիկ, անցեալ դարի կէսին, կ'ընդունէր թէ ալիով կրնայ մեծ մասամբ այրել մեր մարմնին մէջ ու իբրև սնունդ ծառայել:

1860 թւականին Մ. Պէուէն, մի քանի աշխատակիցների հետ փորձեր կատարելով շուների վրայ, յանդամ է սա հետևութեան, ալիով ներմուծուելով կենդանական կազմուածքի մէջ, մարսողական խողովակի կամ երակների մէջ ներարկութեան շնորհիւ, առանց որևէ փոփոխութիւն կրելու դուրս կ'ելնէ անկէ: Պէաք է ըսել թէ այդ գիտունին փորձելու եղանակը կարող չէր այսքան վճռական հետևութիւն տալու: Արդարև Մ. Պէուէն խոշոր շուների խմչնիկ կու աար մեծարանակ ալիով, այնպէս որ կենդանիները իսկոյն գինովալով խոր քունի մէջ կը մտնէին: Այս գինովութեան պահուն անոնց երակներէն արիւն առնելով, թորումով (distillation) անոր պարունակած ալիոյ չափը կ'որոշէր: Թորումէն—բաւական մեծ քանակութեամբ ալիոյ յառաջ կու գար: Այս կերպով ակզի ունեցած փորձը որոշապէս մի բան կարող է հաստատել, սա թէ ստամոքսին մէջ մասն ալիով իսկոյն արեան չըջանին մէջ կ'անցնի: Այդ փորձ անկարող է ըսելու թէ ալիով չ'այրեր, քանի որ գործողութիւնը վերջացած չէ, շուների խոր գինովութիւնը արդէն այս մասին մեծ ապացոյց է:

Ուրիշ գիտուններ ալ, հիմնուելով Մ. Պէուէնի հետևութեան վրայ, ընդունած են ալիոյն առանց այրելու կազմուածքէն դուրս ելնելու իրողութիւնը, որ ինքնին ճիշտ չէ բնաւ:

Բազմաթիւ ուրիշ փորձեր սակայն ըստօրովին հակառակը ապացուցած են: Մի նիւթ որ արեան չըջանին մէջ կը մտնէ, փոփոխութիւն կրէ թէ ոչ, կ'արտաքսուի սա երեք ճամբաների միջոցաւ, երկամուտնը, թոք և մորթ: Բինցի փորձերը 1880-ին, ինչպէս և Բոլդէնըրի, Ալբերտոնի (1888) և Շարասմանի (1891) փորձերը, շատ ճշգրիտ կերպով կատարուած ներս առնուած ալիոյն երկամուտնների, թոքերի և մորթի միջոցաւ առանց փոփոխութեան արտաքսուած մասին քանակը ճշտելու համար,

ցոյց կու տան թէ ներս առնուած ալիոյին հարիւրին 95 մասը, աւելի իսկ, կ'այրի մարմնին մէջ:

ՄՄ. Ռոսի և Հէդոնի փորձերն ալ այս մասին վճռական են: Այս երկու բնախօսները իրենց փորձերը կատարած են ճարարների և շուների վրայ, անոնց տալով մահացու չափէն քիչ պակաս քանակութեամբ ալիոյ: Երկու տեսակ կենդանիներն ալ այդքան աննպաստ պարագաների մէջ ներս առած ալիոյը մեծ մասամբ այրած են: Ճագարին թոքերէն միայն 1 % ալիոյ արտաչնչուած է բնական վիճակի մէջ, առանց որեւէ փոփոխութիւն կրած լինելու: Իսկ շունը իր բնգունած մեծկակ չափին հարիւրին միայն 4 մասը երկիւմունքների և թոքերի միջոցաւ արտաքսած է առանց փոփոխութեան, մնացեալ 96 մասը այրած է անոր կազմուածքին մէջ:

Ընդհանուր կերպով այս ամէն փորձերը որոշապէս ցոյց կու տան թէ խմուած ալիոյին հարիւրին 94-էն մինչև 98 մասը կրնայ այրիլ ու կ'այրի մեր կազմուածքին մէջ:

Այսքանով խնդիրը չը վերջանար, արդարեւ բնաւ չը բաւեր գիտնալ թէ ալիոյը մեծ քանակութեամբ կրնայ այրել մեր մարմնի մէջ, պէտք է նաև ու մանաւանդ գիտնալ թէ, մեր մարմինը այդ այրուած մասին ուժը կարող է օգտակար կերպով գործածել, և թէ նոյնիսկ ալիոյին ուժը մեր կազմուածքին համար վնասակար չէ միթէ: Գիտենք թէ ծծումբը այրելով ջերմութիւն կ'արտադրէ, բայց կարող չենք ծծումբ վտակ կրակարանների մէջ, ոչ իսկ մեծ քանակութեամբ ծծումբ պարունակող անոխ, որովհետև ծծումբը այրելով, իրաւ է որ ուժ կ'արտադրէ, բայց իր ծնունդ տուած կազերովը կը վնասէ կրակարանին և խողովակներին, կ'ուտէ, կը մտչէ անոնք, հետևաբար օգտակար լինելէ աւելի վնասակար է: Միևնոյն հարցն է որ կը ներկայանայ մեզ այս պահուս ալիոյին համար:

Մ. Շարասմանի և Մ. Ռոսի փորձերը այս հարցին պատասխանելու համար կատարուած են: Առաջինը, 1891-ին, առած է երկու շուներ, մին 4700, միւս 4800 գրամ ծանրութեամբ. երկուքն ալ միևնոյն ժամանակի տեղութեան մէջ փորձի ենթարկելով կերակրած է միևնոյն կերպով, միայն թէ անոնցմէ մին կ'ընդունէր նաև մի քիչ ալիոյ: Որոշեալ ժամանակէն վերջ առաջինը, որ ալիոյ չէր ընդուներ, 6,860 գրամ կը կշտէր, մինչդեռ միւսը՝ 7,120: Ներքին քննութիւնը ցոյց տուած է նաև որ առաջինը միայն 138 գրամ ճարպ վրայ գրած է, մինչդեռ միւսը՝ 335 գրամ:

Մ. Ռոս կորէյների վրայ փորձած է նոյնիսկ գինիին ազդեցութիւնը: Միևնոյն տարիքով և միևնոյն ծանրութեամբ բազ-

մաթիւ կորէյներ երկու մասի բաժնելով կերակրած է միևնոյն կերպով, սա տարբերութեամբ որ մի խումբի կորէյները կը ստանային նաև 9 աստիճանի սովորական կարմիր գինի, խրաքոնչիւր կից ծանրութեան համար 30 խորանարդ սանտիմէտր չափով: Այսպէս երեք ամիս սնանկէ յետոյ, գինի ստացող կենդանիների իւրաքանչիւրը գինի չը ստացողների իւրաքանչիւրին վրայ 5,60% կը շահէր ծանրութեան կողմանէ. այդ տարբերութիւնը հինգ ամիս վերջ 12,89% կը բարձրանար: Վեցերորդ ամիսին, գինի չստանող կենդանիներէն շատեր կը մեռնին, մինչդեռ գինի ստացողները միշտ յարածուն դարգացման մէջ են: Փորձի պահուն գինի գործածող կենդանիները որևէ անհանդատութեան նշան չեն տուած. անոնց ծննդական գործարանները աւելի գործօն վիճակի մէջ եղած են, ու անոնց սերունդին մէջ մաշը գրեթէ այնքան զո՞ քան ըրած է, որքան գինի չը գործածողների սերունդին մէջ. 23,30% առաջիններէն, 22,30% վերջիններէն:

Նոյն գիտունին ձուկերի վրայ կատարած փորձերն ալ կ'ապացուցանեն զոնէ գինիին սնունդ լինելը: Պէտք է մտնալ թէ ինչոյրը միշտ քիչ քանակութեամբ և շատ ջրախառն վիճակի մէջ գործածուած ալիւլին վրայ է:

Այս բոլոր փորձերը գիտական կերպով ալիւլի խնդրին վերջնական լուծումը տալու վրայ էին երբ մի նշանաւոր և հեղինակաւոր բնախօս, Մ. Շոլօ, հիմնուելով իր անձնական փորձերին վրայ, յայտարարեց թէ ալիւլի աննպական արժէքը շատ ոչինչ է:

Մ. Շոլօ շուների վրայ կատարած է իր փորձերը: Ամիսներով փորձի ենթարկուած կենդանիները սնած են միտով և չաքարով: Օրինակի համար, մի շուն փորձի տեսչութեան միջոցին 622 գրամ վրայ դրած, գերացած է ու 622 և կէս քիլոմէտր ճամբայ կրցած է ընել: Միևնոյնը շունը, միևնոյն պայմանների մէջ նոյնքան ատեն, կրկին անգամ փորձի ենթարկուած է, միայն թէ այս անգամ չաքարին մը մասին տեղ համադր քանակութեամբ ալիւլ խմած է գինիի վիճակին մէջ: Վերջին փորձին մէջ արուած չաքարին և գինիին ջերմական ուժերի գումարը հաւատար էր առաջինին մէջ արուած չաքարին ջերմական ուժին: Պարզապէս, 84 գրամ չաքար պակաս տալով, անոր տեղ 48 գրամ ալիւլ տուած է շանը: Վերը տեսանք թէ մի գրամ չաքարին ջերմական ուժն է 4 կալորի, մինչդեռ մի գրամ ալիւլինը՝ 7 կալորի: Մսին քանակը բնականաբար միշտ նոյնը մնացած է: Այս երկրորդ փորձի տեսչութեան մէջ շունը 116

գրամ կորսնցուցած է իր ծանրութենէն, ու միայն 504 կիլոմէտր ճամբայ կրցած է ընել:

Այս փորձերի գէժ մի աւարկութիւն կարելի է ընել. տրուած ալիոլի քանակը, 48 գրամ և մէկ անգամէն, չափէն աւելի է, շունը զինովցուցած է, սա ալ ընականաբար քիչ աշխատութիւն կրցած է ապա Ուրեմն Մ. Շուօի փորձերը որոշ կերպով կը հաստատեն թէ Իւրաքանչիւր կիլոգրամի ծանրութեան համար արգէն իսկ 2,50 գրամ ալիոլը վնասակար ազդեցութիւնը կ'ընէ, ու իբրև սնունդ չը կրնար ծառայել: Այսպէս մի մարդ որ 60 կիլո կը կշտէ, երբէք պէտք չէ խմէ օրը 150 գրամ ալիոլ, որը կ'ընէ երկու չիշ գինի, կամ կէս չիշ օգի: Այս քանակների կէսն իսկ վնասակար է ու վնասակար կերպով կ'ազդէ ուղեղին և ջիզերին վրայ:

\*  
\* \*

Մ. Մ. Էստուտորը և Բենեդիկտ, մի քանի ուրիշ գիտունների հետ, վերջին ժամանակներս նոր փորձերով ուղած են ալիոլի խնդիրը մտէն քննել: Փորձերը, որոնք մարդերի վրայ կատարուած են, իրենց ճշգրտութեամբը, կատարկութեամբը և ընդարձակութեամբը բոլոր գիտունների հիացում պատճառած են: Պէտք է ըսել թէ միլլիտնաւոր ֆրանկներ արժած են անոնք: Ինչպէս կը տեսնէք, ամերիկացի բնախօսները գործը ամերիկեան ճոխութեամբ ու մեծութեամբ սկսած ու ի գլուխ հանած են:

Գործիքը, ուր փորձի ենթարկուած անձը երեք չորս օր պիտի սպրի, գործէ, քնէ, շատ զգայուն մի կալորիմէտր է, մի սենեակ որի մէջ արտադրուած ջերմութեան քանակը շատ ճշտաբար կարելի է չափել:

Երբ փորձի ենթարկուելիք անձը կը մտնէ գործիքին մէջ, այլևս անոր կերած ու խմած բոլոր սնունդներն և ըմպելիները քիմիագէտների կողմէ կը վերլուծուին (analyser). այսպէս յայտնի կը լինի միշտ թէ որքան ուժ կը արուի անոր: Փորձարկելը կը խմէ օրը մէկ չիշ գինի, որը 72-էն 73 գրամ ալիոլ կը պարունակէ: Իւրաքանչիւր վեց ժամը մի անգամ հարկաւոր չափերը կ'աւանտին, անոր արտաշնչած օգին և ամխական թթուին, լնչպէս և արտաքսած հեղուկին և հաստատուն մարմիններին վերլուծումը տեղի կ'ունենայ, արտադրուած ջերմութեան քանակը կը չափուի, կայն: Այս բոլոր չափերը ցոյց կու տան թէ փորձի ենթարկուած անձը սնունդների և ըմ-

պելիքի ձևին տակ առած ուժէն օրքանը արաարսած և օրքանը սպառած է:

Պէտք է աւելցնել թէ գործածուած ալիսիլի չափը խրաքանչիւր կիլո ծանրութեան համար մի գրամ եղած է, այսինքն օրինակի համար, 73 կիլո կշտող մի մարդ օրը 73 գրամ ալիսիլ խմած է շատ ջրախառնեալ վիճակի մէջ:

Այս ճշգրիտ և մանրամասն փորձերի արդիւնքն եղած է սա, թէ ալիսիլը, երբ այդ որոշեալ քանակութեամբ առնուի, ուժ կ'արտադրէ յարկնման միւս ուժածին անունդների:

Մ. Գիւկլօ այս փորձերի վրայ հիմնուելով բրած է իր յայտարարութիւնը, որը այնքան ազմուկ հանած է:

Այսպէս ուրեմն զիտութիւնը ճշգրիտ փորձերով կու գայ կը հաստատէ զարաւոր գործածութեամբ նուիրագործուած սա կէտը, ալիսիլը օգտակար է ու կազդուրիչ երբ քիչ քանակութեամբ և խմորեալ բմպելիների ձևին տակ,—զինի, գարեջուր —կ'առնուի: Մի չափահաս մարդու համար օրական մի քանի գաւաթ զինի վնասակար չէ այլ օգտակար:

\*  
\* \*

Ալիսիլամիսութիւնը ծնունդը առած է այն օրէն երբ շատ ածան կերպով և մեծ քանակութեամբ ալիսիլ պատրաստած են գործարանները: Այդ ածան ալիսիլը բնականաբար վատ տեսակէն կրնայ յինել, որով գործարանատէրերը պարտկելու համար վատ ալիսիլին փառ ճաշակը, անոր խառնած են և կը խառնեն այլևայլ օղիներ և գոյներ, գոյներ որոնք բոյսերէ քաղուած են և մեծապէս թունաւոր: Այս կերպով ծնունդ առած են այն բոլոր խմիչքները, որոնք իբրև թէ ախորժակ կը բանան, մինչդեռ իրականապէս յայտնի է որ անոնք կազմուածքը կը թունաւորեն:

Այդ ախորժակ բացող խմիչքների ամէնէն ահռելին է արսէնիթը, որը կը պարունակէ մի քանի բոյսերէ հանուած օղիներ, որոնք պարզապէս թոյներ են և որոնք այլևայլ վնասակար ազդեցութիւններ կ'ընեն: Այսպէս արսէնիթի օղին լուսնոտութիւն (épilepsie) կը պատճառէ, ուրիշները յիմարութիւն կ'առթեն: Ամէն անոնք, որոնք այս սոսկալի խմիչքը կը գործածեն, պէտք է գիտնան թէ անոր մէն մի կաթիլը թոյն է, ու իրենք զիտակցութեամբ կամ անգիտակցութեամբ կը թունաւորեն իրենց անձը, իրենց եղբայրները, իրենց աղաքայ սերունդը: Ախորժակ բանալու ծառայող միւս բմպելիներն ալ, բիտրը, վերմուտ, ամէն ևայն, մեծապէս վնասակար և թունաւոր են,

անոնք կը պարունակեն բազմաթիւ զօրաւոր թոյներ: Յօգուածի շրջանակը թոյլ չը տար ինձ, որ այս ամէն խմչիքների պատրաստութեան մէջ մտնող այլեայլ բոյսերն ու ողիները թւեամ: Խմաններին կը բաւէ գիտնալ թէ ինչ որ գինի և դարեջուր և կամ ուրիշ որեւէ խմորեալ ըմպելի չէ, թունաւոր է ոչ միայն ալկոլի չափին մեծութեանը, այլև, ու մանաւանդ, անոր հետ խառնուած ողիների, այդ իսկապէս զօրաւոր թոյներ լինելուն համար:

Իրենց պարունակած թունաւոր ողիների պատճառաւ է նաև որ շարտէսողը, բէնէդիկաինը և ուրիշ այս տեսակ ըմպելիները մեծապէս վնասակար են: Թոյնն է վերջապէս որ այս կամ այն աչք չլայնող և քիմքը շոյող ձեռն տակ կը սպրդի կազմուածքին մէջ սուելի կամ նուազ արագ կերպով քայքայելու համար այն:

Պէտք չէ ուրեմն չարաչար գործածենք զխոտութեան յայտարարութիւնը, երբ նա կ'ըսէ թէ ալկոլը սնունդ է:

Մնունդ է ալկոլը եթէ քիչ քանակութեամբ և շատ ջրախառնեալ վիճակի մէջ ներս կ'առնենք, թոյն է ալկոլը,—այս մասին որեւէ վիճարանութիւն գոյութիւն չ'ունի, երբ մեծ քանակութեամբ, սուելի բարկ, և մանաւանդ ինքնին զօրաւոր թոյների հետ խառնուած վիճակի մէջ կը գործածենք:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

## ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՑ

«Խենթին» ցոյց տուած ընդունելութիւնը:—Մի հայ նկարիչ վրաց տաճարում:  
—Գծգոհութիւններ քահանայական դասակարգից:—Տաղանդաւոր գրողներին ապահովացնելու հարցը:—Գիւղացիների տնտեսական անկումը և նրանց հասարակական կեանքը:

«Իվերիա» լրագիրը, որ միշտ մի առանձին սիրով շարում է իր էջերում հայերի դէմ ուղղուած ամեն տեսակ թշնամական ու հայհոյական գրութիւններ և որ ոչինչ արժանաւոր չէ գրտնում այն ամենի մէջ, ինչ որ հայկական է,—տպել է մօտերս (№ 172) մի գովասանական յօդուած հայ գրականութեան մասին: Ինչպէս մեր ընթերցողներին յայտնի է, վրաց «Մոամբէ» ամսագրում տպուած էր սրանից մի քանի ամիս առաջ Րաֆֆիի «Խենթը»: Նրա թարգմանիչ պ. Բ. Եւանդուլեանը լոյս ընծայեց ապա իր այդ աշխատութիւնը և՛ առանձին գրքով, կցելով նրան նաև մի առաջաբան:

Ինչպէս ինքը «Խենթը», այնպէս էլ թարգմանչի այդ առաջաբանը մի անկեղծ ու վսեմ ոգևորութիւն է ներշնչել «Իվերիայի» յօդուածագիր պ. Գ. Նախ.-ին: Պատմական ընթացքը, ասում է պ. Եւանդուլեանը, միևնոյն վիճակի ու բազդի է հանդիպեցրել հայերին ու վրա: իներին, բայց զբանք չեն ուղղում տեսնել այդ, չեն աշխատում խորը թափանցել սիմեանց սրտի ու մտքի մէջ, անսխալ ճանաչել իրար: Մինչդեռ մի այդպիսի ծանօթութիւն, աւելայնում է նա, անհրաժեշտ է ինչպէս բա-

րեկամութեան, այնպէս էլ թշնամութեան համար, որովհետև մարդս իր լաւ ճանաչած թշնամուց աւելի պակաս վնաս կարող է ստանալ, քան անձանօթից: Երկու ազգերի այդ փոխադարձ ծանօթութեան գործին նպաստելու համար նա թարգմանել է «Խենթը» և մտադիր է վրացերէնի վերածելու հետզհետէ նոյն հանդուցեալ տաղանդաւոր հեղինակի «Դաւիթ-Բէկը» և միւս վէպերը, ինչպէս նաև ուրիշ հայ վիպադրոշմերի երկերը:

Պ. Եւանդուլեանի այդ դատողութիւնները և նրա առաջին աշխատութիւնը ասիթ են տուել վրաց լրագրի յօդուածագրին անելու հետեւեալ արդարացի և համակրելի նկատողութիւնը.

«Մեծ ամօթ է մեզ համար, որ չենք ճանաչում այնպիսի մի մօտիկ հարեան ազգի, ինչպիսին են հայերը. չենք ճանաչում յատկապէս նրանց գրականութիւնը, որն անկարելի է որ մեզ համար հետաքրքիր չը լինի: Կարող է մեզ ներուել, եթէ մենք չը ճանաչենք և չը հետաքրքրուենք Եւրոպայի որեւիցէ մի փոքր ազգութեան գրականութեամբ, բայց հայոց գրականութեամբ մենք ոչ թէ միայն պէտք է հետաքրքրուենք ու նրան ճանաչենք, այլ նրան պէտք է արդէն ուսումնասիրած լինեն, ինչպէս նաև իրանք հայերը—վրաց գրականութիւնը: Մեր և նրանց մէջ փոխադարձ յարաբերութիւնը անխուսափելի է, այդ երևոյթը կարող են ուրանալ միայն մտքով կուրացածները: Հետեւ պէս, մենք պէտք է փոխադարձաբար մօտից ճանաչենք միմեանց: Այդ նպատակով պէտք է թարգմանենք միմեանց ամենարժանի գրական արտադրութիւնները, գրենք գրական տեսութիւններ, ուշադրութիւն դարձնենք միմեանց կեանքի զարգացման վրայ ձայն:—Շատ չնորհալիւ պէտք է լինենք պ. Եւանդուլեանից, որ թարգմանել է մեզ համար «Խենթը»: Այդ վկան էլ այնպէս սիրելի կը դառնայ վրաց համար, ինչպէս «Լուսաղիմին», «Գիւղացու պատմութիւնը» և այլ ընտիր զբքերը»:

Անցնելով ապա թարգմանչի լեզուին, յօդուածագիրը վկայում է, որ նա մեծ ջանք է գործ դրել պարզ և կանոնաւոր գրելու, թէև բոլորովին ազատ չէ—մնացել մի քանի սխալ դարձուածներ գործածելուց:

Ի վերջոյ, «Ի վերիայի» աշխատակիցը ջերմ ցանկութիւն է յայտնում, որ պ. Ե. չը թուլանայ իր ընտրած ասպարիզում, «որովհետև շատ ազբատ է վրաց գրականութիւնը ընտիր զբուածքների թարգմանութիւններով»—և ցանկալի է օր առաջ տեսնել «խոստացած «Դաւիթ-Բէկն» ու դրանց նման զբքերը»:

Բաֆֆիի թարգմանչին սպասում է, յօդուածագրի ասելով, վրաց հասարակութեան սէրն ու յարգանքը...

«Ի վերիայի» կողմից հայ մարդուն ուղղուած այդ հազա-

զիւտ դովասանքին արժանանալուց մի շարաթ անց պ. Եւան-  
գուլեանը տպագրեց նոյն լրագրում (№ 178) Գամառ-Քաթիպա-  
յի «Ա՛խ, ի՛նչպէս կ'ուզեմ» հրաշալի երգիծարանութեան թարգ-  
մանութիւնը: Թէպէտ այդ թարգմանութիւնը չ'ունի, իհարկէ,  
հայերէն բնագրի համն ու հոտը և ախորժելի մուգիկան, բայց  
մենք համոզուած ենք, որ նա լաւ տպաւորութիւն կը թողնի  
վրացի ընթերցողներէ վրայ, որովհետեւ թարգմանչին յաջողուել  
է պահպանել լիութի կերպով տաղանդաւոր բանաստեղծի ցնչիչ  
յու.մորը:

Մօտերս Բուլթայիսի ուղղագիտու մայր եկեղեցին ներսից  
զեղարուեստօրէն՝ նկարներով զարդարելու համար կատարուե-  
ցաւ մի տեսակ աճուրդ: Տեղի միաբանութեան կողմից Թիֆ-  
լիսից հրաւիրուեցան նկարիչներ, և վերջիններից պ. Մրեւիլի-  
շվիլին ամբողջ գործը կատարելու համար (որոշ ծրագրով) պա-  
հանջում էր 10,000 ռուբլի վարձատրութիւն: Միաբանութիւնը  
այդ գինը չափազանց բարձր գտաւ և գործը յանձնեց յայտնի  
հայ նկարիչ պ. Նշանեանին, որ բաւականանում էր 6000-ով:  
Վրացի բահանաների այդ վճիռը սաստիկ ցաւ է պատճառել  
«Իվերիային» (№ 169), և նա դժուարանում է հասկանալ, թէ  
ինչպէս կարելի էր արգիօք յանձնել այդպիսի մի գործ «հայ  
նկարչին»: «Ի՞նչի նման կը լինի արգիօք—բացագոտնչում է նա  
—որ վրացի սրբերի գէմքերը օտար ազգի մարգիտնց երեսները  
յիչեցնեն: Անկարելի բան է, որ այդ գէմքերը գուրս զան ան-  
սխալ, եթէ նկարիչը յատուկ կերպով ուսումնասիրած չը լի-  
նի վերական զեղարուեստը, վրաց վարք ու բարքը, նրանց  
սիրտն ու հոգին»: Եւ որովհետեւ այդպիսի զբաւուկան, լբագրի  
կարծիքով, չը կայ, և կապած պայմանը քանզկ կարելի  
չէ, նա առաջարկում է վերոյիշեալ միաբանութեանը կազմել  
մասնագէտների մի վերաստուգիչ խումբ, որը կարողանայ «կը-  
տոր-կտոր, առանց վերջանալուն սպասելու» քննութեան են-  
թարկել հայ նկարչի աշխատանքը:

Մեզ մնում է, ընթերցող, սպասել և տեսնել, թէ նրպի-  
սի յաջողութեամբ դուրս կը գայ պ. Նշանեանը այդ փորձու-  
թեան տակից...

Վրացի հրապարակախօսներն էլ վերջին ժամանակներս  
խիստ քննադատութեան են ենթարկում իրանց քահանաներին,  
զատափետում է նրանցից շատերի անգործութիւնը, ընչասխի-

բութիւնը, ազահութիւնը, ժողովրդին վատ օրինակ սալը, նըրա հետ անհաշտ վարուելը...

Մեր հաշտութեան ամսում այդ յարձակումների մեծ մասը բաժին ընկաւ Չարաթալի չրջանի հոգևորականներին: Այդ կողմերում վաղուց սպրում են բաւական քանակութեամբ «ինգիլօ» կոչուած մահմէդականացած վրացիք: Անցած 19-րդ դարու երկրորդ կէսից «կովկասում քրիստոնէութիւնը վերականգնող ընկերութիւնը» աշխատում է նրանցից շատերին վերադարձնել իրանց մայրենի եկեղեցու ծոցը: Այդ նպատակով ուղարկում են այնպէս վրացի քարոյիչներ ու քահանաներ, կառուցում են եկեղեցիներ և ուսումնարաններ: Սակայն այդ քահանաներից շատերը, ինչպէս վիայում են հիմա վրացի՝ թըղթակիցները, մոռանում են իրանց առանձնակի, բարձր կոչումը և իրանց անկարգ կենցաղավարութեամբ և բարոյական անդօրութեամբ պատճառ դառնում ինգիլծներցի շատերի նորից մահմէդականութեան զիմելուն...

«Մեր քահանաների տյգպիսի ապիկարութիւնն է պատճառ,—ասում է թղթակիցներից մէկը («Իվերիա», № 162), որ այս կողմերում մուսուլմանների հոգևոր պաշտօնեաներն աւելի ազդեցութիւն ունեն ժողովրդի վրայ, քան քրիստոնէայ քահանաները: Այդ էր նոյնպէս պատճառը, որ քրիստոնէացած Թասմալօ գիւղը նորից վերադարձաւ Մահմէդի կրօնին»...

Թղթակիցները չկշտում են մանաւանդ այն հանդամանքը, որ յիշեալ հոգևոր հայրերը, քրիստոնէական սիրոյ փոխարէն, աշխատում են շարունակ բաժանում, ատելութիւն և թշնամութիւն սերմանել քրիստոնէացած և մահմէդական մնացած ինգիլծների փոխադարձ յարաբերութիւնների մէջ...

Հետաքրքիր է նոյնպէս Բութայիս քաղաքի մի վրացի քահանայի հետեւեալ արարքը: Դա ցանկութիւն է յայտնում անցեալ տարի այնպէս եկեղեցիներից մէկի վերանորոգող մասնաժողովին, որ իրան թոյլ տան գնալու կարճ միջոցով Մոսկուա՝ վերաշինուող եկեղեցու համար փող ժողովելու: Տրուում է նրան ժապաւիտեալ մատեան, և նա ձանապարհ է ընկնում: Ամբողջ 6 ամիս իր մասին ոչ մի լուր չը տալուց յետոյ՝ քահանան վերջապէս ուղարկում է մասնաժողովին 200 ռուբլի և մինամակ, որով յայտնում է, թէ «մի ինչ-որ աւագակ և Աստուծոյ չար թշնամի օրը ցերեկով Մոսկուայի փողոցներից մէկում վայր գցել տուեց իրան ձեռքից ժապաւիտեալ մատեանը, և վերջինս այնպէս փչացուեց, որ ինքը ստիպուեց մի ուրիշ նոր մատեան շինելու ժողովարարութեան համար»: Անցնում է դարձեալ մի քանի ամիս, և քահանան, առանց այլևս մի կողմի

ուղարկելու, վերագառնում է Քութայիս: Նրա ներկայացրած հաշից երևում է («Ճնտրիս-Փուրջելի», № 2226), որ նա այդ նոր մատենով (հնի մասին այլևս խօսք չը կայ) հաւաքել է ընդասենը 1823 թուրլի և 45 կողէկ, որպիսի դումարից նա ուղարկել էր 200 թուրլի մասնաժողովին, իսկ մնացածը—ծախսել իր վրայ... Բայց որովհետև քահանան, Մոսկուա ճանապարհ ընկնելիս, ստացել էր դարձեալ մասնաժողովից 120 թուրլի փող,—վերջ ի վերջոյ մասնաժողովին հասնում էր՝ եկեղեցու վերաշինութեան օգտին՝ միմիայն 80 թուրլի...

«Ահա այսպիսի դէպքերի համար է ստուած,—աւելայնում է «Ճնտրիս-Փուրջելի»—որ բացատրութիւնները աւելորդ են»...

Այժմ նորից վրայ մամուլի էջերում հարց է բարձրացել ազգային գրողների մասին: Ի՞նչպէս անել, որ տաղանդաւոր գրողները զխաւոր ստաղի նման չ'երևան ու չ'անհետանան շուտով գրական հորիզոնից: Ի՞նչ միջոց գործ գնել, որ չնորձալի վիպասանները, բանաստեղծներն ու հրատարակախօսները շարունակ գրեն և հետզհետէ աւելի զարգացնեն իրանց սաղանդը: Մինչև այժմ համարեա թէ օրէնք է դարձել այն երկոյթը, որ հէնց որ մի երիտասարդ սոյց է տալիս հասարակութեանը իր տաղանդը, նա շուտով մի տեսակ անյայտանում է հասարակութեան աչքից և երևում է նրան երբեմն շատ երկար ընդմիջումներից յետոյ: Այդպիսի ընդմիջուող և մի տեսակ ստանասիրտ գործունէութեան հետևանքը լինում է այն, որ մի ժամանակ հասարակութեանը ոգևորող և նրան շատ բան խոստացող տաղանդը մնում է նոյն կէտի վրայ, առաջ չէ գնում, չէ փարթամանում, չէ նուաճում ընթերցողների աւելի մեծ շքաներ:

Այդ երկոյթի զլխաւոր պատճառը—նրան ուսումնասիրողների կարծիքով—կայանում է նրանում, որ վրայի ըողոր զբողները (մի միակ բացատրութեամբ) եղել են միշտ՝ վերջին 50—70 տարուայ ընթացքում՝ պետական և հասարակական ծառայութեան մարդիկ: Դրանցից շատերը բոլորովին ժամանակ չեն ունեցել զբաղուելու գրելով, շատերը, ապրելով մանուաւոր յետամնաց քաղաքներում ու գիւղաքաղաքներում, նոյնիսկ մի օրինաւոր գրագարանի երես չեն տեսել, շատերն էլ նոյնիսկ հնարաւորութիւն չեն գտել ճանապարհորդելու ոչ միայն արտասահմանում և աւելի մծախի տեղերում, այլ մինչև իսկ իրանց հայրենիք—Վրաստանում...

Ուրեմն պէտք է ամենից սուսջ ազատել վրայի գրողին

երկրորդական պարապմունքներից, պէտք է ստեղծել նրա համար այնպիսի մի գրութիւն, որ նա պարագէ միայն գրելով, ուսումնասիրէ կեանքը, ճանապարհորդէ, գրքեր կարդայ, շփուի մարդկանց ու ժողովուրդների հետ...

Բայց ինչպէս ստեղծել այդ երջանիկ գրութիւնը:

Անա այդ հարցին ամենից մանրամասն պատասխանում է պ. Դուսու Միգրելին («Իվերիա», № 178) իր «Միթէ մենք գրողներ ունենք» յօդուածում: Նա առաջարկում է առանց յետաձգելու հիմնել յատկապէս գրողներին նպաստող մի ընկերութիւն, որը կը պահէ մշտապէս մի քանի թոշակաւոր՝ գրողներից: Թոշակը տրւում է երիտասարդ գրողներին, հէնց որ նրանք ցոյց կը տան գրողի աջքի ընկնող, յուսալի ազանդ: Ընկերութիւնը այգպիսիներին առատօրէն ապահովացնում է մի քանի տարի պայմանաժամով: Նրանք պէտք է անեն այն ամենը, ինչ որ հարկ կը լինի երանց սաղանդը զարգացնելու համար: Իրանց գրուածքները գրանք պէտք է յանձնեն ընկերութեանը, որը միջոցները ձեռք կ'առնէ նրանց տպագրելու: Երբ նշանակուած տարիների թիւը լրանայ և թոշակաւորը ի գերե չը հանէ ընկերութեան նրա վրայ գրած յոյսերը,—պայմանը կարող է նորոգուել դարձեալ մի քանի տարով, և այդպէս շարունակաբար: Այդ գործի համար, պ. Միգրելու հաշով, սկզբներում բաւական կը լինի ծախսել տարեկան 10—20,000 րուբլի, որպիսի գումարը, նրա ասելով, վրայ հասարակութեան համար չառ հեշտ է հայթայթել:

Տեսնենք, ինչ արձագանց կը գտնի այդ համակրելի միտքը վրայ հասարակութեան այլեայլ խաւերում:

Որովհետև խօսքն այստեղ վրայի գրողների մասին է, մենք աւելորդ չենք համարում հաղորդելու նաև մի տեղեկութիւն:

Ինչպէս յայտնի է, վրայ համար 12-դ դարից ի վեր մի պաշտելի դիրք է «Ընձենաւոր» պոէման: Դրա անուանի հեղինակի կամ (ըստ ոմանց) թարգմանչի՝ Շոթա-Ռուսթաւելիի գերեզմանը չէ արժանացել իր ժամանակին մի քարի կտորի և յաւերանականապէս կորել է իր ապերախ հայրենակիցների ժողովների համար: Այժմ վրայ մամուլը հարց է բարձրացնում մի համեստ արձան կամ դոնէ: Կոթող կանդնելու ոչ թէ նրա աճիւնի վրայ (որի տեղը յայտնի չէ), այլ նրա ծննդավայր Ռուսթաւելի գիւղում, սեղական մի զեղտոտակի ժայռի վրայ: Բացուած է արդէն ստորագրութիւն և մի համեստ գումար հաւաքուած:

Շատ ակտուր թղթակցութիւններ են սպում վրայ լրագրուները Իմերեթիայի, Մինգրելիայի և Գուրիայի բնակիչների անտեսական գրութեան մասին: Այդ կողմերի (Քութայիսի նահանգ) գիւղացիների հողերը վաղուց ի վեր սաստիկ քչացել են: Այն գիւղերում, որտեղ ճորտութիւնից ազատուելուց յետոյ ապրում էին 40—50 տուն, այժմ ապրում են 150—200 տուն: Կալուածատէր ազնւականներն էլ իրանց հողերի համար չափազանց մեծ վարձ են պահանջում սամբիներէջ: Փետնի գլխաւոր արդիւնք սիմինդրը (կղիպտացորեն) յաճանս փչանում է բնութեան արհաւիրքներից կամ այլուց ճիճուններից: Գիւղացիները խեթ աչքով են նայում համեմատաբար աւելի երջանիկ կալուածատէր ազնւականների վրայ: Հասարակական բարոյականութեան զգացումները չօշափելի կերպով թուլացել են. դողութիւն, յափշտակութիւն, մարգասպանութիւն և առհասարակ փոխադարձաբար միմեանց մլաս տալը—սովորական երևոյթներ են դարձել:

Այդպիսի ցաւալի բովանդակութիւն ունեցող գրութիւններ ստացւում են համեմատաբար աւելի Մինգրելիայից:

«Տնտեսական անկումը—ստուած է այդպիսի թղթակցութիւններից մէկում («Իվլիխ», № 165)—յետ քաջից ժողովրդի մտաւոր առաջագիմութիւնը, հալածեց վերջինի պահանջները և առաջ քաջից ստամոքսի հարցերը: Հասարակութիւնը մանրացաւ. նա չէ ցոյց տալիս առողջ մտքին վայել առողջ դատողութիւն, սկսուեց դասակարգային հակառակութիւն և թշնամութիւն: Ազնւականներն ատում են թաւաղներին (իշխաններին) և բարձրից նայում գիւղացիներին. թաւաղները բարկացած են ազնւականների վրայ և զզուանքով են նայում գիւղացիներին, իսկ վերջիններն այդ երկու դասակարգին էլ բանի տեղ չեն դրնում և հաւասարապէս ատում են նրանց: Հասարակութեան իւրաքանչիւր անդամին կլանել է շահասիրութիւնը և ամենքն միասին աշխատում են իրար օտի տակ արորելու, որպէսզի անձնական շահը չը վնասուի: Արդեօք ի՞նչ հասարակական գործ կարող է կատարուել այս գրութեան մէջ, ի՞նչ սպեղանի կարող է պատրաստուել հասարակական վէրքերի համար»...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

## ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Վ. Լուսկևիչ, «ԳեՆԵՔԸ ԾՈՂԵՐԻ ԽՈՐՔՈՒՄ», Թարգմ. ռուսերէնից Ստ. Մալիա-սեանց, 50 պատկերով: Հրատ. Գ. Գալստեանի, Թիֆլիս, 1903 թ., գինն է 30 կ.

Հեղինակը յայտնի է իբրև տաղանդաւոր ժողովրդականա-  
ցընող: Ծանօթացնելով ժողովրդին բնութեան կախարդական  
աշխարհներից մէկի—ծովերի և ովկիանոսների կեանքի հետ—  
հեղինակը առասպելական հրաշքների տեղ մտցնում է նրա գի-  
տակցութեան մէջ գիտութեան իսկական սխրագործութիւն-  
ները:

Հմտութեամբ ընտրուած բազմաթիւ նկարները և թարգմա-  
նութեան լեզուն աւելի ևս մատչելի են դարձնում զրուածքը:  
Փոքրիկ գրքոյկում ընթերցողը կը գտնի այն ամենը, ինչ կարևոր  
է կատարեալ դադափար կազմելու համար ստորջրեայ թագա-  
ւորութեան մասին: Պէտք է խորհուրդ տալ մեր դպրոցների ա-  
շակերտներին կարդալ այդ գրքոյկը:

Բն.

Յովհաննէս Գուրախեան, «ԾԵՆՈԹ ՊԵՏՅԵՐՆԵՐ», Ս. Պետերբուրգ, 1903 թ.,  
գինն է 75 կոպ.

Ժամկոչ Մաթոսի, Ժամկոչ Գարօի և գիշերապահ Մակիչի  
արող խմելը, տակից-զվից դուրս տալը, հայնոյախառն սրա-

խօսութիւնները, կամ երեցիօխանի օգնական Մուխի Բաղալի մարմնի նկարագրութիւնը, Վարք Սրբոյ և Էփեմբղի կարգալը, ինչպէս և իր չըբերք կնկայ հետ խօսակցութիւնները, նրա հետ միասին քննելը, վերջապէս զանազան սարկաւազների, տէրատէրների և եպիսկոպոսների մասին պատմութիւնները կարող են ուղղակի իրականութիւնից վերցրուած «ծանօթ պատկերներ» լինել պ. Յովհաննէս Դուրբախեանի համար, սակայն ոչ մի կարիք չը կար այդ անկապ, անչնորհք բարբանջանքները տպագրելու, այն էլ այնքան չքեղ: Կան հեղինակներ, որոնք իրանք իրանց ամենախիստ քննադատներն են, սակայն սկսնակների մեծ մասի համար պէտք է պարտականութիւն լինէր—նախ իրանց գրուածքի մասին աւելի հմուտների կարծիքն լսել և ապա միայն ձեռագիրը տպագրութեան յանձնել: Անչուշտ, եթէ պարոն Դուրբախեանը ուղարկած լինէր հայ խմբագրութիւններից որեէ մէկին, յետ կացած կը լինէր իր որոշումից...

Na.

Վահան Մամիկոնեան, «Վերջին երգեր», Բաղու, 1903 թ., դինն է 20 կողէկ.

Մի անօրինակ, հերոսական քաջութիւն հարկ եղաւ ծայրէ իծայր կարգալու համար այս պոէտի մաքի ու երեսակայութեան ծաղիկները: Վերջին երգերը մի մեծ հատոր չէ սակայն, ոչ. 28 փոքրադիր երեսներից և 16 քերթուածից բաղկացած մի դրքոյկ է: Բայց հարցը քանակի մասին չէ, այլ որակի մասին: Եւ ինչ քերթուածներ, չնր սատանայ! Այդ ոտանաւորները դոյց են տալիս, թէ պ. Մամիկոնեանը ոչ միայն բանաստեղծական որեէ խառնուածքից (tempérament) զուրկ է, այլ և չը դիտէ կանոնաւոր հայերէն:

Վերցրէք օրինակ, 7-րդ էջում, 2՛ պիտի ապրեմ ոտանաւորի այս քառեակը.

Ի՛նչ խելք. եթէ որ երկու երազից  
Ընտրում ես մէկը իսպառ անհեծեծ.  
Աւելի լնւ չէ որ միանգամից  
Նոյն կեանքն ընտրե՛լ, որ կապէ քեզ հետ.

Հարկաւոր էր ջնջել կամ երբորդ տողի որ շաղկապը, կամ ընտրել բայը գնել ոչ անդէմ, այլ գիմաւոր—ընտրես:

Նկատելիք անշուշտ, որ այս քառեակը բացի այն, որ պարունակում է քերականական սխալ, անհասկանալի է և մութ:

«Նոյն կեանքն ընտրել, որ կապէ քեզ հետ»: Որ բառը յարարեում է կեանքին, լնու, բայց «կեանքը կապէ քեզ հետ» ինչ բան, կամ ում կապէ: Նախադասութիւնը վերջացած է արդէն, և մենք հանելուկ լուծելու նման պէտք է շարչարեմք մի ուղեղը: Գուցէ և այդ նրա համար է, որ պարոնը պարզապէս ստիպուել է «անհեթեթ»-ին յանդարմարեցնելու համար գնել «որ կապէ քեզ հետ» խօսքերը:

Պ. Մամիկոնեանն անձամբ է նոյնպէս չափական արուեստի տարրական օրէնքներին: Օրինակ, միենոյն բանաստեղծութեան (!) մէջ երբեմն երեք տողերը միասին և չորրորդը առանձին, երբեմն առաջին և երրորդ, երբեմն առաջին և երկրորդ, երբեմն առաջին և չորրորդ կամ երրորդ և չորրորդ տողերի վերջաւորութիւնները յանդ են կազմում: Եւ այն էլ ինչ յանդ, միայն հայ բանաստեղծներն են, որ իրանց թոյլ են տալիս յանդ կազմել նոյնահողով բառերով, ինչպէս, օրերից, կեանքից, ուժից, ըստիներներից, կեանքում, երազում և այլն:

Այնտեղ կուելու, անվերջ կուելու  
Եւ այնտեղ անմիտ կեանքը ծաղրելու:

Եւ կամ հետեւեալ վերջաւորութիւնները.

Գիտես, վարդն էլ մի սիրտ է,  
Յող—արցունքում շաղխուած՝  
Եւ այնքան էլ անուշ է  
Բուրմունք.—սէրը տարածած:

Պարոնը՝ երևում է որ այնքան էլ չի սիրում նեղուկ, բայց մոռանում է այն, որ իր կարծածի չափ հեշտ բան չէ մուսանների հետ մտերմութիւն հաստատել: Ուրեմն սեր բանաստեղծը չ'ունի կանոնաւոր լեզու, չ'ունի ստանաւորների կազմութեան մասին ամենատարրական հասկացողութիւն. բայց գոնէ ունի իր միտքը փոքր ի շատէ քնքուշ կամ ուժեղ ձևով արտայայտելու ընդունակութիւն: Դուք ինքներդ գատեցէք.

Այո, եւ ոչ, այո, քանի որ  
Դեռ քաղցրութիւն կայ կեանքում լիզելու

Սիրոս կասէ՝ ոչ, ոչ, բանի որ  
Մէջ քաղցրութիւնն ինձ թոյն է դառնալու: \*)

Վերջացնենք մեր խօսքը՝ մի փոքրիկ զազափար էլ տալով  
նրա բանաստեղծական յայտման, թսիչքի մասին:

Իմ սէրը զանաստեղծութեան մէջ անձ ինչպէս է պ.  
Մամիկոնեանը սիրոյ մասին երազում.

Վարդը սիրեմ ցօղը միջին,  
Արեւի շողը թերթին.  
Կոյսին սիրեմ սէրը սրբում  
Անմեղ ժպիտքն երեսին:

Պէտք է տակ, որ բանաստեղծը այնքան էլ խստագոհանջ  
չէ. «սէրը սրտում անմեղ ժպիտքն երեսին» կոյսը մի սովորա-  
կան կոյս է, և բանաստեղծի յուսակնութիւնն չ'ունենցող սրեէ մահ-  
կանացու դուցէ դրանից աւելի չքեղ ձիրքերով երեսկայէր իր  
կոյսին: Բայց ներշնչուած պոէտը պարտէղ է մանում և կոյսին  
տեսնում «վարդ—թփի տակ» ու սիրում. «մընջիկ» քաղում է  
«փունջ ծաղիկներ» ու այդ փնջով կոյսին... խփում է «փափ-  
լիկ» ու... «լայ'ցնում»: Բայց յետոյ, կը հարցնէք, յետոյ. յետոյ,  
այդ «թերմաչ կրծքով» բանաստեղծը, որ չէ լսած անչուշտ այն  
սասցուածը, թէ չը պէտք է խփել կնոջ—էլ ուր մնաց՝ իր պաշ-  
տած կոյսին—նոյնիսկ ծաղկով, սեղմում է կրծքին արաստուա-  
թոր կոյսին ու

Եւ հրամեշտըս երկրին տուած  
Եթերի մէջ բոլորեմ (?):

Կատարեալ պատկեր, չէ:

Այս բոլորը բաւական չէ, Պ. Մամիկոնեան, հակառակ մեզ  
տուած այն կոյսին, թէ իր երգերը վերջին երգեր են լինելու,  
զբքոյկի կազմի վրայ ղեռնդած մի յայտարարութեամբ սպառ-  
նում է հրատարակել նոր «Բանաստեղծութիւններ»:

ԶԱԻՆ

\*) 6-րդ էջում:

Արզում Սիմոն «նՈՐԱՎԷՊՆԵՐ», հրատարակութիւն Գ. Գ. Մագմանեանի. Ռուս-  
չուր, 1903 թ., գինն է 50 սանտիմ:

Մի թրքահայ գրողի վեց պատմուածքների հաւաքածուն է: 1-ն *Խնդրանք մը*, 2-ն *Ամուրիի պատմութիւն*, 3-ն *Պրզտիկը*, 4-ն *Խորտակուած սրտի մը վրէժը*, 5-ն *Ուշ մնացած*, 6-ն *Տժգունածները*:

Արզում Սիմոն՝ այն անհամար թրքահայ գրողներից միինն է, որոնք չը գիտեն իսկապէս, թէ ինչն են գրում: Նախադասութիւններ, նախադասութիւններ ու նախադասութիւններ: Գարձընում ես գրքոյկի էջերը, դարձնում ես անհամբեր՝ այդ գեղեցիկ բառերի շեղձակոյտի մէջ գոնէ մի համակրելի, առողջ միտք գտնելու յուսով, բայց իզնուր: Խօսքը, զբելու կարողութիւնը մարդուն տրուել է ոչ թէ շաղփաղփելու, շատախօս թռչունի նման երկնք ու միօրինակ ճուռոզելու, այլ մտքեր ու գաղափարներ արտայայտելու համար: Մանաւանդ մեզ պէս խաւարի ու յուսահատութեան մէջ քարչ ընկած ժողովրդի համար, բացարձակապէս անհասկանալի են զիլետանտ, իրանց պորտին նայելով միայն զբազուած գրողները: Գիտենք, այն, որ Թուրքիայում գրողի համար պայմանները այնքան էլ թոյլատու չեն, բայց դատարկ լինել այնչափ, որչափ է պ. Արզում Սիմոն— պարզապէս ըմբոստացուցիչ է: Մարդ վերջապէս նեարդերից, մարդկային մտից ու արիւնից զուրկ պէտք է լինի, որպէսզի, ապրելով հանդերձ գերազանցօրէն շահագրգիռ ու յուզիչ մի միջավայրում, այդ աստիճան զուլս պատյտ տուող ոչնչութիւններով միայն զբազուի:

Օրինակ. վերցրէք, առաջին պատմուածքը՝ *Խնդրանք մը*-ն: Հեղինակը պատահել է մի չափազանց դրաւիչ աղջկայ, հետուից նրան սիրել է: Աղջկայ ծնողները, որ ապրելիս են եղել իրանց տան զիմաց, «գիշեր մը, լուսնկայ գիշեր մը» այցելութեան են եկել իրանց աղջկայ հետ: «Այդ գիշերն աւեն մարդէ աւելի երջանիկ են եղել» երիտասարդն ու երիտասարդուհին: «Մեկնելու պահուն, մեր մայրերէն հետու, թեոասին (պատրշ-դամբ) սանդուղին վրայ, մօտեցար ինձ և ամբողջ ուժովդ ձեռքս սեղմեցիր—որ ատեն տերևի մը պէս կը դողայի ես—ու ինձ քսիր քու ամենէն անուշ ձայնովդ. «Գիշեր բարի, ես ընաւ չը պիտի մոռնամ զքեզ, կերդնում, դուն ալ զիս մի մոռնար»:

Ժամանակ յետոյ յոնկարծ երիտասարդի ձեռքն է անցընում սիրամ աղջկայ հարսանեկան հրաւիրադիրը, ոսկեզօծ տառերով, «բոցեղէն տառեր՝ որ աչքերս այրեցին»։ Յաւիտենական պատրանքի ձանձրոյթից մնացնող նոյն նկարագրութիւնը. «յոյսերուն չքեղազարդ սաճարը յիմնայտակ կը կործանուէր»։ «Անձ անկում անգնդախոր, ուր էութիւնս կը ջախջախուէր ու պատանիի կեանքս յուսահատութեան մութ մթնոլորտին մէջ կը խեղդուէր»։

Հակառակ իր «էութեան ջախջախումին»՝ սիրահարը ապրում է սակայն ու երբեմնի սիրականին ուղղում է հետեւեալ խնդրանքը.

«Տիկին... խնդրանք մը կուզամ ընել ձեզ թխսանձանքով։ Երբ 14 տարեկան ըլլայ աղջկեկեդ, մի թողուք զինքը, որ պատուհանին առաջ նստի, երբ մանաւանդ գիմայի տունը տղայ մը գտնուի»։

Միւս արտադրութիւնները սրանից տարբեր բաներ չեն։ Ամուրիի մը պատմութիւնը ներկայացնում է մի տղամարդ, որ ամուսնութիւնն է ջատագովում. նրան հարց են տալիս, թէ ինչո՞ւ ուրեմն ինքը չէ ամուսնացել, քանի որ այդքան խանդավառութեամբ է խօսում ամուսնութեան մասին։ Մարդը պատմում է մի պատմութիւն. Հաւանել է մի աղջկան, նրանով սաստիկ զրաւուել, յետոյ սակայն դուրս է եկել, որ աղջիկը «չպարուած է և զգուելիօրէն տգեղ»։

«Անկէ իվեր շատ քիչ հանդիպած եմ արհեստական չեղող գեղեցկութեանց, սակայն անոնց համար ալ չեմ զգացած, ինչ որ զգացած էի Սաթենիի նկատմամբ, առաջին անգամ»։

Պզտիկը պատմում քիչ մէջ նիւթ չը կայ։ Մի փոքրիկ դպրոցականի հօրը մի օր կաթուածահար եղած տուն են բերում։ Երեխան պատահածի մասին տեղեկութիւն չ'ունի, հարցնում է իր մօրը, որ ծածկում է իրողութիւնը. բայց երեխան տան վարի յարկում գտնուող սենեակից հօր անընդհատ արնքոյն է լսում։ Շարունակում է դպրոց գնալ մի տեսակ անձանօթ, ճնշող տխրութեան տակ։ Դպրոցն ունի «պարզ, այլ գեղեցիկ» մի սովորութիւն. «Վարժարանին բոլոր աշակերտները, թէ մանչ և թէ աղջիկ, պարտաւոր էին երեքշաբթի և շաբաթ առաւօտները եկեղեցի երթալ»։

Փոքրիկը եկեղեցի է գնում և «Տէր, ողորմե՛ն»-ի ժամանակ, յճուր հիւանդաց ըմպիութիւն» խօսքի վրայ, բայց է անում «երկու բազուկները անօրինակօրէն անկեղծ ջերմեռանդութեամբ մը», ուղղում է աչքերը «մեծ խորանին մամի լոյսերով ողբաւած



Ուշ մնացած և Տժգունածնները պատմութենաներն էլ այս կարգի բաներ են:

Ահա ժամանակակից պոլսահայ գրողի մտահոգութիւնները: Սա գրականութիւնն է՛, այլ ինքնասպանութիւն:

### ԶԱՒԷՆ

Mars, «ԻՆՉՊԵՍ ԱՄՈՒՍՆԱՅԱՅ» (կողանդի գրոյց), Բագու, 1903 թ., գ. 10 կ.

Այս գրքոյկի նիւթը մի փոքրիկ մելօգրամատիկական պատմութիւն է:

Օրիորդ Լիզան (այժմ Միֆրան էֆէնտիի կինը) և իր փոքր եղբայր Երուանդը մնում են որը, օրուայ հացի կարօտ: Լիզան չարածը մի մէջիտ (1 ր. 60 կ.) վարձով ծառայութեան է մանում մի ժյատ հարստի տուն: Կազանդի նախօրէքին քոյրն ու եղբայրը տուն են դնում Պերայի Մեծ-Փողոցով (Պոլսում): Երեխան տեսնում է սիրուն խաղալիքները և ազնւորութեամբ քրոջը դնել: Քրոջը զրպանում կայ միայն 1 դահեկան (8 կոպ.), այն էլ հաղիւ չոր հաց սոնելու բաւական լինի վաղուան համար: Լիզան հանգստացնել է աշխատում մանկանը, բայց տուն հասնելուն պէս մանուկը հիւանդանում է «խաղալիքի կարօտից», մանկան այդ մեծ հոգսից... և կարող է... «մեռնել» (":): Քոյրը յետ է դառնում և մի մեծ ձի է գողանում Bon Marche-ի մեծ խանութից, բերում մինչև իրանց տան դուռը և խղճի խայթ զղալով... յետ է տանում (":). «առէք, ես զողացայ, բայց խիղճս տանջեց» աւելով ապիս է գրամարկդի մօտ նստած դանձապահին և դուրս վախճել աշխատում: Այդ խօսակցութիւնը լսում է երիտասարդ Միհրանը, խաղալիքներ, անուշիկէններ և այլն գնում տալին է նրան... վերջն էլ հեան ամուսնանում: Իբր յիշատակ կազանդի այդ նախօրէքին, Լիզան ու Միհրանն ամէն տարի տօնածառ են սարքում և իրանց թաղի բոլոր աղքատ ու որը երեխաներին հրաւիրում, որպէսզի տարուայ մէջ դնեն մի օր մխիթարուն խեղճ մանուկները, զուարճանան... Եւ այդ բարեգործութիւնով լիսպէս բաւականանում է սիկին Լիզան—դա է նրա հասարակական հակայական գործունէութիւնը...

Գրքոյկի լեզուի վրայ երևում է արևմտեան բարբառի լաւ ազդեցութիւնը:

Պատմութեամբը գրուած է շատ ձգձգուած ձևով: Առաջաբանը՝ ամբողջ 5 երես՝ բոլորովին աւելորդ է. կարելի էր սկսել 7-դ երեսից, և պատմութեամբը դրանով կը շահէր:

Լաւ կը լինի, եթէ այդպիսի կէս-մանկական, կէս-ժողովրդական պատմութեան հեղինակները մի քիչ զոյշ լինեն դանազան փիլիսոփայական խոր խնդիրներ գրութեան մէջ խոթելուց: Պ. Mars-ն էլ ընկնում է այդպիսի փորձութեան մէջ՝ ժան-ժակ Ռուսոյի ձևով փիլիսոփայել ձգտելով: «Սակայն որքան քաղաքակրթութեւն են մարդիկ, պարտականութեան զգացմունքը խոյս է ապիս, բարեգործութիւնը մեռնում է, և այժմ աւելի քան առաջ թշուառութիւնը մեծամեծ զոհեր է տանում».. Այդ տեսակ խոր հարցեր, որոնց համար բազմաթիւ հատորներ են գրուում, չեն սազում ժողովրդական-մանկական փոքրիկ պատմութեանը, մանաւանդ այն սխալ ըմբռնուած ձևով, որով գրել է հեղինակը:

ԽԱԺԱԿ

«Տրիւնի», զբոսա շորս արարուածով. Թարգմանութիւն Լևոն Մելիք-Նդամեանի, Թիֆլիս, 1903, դինն 25 կ.

«Տրիւնի»-ի բովանդակութիւնն ամէնքին ծանօթ է. նա շատ է ներկայացուել մեր բեմերի վրայ, և մամուլն էլ իր ժամանակին տուել է նրա համառօտ բովանդակութիւնը, կարծիքներ յայտնել, քննել կայն: Մեզ մնում է այժմ աչքի անցկացնել ներկայ հրատարակութեան լեզուն միայն:

Երբ մի անգամ ծայրից-ծայր արագ կարգացի այդ թարգմանութիւնը և դիրքը մի կողմ գրի, ինձ թւաց, որ դրա լեզուն ինձ ծանօթ է, մի լեզու, որ երբեմն գոյութիւն ունէր, բայց ոչ այսօրուան աշխարհաբարբ: Այդ լեզուն արդէն մեզ համար չի նծու, մի տեսակ կեղծ է: Ամէն բոպէ դուք նրա մէջ կը պատահէք հնացած բառերի—ինչպէս օրինակ—անարիս մօտ, ճէք, հէք Տրիւնի, ճամբրակ, անուշադրի սպիրտ, դարաւանդակ, կայն կայն: Կան այնպիսի արտայայտութիւններ, որոնք բոլորովին

Թխովի են, ինչպէս օրինակ—«Տրիլբին կէս-մին պառկում է բաղմոյի վրայ», կամ «խեղձ, ընկած Տրիլբին, ողջ աշխարհի մէջ եղած այս ահագին, այս ամենաապականուած քաղաքում երեսի վրայ գցուած Տրիլբին», կամ «... հանեց ինձ խոր տեղից և տարաւ մի քարակ տեղ», «Այդ ձանձրալի է, այլ եկէք արտփակուի խաղանք» եւ այլն եւ այլն:

Տպագրութեան սրբագրութիւնը շատ անուշադիր կերպով է արուած—օր. եր. 29—աղջան (աղջկան), այտնի (յայտնի), եր. 30—հարարեան (համարեան) եւ այլն:

Աւելորդ չէր լինի հրաւիրել մեր հայագէտներին վերջնակա-նապէս սրոշելու, թէ արդեօք ինչ ձև պէտք է ունենայ արդեւա-կան հրամայականը—«միք սաիլ, միք հարցնիլ», թէ «մի ասէք, մի հարցնէք»: Պ. Թարգմանիչը գործ է ածում առաջին ձևը:

—ԱԿ

### ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Mars, «Ի՞նչպէս ամուսնացայ» (կաղանդի գրոյց), Բագու, 1903 թ., գինն է 10 կ.
- 2) Մ. Տ.-Միքայէլեան, «Մամոնայի ինկարկուներ», Բարեզ, 1903 թ., գինն է 50 սանտիմ.
- 3) Ժորժ գը-Մարէի «Տրիլբի» վիպասանութիւնից վերաշինուած գրամա չորս արարուածով, Թարգմ. Լեոն Մելիք-Ազամեան, Թիֆլիզ, 1903 թ., գինն է 25 կ.
- 4) Լէօնիդ Անդրեևի, «Օտարազդին» (արտատպած «Մուրճ» ամսագրից), Թարգմ. Տ. Յովհաննիսեան, Թիֆլիս, 1903 թ., գինն է 10 կ.
- 5) Վ. Լուսինովիչ, «Կեանքը ծովերի խորքում», Թարգմ. Ստ. Մալխասեանց, Թիֆլիզ, 1903 թ., գինն է 30 կ.
- 6) Մ. Գորկիի, «Մական Զուգրա», Թարգմ. Ս. Բ., Թիֆլիզ, 1903 թ., գինն է 10 կ.
- 7) «Հաշիւ հուրատութեանց Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի կրթական հաստատութեանց օգտին յընթացս 1903 թուի», Նոր-Չուղա Սպահան, 1903 թ.
- 8) Отчетъ о дѣйствіяхъ главнаго Тифлискаго комитета по оказанію помощи пострадавшимъ отъ землетрясенія 19 декабря 1899 г. жителямъ Ахалкалаккаго уѣзда», Тифлисъ, 1903 г.
- 9) Кн. Г. М. Тумановъ, «Разбон и реформа суда на Кавказѣ», С.-Петербургъ. 1903 г.

## ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վառափարցական կարգադրութիւն հայոց եկեղեցական կառուածների եւ գումարների մասին:—Պաշտօնական հաղորդագրութիւններ:—Թուրքաստանի գաղթականութեան մասին նոր օրենք:—Երեւանի նահանգի եւ Վարսի շրջանի հայ փախսականների թիւը:—Պարսկահայաստանների դրութիւնը որոշող կարգադրութիւն:—Զինուորների երդման սեղը:—Յրդիկնի գաւառապետի թոճած մի խումբ:—Մամուլի վերսրերեայ կարգադրութիւն:

## ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Высочайше утвержденное 12 июня 1903 г. положение Комитета Министровъ о сосредоточеніи управления имуществами армяно-григоріанской церкви въ Россіи въ вѣдѣніи правительственныхъ учреждений и о подлежащихъ передачѣ въ вѣдѣніе Министерства Народнаго Просвѣщенія средствахъ и имуществахъ означенной церкви, коими обезпечивалось существованіе армяно-григоріанскихъ церковныхъ училищъ.

ГОСУДАРЬ ИМПЕРАТОРЪ, по положенію Комитета Министровъ, въ 12 день Іюня 1903 г. Высочайше повелѣтъ соизволилъ:

І. Передачу имуществъ армяно-григоріанской церкви въ вѣдѣніе и управление подлежащихъ Министерствъ осуществить на слѣдующихъ основаніяхъ:

1) Всѣ принадлежащія армяно-григоріанскимъ церквамъ, монастырямъ, духовнымъ установленіямъ и духовно-учебнымъ заведеніямъ недвижимыя имущества, за установленными ниже сего (ст. 2 и прим. къ ней) изъятіями, передать въ порядкѣ, опредѣленномъ особо утверждаемыми правилами, изъ управленія духовенства и духовныхъ установленийъ сего исповѣданія въ завѣдываніе Министра Земледѣлія и Государственныхъ Имуществъ, а принадлежащіе означеннымъ учрежденіямъ капиталы—въ завѣдываніе Министра Внутреннихъ Дѣлъ, сохраняя за армяно-григоріанскою церковью права собственности на сіи имущества и капиталы.

2) Передачѣ въ завѣдываніе Министра Земледѣлія и Государственныхъ Имуществъ подлежатъ слѣдующія имущества армяно-григоріанской церкви:

а) земли какъ населенныя, такъ и ненаселенныя, какого бы наименованія и рода онѣ ни были, также отдѣльные лѣса, луга, пастбища, рыбныя ловли, мельницы и проч. Изъ сего изъемяются однако же: пространства земли, находящіяся подъ зданіями церквей, монастырей, часовенъ и т. п. и подъ строеніями, занимаемыми архіерейскими домами, духовными установленіями, приходскимъ какъ городскимъ, такъ и сельскимъ духовенствомъ и духовно-учебными заведеніями земли, заключающіяся въ церковныхъ и кладбищенскихъ оградахъ, и, наконецъ, находящіяся въ пользованіи духовенства усадебныя участки земли, занятыя садами, огородами, пашнями и т. п., пространствомъ не свыше двухъ десятинъ при каждой приходской церкви, не сдаваемыми въ постороннія руки для извлеченія дохода, и

б) всѣ тѣ изъ принадлежащихъ армяно-григоріанскимъ церквамъ, духовенству и духовнымъ учрежденіямъ сего исповѣданія домовъ и строеній, которые не нужны для помѣщенія и необходимаго хозяйства самого духовенства и означенныхъ учреждений.

*Примѣчаніе.* Настоящія правила не распространяются на недвижимыя имущества и капиталы, принадлежащія армянской церкви въ г. г. С.-Петербургѣ и Москвѣ.

3) Указанному выше порядку завѣдыванія подчинить также имущества и капиталы, которые впредь будутъ, въ

видѣ пожертвованій или отказовъ по завѣщаніямъ, поступать въ пользу означенныхъ учреждений.

4) Завѣдываніе доходами отъ упомянутыхъ имуществъ и управленіе капиталами сосредоточить въ Министерствѣ Внутреннихъ Дѣлъ, по Департаменту Духовныхъ Дѣлъ Иностранныхъ Исповѣданій, въ которое должны быть передаваемы Министеромъ Земледѣлія и Государственныхъ Имуществъ, вмѣстѣ съ отчетностью по управленію этими имуществами, выручаемые отъ оныхъ доходы за уплатою всѣхъ лежащихъ на принятыхъ имъ въ свое вѣдѣніе недвижимыхъ имуществахъ повинностей и обязательствъ и за производствомъ указанныхъ ниже удержаній.

Засимъ Министерство Внутреннихъ Дѣлъ передаетъ эти доходы, а равно и суммы, образовавшіяся изъ процентовъ отъ поступившихъ въ его завѣдываніе капиталовъ, за нижеуказанными отчисленіями, тѣмъ духовнымъ установленіямъ, отъ коихъ сіи имущества и капиталы приняты.

5) Изъ получаемого отъ недвижимыхъ имуществъ дохода отчисляются къ ежегодному отпуску: а) не свыше 10% распоряженіемъ Министра Земледѣлія и Государственныхъ Имуществъ на расходы по управленію указанными недвижимыми имуществами и на образованіе особаго запаснаго капитала для удовлетворенія чрезвычайныхъ расходовъ по означеннымъ имѣніямъ въ видахъ ихъ улучшенія, и б) 5% распоряженіемъ Министра Внутреннихъ Дѣлъ на образованіе вспомогательнаго капитала армяно-григоріанской церкви для употребленія онаго на нужды армяно-григоріанскихъ церковныхъ установленій и на общія потребности управленія сей церкви съ тѣмъ, чтобы въ сей капиталъ обращался и излишекъ отъ вышеозначенныхъ (п. а) 10%.

б) Въ случаѣ возникновенія сомнѣній или недоразумѣній по вопросу о томъ, подлежатъ ли тѣ или иные находяшіеся во владѣніи духовенства и духовныхъ учреждений имущества и капиталы сосредоточенію въ вѣдѣніи Правительства, дѣло о семъ представляется на разрѣшеніе Министра Внутреннихъ Дѣлъ.

II. Предоставить: 1) Министру Внутреннихъ Дѣлъ: а) выработать основанія для производства расходовъ изъ

вспомогательнаго капитала армяно-григоріанской церкви примѣнительно къ правиламъ о вспомогательномъ капиталѣ римско-католическаго духовенства и предположенія свои по сему предмету внести на утверженіе установленнымъ порядкомъ, и б) установить порядокъ отчетности духовныхъ установленийъ въ израсходованіи передаваемыхъ имъ доходовъ, и 2) Министрамъ Земледѣлія и Государственныхъ Имуществъ и Внутреннихъ Дѣлъ, по взаимному ихъ соглашенію, установить: а) правила о порядкѣ передачи имуществъ и капиталовъ армяно-григоріанской церкви въ завѣдываніе подлежащихъ Министерствъ и б) правила о порядкѣ управленія указанными имуществами;

и III. Въ измѣненіе Высочайше утвержденнаго 26 Марта 1898 г. положенія Комитета Министровъ постановить:

Предоставить Министрамъ Земледѣлія и Государственныхъ Имуществъ, Внутреннихъ Дѣлъ и Народнаго Просвѣщенія, по принятіи, на основаніи изложенныхъ въ ст. 1 настоящаго положенія правилъ, имуществъ армяно-григоріанской церкви въ казенное управленіе, привести въ извѣстность по взаимному соглашенію имущества, коими обезпечивалось бы существованіе принятыхъ въ вѣдѣніе Министерства Народнаго Просвѣщенія школъ, и затѣмъ: а) указать тѣ имущества, которыя необходимо оставить для непосредственныхъ потребностей училищъ, и б) опредѣлить, соотвѣтственно доходности остальныхъ имуществъ, размѣръ денежныхъ суммъ, подлежащихъ ежегодно передачѣ вѣдомству народнаго просвѣщенія на содержаніе указанныхъ выше училищъ.

---

На основаніи Высочайше утвержденного 12 іюня 1903 года положенія Комитета Министровъ, по соглашенію съ Министромъ Земледѣлія и Государственныхъ Имуществъ, утверждаю. С.-Петербургъ, 30 іюня 1903 г.

Министръ Внутреннихъ Дѣлъ,  
Статсъ-Секретарь (подписаль) *Плеве*.

## ПРАВИЛА

### о порядкѣ передачи имущества и капиталовъ армяно-григоріанской церкви въ завѣдываніе подлежащихъ Министерствъ.

1. Свѣдѣнія объ имуществахъ армяно-григоріанской церкви, подлежащихъ, на основаніи Высочайше утвержденного 12 іюня 1903 г. положенія Комитета Министровъ, изъятію изъ вѣдѣнія духовныхъ установленій передаются: въ предѣлахъ европейской Россіи— изъ Министерства Внутреннихъ Дѣлъ въ Министерсство Земледѣлія и Государственныхъ Имуществъ и подлежащимъ по мѣсту нахождения сихъ имущества, Губернаторамъ и Градоначальникамъ, а по епархіямъ, входящихъ въ предѣлы Кавказскаго края, изъ управленія Главноначальствующаго—уполномоченному Министра Земледѣлія и Государственныхъ Имуществъ на Кавказѣ и мѣстнымъ Губернаторамъ и Начальникамъ областей. Министерство Земледѣлія и Государственныхъ Имуществъ и уполномоченный сего Министерства на Кавказѣ передаютъ полученныя ими свѣдѣнія въ подвѣдомственныя имъ губернскія управленія.

2. По мѣрѣ получения на мѣстѣ означенныхъ свѣдѣній въ видѣ вѣдомостей, извлеченныхъ изъ послѣднихъ отчетовъ Эчміадзинскаго Синода, Губернаторы по соглашенію съ управляющими Государственными Имуществами дѣлаютъ одновременно распоряженіе о командированіи подвѣдомственныхъ имъ довѣренныхъ должностныхъ лицъ для совмѣстнаго приема изъ вѣдѣнія армяно-григоріанскихъ духовныхъ установленій церковныхъ и

мушествовъ и капиталовъ, снабжая означенныхъ лицъ надлежащими указаніями, формальнымъ предложеніемъ и образцами приемныхъ протоколовъ и описей.

3. Въ каждомъ городѣ и уѣздѣ приемъ недвижимыхъ имуществъ и капиталовъ начинается преимущественно съ имѣній, которыя отличаются своей значительностью.

4. Указанные чиновники, по прибытіи на мѣсто, приглашаютъ, для содѣйствія въ порученномъ имъ дѣлѣ, представителя мѣстной полиціи, мѣстнаго армяно-григоріанскаго благочиннаго, если таковой имѣется, а также то духовное лицо или представителя того духовнаго установленія, въ вѣдѣніи коего находится принимаемое имущество, а кромѣ того: въ городахъ представителя городского общественаго управленія, а въ сельскихъ мѣстностяхъ—не менѣе двухъ стороннихъ добросовѣстныхъ изъ мѣстныхъ жителей и сельскаго старшину. При приемѣ имуществъ церковныхъ долженъ находиться ктиторъ или староста, въ непосредственномъ управленіи коего состоитъ все церковное имущество (ст. 1225 Уст. дух. дѣлъ иностр. исповѣд., изд. 1896 г.).

5. Приступая къ обзорѣнію подлежащихъ приему имуществъ, уполномоченныя на это лица требуютъ прежде всего предъявленія имъ ктиторомъ, настоятелемъ монастыря или начальствующимъ въ духовномъ установленіи лицомъ инвентарныхъ описей всему церковному или монастырскому, а также семинарскому и иному имуществу, и установленныхъ ст. 1226 Уст. дух. дѣлъ иностр. исповѣданій шнуровыхъ книгъ, а также плановъ, контрактовъ, подлинныхъ документовъ на владѣніе, долговыхъ обязательствъ, квитанцій на вклады и капиталы или книжекъ сберегательной кассы, а также другихъ актовъ, относящихся до состоящихъ въ вѣдѣніи церкви имѣній, долговыхъ обязательствъ и капиталовъ.

*Примѣчаніе.* За отсутствіемъ въ большей части армяно-григоріанскихъ монастырей монашествующей братіи и установленныхъ закономъ (ст. 1235 Уст. дух. дѣлъ иностр. исповѣд.) монастырскихъ правленій, надлежитъ, приданныхъ условіяхъ, предварительно выѣзда на мѣсто для принятія имуществъ, истребовать вышеуказаннымъ порядкомъ предъявленіе документовъ и описей изъ

имѣстныхъ епархіальныхъ Консисторій, въ коихъ сосредоточены по закону означенныя свѣдѣнія.

6. По повѣркѣ означенныхъ описей и документовъ, уполномоченные приступаютъ къ принятію самаго имущества при чемъ наблюдается:

а) городскіе дома, лавки, каравансарай, мельницы, винные подвалы и другія хозяйственныя сооруженія, за исключеніемъ жилыхъ строеній и помѣщеній, а также хозяйственныхъ складовъ и построекъ, оставляемыхъ въ распоряженіи духовенства для его нуждъ, принимаются со всѣмъ принадлежащимъ къ нимъ инвентаремъ и съ состоящею подъ ними землею.

б) дачныя помѣшенія Патріарха-Католикоса и епархіальныхъ начальниковъ, гдѣ таковыя издавна имѣются, съ прилегающими къ нимъ садами, огородами и рощами, оставляются въ вѣдѣніи означенныхъ духовныхъ лицъ;

в) въ земельныхъ имѣніяхъ, какъ пахотныхъ, такъ и лѣсныхъ принимаются съ имѣніемъ всѣ орудія производства, но скотъ, хлѣбъ и другіе наличные хозяйственные запасы оставляются въ пользу лицъ и учреждений, изъ вѣдѣнія коихъ означенныя имѣнія изъемяются;

г) если земельныя угодія, состоящія во владѣніи церкви или духовнаго установленія, превышаютъ установленную закономъ 3-хъ десятинную норму въ незначительной степени и по отграниченіи не могутъ составить самостоятельной хозяйственной единицы, то излишки эти, впредь до особаго распоряженія, приему не подлежатъ, о чемъ надежитъ пояснить въ протоколѣ, и

д) изъ капиталовъ подлежатъ приему всѣ процентныя бумаги, закладныя на недвижимости и долговныя обязательства, а изъ наличныхъ церковныхъ денегъ всѣ въ круглыхъ сотняхъ сверхъ тысячи рублей. Излишекъ оставляется на текущіе церковные расходы, о чемъ надлежитъ пояснить въ приемномъ протоколѣ.

7. По тщательномъ осмотрѣ въ натурѣ принимаемаго отъ церквей и духовныхъ установленій имущества, уполномоченные составляютъ, по данному имъ образцу, и за подписаніемъ лицъ, участвовавшихъ при приемѣ и осмотрѣ имущества, подробный въ двухъ экземплярахъ протоколъ о приемѣ онаго, затѣмъ, передавъ описанное недвижимое имущество, съ принадлежностями, уполномо-

моченному на то должностному лицу Управленія Государственныхъ Имуществъ, доносить о томъ немедленно Губернатору и мѣстному управленію, представляя при томъ, для доставленія Министрамъ Внутреннихъ Дѣлъ и Земледѣлія и Государственныхъ Имуществъ, по принадлежности, описи дѣйствительно принятаго имущества. Документы на капиталы и самые капиталы, гдѣ таковыя окажутся, представляются Губернаторамъ для пересылки въ депозиты Министра Внутреннихъ Дѣлъ по Департаменту Духовныхъ Дѣлъ Иностранныхъ Исповѣданій.

8. Если недвижимое имѣніе данной церкви или духовнаго установленія расположено въ другомъ уѣздѣ или губерніи, то уполномоченные, по истребованіи надлежащихъ на оное документовъ и описей, представляютъ таковыя мѣстному Губернатору для отсылки Начальнику той губерніи, гдѣ расположено имѣніе, для дальнѣйшихъ распоряженій о его приѣмѣ.

9. Если принятое имущество или часть онаго сдана въ аренду или въ пользованіе по договору или по существующему мѣстному обычаю, то съемщики или арендаторы извѣщаются о приѣмѣ сихъ имуществъ въ завѣдываніе казны и предупреждаются, чтобы слѣдующіе съ нихъ платежи вносили впредь въ подлежащія казначейства, съ точнымъ указаніемъ соотвѣтственнаго депозита, а взносы натурою лицу уполномоченному на управленіе принятымъ имѣніемъ.

10. Всѣ расходы по передачѣ упомянутыхъ имуществъ въ вѣдѣніе Министра Земледѣлія и Государственныхъ Имуществъ производятся изъ мѣстныхъ кредитовъ на командировки, съ возмѣщеніемъ произведенныхъ расходовъ изъ суммы, подлежащей отчисленію въ количествѣ 10 процентовъ изъ дохода съ недвижимыхъ имуществъ армяно-григоріанской церкви, а по пересылкѣ и переводу, капиталовъ въ вѣдѣніе Министра Внутреннихъ Дѣлъ за счетъ сихъ капиталовъ.

Директоръ Департамента Духовныхъ Дѣлъ  
Иностранныхъ Исповѣданій (подписаль) *Мосоловъ*.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատուած 12 յունիսի 1903 թ. Կանոնադրութիւնը համեմատ Մինիստրների Կօմիտէտի որոշման Ռուսաստանի հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների վարչութեան կենդրոնացման մասին կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան մէջ և յիշեալ եկեղեցուն պատկանեալ միջոցների և դոյքերի ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան տեսչութեանը յանձնելու մասին, որոնցով ապահովւած էր հայ-լուսաւորչական եկեղեցական գպրոցների պայութիւնը:

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ, Մինիստրների Կօմիտէտի որոշման համեմատ յունիսի 12-ին 1903 թ. Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝

1. Հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների յանձնելը պաշաճաւոր Մինիստրութիւնների տեսչութեանը և վարչութեանը իրագործել հետեւեալ հիմունքներով:

1) Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր գպրոցներին պատկանեալ բոլոր անշարժ կալուածները ներքոյ յիշած (յօդուած 2 և նրա ծանօթութիւթիւնը) սահմանեալ բաղաժոթիւններով յանձնել այն կարգով որ որոշուած են առանձին հաստատուած կանոններով այս դաւանութեան հոգևորականութեան և հոգևոր հաստատութիւնների վարչութիւնից Երկրագործութեան և Պետական Կալուածների Մինիստրի տեսչութեանը, իսկ յիշեալ հաստատութիւնների գրամագլուխները—Ներքին Գործերի Մինիստրի տեսչութեանը, թողնելով այդ կալուածների և գրամագլուխների սեպհականութեան իրաւունքը հայ-լուսաւորչական եկեղեցուն:

2) Երկրագործութեան և Պետական Կալուածների Մինիստրի տեսչութեանը յանձնելու են հայ-լուսաւորչական եկեղեցու հետեւեալ կալուածները՝

ա) թէ բնակութիւն ունեցող և թէ անբնակ հոգևոր՝ ինչ անուն էլ ունենան և ինչ տեսակի էլ որ լինեն, նոյնպէս առանձին անտառները, մարգագետինները, արօտատեղերը, ձկնորսութիւնները, ջրաղացները և այլն: Արանից բաց են հանվում սակայն՝ հողի այն տարածութիւնը, որի վրա գտնվում են եկեղեցիների, վանքերի, մատուռների և այլն շինութիւնները և հոգևոր, որոնց վրայ շինուած են առաջնորդարանները, հոգևոր հաստատութիւնները, ծխական թէ քաղաքային և թէ գիւղական հոգևորականութեան տները և հոգևոր գպրոցների շինութիւնները և այն հոգևոր, որոնք գտնվում են եկեղեցիներէի և գերեզմանոցների շրջապատի մէջ և վերջապէս հոգևորականութեան ձեռքում

եղած ազարակային հողամասերը, որոնց վրայ դանդում են այգիներ, բանջարանոցներ, արտեր և այլն, որոնք կարող են լինել տարածութեամբ ոչ աւելի քան երեք դասեալին ծխական եկեղեցուն կից և որոնք չեն արվում օտարի ձեռքը եկամուտ ստանալու համար և

բ) հայ լուսաւորչական եկեղեցիներին, հոգևորականութեանը և այդ դաւանութեան հոգևոր հաստատութիւններին պատկանող աներից և շինութիւններից այն բոլորը, որոնք հարկաւոր չեն բնակութեան և հենց իրան հոգևորականութեան և վերոյիշեալ հաստատութիւնների անհրաժեշտ անաւտութեան համար:

Ծանօթութիւն: Ներկայ կանօնները չեն տարածվում այն անշարժ կալուածներէ և գրամազլուխների վրայ, որոնք պատկանում են հայ եկեղեցու Ս. Պետրբուրգ և Մոսկվայ բաղաքներում:

3) Տեսչութեան ցոյց առած կարգին ենթարկել նոյնպէս այն կալուածները և գրամազլուխները, որոնք սրանից յետոյ որպէս նուիրատութիւններ և կտակածներ կը ստացուեն յօգուտ յիշեալ հաստատութիւնների:

4) Յիշեալ կալուածներից ստացւող եկամուտների հսկողութիւնը և գրամազլուխների կառավարութիւնը կենդրոնացնել Ներքին Գործերի Մինիստրութեան մէջ օտար դաւանութիւնների հոգևոր գործերի զեպարտամենտում, որին Երկրագործութեան Պետական Կալուածների Մինիստրը այդ կալուածների կառավարութեան հաշուետւթեան հետ միասին պէտք է յանձնէ նրանցից ստացուած եկամուտները, դուրս գալով սրանցից իր տեսչութեան տակ առած անշարժ կալուածների վրայ գրուած բոլոր հարկերը և պարտավճարները, ևս և ստորև մասնացոյց արած հանումները կատարելուց յետոյ:

Ապա ներքին Գործոց Մինիստրութիւնը յանձնում է այդ եկամուտները, նոյնպէս և այն գումարները, որոնք դոյալել են ևն նրա վերահսկողութեան տակ մտած գրամազլուխների տոկոսներից, ստորև ցոյց առած հանումներից յետոյ, այն հոգևոր հաստատութիւններին, որոնցից ընդունուած են այդ կալուածները և գրամազլուխները,

5) Անշարժ կալուածներից ստացւող եկամուտից հանվում են իւրաքանչիւր տարի ի տուուչութիւն ա) ոչ աւելի քան 10% Երկրագործական և Պետական Կալուածների Մինիստրի տրամադրութեան տակ, որ նա ծածկէ յիշեալ կալուածների վրայ արած ծախսերը և կազմէ տուանձին պահեստի գումար յիշեալ կալուածների տրտակարգ ծախսերին բաւարարութիւն տալու:

նրանց բարւոքման նպատակով և բ) 5% ներքին Գործերի Մինիստրութեանը թէ կազմելու հայ-լուսաւորչական եկեղեցական օժանդակիչ զրամազլուխ հայ-լուսաւորչական եկեղեցական հաստատութիւնների կարիքները հոգալու և թէ այդ եկեղեցու վարչութեան ընդհանուր պահանջների համար այն սրայմանով որ այս զրամազլուխ մէջ մտնէ յիշեալ (կ. ա.) 10% մնացած աւելորդը:

6) Կասկածներ կամ թիւրիմացութիւններ ծագելու գէպքում այն հարցի աօրթով թէ հոգևորականութեան և հոգևոր հաստատութիւնների իրաւասութեան տակ գտնուող այս կամ այն կալուածները ենթակայ են արդեօք Կառավարութեան տեսչութեան մէջ կենդրոնացման, գործը սրա մասին ներկայացվում է ներքին Գործոց Մինիստրին վճակու համար:

II. Յանձնել՝ 1) ներքին Գործերի Մինիստրին՝ ա) մշակել հիմունքներ ծախսեր անելու համար հայ-լուսաւորչական եկեղեցու օժանդակիչ զրամազլուխի՝ համաձայն այն կանօնների, որոնք գործադրվում են հոռմէական-կաթոլիկ հոգևորականութեան օժանդակիչ զրամազլուխի վերաբերմամբ և իր կարծիքները այս հարցի մասին առաջարկել ի հաստատութիւն սահմանեալ կարգով և բ) սահմանել հոգևոր հաստատութիւնների հաշուետուութեան կարգը նրանց յանձնուած արդիւնքները ծախսելու վերաբերմամբ և 2) Հոգադորութեան և Պետական Կալուածների և ներքին Գործոց Մինիստրներին փոխադարձ համաձայնութեամբ որոշելու՝ ա) այն կանօնները, որոնց համաձայն հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածները և զրամազլուխները պէտք է յանձնուեն պատշաճաւոր Մինիստրութիւնների տեսչութեանը և բ) այն կանօնները, թէ ինչ կարգով պէտք է կառավարուեն յիշեալ կալուածները:

և III. Ի փոփոխութիւն Մինիստրների Կօմիտէտի 1898 թուի մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած որոշման կարգել՝

Թոյլ տալ Երկրագործութեան և Պետական Կալուածների, ներքին Գործոց և Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրներին որ նրանք այս Կանօնադրութեան 1 յօդուածում առաջ բերած կանօնների հիման վրայ, ընդունելով հանդերձ հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածները արքունական կառավարութեան տակ, փոխադարձ համաձայնութեամբ յայտնի կայուցանեն այն կալուածները, որոնք պէտք է ապահովեն Ժողովրդական Լուսաւորութեան տեսչութեան տակ առնուած դպրոցների գոյութիւնը և յետոյ՝ ա) ջոյց տան այն կալուածները, որոնց անհրաժեշտ է թողնել դպրոցների անմիջական կարիքների համար, բ) որոշեն համապատասխան մնացած կա-

լուսածների արզիւնքի, գրամական գումարների այն չափը, որ  
 Լուսաւորչաւր ասորի պէտք է յանձնուի ժողովրդական լուսաւո-  
 րութեան վարչութեանը վերայիչեալ գլորոցների պահպանու-  
 թեան համար:

Մինիստերների կօմիտէտի 1903 թուի յունիսի 12-ին  
 Բարձրագոյն հաստատուած որոշման համաձայն Երկրագոր-  
 զործութեան և Պիտական կալուածների Մինիստրի հետ  
 համաձայնութիւն կայացնելուց յետոյ հաստատուած էմ:  
 Ս. Պետերբուրգ. 30 յունիսի 1903 թ. ներքին Գործերի Մինիստր  
 Ստատս-Սեկրետար (ստորագրեց) Պ Լ Ե Վ Է :

## Կ Ա Ն Օ Ն Ն Ե Ր

Հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածները և գրամա-  
 գլութիւնները պատշաճաւոր Մինիստրութիւնների տեսչու-  
 թեանը յանձնելու կարգի մասին:

1) Տեղեկութիւններ հայ-լուսաւորչական եկեղեցու այն  
 կալուածների մասին, որոնք, Մինիստերների կօմիտէտի 1903  
 թուի յունիսի 12-ին Բարձրագոյն հաստատուած որոշման  
 հիման վրայ, ենթակայ են հոգևոր տեսչութիւնից հանուելուն,  
 յանձնախումբ են՝ Եւրոպական Ռուսաստանի սահմաններում՝ Ներ-  
 քին Գործերի Մինիստրութիւնից Երկրագործութեան և Պետական  
 կալուածների Մինիստրութեանը և ենթակայ այդ կալուածների  
 տեղի համեմատ, Նահանգապետներին և Քաղաքապետներին, իսկ  
 Կովկասեան երկրի սահմաններում դանուղ թեմերում, Կառա-  
 վարչապետի Վարչութիւնից—Երկրագործութեան և Պետական  
 կալուածների Մինիստրի լիազօրին Կովկասում և տեղական Նա-  
 հանգապետներին և շրջանների Հրամանատարներին: Երկրագոր-  
 ծութեան և Պետական կալուածների Մինիստրութիւնը և այդ  
 Մինիստրութեան լիազօրը Կովկասում յանձնուած են իրանց ստա-  
 ցած տեղեկութիւնները իրանց ստորագրեալ Նահանգական  
 Վարչութիւններին:

2) Յիշեալ տեղեկութիւնները, ցուցակների ձևով, քաղուած

էջմիածնի Սինոզի վերջին հաշիւներից, ստանալու պէս հասանգատները՝ Պետական կալուածների կառավարիչների հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ, միաժամանակ կարգադրութիւն են անում՝ ուղարկելու իրանց ստորադրեալ վստահելի պաշտօնատար անձանց՝ միատեղ ընդունելու հայ-լուսաւորչական հոգևոր հաստատութիւնների տեսչութիւնից եկեղեցական կալուածները և դրամագլուխները, աւելով վերոյիշեալ անձանց պատշաճաւոր ցուցմունքներ, պաշտօնական առաջարկութիւն և ընդունելութեան արձանագրութիւններ և ցուցակներ նմուշներս:

3) Իւրաքանչիւր քաղաքում և գոււառում անչարժ կալուածների և դրամագլուխների ընդունելութիւնը սկսվում է առաւելագլխաւոր աշխատակիցի, որոնք աչքի են ընկնում իրանց մեծութեամբ:

4) Մասնացոյց արած պաշտօնեաները, տեղը գալուն պէս, հրաւիրում են իրանց յանձնարարած գործին աջակցելու համար՝ տեղական ոստիկանութեան ներկայացուցչին, տեղական հայ-լուսաւորչական գործակալին, և թէ այսպիսին կայ, նոյպէս և այն հոգևոր անձին կամ այն հոգևոր հաստատութեան ներկայացուցչին, որի տեսչութեան տակ գտնվում է ընդունելի գոյքը, և բացի դրանից՝ քաղաքներում քաղաքային հասարակական վարչութեան ներկայացուցչին, իսկ դիւղերում—երկուսից ոչ պակաս կողմնակի բարեխիղճ անձանց տեղական բնակիչներին և դիւղական տանուտէրին: Եկեղեցական կալուածների ընդունելութեան ժամանակ պէտք է գտնուի երեցիփոխը կամ ստարօտան, որի անմիջական վարչութեան տակ է գտնվում եկեղեցական ամբողջ գոյքը: (Յօդ. 1225 օտար գաւառներ թիւների հոգևոր գործերի կանօնագրութեան, հրատ. 1896 թ.):

5) Այսպիսով աչքի անցնել ընդունելութեան ենթակայ կալուածները, այդ բանի համար լիազօրութիւն ունեցող անձինք նախ և առաջ պահանջում են որ երեցիփոխը, վանահայրը կամ հոգևոր հաստատութեան իշխանաւոր անձը ներկայացնէ իրանց ամբողջ եկեղեցական կամ վանքական, նոյնպէս և սեմինարիական և այլ գոյքերի ինվէնտարային ցուցակը, և օտար գաւառներ թիւների հոգևոր գործերի կանօնագրութեան 1226 յօդուածով սահմանուած ժառանգիտեալ մատեանները, նոյնպէս և յատակագծերը, կօնտրակտները սեպհականութեան իսկական փաստաթղթերը, պարտագիրները, պահեստի անդորրագրերը իրանց դրամագլուխների կամ խնայողական դանձարանի գրքայիւնները, նոյնպէս և ուրիշ ակտեր, որոնք վերաբերում են եկեղեցու տեսչութեան տակ գտնուող գոյքերին, պարտագիրներին և դրամագլուխներին:

Ծանօթութիւն. Հայ-լուսաւորչական վանքերի մեծամասնութեան մէջ կրօնական միաբանութիւնների բացակայութեան և օրէնքով սահմանուած (օտար, դաւանութ. հոգ. զործ. կանօնադ. 1235 յօդ.) վանքական վարչութիւնների բացակայութեան պատճառով, հարկաւոր է որ, ներկայ պայմաններում, կալուածներ ընդունելու տեղը գնալուց առաջ, պահանջել վերնցոյց սուած կարգով տեղական թեմական կոնսիստորիաններից, որոնց մէջ կենդրոնացած են օրէնքով, բոլոր տեղեկութիւնները, որ նրանք ներկայացնեն գօղումներ և ցուցակներ:

6) Յիշեալ ցուցակները և գօղումները ստուգելուց յետոյ, լիազօրները սկսում են ընդունել նոյն իսկ գոյքը, որի ժամանակ աչքի առաջ է առնվում՝

ա) քաղաքային տները, խանութները, քարվանսարանները, ջրաղացները, զինու. մասանները և այլ անտեսական շինութիւնները, բացի բնակութեան համար որոշուած շինուածքները և բնակարանները, նոյնպէս և անտեսութեան պահեստները և շինութիւնները, որոնք թողնվում են հոգևորականութեան տրամադրութեան տակ նրա կարիքների համար, ընդունվում են նրանց պատկանող ամբողջ ինվէնտարով և նրանց տակ դանդաղ գետնով:

բ) Պատրիարք կաթողիկոսի և վիճակաւոր առաջնորդների ամարային բնակարանները, ուր որ գրանք հնուց գոյութիւն ունին, նրանց մօտ դանդաղ սպիներով, բանջարանոցներով և ծառաստաններով թողնվում են յիշեալ հոգևոր անձանց իրաւանց տակ:

գ) Հողային կալուածներում թէ վարելահողերում և թէ անտառներում կալուածքի հետ միասին տնտնվում են արտադրութեան բոլոր գործիքները, սակայն հարը և ուրիշ անտեսական առ ձեռն պաշարեղէնները թողնվում են այն անձերին և հաստատութիւններին, որոնց իրաւասութիւնից հանվում են կալուածները:

դ) Եթէ հողային կալուածները, որոնք պատկանում են եկեղեցուն կամ հոգևոր հաստատութեանը, աւելի են օբէնքով սահմանուած Յ դեռատնից աննշան չափով և բաժանելուց յետոյ չեն կարող առանձին անտեսական միութիւն կազմել, այդ դէպքում այդ աւելորդները, մինչև նոր անօբէնութիւնը, չեն վերցնվում և այս մասին պէտք է յիշատակել արձանագրութեան մէջ, և

ե) գրամագլուխներից պէտք է ընդունուեն բոլոր տոկոսաբեր թղթերը, անշարժ կայքերի գրաւթղթերը և պարտաթղթերը, իսկ եկեղեցական առ ձեռն գրամից բոլոր կըր հա-

րիւրեակները, բացի հազար, բուրլիներէն: Աւելորդը թողնվում է եկեղեցական ընթացիկ ծագքերի համար, որի մասին պէտք է յիշատակել ընդունելութեան արձանագրութեան մէջ:

7) Եկեղեցիներից և հոգևոր հաստատութիւններից ընդունւող գոյքերը մանրադնին կերպով նայելուց յետոյ տեղւոտեղը, լիազօրները կազմում են՝ նրանց տուած օրինակով և ընդունելութեան և նայելուն մասնակցող անձերի ստորագրութեամբ, մանրամասն արձանագրութեան երկու օրինակ գոյքերի ընդունելութեան մասին, ապա յանձնելով յիշեալ անշարժ կալուածները իրանց պատկանալիքների հետ միասին պետական կալուածների վարչութեան կողմից այդ բանի համար լիազօրութիւն ունեցող պաշտօնեային, ղեկուցանում են անյապօղ այդ մասին նահանգապետին և տեղական կառավարութեան, ներկայացնելով միևնոյն ժամանակ իրօք ընդունուած գոյքերի ցուցակագրութիւնները՝ ներքին գործերի և հողադործութեան և պետական կալուածների Մինիստրներին ուղարկելու համար: Իրամաղլութիւնների ղօղումները և նոյն իսկ դրամաղլութիւնները, որտեղ այդպիսիք կը գտնուեն, ներկայացնում են նահանգապետներին ուղարկելու իբրև աւանդ ներքին գործոց Մինիստրութեան ըստ օտար զուանութիւնների հոգևոր գործերի Դեպարտամենտի:

8) Եթէ որևէ եկեղեցու կամ հոգևոր հաստատութեան անշարժ կալուածքը դանվում է ուրիշ գաւառում կամ նահանգում, այդ դէպքում լիազօրները՝ նրա ղօղումները և ցուցակագրութիւնները պահանջելուց յետոյ ներկայացնում են նրանց տեղական նահանգապետին ուղարկելու այն նահանգի կառավարչին, ուր ղետեղուած է կալուածքը, որպէս զէ վերջինը կարգապրութիւն անէ նրան ընդունելու համար:

9) Եթէ ընդունուած կալուածքը կամ նրա մի մասը տուած է կապալով, կամ որևէ անձի օգտուելու համար առանձին պայմանով կամ ըստ տեղական սովորութեան, այն դէպքում կատարողներին կամ վարձակալներին տեղեկութիւն է տրվում յիշեալ գոյքը գանձարանի ձևքը անցնելու մասին և միևնոյն ժամանակ նրանց զգուշացնում են թէ հետևեալ վճարները ներանր պարտաւոր են այսուհետև ներկայացնել ենթակայ գանձարանները, ճշտութեամբ ցոյց տալով համապատասխան աւանդները (ղեպօղիտները), իսկ առարկայական վճարները այն անձին, որ լիազօրութիւն կունենայ կառավարելու ընդունած կալուածքը:

10) Յիշեալ կալուածները Երկրագործութեան և Պետական կալուածների Մինիստրութեան տեսչութեան յանձնելու

համար բոլոր ծախքերը կատարվում են այն կրեդիտներից, որոնք նշանակուած են կամանդիրովիաների համար, իսկ յետոյ կատարուած ծախքերը հոգացվում են այն գումարից որ պէտք է վերցնուի 10% քանակութեամբ հայ-լուսաւորչական եկեղեցու անշարժ կալուածների եկամուտից, իսկ ինչ վերաբերում է զրամագլուխների ուղարկելուն և փոխադրութեանը ներքին Գործերի Մինիստրութեան տեսչութեանը այդ ծախքերը կատարվում են այդ զրամագլուխների հաշուին:

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„Правительственный Вѣстникъ“ -ում սպագրուած է հետևեալ կառավարչական հաղորդագրութիւնը.

«Օգոստոսի 29-ին Գանձակում տեղական հայերի մի խումբ անկարգութիւններ կատարեց՝ 1903 թւականի յունիսի 12-ին տեղի ունեցած Բարձրագոյն հրամանի առիթով՝ հայոց եկեղեցական կալուածները քաղաքացիական իշխանութիւններին յանձնելու վերաբերմամբ: Կանչուած զօրքերի վրայ հայերը ըսկսեցին քարեր գցել և վիրաւորեցին 3 զինուորների: Անկարգութիւնները զագարեցնելու համար զօրքերը ստիպուած էին գործ դնել հրազէնք, որից յետոյ ամբոխը ջրուեց, թողնելով անկարգութիւնների տեղում 7 սպանուածներ և 27 վիրաւորուածներ:—Օգոստոս 31-ին Թիֆլիսում, պատարագից յետոյ հայոց մայր եկեղեցում, հոգեորականութիւնը եկեղեցու գաւթում՝ երկուհազար հոգուց բազկացած ամբոխի ներկայութեամբ հողեհանդիստ կատարեց այն վեց անձերի յիշատակին, որոնք սպանուած էին Գանձակում այնտեղի հայերի յարուցած անկարգութիւնների ժամանակ: Հոգեհանգստից յետոյ Տէր-Արարատեան քահանան նզովք կարգաց եկեղեցական կալուածների առման համար: Նոյն այդ ժամանակ ջրում էին յեղափոխական կոչեր: Ամբոխը ազաղակում էր, պցում էր քարեր և մօտաւորագէս 40 անգամ հրազէնք պարպեց ոստիկանութեան պաշտօնեաների վրայ: Վերջիները պատասխանում էին՝ օղի մէջ հրազէնք արձակելով, որի ժամանակ սակայն մի քանի հոգի ամբոխից վէրքեր ստացան: Մի բանուոր մահացու վէրք ստացաւ: Ոստիկանական պաշտօնեաներից մի քանի հոգի թիթի վէրքեր ստացան քարերով, մէկը սպանուեց: Անկարգութիւնների տեղը կանչուեցին կողակներ, որոնք և ջրեցին ամբոխը՝ ձերբակալեցանք, 1903.

լելով անկարգութիւններ սկսողներին, որոնց թւում և Տէր-Արարատեան քահանային»:

«Кавказъ» լրագրում տպագրուած են հետևեալ պաշտօնական հաղորդագրութիւնները.

«Օգոստոսի 29-ին, առաւօտեան ժամը 8-ին, Գանձակում, քաղաքի ծայրում, հայոց եկեղեցու մօտ, զանդակի ձայնի վրայ հաւարուեց մի քանի հազար հայ բողոքելու հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածները՝ սոյն տարուայ յունիսի 12-ի Բարձրագոյն հրամանի համաձայն՝ արքունական կառավարութեան յանձնելու դէմ և պահանջելու բացարձակ զիմադրութիւն այդ օբէյքը զործադրելուն: Յրուելու մասին եղած յորդորներն ու պահանջումներն աջողութիւն չունեցան, և ամբօրը, քարեր նետելով, յետ մղեց ոստիկանութեանն ու ոստիկանական պահնորդախմբին մինչև միւս եկեղեցին, որը գտնուում է քաղաքի կենտրոնում: Յրուելու մասին երկրորդ անգամ եղած պահանջին ամբօրը պատասխանեց նորից քարեր արձակելով: Այդ միջոցին վրայ հասան կանչուած զօրքերը: Ամբօրը ցրելու համար եղած երրորդ փորձից յետոյ ամբօրը հեծեալ պահնորդախմբին և ոստիկաններին զիմաւորեց քարերի կարկուտով և ատրճանակներ արձակելով, որի ժամանակ վերաւորուեցին ոստիկանական մի պահնորդ, մի ոստիկան և ատանդուղեան պահեստի զօրաբաժնի մի զինուոր, այն ժամանակ զօրքերը սկսեցին կրակել հրացանները, ամբօրն անյապաղ ցրուեց: Առայժմ հաստատուած է, որ եօթ հոգի ըստ պանուած են և քսանեօթ հոգի վերաւորուած»:

«Օգոստոսի 31-ին Թիֆլիսում, Վանքի մայր եկեղեցու դաւթում, ժամի 12<sup>1</sup>/<sub>2</sub>-ին, տեղի ունեցաւ հոգեհանդիստ, որին ներկայ էին մօտ 2000 անձինք, որոնք իրանից առաջ եկեղեցում ժամերգութիւն էին լսում: Հոգեհանդստի վերջանալուց յետոյ՝ ամբօրի մէջ սկսեցին ցրել հայերէն լեզուով պրսկյամայիաներ, և միևնոյն ժամանակ ամբօրը յարձակուելով դաւթի մէջ գտնուող ոստիկան զինուորների վրայ՝ սկսեց ձեծել նրանց: Ոստիկանական զինուորներին անյապաղ օգնութեան հասաւ Յ-րդ քաղաքամասի պրիստաւ Գեղեանով՝ ոստիկանական մի զօրախմբի հետ, որ գտնուում էր եկեղեցու պարսպից դուրս: Ամբօրը զիմաւորեց ոստիկաններին ատրճանակների հարուածներով և քարերով, որոնց ոստիկանները պատասխանե-

ցին իրանց իշխանութեան հրամանով ատրճանակների հարուածներով: Դրանից յետոյ անկարգութիւնների տեղը հասաւ Թիֆլիսի ոստիկանպետը ձիււոր պահապանների հետ միասին և վերջ գրեց անկարգութիւններին, իսկ վրայ հասած կողակների մի զօրախմբի օգնութեամբ վերջնականապէս վերականգնուեց հասարակական կարգը: Ոստիկաններից մի քանի հոգի ստացան վնասուածքներ, ամբոխից մէկ հոգի մահացու վէրք է ստացել»:

«Անպտեմբերի 2-ին Կարսու.մ, առաւօտեան 10<sup>1</sup>/<sub>2</sub> ժամին, նշանակուած պաշտօնեաները ձեռնամուխ եղան արքունի իշխանութեան անհռութեան տակ ընդունելու հայոց ս. Նշան և ս. Աստուածածին եկեղեցիների գոյքերը: Չանդահարութեան ձայնի հրուէրով հաւաքուեց հայերի մեծ բազմութիւն և տեղաւորուեց ս. Նշան եկեղեցու շուրջը, ինչպէս նաև կառւորների վրայ և հարեան աներում: Ոստիկանութեան և ոստիկանական պահապանների պահանջին՝ ջրուելու և հեռանալու այդտեղից՝ ամբոխը պատասխանեց քարերի սարափով և հրացանածղութեամբ յետ մղեց ոստիկանութեան: Շուտով եկեղեցու մօտ եկան ուրիշ պահապան ղինուորներ չրջանի կառավարչի հետ միասին և կողակների գնդի երկու հարիւրեակ՝ գնդապետ Կվիլցինսկու հրամանատարութեամբ: Շարունակ աւելացող ամբոխը ներանց էլ դիմաւորեց քարերով և հրացանածղութեամբ: Որովհետև երբեքու պահանջը չը կատարուեց, ուստի պահապանները ստիպուած էին մէկ-մէկ հրաղէնք պարսկել, որից յետոյ պահապանները կողակների օգնութեամբ մաքրեցին հրապարակը և սնկերը ամբոխից: Այդ ժամանակ հրապարակին մօտեցաւ բերդապահ գնդի մի վաշտ: Ոստիկանական պահապաններից մէկը վիրաւորուեց, և մի քանի հոգի էլ վնասուածքներ ստացան: Ամբոխից սպանուած է մի մարդ և երկուսն էլ վիրաւորուած են: Ս. Աստուածածին եկեղեցու մօտ ընդունող պաշտօնեաներին նոյնպէս սպասում էր հայերի բազմութիւն, որ սակայն ջրուեց զօրքերի միջոցով առանց զէնքի դիմելու: Չերբակալուած են 77 անձինք, որոնց թուում և երկու քահանաներ: Ընդունողները յուցակազրկեցին եկեղեցական գոյքերը»:

«Անպտեմբերի 2-ին Բագու քաղաքում, երեկոյեան մօտ 5 ժամին, եկեղեցու զանգի հրաւէրով, տեղական մայր եկեղեցու գաւթի մէջ հաւաքուեց հայերի նշանաւոր բազմութիւն: Ոստիկանութեան առաջարկութեանը ջրուելու՝ ամբոխը պատասխանեց քարեր և ատրճանակներ արձակելով: Ատրճանակներ էին արձակուած մինչև անգամ եկեղեցու պատուհաններից: այս պատճառով էլ կանչուեցին երկու հարիւրեակ կողակներ և

Սալիանի հետեակ գնդից կէս վաչա: Ամբոխը զօրքերին ևս դիմաւորեց քարերով ու ատրճանակներէ հարուածներով և միննոյն ժամանակ պահուեց եկեղեցու դաւթի քարէ պարսպի ետև և եկեղեցու մէջ: Այս պատճառով էլ կէս-վաչաը կրակ բացեց, և ամբոխը, ժողովելով սպանուածներին ու վիրաւորուածներին, թաղնուեց մայր եկեղեցու մէջ, որը և չըջատուեց զօրքերով: Ամբոխից ձերբակալուեցին 45 անձինք. մնացածները ցրուեցին: Գտնուած և չբաւուած է շատ զէնք, նոյնիսկ եկեղեցու մէջ և նրա սեղանի վրայ գտնուեցին վայր ձգած ատրճանակներ, լիք և դատարկ փամփուշաներ: Զօրքերից թեթև լինասուած են քարերով մի օֆիցեր և չորս զինուոր Սալիանի գնդից և սպանուած է քարերով մի նաւաստի «Գէոզ-Թէփէ» զինուորական նաւից, որ պատահամբ անցնում էր այստեղից: Բացի զրանից լինասուած է նաև ոստիկանապետի սլաշատնակատարը: Ամբոխի տուած զոհերի թիւը դեռ ևս յայտնի չէ»:

«Որպէս լրացումն այս տեղեկութեան, առաջ ենք բերում, համաձայն Բազուի նահանգապետի հաղորդագրութեան, որ հիմնուած է ստուգուած տեղեկութիւնների վրայ, հետևալ փաստերը.—սեպտեմբերի 2-ին, Բազու քաղաքի հայոց եկեղեցու դաւթում տեղի ունեցած անկարգութիւնների ժամանակ սպանուած են ամբոխից երկու մարդ, հիւանդանոցում վէրքերից մեռել են երեք հոգի և եօթը հոգի էլ պառկած են ծանր վիրաւորուած: Թեթև վիրաւորուածները, որոնց վէրքերը մի անգամ կապուած են միայն, հինգ հոգի են»:

«Սեպտեմբեր 12-ին Շուշի քաղաքում հայոց եկեղեցիներին պատկանած կալուածները արքունի տեսչութեան տակ ընդունելու ժամանակ հաւաքուեց հայերից կազմուած ամբոխ, որը սկսեց աղաղակել և սուլել, բայց այս հանգամանքը չը կանգնեցրեց ընդունողների աշխատանքը: Երբ մասնաժողովը արդէն վերջացրել էր ընդունելութիւնը և դատում էր յետ, զրդուած ամբոխը ուղևորուեց դէպի նահանգապետի բնակարանը: Ամբոխը կանգնացնելու համար առաջ ուղարկուեցին ոստիկանական պահապաններ և կողակների կէս վաչա, որոնց վրայ ամբոխի միջից և աների կտուրներից ու պատշգամբներից սկսեցին դիպել քարեր և արձակել ատրճանակներ ու հրացաններ: Կէս-վաչաը կրակ բացեց և մարրեց փողոցները: Այդ ժամանակ վիրաւորուեցին երկու կողակ և մի ոստիկանական պահապան: Ամբոխից սպանուածների թիւը մութն ընկնելու պատճառով չ'իմացուեց»:

«Кавказъ» լրագրի 245-րդ համարում տպագրուած է. «Ներքին գործերի մինիստրը, սեպտեմբերի 15-ին ուղարկուած հեռագրով, տեղեկացրեց կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետին, որ Կարս, Փանձակ, Շուչի և Նուխի քաղաքներում մայնուում է սաստկացրած պաշտպանութեան դրութիւն»:

Նոյն պաշտօնական լրագրում տպագրուած են հետեւալ պարտադիր կանոնները Փանձակ, Շուչի և Նուխի քաղաքների համար:

Յօդ. 1) Ժողովրդի համախմբումները և ժողովերը փոզոցներում, հրապարակներում, այգիներում, կայարաններում և հասարակական այլ տեղերում խորհրդակցութիւնների կամ գործողութիւնների համար, որոնք հակառակ են հասարակական կարգին և խաղաղութեան, ինչպէս նաև հեռաքրքրուող հասարակութեան համախմբումներն արգելոււմ են: Յօդ. 2) Ժողովուածները պարտաւոր են ոստիկանութեան առաջին պահանջմամբ անյապաղ ցրուել: Յօդ. 3) Ոստիկանութեան պահանջներին անխօս և անյապաղ չը հնազանդուողները ենթարկուում են վարչական կարգով համաձայն պետական կարգը և հասարակական խաղաղութիւնը պաշտպանելու համար ձեռնարկուելիք միջոցների կանոնագրութեան 15-րորդ և 16-րորդ յօդուածների՝ 500 րուբլի տուգանքի կամ բանտակութեան մինչև 3 ամիս: Այսպիսի պատիժներ տալու համար՝ համաձայն սաստկացրած պաշտպանութեան դրութեան վերաբերեալ կանոնագրութեան 16-րորդ յօդուածի 1 կէտի՝ ևս լրադրութիւն եւ տալիս Փանձակի նահանգապետին: Յօդ. 4) Այս պարտադիր կանոնները զօրութիւն և ստանում հրատարակուելու օրից:

Ստորագրել է սենատոր, գեներալ-ադիւտանտ իշխան Գովյըին»: Նոյնպիսի պարտադիր կանոններ հրատարակուած են նաև Կարս և Ալեքսանդրօպոլ քաղաքների համար:

Օդեստոսի 29-ին, Կարսում, «Кавказъ» լրագրի ասելով, — մի խուլ փոզոցում, Կուրինակի գնդի զօրանոցի ետևում, Տոնոելի բնակարանում, տեղի ունեցաւ ուումբերի պայթումն. մեռան այդ բնակարանում գտնուող չորս հայեր, որոնց մէջ նաև տանուտէր Տոնոելը. պայթման ժամանակ ծանր վիրաւորուեց նաև ամերիկահայատակ Նահիկեան, որ մի քանի օր առաջ եկել էր Կարս և որ շուտով մեռաւ ստացած վերքից: Առաջարկութեան ժամանակ բնակարանում գտնուեցին 38 պղնձէ ուումբեր, պայթու-

ցիկ սնդիկի ևրեք կապսիւլներ, Բիկֆորտի փապաւէն, ժելատին և այլ պատկանելիքներ: Քննութիւնը շարունակուում է:

«Правительственный Вѣстникъ»-ում ստապրուած է հետեւեալը. «Օգոստոսի 28-ին, Երեկոյեան, Գոմել քաղաքի շուկայում, մի գիւղացու և առևտուր անող մի հրէուհու մէջ կռիւ ծագեց, որ շուտով փոխուեց կասաղի կուի հրէաների և ռուսների մէջ: Կարգը վերահաստատուելու ժամանակ՝ հրէաների ամբոխի միջից քարեր գցուեցին ոստիկանական պաշտօնականների վրայ և գնդակ արձակուեց ատրճանակից, որին ոստիկանական պաշտօնականները պատասխանեցին գնդակներ արձակելով օդի մէջ: Կուի ժամանակ մի ռուս դանակի մահացու հարուած ըստացաւ մի հրէայից՝ պարանոցին, մի հրէայ գնդակի թևթև վէրք ստացաւ և 7 հոգի վիրաւորուեցին քարերով: Սեպտեմբերի 1-ին, կէսօրուայ ժամանակ, անկարգութիւնները վերակսուեցին: Ռուս բանուորները, վրէժ լուծելով օգոստոսի 29-ին իրանց հասցրած վիրաւորանքի համար, անկարգութիւններ արին և սկսեցին հետ ունեցած ընդհարման ժամանակ երկու կողմից էլ վիրաւորուեցին մի քանի տասնեակ մարդիկ: Կարգը վերականգնելու համար՝ անկարգութիւնների տեղը կանչուեցին զօրքեր, որոնց հրէաները զիմաւորեցին հրաղէնք արձակելով և այս հանդամանքը ստիպեց զօրքին ղէնքի զիմելու, որից յետոյ ամբողջ զբուռուեց, և կարգը երեկոյեան վերականգնուեց: Այն տեղեկութիւններով, որ ժողովեց Մոզիլի նահանգապետը անկարգութիւնների տեղը հասնելուց յետոյ, քաղաքային հիւանդանոցներում բժշկուում են վիրաւորուածներից՝ քրիստոնեաներ 5: հոգի և հրէաներ 9 հոգի: սպանուած են՝ քրիստոնեաներից 4 և հրէաներից 2 հոգի:—Ստացուած լրացուցիչ տեղեկութիւններին նայելով, Գոմել քաղաքում անկարգութիւնները դադարեցնելու ժամանակ, սեպտեմբերի 1-ին տեղական հրէայ բնակիչները, զինուած դանակներով, խանչալներով և ատրճանակներով, զիմադրութիւն էին ցոյց տալիս զօրքին, որ չէր թողնում նըրանց կուելու քրիստոնեաների ղէմ, և հրաղէնք էին արձակում զինուորների վրայ աներից և ցանկապատերի ետեից: Այիլազեան հետակ գնդի 6-րդ վաշտի ֆելդֆելերը դանակի վէրք ստացաւ մի հրէայից պարանոցին այն ժամանակ, երբ կամենում էր ձերբակալել մօտիկից նրա վրայ հրաղէնք արձակող հրէուհուն, որ կարողացաւ թափնուել: Կուի ժամանակ, ինչպէս նաև զօրքի միջոցով անկարգութիւնները դադարեցնելիս,

ընդամենը սպանուած են 4 քրիստոնեայ և 4 հրէայ, վիրաւորուած են 7 քրիստոնեայ և 8 հրէայ, որոնցից մէկը մեռաւ: Մինչև այժմ քանդուած աների ու խանութների յայտնի զարձած թիւը 200 է: Չերբակալուած են 68 անձինք, որոնք մասնակցել են անկարգութիւններին: Գույշ կողոպտման գէտը տեղի չէ ունեցել. հանգստութիւնը քաղաքում պահպանուում է զօրքերով: Զօրքի զլխաւորների և գատատանական պաշտօնեաների վկայութեամբ, ոստիկանութեան գործողութիւնները անկարգութիւնները ճնշելու ժամանակ անբասրելի էին, և միայն շնորհիւ ոստիկանապետի արած կարգադրութիւնների՝ անկարգութիւնները սահմանափակուեցին համեմատաբար չնչին շրջանի մէջ և չը տարածուեցին ամբողջ քաղաքում: Անկարգութիւնների պատճառը, ազգարանակալութեան բարեմխտ մասի ընդհանուր կարծիքով, տեղական հրէաների վերին աստիճանի թշնամական և սպանական գերքն էր, որ նրանք բռնել են դէպի քրիստոնեաները»:

Այն տեղեկութիւններով, որ ժողովել են Անդրկովկասեան վիճակագրական կոմիտետի յանձնարարութեամբ Երևանի հասանդական և Կարսի շրջանային վիճակագրական կոմիտեաները, 1902 թւականի ընթացքում Երևանի նահանգի և Կարսի շրջանի զանազան քաղաքային և գիւղական հասարակութիւնների անդամ են գրուել 18,132 հոգի երկու սեռից: Դրանք բոլորն էլ համարեա հայ-փախստականներ են թիւըքիայից, որոնք բընակիչ են գրուել զլխաւորապէս Երևան, Ալեքսանդրօպոլ, Նախիջիւան և Կարս քաղաքներում և Կազգուան աւանում: Երևանում գրուել են 3,896 հոգի, Ալեքսանդրօպոլում—2,027, Նախիջիւանում—696, Կարսում—10,082 և Կազգուանում—5,594 հոգի:

«Баку» լրագրում կարդում ենք. «Անհրամեշտ համարելով մի անգամ ընդ միշտ կարգաւորել այն բազմաթիւ պարսկահըպատակների գրութիւնը, որոնք ապրում են Կովկասում կամ առանց ազգային անցադրերի կամ այնպիսի անցադրերով, որոնք վկայուած չեն Պարսկաստանի ռուսական հիւպատոսների կողմից, կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետը մի շրջաբերականով յանուն նահանգների և շրջանների կառավարիչների՝ առաջարկեց նրանց այդպիսի պարսկահըպատակներին նշանակել ճ-ամսեայ ժամանակամիջոց, որի ընթացքում նրանք պէտք է ստանան ազգային անցադրեր՝ վկայուած

Պարսկաստանի ռուսական հիւպատոսների կողմից: Բացի սրանից պէտք է ընտանեկան ցուցակներ կազմուեն այն պարսկահայատակների համար, որոնք գրուած են կովկասեան որևէ քաղաքի կամ գիւղի բնակիչ, որպէսզի նախօրօք համաձայնութիւն կայացնելով պարսկական կառավարութեան հետ, կարելի լինի հանել նրանց պարսից հպատակութիւնից եւ զրել ռուսահպատակների որդոյն եւ թոռներին, որոնք հասել են չափահաս տարիների եւ չ'ունեն օտարահպատակների համար սահմանուած անցադրեր, պէտք է տրուեն անցադրեր, եթէ կ'ապացուցուի, որ նրանք ծնուել եւ մշտապէս ապրել են Կովկասում—հակառակ դէպքում նրանք եւ Յ-ամսեայ ժամանակամիջոցի ընթացքում պարտաւոր են ներկայացնել վկայուած ազգային անցադրեր: Կովկասեան նահանգների եւ չրջանների կառավարիչները պարտաւոր են ուղարկել Թաւրիզի զլխաւոր հիւպատոսին այն բոլոր պարսկահպատակների ընտանեակ ցուցակները, որոնց անցադրերը պէտք է վաւերացուեն նրանց բացակայութեամբ: Այն անձինք, որոնք չեն կատարի այս պայմանները վերոյիշեալ ժամանակամիջոցի ընթացքում, կ'աքսորուեն պետութեան սահմաններից դուրս:

Այս տարուայ յունիսի 10-ին հրատարակուած օրէնքով որոշուած են կանոններ Թուրքաստանի (Սիր-Դարիայի, Ֆերգանեան եւ Սամարղանդի չրջաններ) արքունական հողերի վրայ գաղթականութիւններ հաստատելու կանոններ: Այդ հողերը յատկացուած են Եւրոպական-Ռուսաստանից գաղթող ուղղափառ բուն ռուս գիւղացիներին եւ մեչչաններին: Գաղթականներից իւրաքանչիւր արական շունչին տրուելու է ոտոզուող հողերից 3 դեսնափին, իսկ այլ տեսակ հողերից՝ որքան անհրաժեշտ կը լինի եւ հնարաւոր:

Գաղթականներին տրուում են մի քանի արտօնութիւններ. 5 տարով ազատուելու են հարկերից, յաջորդ 5 տարին հարկ են վճարելու կէս չափով, 6 տարի ազատուելու են զինուորացրութիւնից եւ այլն:

«Մուրճ»-ի № 7-ում (երես 204) հաղորդուած էր կառավարիչ սենատի որոշումը՝ զինուորական ծառայութեան մրտնոգների երդման մասին: Վերջերս ներքին գործերի մինիստրը մի չրջաբերական է ուղարկել զինուորացրական ատեաններին, որով պատուիրուում է նրանց այսուհետև նորակոչ զինուորներ

րին ծառայութեան հաւատարիմ մնալու երդումն տալ ոչ ատեաններում, այլ քրիստոնեաներին—եկեղեցիներում, իսկ հրէաներին—սինագոգներում:

Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ.

Ներքին գործերի մինիստրը թոյլ տուեց Կովկասեան Լեոնային Ընկերութեանը հրատարակել Պետերբուրգում, լեոնային ինժեներ Դրէյքերի խմբագրութեամբ, մի ամսագիր՝ «ВѢСТНИКЪ Кавказскаго горнаго общества» անունով: Ամսագրի մէջ, բացի ընկերութեան ընդհանուր ժողովների արձանագրութիւններից, պէտք է տպագրուեն տեղեկութիւններ այն ճանապարհորդութիւնների մասին, յրոնք կատարոււմ են Կովկասում թէ ուսանելի և թէ օտար տուրիստների կողմից, նոյնպէս և յօգուածներ Կովկասի աշխարհագրութեան, սղղագրութեան, հնագիտութեան և երկրաբանութեան մասին:

## ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Միևիսրական փոփոխութիւններ Անգլիայում:—Մակեդոնական ռեֆորմների ընդարձակման սուաչարհի:—Միւրուշեգի սեւակցութիւնից յետոյ պաշտօնական հաղորդագրութիւն մակեդոնական հարցի մասին:—Ունգարական կրիզիս:—Միջպարզանկեսական համաժողով Վիեննայում:—Միջազգային վեճերի բարբառական լուծում եւ միջազգային տիրուկայ:—Գործերը Վերձաւոր Արեւելքում:—Կ' Սուֆիսս վարդապետ Պարսկեան:

Չեմբերյիներ, տեսնելով որ անդլիական ազատ հասարակական կարծիքը լաւ ընդունելութիւն չը սոյց աուեց իր նոր ֆինանսական ծրագրներին, խեղացի համարեց հրաժարուել իր մինիստրական պորտֆելից և իր ամբողջ ժամանակն և կռանդը գործադրել այդ կարծիքը իր կողմը զրաւելու. նա կը պատի թէ Անդլիայում և թէ անգլիայի հեռաւոր գաղութներում և կ'աշխատի իր ճառերով, իր բրոշիւրներով համոզել իր նոր սիստեմի բոլոր առաւելութիւնների մէջ: Մրցումը, պայքարը զրուած է ազատ հողի վրայ, և յաղթողը կը լինի նա, ով աւելի պիտութիւն, կռանդ և ժամանակակից պահանջների պայծառ ըմբռնողութիւն սոյց կը տայ:

Անգլիան մինչև վերջերը իրան ոչ յատուկ անտարբերութեամբ էր վերաբերում դէպի Մերձաւոր Արեւելքում այժմ տեղի ունեցող դաւադի անցքերը: Մի ընդ միայն յայտնի էր. նա պլատոնական դանկութիւն էր յայտնում, որ աւելի ընդարձակուեն Մակեդոնիայի համար առաջարկուած ռեֆորմները, տեղային ինքնաւարտութիւնը աւելի հաստատ և սուղահով հիմքերի վրայ զրուած լինի:

Այժմ հասարակական կարծիքն ևս արթնացել է իր լե-

տարրիական քնից, ինչպէս այդ երևում է սեպտեմբերի 17-ին Լոնդոնի Սէնտ-Ջէմս-Հոլլում Ուորչեստերի եպիսկոպոսի նախագահութեամբ տեղի ունեցած բազմամարդ միտինգի նկարագրութիւնից:

Անգլիական եկեղեցու պետը կենտրոնական արքեպիսկոպոսը այդ միտինգին նամակ էր ուղարկել, որի մէջ յայտնում է, թէ անգլիական ամբողջ ժողովուրդը պատրաստ է Անգլիայի զօրաւոր աղբեցութիւնը դորձ դնելու՝ վերջ տալու Բալկանեան թերակղզու վրայ ներկայումս կատարուող անպթութիւններին, անկարգութիւններին և յափշտակութիւններին: Կարդացուել են նաև շատ եպիսկոպոսների և պարլամենտի անդամների նոյն ոգով դրուած նամակներ և հեռագրեր:

Միտինգին մասնակցող ժողովուրդը կայացրել է հետևեալ որոշումները.

1) Մակեդոնիայի խառնակութիւնը և թիւրքական հսկողութեամբ բարենորոգումներ մտցնելու փորձերի անաջողութիւնը անհրաժեշտ են դարձնում զազարեցնել սուլթանի իշխանութիւնը մակեդոնական դաւաճների վրայ:

2) Այն պարասկանութիւնները, որ Անգլիան վերցրել է իր վրայ Բերլինի դաշնագրով, պահանջում են, որպէսզի Անգլիան զազարեցնէ այդ ժողովրդի կոտորածը և ունեցուածքի թալանուծը, միևնոյն ժամանակ աշխատելով դաշնագիրը ստորագրող միւս պետութիւններին դրաւել դէպի այդպիսի քաղաքականութիւնը:

3) Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն հասցնել սովի առաջն առնելու համար և Բալկանեան կոմիտեա հիմնել կարօտեալներին նպաստելու համար:

Անշուշտ այդպիսի կարուկ ոճ անկարող է բանացնել Բալքանի մինիստրութիւնը, որ պէտք է հաշի տունի ուսուստորիական համաձայնութիւնը մակեդոնական հարցի նկատմամբ: Այդ համաձայնութեան դիտաւոր նպատակը աւստրօ-ուսական շահերն են, ձգտումն է՝ այդ երկու պետութիւնների մէջ Բալկանեան թերակղզում տեղի ունենալիք թիւրքիմացութիւնների առաջն առնելը խաղաղ միջոցներով: Եւ այն ամենը, ինչ որ համապատասխան չէ այդ գլխաւոր նպատակին, ընդունելի չը պիտի լինի Վիեննայում և Պետերբուրգում: Շախիայի Մեւրուշաէզ որսորդական ամրոցում Թրանց-Յովսէփ և Նիկոլայ կայսրների տեսակցութիւնից յետոյ «Правит. Вѣст.»-ում տպուած էր հետևեալ հաղորդակցութիւնը.

«Օգոստափառ Միապետների հրամանով, Լամդզորֆ և Գո-

լուխովսկի կոմսերը ուղարկեցին Կ.-Պոլսի ուսաց և աւստրո-ուկրաական զեսպաններին հետեւալ համանման հետազիրը. «Վերջին ժամանակներս զուր լիազօրութիւն ունէիք յայտնել, որ Ռուսաստանը և Աւստրիան անշեղ շարունակուում են իւրադազցման իրանց ձեռնարկած գործը, հետեւելով տարուայ սկզբում մշակած ծրագրին, չը նայելով նրա իրազորման համար ծագած զը-ժուարութիւններին: Յիրաւի այն ժամանակ, երբ մի կողմից յեղափոխական կոմիտեաները անկարգութիւններ էին յարուցանում և արգելում էին քրիստոնեայ ազգաբնակութեանը երեք վիլայէթներում աջակցութիւն յոյց տալ ընդհանրման իրազորման, միւս կողմից Բարձրագոյն Դրան օրդանները, որոնց վրայ դրուած էր ըէֆտրմների գործադրութիւնը, առհասարակ ներկայ դէպքում ցանկալի ետանդ չէին յոյց տալիս և չը համակուեցին այդ ձեռնարկութիւնների հիմքի մէջ՝ դրած իսկական նպատակներով, ապացուցանելու համար, որ իրանք հաստատ վճուել են պնդել, որ իրազորման վերոյիշեալ ընդհանրմանը, որոնք ընդունուած են Բ. Դանից և որոնք նպատակ ունեն երաշխաւորել ընդհանուր ապահովութիւնը: Երկու կառավարութիւնները պայմանաւորուեցին կոմարոլի և վերահըս-կողութեան աւելի իրական եղանակների վերաբերմամբ, և զուր առանց յապաղելու կը ստանաք ձիշտ ցուցմունքներ այդ առարկայի վերաբերմամբ: Եթէ մի կողմից երկու կառավարութիւնները կատարելապէս ճանաչում են Բարձրագոյն Դրան իրաւունքը և պարտաւորութիւնը՝ ճշելու կոմիտեաների շարամիտ ազդեցիկայի չնորհիւ առաջացած անկարգութիւնները, միւս կողմից նրանք չեն կարող ցաւ չը յայտնել, որ այդ ճշումը կապուած էր բռնութիւնների և դադանութիւնների հետ, որոնցից տանջուած էր խաղաղ ազգաբնակութիւնը: Ի նկատի ունենալով այդ նրանք խիստ անհրաժեշտ են համարում օգնութեան հասնել այդ վշտալի անոջերի զոհերին, և վերոյիշեալ հրահանգները ձեռն յոյց կը տան մանրամասնօրէն պոլութեան ամեն միջոցներից զուրկ բնակիչներին օգնելու եղանակները, զիւրացընելով նրանց վերադարձը դէպի իրանց տեղերը և հոգ տանելով վերականգնելու այրուած գիւղերը, եկեղեցիները և դպրոցները: Ռուսաստանի և Աւստրո-Ուկրաինայի կառավարութիւնները հաստատ յոյս են տածում, որ նրանց անընդհատ ջանքերը կը համեն հաստատուն խաղաղացման զմադրուած նպատակին խոտովութիւններից վնասուած շրջաններում և համոզուած են, որ նրանց կատարելապէս անկողմնապահ խորհուրդները կ'ընդունուեն բոլորից, ում որ նրանք վերաբերում են»:

Պարզ է որ մի տարի առաջ կայացած համաձայնութիւնը անսխալ է մնում և այժմ:

Աւստրո-Ունգարիայի ծերունի կայսրը այս վերջին ամսում առիթ ունեցաւ հիւրընկալելու ոչ միայն Ռուսաստանի Միապետին, այլև Էդուարդ VII-ին, Վիլհելմ II-ին, ռումինական և յունական թագաւորներին, իսկ ինքը այցելեց Գալիցիայի լեհերին Լվովում և մի քանի անգամ դնաց Բուդապէշտ, յոյս ունենալով իր անձնական հեղինակութեամբ կտարել ունգարական ընդգիմութիւնը:

Իր ժամանակին մենք նկատել էինք ունգարական մինիստր-նախագահ Սեւրի հրաժարականի և ծայրայեղ ազգայնական կուսակցութեան պահանջների մասին, որոնց մէջ առաջնակարգ տեղն է բռնում այն, որ մաջառական լեզուով կատարուի դիտորական հրամանատարութիւնը ունգարական ղորքում: Մաջառները մոռանում էին, որ այդ դէպքում նաև չեխերը, խորվառները և լեհերը պէտք է նոյն պահանջն անեն. դրանով կործանուում էր աւստրո-ունգարական ղորքի միութիւնը: Եւ ահա ունգարական այդ «յաւակնութիւններին» վերջ դնելու համար ղորքի ընդհանուր հրամանատարը—Ֆրանց-Յոլսէփ կայսրը—Գալիցիայի Խլոպը քաղաքում, սեպտ. 16-ին ստորագրեց մի հրաման ուղղած աւստրո-ունգարական ղորքին: Այդ հրամանի մէջ կայսրը բացարձակապէս յայտնում է, թէ ինքը երբէք չի համաձայնուի ընդունելու մաջառ ազգայնականների վերջին պահանջը. «Թող իմ ղորքը իմանայ, որ ես երբէք չեմ հրաժարուի ղորքի բարձրագոյն հրամանատարին յատկացրուած իրաւունքներից և արտօնութիւններից: Ընդհանուր և միապաղաղ, ինչպէս է այժմ, պիտի մնայ իմ ղորքը և այսուհետ»: Կայսրի այդ խօսքերը Ունգարիայում առաջացրին դժգոհութեան կատաղի փոթորիկ: Ունգարիան հրաժարում է ոչ միայն նոր ղինուորներ տալուց, այլև հարկ վճարելուց... Ունգարայիք այդ հրամանը համարում են սահմանադրութեան խախտում: «Ոչ մի կարգին ունգարացի, ոչ մի ազգասէր յանձն չի անել այդ պայմաններում նոր մինիստրութիւն կազմակերպելու», այդպիսի խօսքեր էին լսում ունգարական բոլոր շրջաններում: Ընկճու ելով հասարակական կարծիքից՝ նոյնիսկ Կոէն-Հեդերվարիի պէս մարդը ստիպուած էր հրաժարուել մինիստր-նախագահի պաշտօնից: Այդպիսի սուր կերպարանք են ստացել իրար հետ արուեստակի կապուած Աւստրիայի և Ունգարիայի յարաբերութիւնները: Եւ կարծես հասել է իրար հետ կռուող այդ երկու լծակիցների ապահարզանի ժամը...

Աւստրիայում, աղղայնական տար վէճերի հէնց այդ երկըրում, կայացաւ մի խումբ ուսուցիստների համաժողով. Վիեննայում օգոստոսի 25-ին ղումարուել էր «Միջպարլամենտական Դաշնակցութեան» ժողովը, որին մասնակցում էին 16 երոպական սահմանադրական երկրներից հաւաքուած մօտ 400 ներկայացուցիչներ: Ժողովին մասնակցում էին աղղերի հաւասարութեան և եղբայրութեան, ինչպէս և խաղաղութեան դադափարի այնպիսի առաքեալներ, ինչպիսիք են՝ ֆրանսիացի Ֆրեդերիկ Պասսին, անգլիացի Րինգել Կրամեր և զերմանուհի Բերտա Չուտաներ:

Այդ ուսուցիստները դեռ չեն կորցնում իրանց հաւատը, որ մարդկութիւնը վերջիվերջոյ կը թողնի միջազգային վէճեր լուծելու այն բարբարոսական միջոցը, որ հիմնուած է զէնքի ոյժի վրայ, և կ'ընդունի միջազգային դատարանը՝ իբրև արդարադատութիւնը երաշխաւորող միակ տրիբունալ: Հետաքրքրական են այդ ժողովներում արտայայտուած խօսքերը, որ պատկանում են Աւստրիայի մինիստր-նախագահ Կեորբերին. «Ոչ անհատական անձի փառասիրութիւնը, այլ աղղի պատիւն է այժմ դարձել այն զսպանակը, որ չի կարելի անտես առնել, եթէ չէք կամենում շարժման մէջ գցել ամբողջ աղղային մեխանիզմը: Այդ պատճառով խաղաղասէր պետական գործիչ կարող է համարուել այժմ միայն նա, ով իբրև չափ ուրիշ աղղերի պատուի ընդունում է այն զգացումը, որ նա զգում է զէպի իր սեպհական աղղը»:

Սակայն այդ պեղեցիկ խօսքերը չ'արգելեցին, որ ժողովում չ'ընդունուէին երկու լեհ պատգամաւորների (Լեւակովսկի և Րոչչկովսկի) առաջարկութիւնները մասնա՝ ազգութիւնների իրաւունքների որոշման մասին... Չը նայած այդ հանդամանքին՝ այնուամենայնիւ չի կարելի ուրանալ, որ այս 15 տարուայ ընթացքում Միջպարլամենտական Դաշնակցութեան գործիչների ջանքերը ապարդիւն չեն անցել: Մեր № 7 արտ. տեսութեան մէջ մենք յիշատակեցինք անլլիական և ֆրանսիական պարլամենտների ներկայացուցիչների փոխադարձ համակրական ցոյցերի, ինչպէս և ֆրանս-իտալական մերձեցումների մասին: Այս վերջին հոսանքը աւելի ևս ուժգին ծաւալ կը ստանայ երկու երկրները աւելի սերտ միացնող Սիմպլոնեան տունելի բացումով, երբ Ալպեան անջրպեաը այլևս չի հեռացնի երկու արիւնակից աղղերին: Անդրօ-ֆրանսիական մերձեցումն ևս նորանոր արտայայտութիւններ ունեցաւ, «խաղաղութեան դադափարի և ընդանուր զինաթափման» առաքեալ դ' Էստուրնել զը-Կոնստանի կողմնակիցներն օրէցօր աւելանում են ֆրանսիայում:

Հասարակական կարծիքը Ֆրանսիայում պահանջում է, որ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ պայմանագիր կապուի, որի զորութեամբ այդ երկու ամենաազատ երկրներին մէջ ծագած անհամաձայնութիւնները միջնորդ դատարանով վճուեն: Ֆրանսիայի նահանգական ժողովներում ծեծոււմ էր այն հարցը, որ ժամանակ է նաև առևտրական դաշն կապել Անգլիայի հետ: Այդ բարեկամական տրամագրութեան արտայայտութիւններից մէկն էլ այն է, որ Անգլիան ոչ մի արգելք չի յարուցանում Մարտիկոում ֆրանսիական ազդեցութեան ամրանալուն. երևի նոյն ձևով Ֆրանսիան կը վարուի անգլիական ձգտումներին եզրկոտուում: Համերաշխութիւն է երևում ամերիկական զորածերում նաև Ֆրանսիայի և Իտալիայի մէջ: Զգտում մերձենալ Անգլիայի հետ երևում է և Գերմանիայում, որին արտայայտիչ է հռչակաւոր Մոդլենի նամակը՝ ուղղուած անգլիական ազգին...

Այդպիսի հանգամանքներում կարծես դժուար չը պէտք է լինէր Մերձաւոր Արևելքի իսաղաղայման գործը, որ անվերջ ձգվածուելով իբրև կուսածաղիկ՝ ամենամեծ արգելք է լինում գէթ եւրոպական զինաթափման իրազորման և սուր կոտորածների ու աւերմունքների պատճառ դառնում նաև կուրի դաշտից դուրս: Մակեդոնական գէպքերից կատաղած մահմէդական ֆանատիկոսները առամներ են կրճտացնում Թիւրքիայի բոլոր քրիստոնեաների դէմ, և բնականաբար ոչ մի քրիստոնեայ ապահով չի կարող համարուել այդ երկրում: Այդպէս Թիւրք ֆանատիկոսութեան զոհեր աուեց և Բէյրութը, ուր օգոստոսի 24-ին—25-ին տեղի ունեցաւ քրիստոնեաների կոտորած եւրոպական հիւպատոսների աչքերի տալ:

Անցքի քննութիւնը ցոյց աուեց, որ դեռ վաղուց մահմէդականները Բէյրութում կազմակերպած են եղել մի գաղտնի ընկերութիւն, որ նպատակ է դրել բնաջինջ անել «անհաւատներին»: Այդ ընկերութեան գոյութեան մասին գիտէր և տեղական վալին Բէյրիզ փաշան: Ամերիկական նաւատորմիցը իհարկէ մօտեցաւ Բէյրութին իր հիւպատոսի և հպատակների կեանքը պաշտպանելու և ոչ սիրիացի սայնայի փրկութեան համար: Այդ գէպքը հաղարկորդ անգիւմ ապացուցում է, որ մասնակիր րեֆորմներով չի վճուուի արևելեան հարցը, որովհետև վաս բուժիմը անտանելի է, լինի դա եւրոպական Թիւրքիայում, թէ նրա ասիական վիլայէթներում:

Լ. Ս.

Սեպտեմբերի 6-ին Լոնդոնում վախճանուել է Սուքիաս վարդապետ Պարոնեանը մօտ 72 տարեկան հասակում: Սուքիաս վարդապետը հայ-հռոմէական ծնողներից էր. իր ուսումը առել է Վենետիկ Մխիթարեանների մօտ: Ներսէս պատրիարքի օրով նա ազգային եկեղեցու ղիրին է դարձել և նշանակուել Մանչեստրի հայերի հոգևոր հովիւ: Երբեմն հովիւ է նշանակուել և Պարիզի հայերի վրայ: Հանգուցեալը իր վրայ կրում էր Մխիթարեանների դրօշմը—աւելի հնախօսական և բանասիրական հարցերով հետաքրքրուելով, քան վարչական, հասարակական:

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԵՒԵՆԵՆ ՄՇՄՈՒՂ, շարաթաթերթ.— Ձմիւռնիայում հրատարակուող այդ հանդէսը այս տարի բոլորում է իր 33-րդ տարին. Մ. Մամուրեանի մահից յետոյ գործը շարունակում է նրա որդին: «Ազգային, գրական և քաղաքական» այդ շարաթաթերթը իհարկէ դուրիչ չէ թիւրքահայ թերթերի ընդհանուր պակասութիւններէց, որոնց մեծ մասը սակայն արդիւնք է անբող պայմանների... Թիւրքական գրութենաբանութիւնը խեղդում է հասարակական-քաղաքական ազատութեան նշոյն անդամ, և գրողները ստիպուած են սահմանափակուել մտաւոր շահերի շատ նեղ շրջանում: Այդ պայմաններում գործանալի չէ, որ մի Յ. Ալիբար փայլիվերոյ սրբաօտութիւնների մէջ է վարժուում, իսկ անդրանիկ բանաստեղծուհի» Սիրիլը հարցում է տալիս տղամարդկանց «Արեւելեան մամուլի» մէջ, թէ՛ «Որո՞նք են այն երեք զլխաւոր յատկութիւնները զորս պիտի փնտռէ՞ք ձեր կնոջ վրայ, և որո՞նք—զորս պիտի ուզէ՞ք տեսնել ամեն կնոջ վրայ»...

«Արեւելեան Մամուլին» աշխատակցողներից ուշադրութիւն են զբաւում Ռուբէն Զարգարեան և Գնէլ: Այդ գեղարուեստագէտները սակայն վարակուած են թիւրքահայ գրողների ընդհանուր ախտով — գեղեցիկ բառեր կուտակելու գործնալի սէր: Ահա ձեզ մի նմուշ Գնէլի «Լեւրան մայրը» ականգավէպից.

«Պաշտահարթը, ուր դուրս տուած (!) մեզու է տարմաղաղնութեամբ բուռ-բուռ զիւղեր ցանուած են՝ երկք կողմէն կը շրջապատուէր լեռներու կիսարուարակով մը, որուն անհամաշափ ու վիթխարի գերբուկներով պարեկները յուլիսի խժախժ գոլին իսկ՝ ձիւնի ճերմակ ու պաղ փրփուր մը կը շողացնեն տապաղէկ արեւին ճաճանշներուն տակ»:

Գուռուական մի քանի գրողներից դատ «Ա. Մամուլը» ունի մէկ երկու Արմաշականներ, որոնք պատուաւոր կերպով են զսրծաղբում իրանց գրիչը: Մուշեղ վարդապետը Մամուլի մէջ թարգմանաբար ծանօթացնում է Գիստաւ Լարրանի *Le psychologie de la foule* — Ամբոխի հոգեբանութիւնը — Փ. Գրէյֆուսի *L'évolution des mondes et des sociétés* — հալլ հեղինակների գործերի հետ:

Երկրորդ Արմաշականը, որ մօտ մասնակցութիւն ունի Արեւելեան Մամուլի մէջ, է Բարզէն վարդապետը:

Բարզէն վարդ. պետը լուրջ հրապարակախօսի յատկութիւն է ցոյց տալիս. առանձին ուշալրութեան արժանի են նրա երկու յօդուածները. մէկում նա շեշտում է հայոց եկեղեցական պաշտօնական օրդաններ ունենալու կարիքի մասին՝ «Երբ Արարատը, ասում է նա, իր բոլոր առաւելութիւններով ու բոլոր թերութիւններով կ'ապրի, լու է որ հանգիստ ապրի, ամէն տեղ կարող

ըլլայ մուտ գտնել ու ժողովրդականա-  
նալ. իսկ թրքահայք՝ պէտք է ունե-  
նան իրենց մասնագիտական հրատա-  
րակութիւնները, մանաւանդ ազգ.  
պատրիարքարանը իր շարաթական  
հանդէսը պաշտօնապէս պէտք է հրա-  
տարակէ: Սիս, Երուսաղէմ, Գալսեփանք,  
գրեթէ և լուսաւորելու յարմարութիւն  
և կոչում ունեցող բոլոր գլխաւոր կե-  
զրոններ, անհրաժեշտ է որ հայ. եկե-  
ղեցիի շինութեան և բարեկարգութեան  
հսկեն իրանց հրապարակագրութիւն-  
ներով, հանդարտ, լուրջ և տեական  
պայմաններու տակ:

Իր մի այլ յօդուածում Պոլսի  
լրագրութեան, խմբագրութիւնների  
գործունէութեան եղանակն ու կազ-  
մակերպութիւնն է քննադատում և  
մի քանի կէտերում յայտնում է այն-  
պիսի կարծիքներ, որոնք մօտ են  
«Մուրճի» № 5 և 6 արժարժած տե-  
սակէտներին: Իր այդ յօդուածում ի  
միջի այլոց նա ասում է.

«Հայ ազգին անունով հրտարա-  
կուած այս թերթերուն մէջ, հայուն  
վերաբերեալ ո՛ր է խնդիր, բարոյական,  
տնտեսագիտական, վաճառականական,  
գալուցական կայլն կայլն այդ քաղա-  
քականներուն շափ յաջողապէս չեն մշա-  
կուիլ և բովանդակ թերթին մէջ պատ-  
ւոյ տեղը չզբաւեր ինչ որ տահմային  
կեանքի կըպատկանի:

Այս տեսակ հրատարակագրու-  
թեան մէջ անկման ջիղը դրամն է:  
Հայ լրագրութիւնը անհատական ձեռ-  
նարկներու արդիւնք է. շատ խմբագիր-  
ներ գրչով մը ճամբայ ելած են և լը-  
րագրի մը տիրացած, առանց ունենա-  
լու պէտք եղած դրամագրութիւնը. հետե-  
ւաբար լաւ վճարումով խաղաղ և հաս-  
տատուն աշխատակիցներու մարմին մը  
կազմելու բարոյական դրամագրութիւն  
ալ չեն ունեցած: Յորչափ մկրատը ա-  
ւելի գործ կըտեսնէ հայ խմբագրատու-  
ներուն մէջ, ցորչափ հաստատուն մար-  
մին մը չխմբագրեր ո՛ր է թերթ, բնա-  
կան է որ հայերէն թերթիք հայերէն  
նշանակութիւն պիտի չունենան, ոչ ալ  
որոչ ուղղութիւն մը, որպէս զի կարող

ըլլան իրենց գոտ գոտ տեղերը զրա-  
ւել հրապարակագրողին կեանքին մէջ  
և հեղինակութիւն մը չլինելու»

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Զը-  
միւնիստիայի շարաթակութիւնը գուրկ չէ  
հետաքրքրութիւնից:



ԲԱՆՔԵՐ Գրականընթերցան եւ առուես-  
սի, 1903 թ. ա. դիրք: - Այս պատկերա-  
զարդ ժողովածուն, ըստ երևոյթիւն,  
գալիս է լրացնելու «Արքայ»-ի դազա-  
րումով գոյացած բաց տեղը: Ազգուե-  
յով ժամանակակից մողային հոսան-  
քից՝ «Բանրերը» թէ իր արտաքինով և  
թէ ներքինի այն մասերով, որոնք  
պէտք է խմբագրութեան դրական-գե-  
զարուեստական ուղղութիւնը որոշեն—  
գեկագեկնատարութեան կնիք է կը-  
րում: Բանրերի գեկավարը մի ընդար-  
ձակ յօդուածով, որ շափազանց խը-  
ճողուած է փիլիսոփայական և զբարա-  
բական ոճերով, աշխատում է ոչ  
միայն ծանօթացնել, այլև փաստա-  
բանել «Գեկագանս և սիմբոլիզմ» ուղ-  
ղութիւնը: Դարելի է «արուեստի կա-  
րևորութիւնը հասկանալով» հանդերձ  
համաձայն չըլինել, թէ չէնց անհրաժեշտ  
էր մեր ժողովրդի տաաջը գնել գեղա-  
բուստի «պերջին խօսքը», մողային  
արտագրութիւնները: Միանգամայն  
խորթ լինելով մեր այժմէական կա-  
րիքներին և իբրև մի նրբութիւն,  
մանրամասնութիւն՝ անմատչելի մեր  
ժողովրդին, որին անյայտ է մնում  
արուեստի այբուբենն անգամ, ուղղակի  
գեկատանսը, իմպրեսսիոնիզմը և պրե-  
սաֆայէլիզմը հաղիւ թէ կըթեն նրա  
ճաշակն ու միտքը:

Չնչինը—կարեւորից, երկրորդակա-  
նը—առաջնակարգից տարբերել պէտք  
է: Գուր տալիս էք անդատարատ ժո-  
ղովրդին արուեստի ամենավերջին,  
զուցէ վաղադուցակ արամագրութեան  
նմուշներ, նրբութիւններ, նիւաններ,  
իսկ նա անտեղեակ է նրա հիմքերին,  
նրա անցեալին, նրա շկողաններին:

Ամենահետաքրքրականը ամբողջ  
ժողովածուի մէջ կազմում է Ե. Ար-

փիարեանի «Վարմիր ժամոց» պատմութեանը: Թիւրքահայոց քաղաքական ձգտումները երկու տարբեր ուղղութիւններն են դժադրուած այդ պատմութեանը երկու հերոսները մէջ: Հայրապետ Էֆէնդին «հայուն հնաւանդ վարուողութեան մարմնացումն է», իսկ տէր-Յուսիկը բուն երկրի ժողովրդական նոր ձգտումները ներկայացուցիչը: Սկզբում իրար թշնամական այդ ձգտումները դառն փոքր-ձեռքից և վերջին տարիների քստմեքի պատահարներից յետոյ մօտենում են, հասկանում իրար և փոխադարձ դիջումներով միանում՝ աւելի հասուն ծրագրով դբւծելու նպատակով: Երկու տիպերի կրած էվոլյուցեան տարուած է հմուտ կերպով, թէ է ոչ հաւասար աջողութեամբ: Միզ Հայրապետ էֆէնդիի տիպը աւելի մօտ է թւում իրականութեան, քան մի քիչ բաֆֆիական տիպերի կնիքը կրող տէր-Յուսիկի տիպը:

Հայաստանի դիւզի հոտ է փշում նաև Ջարդղեանի պատմութեանը:

Ժողովածուի խմբագրութեան profession de foi-ն պարզելու տեսակէտից ուշադրութեան արժանի է պ. Ազոնցի՝ «Հայոց եկեղեցու 1600-ամեակի նախօրէին» յօդուածը, որից բերում ենք հետևեալ կտորը.

«Խղճի ազատութիւնը, դժբախտարար, այնքան պարզ դադարեալ չէ, որ թեբմբա կրօնափոխներին չը յաջողուէր նրա անունով զգեիր հանել»: Կրօնական զգացմունքը, ինչպէս ամեն մի զգացմունք, ուրեմն լսկ իրքև հոգեկան գործողութիւն, նշան է բոլոր կրօններում, այլ է նրա արտայայտութիւնը: Կրօնական խղճը պայմանաւորուած է զգացմունքի երևմամբ. նա կապ ունի առաւելագէս նրա արտայայտութեան հղանակի, նշանների և ձևերի ու սովորութիւնների հետ, ինչով որ պանդղանում են եկեղեցիները: Բեկանել այն դարաւոր կեղևը, որը մէջ երևան է կեկ և արտայայտուել իր նմանների յանդիման կրօնական զգացմունքը, խկապէս ճշմարիտ կրօնական խղճ ունեցող մարդու համար

համազօր է համողմունքի փոխելուն և նոյնչափ ծանր է, որչափ դաւաճանութիւնը բարոյական մարդու համար:

ԱՐՏԷՄԻՍ, № № 1—15: Ամա-հանդէսի առաջին տարուայ մի քանի համարների մասին «Մուրճ»-ում իր ժամանակին տրուած էր տեղեկութիւն: Ամսսպիւթը այժմ հրատարակուած է Ալեքսանդրիայում և մտել է արդէն իր գոյութեան երկրորդ տարին:

Եզիպոսում շատ թերթեր են հրատարակուել, բայց բոլորն էլ շատ կարճ կեանք են ունեցել: Մենք կասկածում ենք, որ կարողանայ յարատեւել և Արտէմիւք. դեռ ևս երկրորդ տարին է և արդէն 2 և 3, 4 և 6 համարներն սկսել են միասին լոյս ընծայուել... Վատ նշան. կը նշանակէ՝ աւաւանդուող զարձակ է երկամաւանդուող:

№ № 2—3, 4—5-ի առաջնորդները պատկանում են խմբագրին—«Ի՞նչ պէտք է ընել» և «Ընտրել զիանանք»: Երկուսն էլ նուիրուած են լաւ վարժուհիներ պատրաստելու խնդրին: Ցանկութիւնները բարի են, գեղեցիկ ու գովելի, բայց խկոյն երևում է, որ հեղինակը յարուցած խնդրի հետ անծանօթ է...

«Այր ու կին բոլորովին տարբեր շինուածքներ են և՛ հոգեպէս, ինչ որ ալ ըսեն, ինչ փաստերով ալ որ ճբզնէն ապացուցանել ատոր հակառակը» — գրում է տ. Մտտին (№ 4—5, էր. 98): Ներկայ ֆեմինիստներն ամեն ջանք գործ են դնում կանանց և տղամարդկանց բացարձակ հաւաստութիւնը կամ նոյնութիւնն ապացուցանելու, իսկ զբաներորդ դարու հայ կանանց օրգանը՝ հակառակն է պնդում...

Ամբողջ 6 մեծապիւր երես գործ է ածուած այդ երկու յօդուածները վերայ, և ոչ մի մանկավարժական սկզբունք, բացի ընդհանուր բուսերբց և քցաւալիօրէն», «ահեկիօրէն» և այլ գրգեցուցիչ թխովի ածականները (էր. 49, № 2—3):

Մենք լսել ենք, որ դրողի առաջին պարտքն է այնպէս գրել, որ աւելն մտոր հասկանայ: Սա բարտահիսու- թեան տեսութեան մէջ մի սկզբնական ճշմարտութիւն է: Բայց դժբաղդարար տաճկահայ գրագէտները մեծամասնու- թեան հիւանդութիւնն է խճճուած, մութ, կուտակուած նախադասութիւն- ներ և շատախօսութիւններ, որոնց մասին զագափար է տալիս, օրինակ, հետեւեալ նախադասութիւնը.

«Երբ քիչ շատ ամուր բնաւորու- թիւն ունեցողները համբերութեամբ կը մղեն յասր կռիւր կեանքին, ու կը ջանան խորտակել փշրել երկաթէ գի- րը, զոր անդուծ բազը այնքան անկ- բաւարար դարձներ ու դրոշմեր է ի- բնեց ճակատին ցանկալի նպատակին հասնելու համար. առիթն աւելի թոյլե- րը, որոնք մեծամասնութիւնը կը կազ- մեն դժբաղդարար մարդկութեան, յո- ւանս, զժգոճ իրենցմէ և ուրիշներէն, օրբստօրէ աւելի հիւանդատ հասկացո- ցութեամբ ըմբռնելով կեանքն ու իր նշանակութիւնը, վտուած զագափար- ներով ու ջլտուած մտքերով կը թե- ւաթափեն իրենցիններան ու իրենց շրջապատի կորովն ալ (եթէ ունին)»:

Պ. Աօն, տէր. տնօրէն-խմբագրի ամուսինը, բաւական խոշոր տեղ է բռնում ամասնաբնութեամբ իր յօդուած- ներովը, պատկերներովն ու ստանաւոր- ներովը:

Նոյն բարի զգացմունքը, նոյն զե- ղեցիկ ձգտումները, բայց և նոյն թե- րի ծանօթութիւնը յանձն առած գոր- ծի, պաշտպանած լսելիքներէ հետ.

Օրինակ՝ պ. Աօն պնդում է, որ «Եւրոպա և առհասարակ ամեն երկիր իր մէջ զանաւան գրեթէ բոլոր բարե- զործական հաստատութիւններու գո- յութիւնը կը պարտի մեծաւ մասամբ աւելի կանանց, քան այրերու... Մի- թէ մի միտք ապացուցանելու համար կարելի է փաստեր ստեղծել և կամ ե- ղած իրականութիւնն աղուազել:

«Ինչո՞ւ համար միայն արևելքի մէջ գոյութիւն ունի փողոցները շրջող մու- րացկանութիւնը»—հարցնում է պ. Ա-

ւօն և պատասխանում—«անոր համար, որ արևելքին մէջ կին չը կայ...» Եւ- ջանիկ փիլիսոփայութիւնը Արեւմտե- թէ արևելքում էլ կանանց լաւ վար- ժարաններ լինին, 7-մի քանի հազար կը թուած կիններ լինին, որ իրար մօտ հաւորուն և «նպտտակայարմար խն- գիրներու մասին խօսուբտութիւնը ընեն» (երես 54), այլևս աղքատութիւն չի լինի աշխարհում...

Նոյն տեսակ յօդուածներ են և աշ- լատակիրցնելը գրածները: Ամեն կողմ նշմարում է լաւ ձգտում, բարի ըզ- զացմունք, բայց խակութիւն, պարզաց- ման պակասութիւն:

ԱնԱՀԻՑ-ը իր վերջին թիւով կը ծանուցանէ թէ Ֆրանսացի երիտասարդ գրողներու խումբ մը, La Plume զրա- կան կիսամտօտի հանդէսին նախաձեռ- նութեամբ հացկերոյթ մը տուեր են ի պատիւ Սկոտա Միլլըրի. Les affai- res sont les affaires թատերախա- ղին և ուրիշ կարգ մը զեղեցիկ գոր- ծերու հոյակապ ճեղքակիրն:

Հացկերոյթին ներկայ գտնուեր են 150-ի շափ զրագէտներ, արուեստա- գէտներ, պարասաններ, հրատարակա- լսօսներ, քննադատներ և զրատէրներ այլևայլ երկրներէ ու սղգերէ:

Միլլըր, ի՛քը անձամբ արտասանե- լով առաջին բաժակաճառը, խնդրել է համեստօրէն որ ներկաները հացկերոյ- թիւն՝ իրեն ի պատիւ կողմակերպուած երեկոյթի մը ձեռ չի տան, այլ գրա- կան հաւարումի մը կերպարանքը Յե- տոյ նոր գրողներուն կոչ մը ուղե- լով հրաւիրել է զանոնք թողու իրենց գրական ամուլ կախները, զրական ա- զանդներ, մատուներ հիմնելու անի- մատ մտահոգութիւնները և միահա- մուր և եղբայրօրէն ծառայել ընդհա- նուրի բարօրութեան և տիեզերական բարութեան պաշտամունքին:

La Plume հանդէսի տնօրէնը խմբ- բագրութեան և Ֆրանսացի բոլոր ե- րիտասարդ գրողներու անունով լսօսեր- է և նոր սերունդին կրօնապաշտու

թիւնն ու յարգանքը յայտնեց է Միւրօի:

Լեհ նորագոյն զրակահնութեան կողմէ խօսք առեր է լեհացի երիտասարդ զբող մը:

Իսկ հայ զրակահնութեան կողմէ խօսեր է պ. Ա. Չոպանեան:

Անահիտը կը հաղորդէ նմանապէս թէ՛ Տիրոն Ալեքսանեան՝ պոլսեցի հայ տաղանդաւոր բամբուլիստիկայի մը (violoncelliste), որ Բերլինի մէջ յուշող նուագահանութեան տուած էր արդէն, մեծ ընդունելութիւն և յաջողութիւն դասեր է վերջերս Պարիզում: Յաճախ հրաւիրուել է արիտստիկա սալոններու մէջ, ու ինչոր աւելի դժուար է ու պատուաբեր՝ Պարիզի կոնսերվատուարի նուագահանողէններէն մէկուն, որունց կարող են մասնակցիլ մեծ տնուն վայելող արուեստագէտները միայն:

La Revue հանդէսը (նախկին Լա Ռեվիւ դէ Ռըվիւ) իր վերջին թիւերուն մէջ հրատարակեց է յունական արդի զրակահնութեան վրայ «Տիգրան Երկաթ»-ի, հանդուցեալ հայ երիտասարդ տաղանդաւոր զբողի մը անտիպ մէկ աշխատութիւնը որու մասին մեծ հիացումով կը խօսի Փրանսայի մէջ ծանօթ յոյն զբող մը: Ժան Մէտնիլը՝ այդ յոյն զբողը՝ Տ. Երկաթի տաղանդը զբրտատելով կը յայտնէ թէ «նոյնիսկ յոյներու մէջ ոչ որ այդքան խորապէս վերլուծած և ուսումնասիրած է յունական արդի կեանքն ու բանաստեղծութիւնը»:

Թերևս ընթերցողներէ ոմանք տեղեկութիւն ունենան թէ՛ «Տիգրան-Երկաթ»-ի հեղինակը մտող այն վաղամեակի երիտասարդն է, որ La Revue des Revues հանդէսին մէջ «La Turquie peut-elle vivre?»-Թուրքիան կարող է ապրիլ—խորս. գրին տակ Թուրքիայ մասին հրատարակած կարգ մը ուսումնասիրութիւններով մեծ ուշադրութիւն զբուսեց ու նոյնիսկ հետաքրքրութեան առարկան եղաւ Փրանսացի արտաքին գործոց նախկին նախարարին՝ տիրահոշակ Հանտօօի: Սույ-

թանի նուիրումը բարեկամը՝ հանդէսի անօրէնին՝ Ժան Փինօի հարցուցեր էր թէ նվ է այդ ուսումնասիրութեանց հեղինակը և հիացումի խօսքերով գովեր էր Տ. Երկաթի տաղանդը:

Անահիտի վերջին համարին (յունիս-յուլիս) մէջ պ. Չոպանեան ուսումնասիրութիւն մը կը հրատարակէ Պոլսոյ նախկին «Մեղու» ազատական թերթի խմբագրին, Յարութիւն Սվաճեանի վրայ: Ինչ գործ որ կատարած էին Սոսեփան Ոսկան Պարիզի մէջ, իր Արիւր հրատարակութեամբ, և Ս. Նազարեան իր Հիւսիսափայլով Մոսկուայի մէջ, նոյն գործին անձնուրաբար նուիրուեցաւ Յ. Սվաճեան Պոլսում: Իր դերը հայ ազգի վերածնութեան գործին մէջ աւելի արդիւնաւոր, աւելի մեծ եղաւ այն պատճառով որ Սվաճեան կը գործէր բուն ժողովուրդին մէջ: Ինչպէս բոլոր ճշմարտութեան առաքեալները՝ Սվաճեան խոշոր գոհարարութիւններ բերաւ իր սիրած գործին համար, մեր խաւարի ուժերէն հալածուեցաւ ու աղքատ մեռաւ: Ինչպէս իր բոլոր վէճերի ընկերներուն՝ իր նպատակն էր արևմուտքի առողջ գաղափարները, դիտութիւնը ներարկել մեր լքացած, անշարժ ու մութին մէջ նստած ժողովուրդի երակներուն մէջ:

Հետաքրքիր է, ինքնագոհ ու մտավայն ազգասէր ընթերցողներէն մէկուն, որ քննադատութիւնը, «ազգը ծագրելը» վնասակար աշխատութիւն մը կը զբուսնէր, Սվաճեանի տուած պատասխանը, զոր յիշած էր Անահիտ և ուրիշ յետադայ մասը կը վերջնեց, մեր ընթերցողներուն գաղափար մը տալու համար Սվաճեանի նկարագրին վրայ:

«Գրիչս ձեռքս չ'առած, ուլուրած եմ կարելի եղածին շտի շողորթութենէ հետո փախչելու, և ճշմարտութեան շտի հետեւը սրբազան պարտք մը համարած եմ ինձի: Լրագրապետի մը պարտքը համարուած է ամէն բան իր պայծառ ուշօքը տեսնել և նոյնը անփոփոխ իր ընթերցողաց հաղորդելը: Ըսել կ'ուզեմ որ կատարելութիւնը պակասութիւն դատելու չէ՛ պակասու-

թիւնը կատարելութիւն հռչակելու շէ՛, վաստակը կամ պատուոյ կամ համբուլի յուսով ազգը խտրելու շէ՛. իմ պարտքս ես ասանկ կը ճանչնամ»:

Պ. Չոպանեան իր ներկայ ուսումնասիրութեան նախարանին մէջ կը յայտնէ թէ՛ մտադիր է Յ. Սվանեանէ յետոյ շարք մը յօդուածներով իւրոյս հանել սպերախա մտայութեան մէջ

թաղուած թրքահայ հին ու ակնայայտնի գրական գործիչներէն մէկ քանին», ինչպէս Խաչատուր Մխակեան, նիկողոս Զօրայեան, Օգոսէն Խոնատարեան և այլն:

Աշխատութիւն մը որ մինչև հիմա փորձուած չէ և կը խոստանայ մեծուպէս հետաքրքրական ըլլալ:

տ.

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Այս համարում

երես	տող	տպուած է	պէտք է լինի
109	13 վ.	օղակ	օջաղ
140	3 ն.	բաշխումներուն	բաղխումներուն
141	5 ն.	հատուցին	հասցուցին
142	7 ն.	սպասէր	սպասէր
155	26 վ.	ժպտում է	ժերմէնը ժպտում է
155	4 ն.	նախաճաշակին	նախաճաշիկին
164	24 վ.	ընտանեկան	ընտանի
»	7 վ.	աքսորութեան	աքսորի

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՒՆՆԵՐ

Հ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

2-րդ տպագրութեամբ

(փոփոխում)

Կ. ԿՈՒՍՏԱՆԻ Լ. Լ. ՍԵՐԳՍԵԱՆԻ

Կաղամ

## Մ Ը Յ Բ Ե Ն Ի Խ Օ Ս Ք ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Երբորդ և չորբորդ տարիների համար

Համառոտ հայերէն-ռուսերէն ըստագրքով

Գինն է 70 Կ.

(246 երես)

Դիմել թիֆլիս «Մուրճի» խմբագրատան կամ «Գուտտենբերգ» և «Կենդրոնական» զրովածառանոցներին: 100 օրինակից աւելի քանակութեամբ ձեռք բերողներին 20% զիջում:

1903 թ. „ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ“ 1903 թ.

Ժէ. տարի,

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍԱԳԻՏԵԱԿԱՆ ԹԵՐԹ.  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Տարեկան 10 ֆր. ոսկի=4 ր.

Վեցամսեայ 6 » » =2 »

Մէկ թիւ կ'արժէ 1 ֆր.=50 կոպ.

Հասցէն՝ VIENNE (Autrich) VII/2 Mechitharistengasse 4.  
Redaction de la Revue „HANDESS“

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ՊԵՏ. ԽՈՐՀՐԴ. ԴԱՆԻՔԼ ԳԱՔՐԻՔԼԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ ՄՐՅԱՆԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 7-րորդ յօդուածի հիմամբ Լազարեան ձեմարանի Մասնագիտական Դասարանների Խորհուրդը իւր՝ 1902 թ. Նոյեմբերի 12-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթերը՝ երկու մրցանակի համար, որոնցից առաջինին՝ 800 և երկրորդին՝ 600 բուրլի է յատկացնուում:

Ա.—«Հայոց այբուբենը և Ս. Մաշտոցի վարքը», (1904 թ. լրանալիք Հայոց տառերի գիւտի 1500-ամեակի առիթով):

Բ.—«Իրանական տարրը Հայոց լեզուի մէջ» (մինչև այսօր ըստ տեսած հետազօտութիւններից դատու):

Հետազօտութիւնները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն:

Լաւագոյն հետազօտութիւնը յիշեալ նիւթերից առաջին մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից ութ հարիւր (800) բուրլի մրցանակով:

Լաւագոյն հետազօտութիւնը յիշեալ նիւթերից երկրորդի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից վեց հարիւր (600) բուրլի մրցանակով:

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած հետազօտութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ:

Հետազօտութիւնները պէտք է ներկայացուեն ոչ ուշ, քան 1904 թ. 15-ը ղեկատմրերի:

Այս համարի հետ ուղարկում ենք առանձին թերթի վրայ սպուած „ПРОВОДНИКЪ“ ընկերութեան յայտարարութիւնը

3—1

Փամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝ Յ. ՍՊԵՆԻԻԲԵՐԵԱՆ

Հրատարակչուհի՝ Վ. ՔԱՆԱՆԵԱՆ

րի խորքում», *Բն.*—2) Յովն. Դուրբախեան՝ «Երանօթ պատկերներ», *Ու.*—3) Վլադան Մամիկոնեան՝ «Վերջին երգեր», *Չաւէնի.*—4) Արզում Սիմոն՝ «Նորաժպտներ», *Չաւէնի.*—5) Mars՝ «Ի՞նչպէս ամուսնացայ», *Խաժաղ.*—6) Ժ. դր-Մորէ՝ «Տրիլլի»,—*ակ.* . . . . . 188

15. **ՆՈՐ ԱՏՈՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ.** . . . . . 197

16. **ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.**—Կառաւարչական կարգադրումիւն հայոց եկեղեցական կալուածների եւ զուժարների մասին:—Պաշտօնական հաղորդագրումիւններ:—Թուրքաստանի գաղթականութեան մասին նոր օր՛ներ:—Երևանի նահանգի եւ Կարսի շրջանի հայ փախստականների թիւեր:—Պարսկահպատակների դրումիւնը որոշող կարգադրումիւն:—Չինուորների երգման տեղը:—Մամուլի վերաբերեալ կարգադրումիւն. . . . . 198

17. **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.**—Մինիստրական փոփոխումիւններ Անդխայում:—Մակեդոնական ընթրումների ընդարձակման առաջարկ:—Միւրուշտէզի տեսակցումիւնից յետոյ պաշտօնական հաղորդագրումիւն մակեդոնական հարցի մասին:—Ունդարական կրիզիս:—Միջպարլամենտական համաժողով Վիեննայում:—Միջպարլամենտական վեճերի բարդարտական լուծում եւ միջնորդային արիւնտալ:—Գործերը Մերձաւոր Արեւելքում, *Լ. Ս.* . . . . . 221

† Սուրբուս վարդապետ Պարոնեան. . . . . 229

18. **ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ** . . . . . 229

19. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** . . . . . 235

20. **ՅԱԻՆՈՒԱԾ, Ա. Բօլլէսի՝ Հրաչայի դար, թարգմ.**  
Ստ. Լիսիցեանի . . . . . 161—192

# ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

## 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների և աշխատակիցների նոյն կազմով:

### Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Ն Ը

Ռուսաստանում տարեկան	10 րուբ.	Արսաստանում	12 րուբ.
"    կէս տարին	6 "    "	"    "	7 "    "
"    1 ամսուան	1 "    "	"    "	1 "    20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է բաժանորդ գրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձափճափճիտան փողոց, տ. № 16):

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисе, въ редакцію журнала „МУРՉԵ“.

Արսաստանում՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—«Գուտտենբերգ» գրափաճառանոցում:

Ծանօթաբիւն. Ռուսաստանի բաժանորդներից նրանք, որոնք դժուարա-  
նում են տարեկան բաժանորդագինը (10 ռ.) վճարել միանուագ՝ կարող են տալ  
մ ա ս - մ ա ս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին 2 ռ.:

Ոչ-Թիֆլիսի բաժանորդները հասցէն փոխելու համար պէտք է ուղար-  
կեն 40 կոպ.:

Ձեռագիրները և նամակները պէտք է ուղղել խմբագրու-  
թեան, ԼեիՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով: